

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ  
ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ԸՆՏՐԱՆԻ

2010-2012

## ՀԱՏՈՐ I

Սույն ընտրանին նվիրվում է ՀՀ վճարելի դատարանի  
ստեղծման 15-ամյակին

Երևան  
Փրինսիփո  
2013

ՀՏԴ 374.918(479.25)  
ԳՄԴ 67.99(2Հ)92  
Հ 247

Հ 247 Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով միջանկյալ դատական ակտերի վերաբերյալ որոշումների ընտրանի (2010-2012). -Եր.: Փրինթինֆո, 2013.  
Հատոր I. –264 էջ:

**Կազմող՝** Լիպարիտ Դրմեյան, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդական, իրավագիտության թեկնածու, ԵՊՀ դասախոս

Որոշումների դասակարգումները տրամադրվել են ARMLAW դատական ակտերի որոնման համակարգի կողմից

ՀՏԴ 374.918(479.25)  
ԳՄԴ 67.99(2Հ)92

**ISBN 978-9939-831-51-0**

© Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարան, 2013  
© Լիպարիտ Դրմեյան (բովանդակության համար)



german  
cooperation

DEUTSCHE ZUSAMMENARBEIT

**giz** Deutsche Gesellschaft  
für Internationale  
Zusammenarbeit (GIZ) GmbH

«Հարավային Կովկասում իրավական և դատական  
բարեփոխումների համար խորհրդատվություն»  
ծրագիր

**Programm "Rechts- und Justizreformberatung im Südkaukasus"**

Սույն ընտրանին հրատարակվել է Գերմանիայի միջազգային  
համագործակցության ընկերության (GIZ)  
օժանդակությամբ

Սույն ընտրանում արտահայտված տեսակետները պարտադիր չէ,  
որ արտացոլեն ԳԴՀ կառավարության տեսակետները

---

---

## ՆԱԽԱԲԱՆ

Անցած տարիների ընթացքում ձևավորված դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած որոշումները հիմնարար նշանակություն են ունենում միասնական դատական պրակտիկայի ձևավորման համար: Հատկանշական է, ստորադաս և նաև Վճռաբեկ դատարանի կողմից հղումների կատարումը ՀՀ բարձրագույն դատական ատյանի որոշումներին, ինչն անատարկելիորեն վկայում է Հասաստանի Հանրապետությունում իրավական նոր մշակույթի ձևավորման մասին:

Շամանակակից իրականությունում Վճռաբեկ դատարանի դատական ակտերի մատչելիությունը ապահովվում է ոչ միայն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, այլև որոշումների ընտրանիների լույս ընծայմամբ: Վերջիններիս միջոցով դատական ակտերը առաջին հերթին մասնագիտական հանրությանը հասանելի դարձնելու սկիզբը դրվեց 2006 թվականի որոշումների ընտրանու հրատարակմամբ և շարունակվում է մինչ օրս:

Հրատարակված բոլոր ընտրանիներում պարունակվող դասակարգումները և դատական ակտերի խնդիրների առանձնացումը առավել հեշտացնում են կոնկրետ գործով որոշակի դիրքորոշում կամ մեկնաբանություն գտնելու ընթացքը:

Նախկինում տպագրված ընտրանիները ներառել են միայն Վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման ընթացքում կայացված որոշումները: Այդ ակտերում բարձրացված հարցերի և վերջիններիս վերաբերյալ արտահայտված դիրքորոշումները գերազանցապես վերաբերում էին նյութական իրավունքի նորմերի խախտմանը կամ սխալ կիրառմանը:

Իսկ ինչնով է պայմանավորված այս ընտրանու հրատարակումը:

Նախ, դատավարական իրավունքի նորմերի խախտումներին, որոնք ուղղակիորեն ազդում են գործի դատավարական շարժի վրա, Վճռաբեկ դատարանը հիմնականում անդրադառնում է միջանկյալ ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումներով: Դրանք քիչ են հասանելի հանրությանը, քանի որ լույս չեն ընծայվում ժողովածուների կամ ընտրանիների տեսքով:

Մյուս կողմից, 2013 թվականը հորելյանական տարի է. լրանում է Վճռաբեկ դատարանի ստեղծման տասնհինգամյակը: Նշված հանգամանքներն էլ հաշվի առնելով՝ որոշվեց հանդես գալ միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները առավել մատչելի դարձնելու նոր նախաձեռնությամբ:

Այս ընտրանիով հիմք է դրվում դատարանների կայացրած միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաբեկ դատարանի որոշումների ժողովածուների հրատարակմանը, որն անշուշտ կրելու է շարունակական բնույթ: Մյուս որոշումների ընտրանու լույս ընծայումը սպասված էր և հրատապ թե՛ դատական և իրավապահ համակարգերի աշխատողների և թե՛ փաստաբանների ու քաղաքացիների համար: Հատկանշական է, որ հենց միջանկյալ դատական ակտերն են ազդեցություն ունենում դատավարական ընթացակարգի վրա և այդ ակտերի կայացման ընթացքում թույլ տրված խախտումներն ուղղակիորեն ազդում են հիմնարար այնպիսի իրավունքների իրացման վրա, ինչպիսիք են արդար դատաքննության, լաված լինելու, հրապարակային դատաքննության և այլ իրավունքները:

Ընտրանին պարունակում է 2010 թվականից 2012 թվականը ներառող ժամանակահատվածում Վձռաբեկ դատարանի կայացրած այն որոշումները, որոնք առանցքային նշանակություն են ունեցել դատավարական ընթացակարգի վրա: Դրանցում արտահայտված դիրքորոշումները հնարավորություն են տալիս հաղթահարել այն խոչընդոտները, որոնք առկա են օրենսդրական բացերի և հակասությունների հետևանքով:

Հիշատակված ժամանակահատվածում ընդունված որոշումներում արտահայտված մի շարք դիրքորոշումներ հաշվի են առնվել նաև դատավարական իրավակարգավորման նոր կառուցակարգեր մշակելիս:

Միջանկյալ դատական ակտերի վերաբերյալ կայացված որոշումների այս ընտրանին կազմված է գրեթե նույն սկզբունքով, ինչ նախկինում հրատարակված ժողովածուները: Որոշումները դասակարգված են ըստ դատավարական հարցերի պատկանելիության, իսկ բովանդակային ցանկում ներկայացված է կոնկրետ որոշման համառոտագիրը:

Կարծում եմ, որ դատավարական տարաբնույթ հարցերի վերաբերյալ կայացված այս որոշումները հնարավորություն կտան առավել ամբողջական պատկերացում կազմել ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական դատավարությունում առկա խնդիրների լուծման ուղիների վերաբերյալ:

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

ՀՀ վձռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատի նախագահ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Թիվ 1

2010-2012

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 1

ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՄԵՐ ..... 12

ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ ..... 16

ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ ..... 21

ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

    Հայցի հարուցումը..... 30

    Հայցի ապահովումը ..... 46

    Գործի վարույթը կասեցնելը ..... 52

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ  
ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ..... 81

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ..... 85

**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

    Գործերի ընդդատությունը..... 133

    Դատավարական ժամկետները..... 138

    Դատական ծախսերը ..... 144

**ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները ..... 161

Հայցադիմում ընդունելը, հայցադիմում վերադարձնելը,  
հայցադիմումի ընդունումը մերժելը ..... 166

Հայցի ապահովումը ..... 178

Գործի վարույթը կասեցնելը և կարճելը ..... 192

ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ..... 196

---

---

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ**  
**ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

**27.07.2011թ.**

1. Արևիկ Արույան v. «ՀԷԳ-90» ՍՊԸ և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԳ/0433/02/11

Էջ  
1-5

Տվյալ քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված հարցերը հետևյալն էին՝

*արդյո՞ք սույն գործով ներկայացված հիմնական պահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից և սույն գործով ներկայացված հայցը ո՞ր դատարանին է ենթակա:*

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից:

Միայնաց հետ կապված մի քանի պահանջներով դատարան դիմելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը պետք է պարզի հիմնական պահանջի բնույթը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է մյուս պահանջների լուծումը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել նաև, որ հանրային և մասնավոր իրավահարաբերություններից բխող պահանջների ներկայացման դեպքում հիմնական պահանջը կարող է համարվել հանրային իրավահարաբերություններից բխող, եթե վեճի հիմքը պայմանավորված է պետական մարմինների կողմից իրենց գործադիր-կարգադրիչ գործառնությունների իրականացմամբ: Այն դեպքում, երբ հանրային իրավահարաբերություններից բխող պահանջը պայմանավորված է մասնավոր տարրի առկայությամբ և դրա ելքը կախված է մասնավոր իրավահարաբերությունից բխող պահանջի ելքից, ապա հիմնական պահանջը հանրային իրավահարաբերություններից չի բխում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով հիմնական պահանջը Ընկերության տնօրենի պաշտոնից ազատված համարելը և Արևիկ Արույանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծված համարելն է, իսկ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնին որոշակի գործողություններ կատարելու պարտադրելն առաջինի իրավական հետևանքն է: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով հիմնական պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից:



Վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայացվում են երկու և ավելի հայցապահանջ, որոնք ունեն տարբեր առարկայական ընդդատություն, հայցը պետք է քննվի այն դատարանում, որի առարկայական ընդդատությանն է ենթակա ներկայացված հիմնական պահանջը:

Հիմք ընդունելով վերոնշյալ՝ Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ անհիմն է Դատարանի և Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ սույն գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանում քննության:

**10.01.2011թ.**

**2. ««Բջնի» հանրային ջրերի գործարան» ՓԲԸ v. Հայաստանի Հանրապետություն՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/3492/02/09** **Էջ 6-11**

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/4234/05/09 վարչական գործով 02.12.2009 թվականին կայացրած «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նոր երևան եկած հանգամանք է, քանի որ նշված որոշմամբ հաստատվում է այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող Նախարարության գործողությունները չէին բխում հանրային իրավահարաբերություններից և դրանց վերաբերյալ վեճն ընդդատյալ չէ ՀՀ վարչական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով Ընկերությունը զրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*յոէ'ու՝ Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalfaoui v. France)*, թիվ 34791/97, պարբ. 35, ECHR 1999-IX և *Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France)*, թիվ 54210/00, պարբ. 90, ECHR 2002-VII):

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունել նաև այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է «հանրային իրավահարաբերություններ» եզրույթի մեկնաբանությանը և վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ արձանագրել է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառի ատնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային իրավահարաբերությունները դրանք այն հարաբերություններն են, որոնք ծագում են պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում՝ վարչական

մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (տե՛ս՝ ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի թիվ ԵԱԲԳ/1369/05/09 գործով Վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը):

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

**06.11.2012թ.**

**3. «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ v. «Բրիթիշ Միդլենդ Էյրուեյզ լիմիթեդ» հայկական մասնաձյուղ, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/2063/02/11** **Էջ 12-15**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ «բողոք բերած անձը բողոքը կրկին ներկայացնելու մասին իր 22.06.2012 թվականի գրության մեջ (մուտքի համարը՝ 2044) նշել է, թե տվյալ «գրությանը կից ներկայացնում է պետական տուրքի վճարման անդորրագիրը», ինչը չի համապատասխանում իրականությանը (նշված գրությանը որևէ անդորրագիր կցված չէ): Ինչ վերաբերում է բողոքին կցված միակ և օտարալեզու փաստաթղթին, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ, 51-րդ և 54-րդ հոդվածների ուժով այն թույլատրելի և վերաբերելի ապացույց համարվել չի կարող, քանի որ ներկայացվել է առանց պատշաճ թարգմանության ուղեկցության, որպիսի պայմաններում այդ փաստաթղթի բովանդակությունը կազմող տեղեկությունները չեն կարող ՀՀ դատարանի կողմից հետազոտման և գնահատման առարկա դառնալ»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանության հետևանքով Ընկերությունը գրկվել է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության սահմանադրական իրավունքից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով առաջին հերթին պետք է առաջնորդվեր անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելնել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից: Վերաքննիչ դատարանը, տվյալ դեպքում չընդունելով Ընկերության կողմից ներկայացված օտարալեզու տարրեր պարունակող փաստաթուղթը և համարելով պետական տուրքի անդորրագիրը չներկայացված, վիճահարույց հարցի վերաբերյալ ցուցաբերել է ձևական մոտեցում, հակառակ դեպքում, եթե Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատվեր այդ ապացույցը, ապա Վերաքննիչ դատարանի մոտ կառաջանար ներքին համոզմունք՝ բողոքաբերի կողմից պետական տուրքը վճարված լինելու մասին, քանի որ այդպիսի համոզմունքի ձևավորման համար փաստաթուղթը պարունակում է բավականաչափ և հավաստի տվյալներ՝ այն կազմված է «Էյջ-Էս-Բի-Մի» բանկի ձևաթղթի վրա և կնքված բանկի կնիքով, առկա են փոխանցողի, գումարը ստացողի և գումարի չափի մասին տեղեկություններ, որոնք հեշտությամբ կարող էին նույնականացվել, նույնիսկ առանց թարգմանության:

## ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

**24.12.2012թ.**

**4. Կարեն Ստեփանյան v. Անժելա Ստեփանյան և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԼԿ/0814/02/11** **Էջ 16-20**

Վերլուծելով մի շարք իրավադրույթներ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ փաստաթղթերը կապի կազմակերպությանը հանձնելու իրավական հետևանքները հավասարեցվում են դրանք համապատասխան հասցեատիրոջը տալուն (*տես՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ն ընդդեմ Տիգրան Հարությունյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ 3-1614(Ա) գործով Վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը*):

Բացի այդ, դատավարական ժամկետներից բխող դատավարական իրավահարաբերությունների կարգավորման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արտահայտել է իր դիրքորոշումը և արձանագրել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված, կիրառման ենթակա է նաև քաղաքացիական դատավարության իրավահարաբերությունների նկատմամբ: Նշվածից բխում է, որ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված վերաքննիչ բողոքը պետք է համարվի վերաքննիչ դատարան հանձնված (տես՝ *աշխարհաբի պետական տեսչության Վայոց Ձորի մարզի տարածքային կենտրոնն ընդդեմ անհար ձեռնարկարեք Արամ Սարգսյանի թիվ 3-1888(ՏԳ) գործով Վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Անժելա Ստեփանյանի կողմից ներկայացված 04.07.2012 թվականի «Դիմում-միջնորդությունը» պարունակում է հիմնավորումներ այն մասին, որ բողոքաբերն իրականում բաց չի թողել վերաքննիչ բողոքը բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ փոստային ծառայության կողմից Անժելա Ստեփանյանին տրված անդորրագրի համաձայն՝ վերաքննիչ բողոքը նրա կողմից փոստային ծառայության է հանձնվել 11.06.2012 թվականին (հատոր 2, գ.թ. 96), վերաքննիչ բողոքը Կարեն Ստեփանյանին, Լորուտ և Մարգարիտա համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմիններին ևս փոստային ծառայության միջոցով ուղարկվել է 11.06.2012 թվականին (հատոր 2, գ.թ. 65-68), այսինքն՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե վերաքննիչ դատարանը կատարեր գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ապա կհանգեր այն եզրակացության, որ Անժելա Ստեփանյանը չի խախտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի պահանջները:

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

**27.05.2011թ.**

**5. Արկադի Անդրիասյան v. Ռոզա Մանասյան, քաղաքացիական գործ թիվ ԵՃԳ/1465/02/10**

**Էջ 21-24**

Անդրադառնալով դատական նիստի վայրի և ժամանակի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելու խնդրին՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր նախկին որոշումներում նշված հարցի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (*լրեն՝ ըստ Հասմիկ Էլոյանի դիմումի՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պարձառները հարգելի համարելու և ժառանգ ճանաչելու պահանջների մասին, թիվ 3-15/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարակ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Բացի այդ, Վճարակ դատարանը հարկ է համարել նշել, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս, պետք է առաջնորդվեր ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատական քննության իրավունքի ապահովման սկզբունքից: Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (*լրեն՝ Բրուսյա Գունեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 26737/195 վճիռը, կեր 33*):

Վճարակ դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*լրեն՝ ՀՀ վճարակ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կեր 44*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանի 18.02.2011 թվականի նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրն Արկադի Անդրիասյանն ստացել է 19.02.2011 թվականին (գ.թ.51-53): Գործում առկա չէ 18.02.2011 թվականի դատական նիստի մասին Արկադի Անդրիասյանին պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույց:

Նման պայմաններում Վճարակ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, պատշաճ ձևով չի տեղեկացրել Արկադի Անդրիասյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է նրա բացակայությամբ ու կայացրել որոշում:

## **29.06.2011թ.**

**6. «Կեչաք» ԲԲԸ v. Հնայակ Զոհրաբյան, քաղաքացիական գործ թիվ ԿԳ/0099/02/09**

**Էջ  
25-29**

Սույն որոշմամբ Վճարակ դատարանը, պատշաճ ծանուցումների վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո անդրադարձել է վերաքննիչ դատարանի կողմից գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին տեղեկացված լինելը ապահովելու հարցին:

Վճարակ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է 22.10.2010 թվականի միջնորդությամբ արված Ընկերության տնօրենի այն հայտարարությունը,

որ Վոսմ Հարությունյանն այլևս սույն գործով Ընկերության ներկայացուցիչը չէ, և Ընկերությունն իր շահերը Դատարանում ներկայացնելու համար լիազորել է այլ անձանց, որոնք Ընկերության անունից հանդես են եկել Դատարանում, իսկ Դատարանն էլ բոլոր դատավարական փաստաթղթերն ուղարկել է Ընկերության նոր ներկայացուցիչներին: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, 09.03.2011 թվականի դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցագիրն ուղարկելով Վոսմ Հարությունյանին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Ընկերությանը պատշաճ ձևով չի ծանուցել դատական նիստի ժամանակի և վայրի մասին և գործը քննել է նրա բացակայությամբ: Ավելին, Վերաքննիչ դատարանն Ընկերությանը պատշաճ կերպով չի տեղեկացրել նաև 02.03.2011 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, Ընկերությանը դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ չծանուցելով, վերջինիս գրկել է գործի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունից, ինչի հետևանքով խախտվել է նրա՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության հիմնարար իրավունքը:

## **ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

### **Հայցի հարուցումը**

**11.05.2011թ.**

**7. Լարիսա Բաբայան v. Ալբերտ Հունանյան, քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1373/02/10**

**Էջ  
30-33**

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-րդ կետի 2-րդ ենթակետի կիրառմանը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «սույն առարկայի մասին» օրենսդրական եզրույթը վերաբերում է հայցի առարկային, իսկ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին: Սույն գործով Լարիսա Բաբայանը հայց է ներկայացրել ընդդեմ Ալբերտ Հունանյանի՝ խնդրելով բռնագանձել փոխառությամբ տրված 3.100.000 ՀՀ դրամ գումարից *չվերադարձրած 2.900.000 ՀՀ դրամ փոխառության գումարի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված փոկոսները՝* հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ 25.07.2008 թվականին Ալբերտ Հունանյանի սեփականությանն է հանձնել 3.100.000 ՀՀ դրամ՝ 60 օրվա ընթացքում վերադարձնելու պայմանով, այդ պարտավորությունն Ալբերտ Հունանյանը կատարել է ոչ պատշաճ՝ պարտավորության կատարման ժամկետի խախտմամբ՝ փոխառության գումարից վերադարձնելով միայն 2.900.000 ՀՀ դրամ գումարը: Թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը, քննելով Լարիսա Բաբայանի հայցն ընդդեմ Ալբերտ Հունանյանի՝ *200.000 ՀՀ դրամ որպես փոխառության պայմանագրով չվճարված մայր գումարը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն չվճարված մայր գումարի փոկոսները բռնագանձելու պահանջների մասին*, 08.10.2010

թվականի վճռով հայցը բավարարել է՝ վճռել է Ալբերտ Հունանյանից հոգուտ Լարիսա Բաբայանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ պարտքի գումար և այդ գումարի վրա հաշվարկել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կետանցի օրվանից՝ 25.09.2008 թվականից մինչև պարտավորության դադարման օրը:

Թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով վեճը եղել է նույն անձանց՝ Լարիսա Բաբայանի, որպես հայցվորի, և Ալբերտ Հունանյանի, որպես պատասխանողի, միջև, միևնույն հիմքերով, այն է՝ Ալբերտ Հունանյանը փոխառության գումարները վերադարձնելու պարտավորությունը կատարել է ժամկետի խախտմամբ, սակայն ոչ նույն առարկայի մասին, քանի որ թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով հայցի առարկան 200.000 ՀՀ դրամ փոխառության գումարն է և այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումարը, իսկ սույն գործով հայցի առարկան 2.900.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումարն է:

Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված էր նաև վերոնշյալ վճռի եզրափակիչ մասի բովանդակությամբ, որում որևէ նշում չկար 2.900.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու մասին:

### **09.03.2011թ.**

#### **8. Արշալույս Ռուշանյան v. «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ի և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0903/02/10**

Էջ  
34-38

Գործում առկա հայցադիմումի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցադիմումում նշվել և դրան կից ներկայացվել են հայցապահանջը հիմնավորող ապացույցները, մասնավորապես՝ ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտի, ավտոմեքենան արգելանքի տակ գտնվելու մասին տեղեկանքի, 23.03.2009 թվականի թիվ 00000184 և 27.03.2009 թվականի թիվ 00000198 դրամարկղային մուտքի օրդերների, հաշիվ ապրանքագրի, 16.04.2009 թվականի վճարման հանձնարարագրի, անհատական վարկավորման, շարժական գույքի գրավի պայմանագրերի, տեղատեսության սխեմատիկ պլանի, բացատրություն վերցնելու մասին արձանագրության, 05.05.2009 թվականի թիվ 000037 վճարման հանձնարարագրի և թերությունների ակտի պատճենները /գ.թ. 2-11, 15-32/: Ընդ որում, հայցադիմումում նշված պահանջը կայացել է հետևյալում. համապատասխանողներ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ին և «Աուդի» ԲԸ-ին պարտավորեցնել պայմանին չհամապատասխանող ապրանքը, այն է՝ «Աուդի Q5» ավտոմեքենան՝ թափքի համարը՝ WAUZZZ8R39A032661, շարժիչի համարը՝ CD N 028232, թողարկման տարեթիվը՝ 2009 թվական, փոխարինել պայմանագրով նախատեսված տեսականոն համապատասխան ապրանքով՝ նույն թվականի թողարկման «Աուդի Q5» ավտոմեքենայով: Այսինքն՝ սույն գործով երկու պատասխանողներին ներկայացվել է միևնույն պահանջը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջներին, հետևաբար, սվյալ դեպքում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքը:

Ինչ վերաբերում է սույն գործը սվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով

հայցադիմումը վերադարձնելու պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանը գտել է, որ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն՝ որպես առուվաճառքի պայմանագրի կողմ, սույն գործին մասնակցում է առանձին պատասխանողի կարգավիճակով, այլ ոչ թե որպես «Աուդի» ԲԸ-ի ներկայացուցչություն: Հետևաբար, սույն գործով հայցը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ հարուցվել է «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ի գանվելու վայրի դատարան, այսինքն՝ սույն գործն ընդդատյա է Դատարանին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված հայցադիմումը վերադարձնելու հիմքն առկա է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ օտարերկրյա իրավաբանական անձ «Աուդի» ԲԸ-ի գործին մասնակից դարձնելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու համար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի ուժով դատարանը գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը պարզում է և գործի քննությանն այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու հարցերը քննարկում է նախնական դատական նիստում:

**10.05.2011թ.**

**9. Անիկ Մնացականյան v. Ռուբիկ Ասատրյան, քաղաքացիական գործ թիվ ԵՅ ԵԷԴ/0466/02/11**

**ԵՅ  
39-42**

*Սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պարզման ենթակա էր այն իրավական հարցը, թե արդյո՞ք սույն գործով հայցի և Վերաքննիչ դատարանի վկայակոչած գործերով հայցերի առարկան ու հիմքը նույնն էին:*

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարել անդրադառնալ հայցի տարրերին՝ հայցի առարկային և հիմքին: Այսպես՝ հայցի տարրերը նրա բաղկացուցիչ մասերն են, որոնք որոշում են նրա բովանդակությունը, նրա իրավական բնույթը և հնարավորություն են տալիս անհատականացնել հայցը, այն տարբերել նույնական հայցերից, հետևաբար և լուծել նույն կողմերի միջև, նույն տարրերով հարուցվող հայցերը կրկին անգամ վարույթ չընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել էր «հայցի առարկա» օրենսդրական եզրույթին և նշել, որ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին (*զե՛նս թիվ ԵԷԴ/1373/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է նաև «հայցի հիմք» օրենսդրական եզրույթին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին անմիջականորեն չի սահմանում հայցի փաստական և իրավական հիմքերի տարբերակիչ հատկանիշները, այնուամենայնիվ, այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ նորմերից:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ

նակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

Վճռաբեկ դատարանը նշել էր, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարրերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերի համակցությունն է, որ կարգավորում է վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (դրևն բար հայցի Վիզեն Ուրուշանյանի ընդդեմ Մուրիկ Սեդրակյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և Մուրիկ Սեդրակյանի հայցի ընդդեմ Վիզեն Ուրուշանյանի՝ անհիմն հարստացմամբ արացած գումարը վերադարձնելու պահանջի մասին թիվ ԵՇԴ/0473/0210 գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը):

Վերաքննիչ դատարանի կողմից նշված օրինական ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.03.2005 թվականի վճռի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի որոշման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված գործերը վերաբերել են Ռուբիկ Ասատրյանի կողմից Անիկ Մնացականյանին վնաս պատճառելու հետևանքով վերջինիս առողջության վերականգնման համար կատարված բուժման ծախսերի հատուցմանը: Մինչդեռ, սույն գործով ներկայացված հայցադիմումից հետևում է, որ հայցի հիմքում դրվել են Ռուբիկ Ասատրյանի գործողությունների հետևանքով Անիկ Մնացականյանի աշխատունակությունը կորցնելու կապակցությամբ աշխատավարձ (եկամուտ) չստանալու, ինչպես նաև վերջին երեք տարիներին բուժման ծախսեր կատարելու հանգամանքները: Այսինքն՝ սույն գործով բացի իրական վնասի հատուցման պահանջից ներկայացվել է նաև բաց թողնված օգուտի տեսքով վնասի հատուցման պահանջ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով ներկայացրած հայցի և վերը նշված գործերով հայցերի առարկան ու հիմքը տարբեր են, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայում է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքը:

### **18.01.2012թ.**

**10.Ռուզաննա Դարբինյան v. Արտակ Հերիքյան, քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0768/02/11**

**Էջ  
43-45**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայրը ենթակա է հարուցման պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան, որպիսի կանոնից բացառություն են կազմում հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը, որոնք ենթակա են հարուցման հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի դատարան (բացառիկ ընդդատություն), իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բնակարանը բնորոշվում է որպես բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանց-



ված կամ համարակալված տարածք (շինություն): Այսինքն՝ բնակարանի (շինության) նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ հայցն ընդդատյա է այդ բնակարանի (շինության) գտնվելու վայրի, այլ ոչ թե պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Ռուզաննա Դարբինյանը ներկայացրել է Երևանի Լենինգրադյան փողոցի 36-րդ շենքի թիվ 16 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ հայց, որը ենթակա է հարուցման պատասխանողի բնակության վայրի դատարան, քանի որ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման պահանջը չի կարող նույնացվել հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի հետ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բնակարանը բնորոշվում է որպես բնակության համար նախատեսված տարածք (շինություն): Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված բացառիկ ընդդատության կանոնը կիրառելի է նաև բնակարանի՝ որպես շինության նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ հայցի նկատմամբ: Հետևաբար, Ռուզաննա Դարբինյանի ներկայացրած՝ Երևանի Լենինգրադյան փողոցի 36-րդ շենքի թիվ 16 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ հայցն ընդդատյա է Դատարանին:

## Հայցի ապահովումը

### 02.05.2012թ.

**11. Գազիկ Մարտիրոսյան v. Յուրիկ Հարությունյան և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ-1/0694/02/09**

**Էջ  
46-51**

Վճռաբեկ դատարանը սույն գործով անհրաժեշտ է համարել անդրադառնալ հայցի ապահովման վերացման հետ կապված հետևյալ իրավական խնդիրներին.

*Արդյոք հայցը բավարարվելու դեպքում գործի քննության ավարտից հետո ներկայացված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը ենթակա է դատարանի քննությանը.*

*Արդյոք հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդության վերադարձի մեխանիզմ օրենքով նախատեսված չլինելու դեպքում դատարանն իրավունք ունի վերադարձնել այն:*

Առաջին հարցին պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը պետք է դիտարկել հոդվածով կարգավորվող հարցերի տրամաբանական շարունակության մեջ: Մասնավորապես, նշված հոդվածի 1-3-րդ կետերը սահմանում են գործի քննության ժամանակ հայցի ապահովման վերացման կարգը, որն իրականացվում է միջնորդությամբ, դատական նիստով, ավարտվում է որոշմամբ, իսկ 4-րդ կետը կարգավորում է գործի քննության ավարտից հետո հայցի ապահովման միջոցի վերացման պահը և կարգը: Այդ կարգավորումը դրսևորվում է հետևյալ կերպ.

1. Հայցը մերժելու դեպքում հայցի ապահովման միջոցները մեխանիկորեն՝ օրենքի ուժով վերանում են վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից,

2. Հայցը բավարարելու դեպքում հայցի ապահովման միջոցները մեխանիկորեն՝ օրենքի ուժով վերանում են վճռի կատարման պահից:

---

Հետևաբար հայցը բավարարվելուց հետո միակ իրավաբանական փաստը, որն անհրաժեշտ է հայցի ապահովումը վերացնելու համար, վճռի կատարված լինելն է:

Բացի այդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե՝

1) կատարողական թերթը փաստացի կատարվել է.

2) պահանջատերը հրաժարվել է կատարողական թերթի պահանջների կատարումից:

Նույն օրենքի 44-ին հոդվածի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե առկա են նույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը.

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ հարկադիր կատարման վարույթում հայցի ապահովման միջոցի վերացումը կատարողական թերթի կատարված լինելու պարագայում պետք է իրականացվի, այսինքն՝ գույքն արգելանքից պետք է հանվի հարկադիր կատարողի որոշմամբ, քանի որ օրենքը հայցը բավարարվելու դեպքում հայցի ապահովման վերացման համար որպես հիմք պահանջում է դատարանի վճռի կատարված լինելու իրավաբանական փաստը, այսինքն՝ կատարողական թերթի փաստացի կատարված լինելու կամ պահանջատիրոջ կողմից դրա կատարումից հրաժարվելու փաստը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ ինչպես հայցի ապահովման միջոցի կիրառումը, այնպես էլ դրա վերացումը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով այդ դատավարական ինստիտուտի նպատակը, և եթե վերացել է դրա սահմանման նպատակը, այն կարող է օրենքի ուժով վերացվել: Այս տրամաբանությունը գործում է նաև դատարանի վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո հայցի ապահովման վերացման դեպքում, ինչն իր արտացոլումն է ստացել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել հատուկ ընդգծել, որ վերոհիշյալ իրավակարգավորումը վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ հայցը բավարարվելու դեպքում վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ, և հարուցվել է կատարողական վարույթ:

Մինչդեռ այն պարագայում, երբ հայցը բավարարելու մասին վճռի հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվել, որպիսի դեպքը սույն գործով առկա է, հայցի ապահովման միջոցը պետք է վերացվի գործը քննած դատարանի որոշմամբ:

Նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ և 141-րդ հոդվածների տրամաբանական վերլուծությունից: Վերջին հոդվածն իրավունք է վերապահում դատարանին գործին մասնակցող անձանց դիմումով վճռի կայացումից հետո հայցի ապահովման կամ դրա վերացման հարցը քննարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածն ընդգրկող 14-րդ գլխի կանոններով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի ապահովման վերացման հարցը գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածով սահմանված կարգով գործը քննող դատարանի կողմից կարող է քննարկվել ոչ միայն գործի քննության ընթացքում, այլև հայցը բավարարելու մասին վճռի հիման վրա կատարողական վարույթ հարուցված չլինելու դեպքում գործի քննության ավարտից հետո: Հետևաբար հայցի ապահովման մասին հայցվորի միջնորդությունը տվյալ դեպքում ենթակա էր քննարկման:

Անդրադատնալով երկրորդ հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածը վերաբերում է հայցադիմումը վերադարձնելուն, իսկ միջնորդությունը վերադարձնելու ինստիտուտ նշված օրենսգրքը չի նախատեսում, այսինքն՝ բացակայում է միջնորդությունը վերադարձնելու իրավական հիմքը: Հետևաբար Դատարանն իրավասու չէր վերադարձնելու միջնորդությունը նման լիազորության իրավական հիմքերի բացակայության պատճառով:

## **Գործի վարույթը կասեցնելը**

### **13.01.2010թ.**

**12. Վերա Ազիզյան v. Նունե Սարգսյան, քաղաքացիական գործ թիվ ԵԱԳԳ /0452/02/09**

**Էջ  
52-55**

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին ենթակետի հիման վրա, գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետից, որի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Ստորադաս դատական ատյանի պատճառաբանությունների անդրադատնալով վերոնշյալ մեկնաբանությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Երևանի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 02.11.2009 թվականի որոշմամբ հարուցված քրեական գործի քննությունն անհնարին չի դարձնում սույն գործի քննությունը, հետևաբար բացակայում է սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

### **20.10.2010թ.**

**13. Մարատ Ափինյան v. Անահիտ Ղազարյան և այլք, քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0500/02/08**

**Էջ  
56-59**

Սույն գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքի պատաս-

խանը քննարկելու դեպքում Վերաքննիչ դատարանը պետք է կայացնէր հակառակ որոշում: Վերաքննիչ բողոքի պատասխանում, մասնավորապես, նշված էր. «Բողոքաբերը բողոքի մեջ որպես էական նշանակություն ունեցող հանգամանք՝ նշել էր՝ «... Վարչական դատարանը քննության է առնում քաղաքացիական գործն ըստ հայցի՝ ... «2001 թվականի հունիսի 5-ի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու, դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն ու առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, 2001 թվականի փետրվարի 5-ի սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու և որպես տիրապետող ժառանգներ՝ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին»: Սակայն նման հայցապահանջ ներկայումս չկա, ներկայացված ձևակերպմամբ հայցը երեք անգամ փոփոխվել է: Հայցադիմումի քննությունը տարբեր ժամանակներում տարբեր դատարաններում քննության ենթակա լինելու պատճառով հայցվորները կատարել են հայցի հիմքի և առարկայի լրացում կամ փոփոխություն: Մասնավորապես՝ Վարչական դատարանում սեփականության իրավունքը ճանաչելու մասին պահանջը հանվել է, քանի որ այդ պահանջը Վարչական դատարանում քննության ենթակա չէ»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավոր է Դատարանի 17.03.2010 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ տրված պատճառաբանությունը հետևյալի մասին՝ «ՀՀ վարչական դատարանի վարույթում եղած հայցադիմումի լրացման այլ պահանջների հետ միասին, ներկայացված էր նաև պահանջ՝ Մարատ Ափինյանի և հայցվորների եղբոր՝ Հրաչիկ Բաբայանի միջև 16.01.2001 թվականին կնքված վիճելի տան առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Ըստ էության չի բացատրվում, որ վիճելի տան առուվաճառքի պայմանագիրը ճանաչվի անվավեր, ինչն անշուշտ, գործով հայցվոր Ափինյանի համար կառաջացնի իրավական հետևանքներ, այդ թվում՝ սույն գործով պատասխանողներին վտարման պահանջ ներկայացնելու իրավունքի բացակայություն»:

### **11.10.2010թ.**

#### **14. «Իրավագարանտ» ՍՊԸ v. Ինգա Մանդելի և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ, քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/2790/02/09** Էջ 60-63

Գործի վարույթը կասեցնելու հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է «Իրավագարանտ» ՍՊԸ-ն ընդդեմ Ինգա Մանդելի և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի գործով: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է՝

1. նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն,

2. նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սախատեսված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում գործի ողջամիտ ժամկետում քննությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ քաղաքացիական դատավարության ժամա-

նակ, երբ ներպետական օրենսդրությունը և պրակտիկան կողմերից են պահանջում նախաձեռնություն ցուցաբերել դատավարական շարժի համար, պետությունը պարտավոր է երաշխավորել դատավարության ողջամտությունը (տե՛ս Կոտտերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 01.02.2005 թվականի վճիռը, կետ 29, CROWTHER v. THE UNITED KINGDOM, 1 February 2005, par. 29): Եվրոպական դատարանը նշել է նաև, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է Բարձր Պայմանավորվող կողմերից իրենց *իրավական համակարգը կազմակերպել այնպես*, որը թույլ կտա դատարաններին գործել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մասնավորապես գործի քննության ողջամիտ ժամկետի հետ կապված (տե՛ս Բաշոլզն ընդդեմ Գերմանիայի գործով Եվրոպական դատարանի 06.05.1981 թվականի վճիռը, կետ 51, BUCHHOLZ v. GERMANY, 6 May 1981, par. 51):

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ չնայած թիվ ԵԲԳ/0782/02/08 քաղաքացիական գործով քննվում է 25.07.2007 թվականի թիվ 17 փոխառության պայմանագիրը, ժամկետի ավարտմամբ, դադարած համարելու, փոխառության գումարը և տոկոսագումարը բռնագանձելու պահանջները, այնուամենայնիվ, այդ հանգամանքը սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հիմք չէր, քանի որ սույն գործով վեճի առարկան տարբերվում էր նշված գործի վեճի առարկայից և Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ըստ «Շենգավիթ-Ա» ՄՊԸ-ի հայցի ընդդեմ «Եվրո Ֆինանս» ՄՊԸ-ի, երրորդ անձինք Ինգա Մանդելի, Աշոտ Հակոբյանի և «Իրավագարանտ» ՄՊԸ-ի՝ փոխառության թիվ 17 պայմանագիրը, ժամկետի ավարտմամբ, դադարած համարելու, փոխառության գումարը և տոկոսագումարը բռնագանձելու պահանջների մասին և «Եվրո Ֆինանս» ՄՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ «Շենգավիթ Ա» ՄՊԸ-ի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործի քննությունն անհնարին չի դարձնում սույն գործի քննությունը, ուստի և բացակայում է սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

**11.05.2011թ.**

**15. Գայանե Ասլանյան v. Սահակ Ասլանյան և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/0169/02/09**

**Էջ  
64-68**

Վճռաբեկ դատարանը վերահաստատել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ նշելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, դրանք են՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարեբությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Տվյալ դեպքում, Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ և 144-րդ հոդվածների պահանջներին համապատասխան լուծելով Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանների և Մարիամ Ստեփանյանի ներկայացուցչի միջնորդությունը, հիմնվելով Դատարան ներկայացված ապացույցների վրա, որոշում

կայացնելիս պատճառաբանելով, որ «անհնար է սույն գործի քննությունը մինչև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵՔԴ/0659/02/08 քաղաքացիական գործին վերջնական լուծում տալը, նկատի ունենալով, որ նշված քաղաքացիական գործով վիճարկվում է Դերենիկ Ասլանյանի և Գայանե Ասլանյանի միջև 17.03.2008 թվականին կնքված նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա Գայանե Ասլանյանի անվամբ՝ սույն գործով վեճի առարկա հանդիսացող Երևանի Հ. Հակոբյան փողոցի 1-ին շենքի թիվ 114 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, այսինքն՝ հիշյալ քաղաքացիական հայցի բավարարման դեպքում սույն քաղաքացիական գործով (վտարման պահանջով) հայցվորը այլևս չեր կարող հանդես գալ որպես պատշաճ հայցվոր, որպիսի փաստի առկայությունն անհնարին է դարձնում սույն քաղաքացիական գործի քննությունը», որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործի վարույթը մինչև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵՔԴ/0659/02/08 քաղաքացիական գործին վերջնական լուծում տալը կասեցնելու մասին:

Մնան պայմաններում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ «որոշման պատճառաբանական մասում չի պարզաբանել, թե ինչով է պայմանավորված սույն քաղաքացիական գործով քննության անհնարինությունը», անհիմն է և չի բխում Դատարանի որոշման բովանդակությունից:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիական գործն ուղղակիորեն կապված է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵՔԴ/0659/02/08 քաղաքացիական գործի հետ և վերջին գործը սույն գործի համար առաջացնում է գործի քննության անհնարինություն: Այսինքն, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը:

### **07.07.2011թ.**

**16.Ռուդոլֆ Բաբայան v. Լևոն Համբարձումյան, քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1395/02/10**

**Էջ  
69-72**

Ռուդոլֆ Բաբայանն ընդդեմ Լևոն Համբարձումյանի գործով զարգացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ տվյալ վեճի քննությունն անհնար է մինչ այլ գործի քննության ավարտը, որը վերապահված է սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր քննող դատարանին: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական, դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար (որոշ դեպքերում նաև նախադատելի) նշանակություն ունեն: Գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է նշել՝

1. այն կապը, որն առկա էր քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող

գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն,

2. ցույց տալ գործի քննության անհնարինությունը, այսինքն՝ ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը բխում էր նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետից, որի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վերաքննիչ դատարանը, Ռուդոլֆ Բաբայանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով Դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը, պատճառաբանել է, որ Ռուդոլֆ Բաբայանի հայցի առարկան ներառում է Երևան քաղաքի Մանանդյան փողոցի թիվ 26 շենքի 5-րդ բնակարանից պատասխանողին վտարելու պահանջը: Թիվ ԵՇԴ/0372/02/11 քաղաքացիական գործով, որի կապակցությամբ կասեցվել է սույն գործի վարույթը, Երևանի քաղաքապետարանի հայցի առարկան վերաբերում է վեճի առարկա բնակարանի նվիրատվության պայմանագիրը և դրանից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը 1/2-րդ մասով անվավեր ճանաչելուն, հետևաբար, նույն անշարժ գույքի նկատմամբ առկա են քաղաքացիական վեճեր, իսկ թիվ ԵՇԴ/0372/02/11 քաղաքացիական գործի լուծման բովանդակային կազմը կարող է որոշիչ նշանակություն ունենալ սույն գործով վերջնական դատական ակտի կայացման համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ առաջին առյալի դատարանի վարույթում գտնվող մեկ այլ քաղաքացիական գործը վերաբերում է Երևանի քաղաքապետարանի և Օֆելյա Մովսեսյանի, Ռուդոլֆ Բաբայանի միջև ծագած իրավահարաբերություններին՝ Երևանի Մանանդյան փողոցի թիվ 26 շենքի 5-րդ բնակարանի նվիրատվության պայմանագիրն ու դրանից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը 1/2-րդ մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, այսինքն՝ որևէ կապ չունի Ռուդոլֆ Բաբայանի և Լևոն Համբարձումյանի միջև սույն գործով նշված բնակարանից վտարելու իրավահարաբերությունների հետ, հետևաբար դրանք միմյանց համար գործի քննության անհնարինություն չեն կարող առաջացնել:

**08.06.2011թ.**

**17. Անահիտ Գալոյան v. Գրիգոր Կարապետյան, քաղաքացիական գործ թիվ ԿԳ-1/0902/02/10**

**Էջ 73-76**

Վերահաստատելով գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սույն գործով վիճելի հողամասի վերաբերյալ այլ վեճի առկայությունը չի կարող այդ հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ սույն գործի քննության անհնարինության հիմք հանդիսանալ, քանի որ ԿԳ-1/0611/02/10 քաղաքացիական գործով Անահիտ Բունիայանը վիճարկում է վերոհիշյալ հողամասի և դրա վրա գտնվող շինության կեսի նկատմամբ սեփականության իրավունքը՝ որպես ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք, իսկ սույն գործով Անահիտ Գալոյանը պահանջել է ամբողջ հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել սեփականության իրավունքը՝ գործին մասնակից դարձնելով

թե՛ Գրիգոր Կարապետյանին, թե՛ նշված գործով հայցվոր Անահիտ Բունիաթյանին: Այսինքն՝ ԿԳՆ/0611/02/10 քաղաքացիական գործով հայցի բավարարումն անգամ չի կարող ազդել սույն գործի քննության վրա, և նշված գործով վերջնական դատական ակտը չի կարող էական նշանակություն ունենալ սույն գործի լուծման համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Անահիտ Բունիաթյանի հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործի քննությունն անհնարին չի դարձնում սույն գործի քննությունը, հետևաբար բացակայում է սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

### **18.12.2012թ.**

#### **18.Ալեն Զանազյան v. Երվանդ Թովմասով և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/0393/02/12**

Էջ  
77-80

Վերահաստատելով *Անահիտ Գալոյանն ընդդեմ Գրիգոր Կարապետյանի թիվ ԿԳՆ/0902/02/10 քաղաքացիական գործով* արտահայտած դիրքորոշումը, Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտել է, որ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կասեցնելիս պատճառաբանել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական քննչական բաժնում քննվող թիվ 63200612 քրեական գործն անմիջականորեն կապված է սույն քաղաքացիական գործի հետ, և անհնարին է թիվ ԵԿԳ/0393/02/12 քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 63200612 քրեական գործով որոշման կայացումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել սույն գործի քննության անհնարինությունը, քանի որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել է քրեական գործ Հակոբ Մկրտչյանի կողմից խարդախությամբ Երվանդ Թովմասովից առանձնապես խոշոր չափի՝ 9.000 ԱՄՆ դոլար հափշտակելու փաստով, որը որևէ կապ չունի պատասխանողներ Հակոբ Մկրտչյանի և Երվանդ Թովմասովի միջև կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու իրավահարաբերության հետ, քանի որ սույն գործով դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հակոբ Մկրտչյանը, օգտագործելով Ալեն Զանազյանի կողմից իրեն տրված լիազորագիրը, ոչ թե վաճառել է ավտոմեքենան, այլ, ըստ էության, չարամիտ համաձայնության մեջ մտնելով պատասխանող Երվանդ Թովմասովի հետ՝ փորձել է փակել իր կողմից վերջինիս վթարված ավտոմեքենայի պարտքը Ալեն Զանազյանի «MITSUBISHI PAJERO» մակնիշի ավտոմեքենայով, ինչին պատասխանող Երվանդ Թովմասովը տեղյակ է եղել, քանի որ ամբողջությամբ չի վճարել 15.11.2011 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրում նշված ավտոմեքենայի գինը, բացի այդ, գործարքը կնքելու օրվանից ավտոմեքենան երբևէ Երվանդ Թովմասովի մոտ չի գտնվել, նա ավտոմեքենայի սեփականատիրոջը որևէ անգամ չի դիմել ավտոմեքենան իրեն հանձնելու հարցով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումն անհիմն է:



**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ  
ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ**

**20.12.2010թ.**

**19. Արմեն Եղյան v. Դվին Կոնցեռն ՓԲԸ, քաղաքացիական գործ թիվ Էջ ԵՉ 81-84 ԵԾԳ/0855/02/09**

Սույն գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայելու խնդրին:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն պատճառաբանել է, որ «տվյալ դեպքում ներկայացվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԾԳ\0855\02\09 քաղաքացիական գործով 04.12.2009թ. կայացրած վճիռը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու բողոք, սակայն նույն քաղ. գործով առկա է օրինական ուժի մեջ մտած ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2010թ. որոշումը», ուստի «Նոր երևան եկած հանգամանքներով տվյալ քաղաքացիական գործը վերանայելու բողոքը քննության է ենթակա ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, այսինքն՝ այն ներկայացվել է ընդդատության կանոնների խախտմամբ, որն էլ հիմք է այն վերադարձնելու համար»:

**ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**13.12.2010թ.**

**20. Մելիքսեթ Գաբրյան v. ՀՀ ոստիկանության Ախուրյանի անձնագրային բաժնի պետ Մկրտիչ Գասպարյան, քաղաքացիական գործ թիվ ԵԳԻ/0212/02/10** Էջ 85-88

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մելիքսեթ Գաբրյանը հայցադիմումը Դատարան ներկայացնելիս հայցադիմումին կցել է 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: Դատարանը, մերժելով Մելիքսեթ Գաբրյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության Ախուրյանի անձնագրային բաժնի պետ Մկրտիչ Գասպարյանի՝ 14.160.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը փոխհատուցելու պահանջի մասին, պետական տուրքի չվճարած մասը վճիռ կայացնելիս գանձելու հարցը, հիմք ընդունելով արդեն իսկ 4.000 ՀՀ դրամ վճարելու հանգամանքը, համարել է լուծված՝ պատճառաբանելով, որ, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «բ» կետի և նույն օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի, պետական տուրքը պետք է նվազեցնել, բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Մելիքսեթ Գաբրյանի գույքային դրությունը, այն է՝ ֆինանսապես ծանր վիճակում գտնվելը, 2004 թվականից աշխատանք և այլ եկամտի աղբյուր չունենալը, որի պայմաններում պետական տուրքի մնացած մասի վճարումը կարող է հանգեցնել նրա կենսամակարդակի զգալի նվազեցմանը:

Նշված վճիռն ընդ վերաքննիչ բողոք է ներկայացրել Մելիքսեթ Գաբրյանը և միջնորդել է ազատել պետական տուրքի վճարումից, քանի որ միջնորդության մեջ նշված պատճառներով 2004 թվականից զրկված է աշխատանքից, ազատ տեղաշարժվելու իրավունքից և սահմանադրական բոլոր իրավունքներից, գտնվում է նյութական և ֆինանսական ծանր վիճակում, որպիսի հանգամանքներն արդեն իսկ հաշվի է առել Դա-

տարանը: Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ բողոքաբերը չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց՝ ի հիմնավորումն միջնորդության մեջ ներառված փաստարկների, գտել է, որ միջնորդությունն անհիմն է և ենթակա մերժման ու վերադարձրել է վերաքննիչ բողոքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով Մելիքսեթ Գաբոյանի վերաբերյալ պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու համար բավարար հիմք հանդիսացող Դատարանի վերը նշված հետևությունները, Մելիքսեթ Գաբոյանի համար չի ապահովել նույն՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունը Վերաքննիչ դատարանում:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետով սահմանված հայեցողական լիազորությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մելիքսեթ Գաբոյանը պետք է ազատվեր պետական տուրք վճարելու պարտավորությունից:

**21.12.2011թ.**

**21. Նելլի Միքայելյան v. Գեղարքունիքի մարզի Ծափաթաղի միջնակարգ դպրոցի տնօրինություն, քաղաքացիական գործ թիվ ԳԴ1/0163/02/11**

**Էջ  
89-92**

Անդրադառնալով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումի ընդունելիության հարցը լուծելիս Դատարանը պետք է առաջնորդվեր անձի իրավունքների խախտման վերաբերյալ դատարան դիմելու անձի սահմանադրական իրավունքի ապահովման գերակայությամբ: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք չեն, քանի որ տվյալ վեճը ենթակա է դատարանում քննության, այսինքն՝ բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքը, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված հարցադրումները պետք է քննության առարկա դառնան հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո:

**27.07.2011թ.**

**22. Մանիկ Հովանեայան և այլք v. Արաքսի Սերոբյան, քաղաքացիական գործ թիվ ԱՎԴ1/0049/02/09**

**Էջ  
93-97**

Անդրադառնալով գործին մասնակից չդարձված անձանց կողմից վերաքննիչ բողոք բերելու ժամկետների հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիու-

թյան իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տես Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Ashingdane v. the United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն սպացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*տես Սյուրբինգը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, Stubbings and Others v. the United Kingdom, Judgment, 22.10.1996, par. 51,55*):

Վճարել դատարանը գտել է, որ վերոնշյալ սկզբունքների լույսի ներքո պետք է մեկնաբանվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ և 213-րդ հոդվածները:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակից չդարձված անձանց համար օրենսդիրը սահմանել է դատական ակտի բողոքարկման եռամսյա ժամկետ: Միաժամանակ օրենսգիրքը սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը՝ այն օրվանից սկսած, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին: Վճարակ դատարանն արձանագրում է, որ ժամկետների հաշվարկման նմանատիպ կարգը, որն ընդունված է Եվրոպայի Խորհրդի այլ անդամ պետությունների կողմից, ներառվում է պետության հայեցողական լիազորության մեջ, ինչը բխում է նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից (*տես Սյուրբինգը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 54*):

Միաժամանակ, բացի դատական ակտը նշված կարգով բողոքարկելու իրավական հնարավորությունից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է դատական ակտի բողոքարկման հնարավորություն նաև օրենքով սահմանված ժամկետն անցնելուց հետո: Վճարել դատարանը հարկ է համարել կրկնել իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի արգելում անձին վերաքննիչ բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո ներկայացնել բողոք և միաժամանակ միջնորդություն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, իսկ դատավարական ժամկետի խախտումն ինքնին բավարար չէ վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, քանի որ պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը, որի քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը (*տես Ալբերտ Սուքիասյանն ընդդեմ «Ջեներալ Տրանստրոլդ ՄԲ» ՓԲԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0438/02/09 գործով ՀՀ վճարել դատարանի 10.03.2010 թվականի որոշումը*):

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճարել դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ

---

հողվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն վերաքննիչ բողոքը վերադարձնել, եթե գործին մասնակից չդարձված անձինք վերաքննիչ բողոք են բերել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահից ետամյա ժամկետը լրանալուց հետո, և բողոքը միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը դատարանը չի բավարարել:

Վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ Վերաքննիչ դատարանը միջնորդության առկայության պայմաններում չի անդրադարձել դրան, որի արդյունքում բողոք բերած անձինք գրկվել են օրենքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո դատական ակտը բողոքարկելու իրավունքից, քանի որ օրենքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո դատական ակտը բողոքարկելու իրավունքը հնարավոր է իրականացնել միայն համապատասխան միջնորդություն ներկայացվելու դեպքում, իսկ ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից չքննվելու դեպքում խախտվում է այդ իրավունքի բուն էությունը:

### **09.02.2011թ.**

**23. Օֆելյա Ղուլինյան v. «Լոռու մարզի Սարչավետի միջնակարգ դպրոց» ԳՈԱԿ-ի տնօրեն Համլետ Դավթյան, քաղաքացիական գործ թիվ ԼԴ3/0387/02/09** **Էջ 98-101**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի «26.08.2010» թվականին կայացրած վճիռն օրինական ուժի մեջ է մտել 27.09.2010 թվականին, և նշված վճիռն ղեմ վերաքննիչ բողոքը պետք է բերվեր մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը: Տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո՝ 06.10.2010 թվականին, և այն չի պարունակում միջնորդություն բաց թողած ժամկետը վերականգնելու մասին:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն էին, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 08.09.2010 թվականին, ինչը հաստատվում է նշված վճիռում դրա վերաբերյալ կատարված գրառմամբ և 26.08.2010 թվականի դատական նիստի արձանագրությամբ, որի համաձայն՝ վճիռը հրապարակվելու է 08.09.2010 թվականին ժամը 12:00-ին, իսկ Օֆելյա Ղուլինյանը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 06.10.2010 թվականին: Այսինքն՝ Օֆելյա Ղուլինյանը Դատարանի 08.09.2010 թվականի վճիռն ղեմ վերաքննիչ բողոքը ներկայացրել է դրա հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Դատարանի 08.09.2010 թվականի վճիռում նշված «2010 թվականի օգոստոսի 26-ին» նշումը վերաբերում է դատական նիստի կայացման օրվան, որի արդյունքում էլ վճիռն հրապարակման օր է նշանակվել 08.09.2010 թվականը :

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում Օֆելյա Ղուլինյանը գրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

### **21.12.2011թ.**

**24. Հովհաննիս Բաղայան v. Սարիբեկ Բաղայան և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0433/02/11** **Էջ 102-104**

Վերաքննիչ բողոքը հետ վերցնելու իրավական հետևանքների խնդրին Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *Հռիփսիկ Բաղայանն ընդդեմ Սարիբեկ Բաղայանի և այլոց* գործով:

Գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունել 28.09.2011 թվականին, գործի քննությունը նշանակել է 05.10.2011 թվականին, Հռիփսիկ Բաղայանը վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին հայտարարությունն արել է 05.10.2011 թվականին նշանակված դատական նիստում, Վերաքննիչ դատարանը 05.10.2011 թվականին որոշում է կայացրել «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետը՝ անտեսելով, որ Հռիփսիկ Բաղայանը վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին հայտարարությունն արել է գործի քննությունն սկսելուց հետո:

### **21.12.2011թ.**

**25. Էմին Երիցյան v. ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության Թալինի տարածքային բաժին, քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ-2/0084/02/11** **Էջ 105-109**

Վերլուծելով մի շարք իրավադրույթներ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, գրառումներն ուղղելու, լրացնելու, փոփոխելու, վերականգնելու և չեղյալ հայտարարելու, պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կազմելու և պահպանելու կարգի ու ժամկետների և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ նույն օրենքով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և գրառումները կազմելու որակի համար պատասխանատվություն է կրում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմնի ղեկավարը և գրանցում կատարող աշխատողը: Հետևաբար, քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ կամ ուղղակիորեն դրան հանգեցնող գործն ըստ էության լուծող դատական ակտն առնչվում է նաև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմնի իրավունքներին և պարտականություններին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի վճիռը բողոք բերած անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացված լինելու փաստը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և գրառումները կազմելու որակի համար անմիջական պատասխանատվություն է կրում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինը, իսկ տվյալ դեպքում այդպիսի գրառմանն ուղղակիորեն հանգեցնող Դատարանի վճիռն առնչվում է նաև Գործակալության պարտականություններին:

**21.12.2011թ.**

**26. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ v. Դանիել Բարսեղյան և այլոց, քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0716/02/10**

**Էջ  
110-114**

Դատական ծանուցման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը անդրադարձել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի և այլոց գործով կայացրած որոշմամբ:

Նշված հարցի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ դրանք անհիմն են, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 27.07.2011 թվականին, այն Ընկերությունը ստացել է 05.08.2011 թվականին, վերաքննիչ բողոքը բերել է 06.09.2011 թվականին, իսկ Դատարանի կողմից վճիռն Ընկերությանը հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

Ինչ վերաբերում է Ընկերությանը հասցեագրված Դատարանի վճիռն ուղարկելու վերաբերյալ 28.07.2011 թվականով թվագրված գրությանը, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված գրությունը չի կարող դիտվել որպես Դատարանի վճիռը դրա հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով Ընկերությանն ուղարկելու վերաբերյալ ապացույց:

Շեռևաբար, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանը վճիռն Ընկերությանն է ուղարկել այն հրապարակելու հաջորդ իսկ օրը, անհիմն է և չի բխում սույն գործի փաստական տվյալներից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված վճիռն օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով Ընկերությանն ուղարկելու իմպերատիվ պահանջը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարել նաև Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանի վճիռն հրապարակմանը բողոք բերած անձը ներկա գտնվելու և դրա հրապարակումից անմիջապես հետո այն ստանալու հնարավորություն է ունեցել, սակայն ներկա չի գտնվել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որևէ նորմով սահմանված չէ վճիռն հրապարակմանը պարտադիր ներկա գտնվելու պահանջ:

**28.03.2012թ.**

**27. «Յունիբանկ» ՓԲԸ v. Գուրգեն Խաչատրյան և այլոք, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1182/02/11**

**Էջ  
115-119**

Սույն գործով կայացված որոշմամբ որոշմամբ ևս Վճռաբեկ դատարանը վերահաստատել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի և այլոց թիվ ԱՐԱԳ/0716/02/10 գործով արդարահայցած դիրքորոշումը:

Տվյալ գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին, և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի վճիռը հրապարակվել է 30.09.2011 թվականին, որի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 31.10.2011 թվականը, սակայն վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 10.11.2011 թվականին: Միաժամանակ, վերաքննիչ բողոքին կից ներ-

կայացված բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի համարելու մասին միջնորդությամբ բողոք բերած անձը հայտնել է, որ Դատարանի վճիռը ստացել է 13.10.2011 թվականին և վերաքննիչ բողոք բերելու մեկամսյա ժամկետ չի ունեցել: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ բողոք բերած անձի նշված փաստարկը և հիմնավորումը չի կարող վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ համարվել, քանի որ Ընկերությունը Դատարանի 30.09.2011 թվականի վճիռը ստացել է 13.10.2011 թվականին, և վերջինս վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ունեցել է 18 օր ժամանակ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ օրենսդիրը բողոքարկման համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի սկիզբ է համարել ոչ թե վճիռը բողոքաբերի կողմից ստանալու պահը, այլ դրա հրապարակման պահը, ուստի բողոքաբերի կողմից վճիռը ստանալուց հետո մեկամսյա ժամկետն ավարտված չլինելու պայմաններում դատական ակտի բողոքարկման ժամկետի բացթողման պատճառն այն հիմնավորմամբ, որ վճիռը 12 օր ուշ է ստացվել, չի կարող համարվել հարգելի, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ օրենսդրության նման տրամաբանությունը պետք է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ հոդվածների հետ համադրությամբ՝ մասնավորապես հաշվի առնելով, որ բողոքարկման մեկամսյա ժամկետի վերաբերյալ նման դիրքորոշումն ընդունելի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջների պահպանված լինելու դեպքում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված վճիռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով Ընկերությանն ուղարկելու իմպերատիվ պահանջը, ինչի արդյունքում վերջինս գրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքից:

**14.04.2012թ.**

**28. Իզաբելլա Ասյան v. Ապետ Ասյան, քաղաքացիական գործ թիվ 2-1369**

Էջ  
120-127

Սույն գործով կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնվելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ դատարանի կողմից չեն կարող ստեղծվել այնպիսի ձևական խոչընդոտներ, որոնց արդյունքում կխախտվի անձանց՝ դատական ակտն օրենքով նախատեսված կարգով վերանայելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը պատասխանողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ բողոքաբերի կողմից չեն ներկայացվել բողոքարկվող վճիռի մասին տեղեկանալու ժամկետի վերաբերյալ հիմնավորումներ և համապատասխան ապացույցներ: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ բողոքաբերը, որպես գործին մասնակցող անձ, 16.09.2011 թվականին արդեն իսկ տեղեկացված էր վճիռի մասին, մինչդեռ վերաքննիչ բողոք է ներկայացվել միայն 03.11.2011 թվականին, այսինքն՝ վճիռը ստանալուց հետո նույնիսկ չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված մեկամսյա ժամկետը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պատասխանողի ներկայացուցիչը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները Ապետ Ասյանի վերաբերյալ քննված քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու, դրանց վերաբերյալ իր առարկությունները ներկայացնելու:

---

և կայացված դատական ակտը բողոքարկելու համար, որպիսի փաստն ապացուցվում է պատասխանողի ներկայացուցչի կողմից 16.09.2011 թվականին փաստաթղթեր ստանալու մասին Դատարանին ներկայացված դիմումով: Իսկ քաղաքացիական գործի փաստաթղթերը՝ այդ թվում Դատարանի 13.06.2007 թվականի վճիռը պատասխանողի ներկայացուցչի կողմից ստանալու կոնկրետ ամսաթիվը պարզ չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող գալ հիմնավոր եզրահանգման այն մասին, թե պատասխանողի ներկայացուցիչը երբ է ստացել Դատարանի 13.06.2007 թվականի վճիռը, որի պայմաններում միայն վերջինս հնարավորություն կունենար այն բողոքարկելու օրենքով սահմանված ժամկետներում:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս պետք է քննարկեր այն հիմքերը, որոնք բերվել են բողոք բերողի կողմից:

Սույն գործում վերաքննիչ բողոք բերող անձը նշել է, որ Դատարանի 13.06.2007 թվականի վճիռի կայացման և ընդհանրապես իր վերաբերյալ քաղաքացիական գործի առկայության մասին որևէ կերպ չի տեղեկացվել, գործի քննության մասին պատշաճ չի ծանուցվել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ նաև նյութական և դատավարական իրավունքի այն խախտումները, որոնք բարձրացվել են բողոք բերող անձի կողմից և միջնորդության բավարարման հարցը քննարկելը նաև այդ հանգամանքները հաշվի առնելով:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է սույն գործով բարձրացված երկրորդ հարցին՝ գործին մասնակցի չդարձված անձի կողմից բողոք բերելու ժամկետներին :

Վճռաբեկ դատարանն արձնագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակցի չդարձված անձանց համար օրենսդիրը սահմանել է դատական ակտի բողոքարկման եռամսյա ժամկետ: Միաժամանակ օրենսգիրքը սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը՝ այն օրվանից սկսած, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին (*լրես Մանիկ Հովսեփյան, Թինա Օզանեզովյան ընդդեմ Արարսի Սերոբյանի թիվ ԱՎԴ/0049/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը*): Վճռաբեկ դատարանն արձնագրել է, որ ժամկետների հաշվարկման նմանատիպ կարգը, որն ընդունված է Եվրոպայի Խորհրդի այլ անդամ պետությունների կողմից, ներառվում է պետության հայեցողական լիազորության մեջ, ինչը բխում է նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից (*լրես Սյրաբինգալ և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 54*):

Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերոնշյալ իրավական կարգավորումը վերաբերում է գործին մասնակցի չդարձված անձանց կողմից դատական ակտի բողոքարկմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հստակ տարբերակում է գործին մասնակցող անձանց և գործին մասնակցի չդարձված այն անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ տարբերակելով նաև վերջիններիս կողմից դատական ակտը բողոքարկելու ժամկետները: Միաժամանակ որպես գործին մասնակցող անձ օրենսդիրը համարում է նաև պատասխանողին, իսկ պատասխանողներ են այն քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել:

Հետևաբար այն դեպքում, երբ անձի դեմ ներկայացված հայցադիմումն ընդունվում է վարույթ, վերջինս տվյալ գործով ձեռք է բերում գործին մասնակցող անձի՝ պա-



տասխանողի դատավարական կարգավիճակ և չի կարող համարվել գործին մասնակից չդարձված անձ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է այն անձանց կողմից բողոք բերելու իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք չունեն նույն օրենսգրքի 27-րդ հոդվածով նշված դատավարական կարգավիճակներից որևէ մեկը (կողմ, երրորդ անձ, դիմող): Հետևաբար այն դեպքերում, երբ բողոք բերող անձը տվյալ գործով ունի դատավարական կարգավիճակ, վերջինիս կողմից բողոքարկման ժամկետների նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի չէ:

Սույն գործով հայցը հարուցվել է Իգարելյա Ասյանի կողմից ընդդեմ Ապետ Ասյանի, ուստի Ապետ Ասյանը գործով չէր կարող լինել գործին մասնակից չդարձված անձ, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

**01.02.2012թ.**

**29. Ադավիի Մանուկյան v. Արսեն Հովհաննիսյան, քաղաքացիական գործ թիվ ԵՇԳ/0420/02/10**

**Էջ  
128-132**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում բողոք է ներկայացվել այն դատական ակտի դեմ, որն այլևս գոյություն չունի, և Վերաքննիչ դատարանի 05.11.2010 թվականի որոշմամբ բեկանվել է, հետևաբար չի կարող բողոքարկվել:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արսեն Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի բովանդակությունից պարզ է, որ վերջինս վերաքննիչ բողոք ներկայացրել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի թիվ ԵՇԳ/0460/02/11 վճռի դեմ, սակայն վերաքննիչ բողոքում վիճարկվող դատական ակտի համարը նշվել է թիվ ԵՇԳ/0420/02/10, իսկ վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը 04.07.2011 թվական, ինչի արդյունքում սույն վերաքննիչ բողոքը քննարկվել է թիվ ԵՇԳ/0420/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի սխալ կիրառմամբ: Բացի այդ, թիվ ԵՇԳ/0420/02/10 քաղաքացիական գործով կայացված դատական ակտի տարին, ամիսը, ամսաթիվը 09.07.2010 թվականն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ բողոքում կայացրած վճռի գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը սխալ նշելն արդեն իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների խախտում է, որպիսի խախտումների առկայությունը վերաքննիչ բողոքը վերադարձնելու և թույլ տրված խախտումները վերացնելու համար երկշաքայա ժամկետ տրամադրելու հիմք է, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի սխալ կիրառման արդյունքում բողոք բերող անձը զրկվել է վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու իրավունքների իրականացման հնարավորությունից:

---

---

# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գործերի ընդդատությունը

**23.12.2010թ.**

30. «Կարախանյան և ընկերներ իրավաբանական գրասենյակ» ՍՊԸ և այլոք **v.** Էջ  
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, վարչական գործ 133-137  
թիվ ՎԳ/2743/05/10

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ՀՀ վարչական դատարանին ենթակա չեն նաև այն գործերը, որոնք բխում են հենց քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից: Ընդ որում, այդ իրավահարաբերությունները ծագում են քրեական վարույթի շրջանակներում և քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից քրեական դատավարության ժամանակ համապատասխան լիազորություններն իրականացնելիս:

Հարկային մարմինն իր կողմից վերահսկվող եկամուտների քննազատում նախաքննությունն իրականացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների (քննիչների) միջոցով: Այսինքն՝ հարկային ոլորտում նախաքննության իրականացման ընթացքում միայն հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանումների (քննիչների) գործողությունները կարող են դիտվել որպես քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործողություններ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հարկային մարմինն իր կողմից վերահսկվող եկամուտների քննազատում նախաքննությունն իրականացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների (քննիչների) միջոցով, քանի որ այդպիսի լիազորություններով օժտված են բացառապես հարկային մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների քննիչները:

Սույն գործի փաստերով հաստատվել է այն հանգամանքը, որ Կոմիտեի քննչական վարչությունում քննվող թիվ 83101410 քրեական գործի շրջանակներում տեղեկություններ և փաստաթղթեր ձեռքբերելու նպատակով Դեպարտամենտի ղեկավարին է դիմել ոչ թե Կոմիտեի քննչական վարչության՝ նշված քրեական գործը քննող քննիչը, այլ Կոմիտեի նախագահի տեղակալը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ Կոմիտեի նախագահի տեղակալի կողմից Կոմիտեի քննչական վարչությունում քննվող թիվ 83101410 քրեական գործի շրջանակներում Դեպարտամենտի ղեկավարից տեղեկություններ և փաստաթղթեր ձեռքբերելուն ուղղված գործողությունները չեն կարող դիտվել որպես քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործողություններ, այլ նշված գործողությունները պետք է դիտվել որպես վարչական մարմնի իրականացրած վարչարարություն, որի հետ կապված վեճերը բխում են հանրային իրավահարաբերություններից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:

**Դատավարական ժամկետները**

**25.02.2011թ.**

**31.Գրիգոր Խաչերյան v. Երևանի քաղաքապետարան, վարչական գործ թիվ ՎԳ/2603/05/10**

**Էջ  
138-143**

Վերլուծելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների լրանալուց հետո ներկայացված հայցադիմումները դատարանը վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը: Բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու մասին միջնորդությունում պետք է նշվեն բացթողնման պատճառները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս Դատարանը պետք է առաջնորդվեր անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու և դրա մատչելիության սկզբունքներով:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարան դիմելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետային սահմանափակումները Դատարանը սույն գործով պետք է կիրառեր Գրիգոր Խաչերյանի իրավունքների դատական պաշտպանության մատչելիության լույսի ներքո: Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Գրիգոր Խաչերյանի միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ Գրիգոր Խաչերյանի ներկայացուցիչը 09.12.2009 թվականին տեղեկացել է, որ Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5/2 հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ առկա է վեճ, որի կապակցությամբ հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 30.01.2010 թվականին ընդունվել է վարույթ և միայն այդ քաղաքացիական գործի քննության ժամանակ է տեղեկացել Երևանի քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշման առկայության մասին: Այսինքն՝ Գրիգոր Խաչերյանը Երևանի քաղաքապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում չէր կարող դիմել դատարան նշված որոշումը վիճարկելու պահանջով:

**Դատական ծախսերը**

**20.10.2010թ.**

**32. Սիրանուշ Սաքունց v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ավագ հարկադիր կատարող Հայկ Դուկասյան, վարչական գործ թիվ ՎԳ/2383/05/10**

**Էջ  
144-147**

Սույն գործով ՀՀ վարչական դատարանը իր որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված հայցադիմումին կցված չեն սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերը և բացակայում է օրենքով նախատեսված պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանը իր որոշմամբ Սիրանուշ Սաքունցի բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով, այլ ոչ թե հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) վիճարկելու հայցերով, որոնց տարբերությունը կայանում է նրանում, որ առաջին դեպքում դիմումը ներկայացվում է վերադաս մարմնին, իսկ մյուս դեպքում հայցադիմումում է ներկայացվում դատարան: Այնուհետև Դատարանը նշել է նաև, որ Սիրանուշ Սաքունցը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որպիսի պարագայում վերջինս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով ազատված չէ պետական տուրքի վճարումից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետը, որը մասնավորապես հարկադիր կատարողների գործողությունները դատարաններում գանգատարկելու վերաբերյալ դիմումներով ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար նախատեսում է արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու տեսքով: Նշված հոդվածը թվարկում է այն դեպքերը, երբ գործում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնությունը: Մասնավորապես, այդ հոդվածից բխում է, որ հարկադիր կատարողի գործողությունները, որոնք կարող են դրսևորվել և ակտիվ, այդ թվում նաև ուղղված վարչական ակտի ընդունմանը, և պասիվ եղանակով, ինչպես օրինակ անգործության դեպքում, կարող են գանգատարկվել, որը հենց նույն է, թե վիճարկվել դատական կարգով՝ առանց պետական տուրք վճարելու պարտավորության:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի վերոնշյալ մեկնաբանությունը բխում է նաև նույն օրենքի այլ հոդվածների համալիր վերլուծությունից: Մասնավորապես, նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն վերադասության, ինչպես նաև դատական կարգով գանգատարկել պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար անձանց գործողությունները, 41-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը գանձելիս համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները կարող են գանգատարկվել այն մարմին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք, կամ դատարան:

Վերոնշյալից հետևում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իմաստով գանգատարկումը վերաբերում է ինչպես վերադասությանը, այնպես էլ դատական կարգին, իսկ 22-րդ հոդվածի «թ» կետը կարգավորում է դատական կարգով հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու դեպքում պետական տուրքի արտոնության հետ կապված հարաբերությունները:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ անհիմն է Դատարանի այն պատճառաբանությունը, որ ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով, այլ ոչ թե հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) վիճարկելու հայցերով, որոնց տարբերությունը կայանում է նրանում, որ առաջին դեպքում դիմումը ներկայացվում է վերադաս մարմնին, իսկ մյուս դեպքում հայցադիմում է ներկայացվում դատարան:

### **30.11.2010թ.**

**33. Գոհար Կարազյոզյանը և այլոք v. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Կենտրոն» տարածքային ստորաբաժանում, վարչական գործ թիվ ՎԳ/2648/05/10**

Էջ  
354-361

Վերահաստատելով նախկին որոշումներում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական տուրքի գծով արտոնությունները, այդ թվում՝ դրա տարածամկետումը կամ վճարման հետաձգումը նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորում են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու, վերադաս ատյան բողոք ներկայացնելու անհնարինությունը:

Այդ նպատակից ելնելով՝ օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար առավել լայն հայեցողական լիազորություն է սահմանել պետական տուրքի վճարումը տարածամկետելու կամ հետաձգելու հարցում: Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանը որոշման կայացման հիմքում դրել էր այն հանգամանքը, որ հայցվորները չեն ներկայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու համար հիմք հանդիսացող իրենց գույքային դրության վերաբերյալ որևէ ապացույց, իսկ Դատարանը բողոքը մերժելիս գտել է, որ ՀՀ վարչական դատարանի որոշումն իրավաչափ է և կայացվել է օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Գործի փաստերի համաձայն՝ հայցադիմումին կից միջնորդությամբ Գոհար Կարազյոզյանը, Ռուբեն և Արվի Կարապետյանները խնդրել են տարածամկետել պետական տուրքի վճարումը և այն լուծել վճռով՝ հաշվի առնելով, որ ներկայումս չեն աշխատում և գտնվում են նյութական ծանր պայմաններում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանը ՀՀ վարչական դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս պարտավոր էր պարզել, թե սույն գործով ՀՀ վարչական դատարանն առաջնորդվել է արդյոք անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և եղել է այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից: Այդ հանգամանքը պարտավորեցնում է ՀՀ վարչական դատարանին իր հայեցողական լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից:

ՀՀ վարչական դատարանի կողմից հայեցողական լիազորությունների վերոնշյալ ձևով իրականացումը գործով պետք է դրսևորվեր՝ հայց ներկայացնելու պահին պետական տուրք վճարելու հնարավորության բացակայությունը պարզելու ուղղությամբ որոշակի գործողություններ իրականացնելով՝ տվյալ դեպքում հայցվորներին հնարավորություն ընձեռելով ներկայացնելու միջնորդությունը հիմնավորող ապացույցներ: Մինչդեռ, ՀՀ վարչական դատարանը հայցվորներին նման հնարավորություն չի տվել, իսկ Դատարանն էլ իր հերթին, հաշվի չառնելով վերոհիշյալ հանգամանքը, մերժել է բողոքը:

Դատարանի այն պատճառաբանությանը, որ Դատարանը չի քննարկում բողոքը՝ «Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու» մասով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթից ակնհայտ է, որ որոշումն այդ մասով բողոքարկման ենթակա չէ, վարչական դատարանը՝ 3 դատավորի կազմով, « Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու» մասով բողոքը քննարկելու իրավասություն չունի, քանի որ նույն հոդվածի 1-ին մասով՝ դատարանի համար նման իրավունք սահմանված չէ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ .

Այն դեպքերում, երբ հայցադիմումի վերադարձման հիմք է միայն պետական

---

տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության մերժումը, և այդ որոշման դեմ ներկայացվել է բողոք, ապա վարչական դատարանի կողմից 3 դատավորի կազմով բողոքի քննության առարկան պետք է լինի նման միջնորդության մերժման հետևանքով հայցադիմումի վերադարձը: Հետևաբար, Գատարանը 3 դատավորի կազմով բողոքի քննության ժամանակ պետք է քննարկման առարկա դարձնել ներկայացված միջնորդության հիմնավորվածությունը, քանի որ տվյալ դեպքում չի կարող հայցադիմումի վերադարձի օրինականությունը գնահատվել առանց դրա հիմքը կազմող միջնորդությունը քննարկելու: Այդ դիրքորոշումը բխում է նաև անձի՝ դատարանի մատչելիության սահմանադրական սկզբունքից, քանի որ բողոքի՝ միջնորդության հիմնավորվածության մասը քննարկման առարկա չդարձվելու դեպքում ֆինանսական սահմանափակումների պատճառով անձի՝ դատարան դիմելու իրավունքի ապահովման մեխանիզմներն արդյունավետ չեն կարող համարվել:

**22.12.2010թ.**

**34. Գայանե Մելկումյան v. ՀՀ կառավարություն, վարչական գործ թիվ ԷԶ ՎԳ/2654/05/10 148-157**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գայանե Մելկումյանը հայցադիմումին կից ներկայացրել է միջնորդություն, որով խնդրել է հետաձգել պետական տուրքի վճարման ժամկետը՝ պատճառաբանելով, որ ներկայումս չի աշխատում: ՀՀ վարչական դատարանը 02.08.2010 թվականի որոշմամբ Գայանե Մելկումյանի նշված միջնորդությունը մերժել է, իսկ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը վերադարձրել է վերջինին այն պատճառաբանությամբ, որ նա միջնորդությամբ չի ներկայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու համար հիմք հանդիսացող որևէ հիմնավորում, այն է՝ գույքային դրության վերաբերյալ ապացույց:

Վերահաստատելով պետական տուրքի վճարումը հետաձգելը մերժելու հիմքով դատարանի մատչելիության իրավունքից զրկելու վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատարանը գործով առաջին հերթին պետք է առաջնորդվել անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելնել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից: Նշված հանգամանքը պարտավորեցնում է դատարանին իր հայեցողական լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից:

**22.08.2012թ.**

**35. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն v. Ռուբեն Մայիլյան, վարչական գործ թիվ ՎԳ/1040/05/12 ԷԶ 158-160**

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու պարագայում հայցվորի կողմից պետական տուրքի վճարման հարցին և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմողներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել

պետական տուրքի վճարման պարտականություն (*լրեն ըստ Ծառայության հայցի ընդդեմ Գարեգին Գալոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.07.2011 թվականի թիվ ՎԴ6/0035/05/10 որոշումը*):

Մինչդեռ վերաքննիչ բողոքով Ծառայությունը պահանջել է բեկանել Դատարանի 27.03.2012 թվականի վճռի՝ Ծառայությունից պետական բյուջե 1.500 ՀՀ դրամ բռնագանձելու մասը և այն փոփոխել՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտել է, որ բողոք բերած անձն ազատված է սույն գործով հայցի համար սահմանված պետական տուրքի վճարումից: Հետևաբար, նկատի ունենալով, որ բողոք բերած անձը Դատարանի վճիռը բողոքարկել է ոչ թե ամբողջությամբ, այլ հայց ներկայացնելու համար իր նկատմամբ պետական տուրքի վճարման պարտականություն դնելու մասով, ապա վերջինս օրենքի ուժով ազատված է նաև Դատարանի վճռի նշված մասի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի վճարման պարտականությունից:

## ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները

**06.12.2010թ.**

**36. Երևանի «Գլաձոր» համալսարան ուսումնաարտադրական կողմերատիվ v. Էջ  
ՀՀ կրթության և գիտության նախարարություն, վարչական գործ թիվ ՎԴ/2298/05/10 161-165**

Վճարելի դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*լրես՝ ՀՀ վճարելի դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44*):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու՝ այն է քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*լրես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland), թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, 2-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Z. and Others v. The United Kingdom), թիվ 29392/95, 91-93-րդ կետերը*):

Անձի դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությանը և Կոնվենցիայով: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ճանաչման հայցով դատարան դիմելու իրավունքը կարող է սահմանափակվել, եթե անձն ունի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-67-րդ հոդվածներով նախատեսված վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց ներկայացնելու հնարավորություն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված ճանաչման հայց ներկայացնելու համար որևէ սահմանափակում նախատեսված չէ:

Սույն գործով Համալսարանը հայցադիմում է ներկայացրել պահանջելով՝

1. Նախարարության՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապված հարաբերություններում հավատարմագրման պահանջի շրջանցման գործողությունները (անգործությունը) ճանաչել ոչ իրավաչափ,

2. Նախարարության՝ Համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ» մասնագիտությունների գծով հավատարմագրում չիրականացնելու հետ կապված գործողությունները (անգործությունը) ճանաչել ոչ իրավաչափ,

3. վերացնել Նախարարության անգործության հետևանքները՝ պարտավորեցնելով վերջինիս անհապաղ կազմակերպել Համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ» մասնագիտությունների գծով հավատարմագրումը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով ներկայացված ճանաչման հայցը վերաբերում է վարչական մարմնի գործությունը ոչ իրավաչափ ճանաչելուն, որի ներկայացման իրավական հնարավորությունը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ նշված մասով հայց ներկայացնելու դեպքում նույն հոդվածի 1-ին մասի սահմանափակումը չի տարածվում:

## Հայցադիմում ընդունելը, հայցադիմում վերադարձնելը, հայցադիմումի ընդունումը մերժելը

### 27.06.2011թ.

37. Ֆահրադ Ափուջանյան և այլոք v. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողով, վարչական գործ թիվ ՎԳ/4556/05/10

Էջ  
166-172

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հանձնաժողովի կողմից անձի նկատմամբ հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանելու մասին որոշում կայացվելու դեպքում անձը համարվում է բնակարան (բնակելի տուն) ստանալուն չհավակնող, ինչից հետևում է, որ նման որոշումն իրենից ներկայացնում է միջամտող վարչական ակտ, որով ավարտվում է անձի նկատմամբ հարուցված վարչական վարույթը, քանի որ դրա միջոցով Հանձնաժողովը մերժում է անձի՝ բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնելու իրավունքի իրականացումը: Դրան հակառակ բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնող անձի դեպքում նրա նկատմամբ հարուցված վարչական վարույթն ավարտվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից բնակարանների (բնակելի տների) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին հրամանի կայացմամբ:

Այսինքն՝ Կանոնակարգը նախատեսում է վարչական վարույթի ավարտման եր-



կու հնարավորություն, որոնցից մեկի արդյունքում ընդունվում է միջամտող վարչական ակտ՝ հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանելու մասին որոշում, իսկ մյուսի արդյունքում՝ բարենպաստ վարչական ակտ՝ բնակարանների (բնակելի տների) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին հրաման:

Վճարել դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններն անհիմն են, քանի որ բնակարանների (բնակելի տների) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը, հետևաբար նաև այդ հրամանի կայացմամբ վարչական վարույթի ավարտը, վերաբերում է բացառապես բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնող անձանց, իսկ բնակարան (բնակելի տուն) ստանալուն չհավակնող անձանց մասով վարչական վարույթն ավարտվում է հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանելու մասին Հանձնաժողովի որոշման կայացմամբ, քանի որ այդ որոշման միջոցով Հանձնաժողովը մերժում է անձանց՝ բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնելու իրավունքի իրականացումը, հետևաբար նաև նրանց նկատմամբ ՀՀ քաղաքաշինության նախարարի նշված որոշման կայացման հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճարել դատարանը գտել է, որ Հանձնաժողովի 05.10.2010 թվականի թիվ 20 արձանագրությամբ կայացրած որոշումը պարունակում է վարչական ակտի բոլոր վավերապայմանները:

Մասնավորապես՝ այն՝

1) ունի արտաքին ներգործություն, այն է՝ կարգավորում է վարչական մարմնի՝ Հանձնաժողովի և ֆիզիկական անձանց՝ Ֆահրադ Ափուջանյանի և նրա ընտանիքի անդամների միջև ծագած իրավահարաբերությունները,

2) անհատական իրավական ակտ է՝ դրա 1-ին հավելվածի 42-րդ կետն ուղղված է Ֆահրադ Ափուջանյանին և նրա ընտանիքի անդամներին,

3) ընդունվել է վարչական մարմնի՝ Հանձնաժողովի կողմից,

4) ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, այն է՝ կարգավորում է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման ոլորտում առաջացած իրավահարաբերությունները,

5) հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ, այն է՝ կարգավորում է հայցվորների հերթացուցակում ընդգրկելու չափանիշներին համապատասխանության հարցը,

6) ուղղված է Ֆահրադ Ափուջանյանի և նրա ընտանիքի անդամների իրավունքների վերացմանը՝ բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում չընդգրկելուն:

Հետևաբար, Վճարել դատարանը գտել է, որ Հանձնաժողովի 05.10.2010 թվականի թիվ 20 արձանագրությամբ կայացրած որոշումը որպես վարչական ակտ չորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է:

Վճարել դատարանը վճարել բողոքի շրջանակներում քննարկման առարկա է դարձրել նաև իրավական հետևյալ հարցադրումները.

*արդյո՞ք հայցադիմումը վերադարձնելուց հետո անձն իրավունք ունի թերությունները վերացնելու հետ միաժամանակ ավելացնել հայցապահանջը, և արդյո՞ք նշվածը հիմք է հայցադիմումի ընդունումը մերժելու համար:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 78-րդ հոդվածի 4-րդ մասի վկայակոչմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցադիմումը վերադարձնելու դեպքում դատարանը նշում է այն խախտումները, որոնք հիմք են հանդիսացել հայցադիմումը վերադարձնելու համար, որից հետո անձը նույն հայցադիմումի մեջ՝ դատարանի կողմից նշված խախտումները վերացնելու դեպքում իրավունք ունի այն կրկին ներկայացնել դատարան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական վերոնշյալ նորմը չի արգելում անձին հայցադիմումը վերադարձվելու դեպքում ներկայացնել նոր պահանջներով հայցադիմում: Հետևաբար, հայցադիմումը վերադարձնելուց հետո անձն իրավունք ունի թերությունները վերացնելու հետ միաժամանակ ավելացնել հայցապահանջը և ներկայացնել հայցադիմում:

Անդրադառնալով երկրորդ իրավական հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար պետք է հիմք ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավական կարգավորումը: Նշված նորմով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք է այն դեպքը, երբ անձը ներկայացրել է նույն հայցադիմումը, սակայն չի վերացրել դատարանի կողմից մատնանշված և գործի քննության համար արգելք հանդիսացող թերությունները:

Հետևաբար, այն դեպքում, երբ անձը ներկայացնում է ավելացված պահանջով հայցադիմում, դատարանն իրավունք չունի հայցադիմումի ընդունումը մերժել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, քանի որ այդ կետը նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ գործով 30.12.2010 թվականին ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքը բացակայում է, քանի որ անձը խախտումները վերացնելու հետ միաժամանակ ավելացրել է պահանջը և ներկայացրել հայցադիմում, որի ընդունումը մերժելու հիմք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածը չի պարունակում:

## **02.02.2011թ.**

**38. Աշոտ Մաֆարյան v. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Քանաքեռ-Ձեյթուն հարկային տեսչություն, վարչական գործ թիվ ՎԳ/1585/05/10**

**Էջ  
173-177**

ՀՀ վարչական դատարան դիմելու, հետևաբար նաև վարչական-դատավարական կարգով խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանություն իրականացնելու անձի իրավունքը բացարձակ բնույթ չունի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով այն կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնցով խաթարվի այդ իրավունքի, հետևաբար նաև արդարադատության բուն էությունը, քանի որ որևէ սահմանափակում անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե այդ նպատակի և գործադրվող միջոցների միջև առկա չէ ողջամիտ հավասարակշռված կապ:

Սույն գործով Դատարանը բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Աշոտ Մաֆարյանը չի պահանջում ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, այլ պահանջում է որոշման նկատ-

մամբ ամբողջությամբ կիրառել անվավերության հետևանք, որպիսի պահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում վիճարկման հայց, իսկ ներկայացված մյուս պահանջով ոչ թե պահանջում է ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից կամ որը նա չի ընդունել, այլ՝ վերացնել անհիմն վարչական տուգանքը, որպիսի պահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում պարտավորեցման հայց: Այսպիսով, Աշոտ Սաֆարյանը չի վերացրել ՀՀ վարչական դատարանի 18.05.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ նշված՝ պահանջին վերաբերող հայցադիմումի թերությունները, իսկ նշված թերությունները չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Դատարանի նշված պատճառաբանության հետևանքով Աշոտ Սաֆարյանը զրկվել է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության սահմանադրական իրավունքից:

Այսպես, Աշոտ Սաֆարյանը, դիմելով դատարան, պահանջել է ստուգման հանձնարարականի, ստուգման արդյունքում վարչական տուգանքի ենթարկելու մասին վարչական ակտի և նույն ակտի բողոքարկման արդյունքում ընդունված որոշման նկատմամբ ամբողջությամբ կիրառել անվավերության հետևանք և վերացնել անհիմն վարչական տուգանքը:

Այսինքն՝ Աշոտ Սաֆարյանն ըստ էության վիճարկել է վարչական մարմնի կողմից վարչական ակտով առաջադրված պարտավորության իրավաչափությունը, որպիսի պահանջը համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի հատկանիշներին, ինչպես նաև ներկայացրել է հետևանքների վերացման ամանցյալ պահանջ, որպիսի իրավունքից վերջինս օգտվում է նույն օրենսգրքի 70-րդ հոդվածով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ անհիմն է Դատարանի այն հետևությունը, որ Աշոտ Սաֆարյանի հայցադիմումի թերությունները չվերացնելն արգելք է գործի քննության համար:

## Հայցի ապահովումը

### 27.04.2011թ.

39. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսություն v. «Ալնես Քոնսթրաքշն» ՍՊԸ, վարչական գործ թիվ ՎԳ/3511/05/10

Էջ  
178-182

Վճռաբեկ դատարանը կրկնել է իր այն դիրքորոշումը, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու համար անհրաժեշտ է ապացուցել հայցի ապահովում չկիրառելու դեպքում դատական ակտի կատարման դժվարացման կամ անհնարիմության հանգամանքը (*տե՛ս՝ ըստ դիմումի «Բի լայն» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առևտրի և փոխտնտեսական զարգացման նախարարության մրավոր սեփականության գործակալության՝ պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին թիվ ՎԳ/0677/05/08 վարչական գործով 21.04.2008 թվականի ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դատավարական նորմը կոչված է ապահովելու հայցվորի և

պատասխանողի շահերի համադրված պաշտպանությունը: Մասնավորապես՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով կարող է փոխարինվել, եթե այն անհամաչափ սահմանափակում է պատասխանողի իրավունքները՝ կապված արգելանքի տակ դրված գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման հետ, կամ վերջինիս կարող է պատճառվել վնաս, որից կարելի է խուսափել հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դեպքում: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դեպքում դատարանը պետք է հաշվի առնի հայցվորի շահերը և այն նպատակները, որը հետապնդում է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտը:

Հետևաբար, դատարանն արդեն կիրառված հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու անհրաժեշտության փաստը հաստատված համարելու համար պարտավոր է հիմնվել միայն այդպիսի փաստը հաստատող ապացույցների վրա, առանց որոնց հնարավոր չէ եզրահանգման գալ այն մասին, որ արդեն կիրառված հայցի ապահովման միջոցի փոխարինումը նույնպես կարող է բացառել դատական ակտի կատարումն անհնարին դարձնող կամ դժվարացնող հանգամանքները, ինչպես նաև վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացումը:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ տվյալ դեպքում փոխարինված հայցի ապահովումը ևս բավարար երաշխիքներ է ապահովում հարուցված հայցով ապագա վճռի կատարման համար, անտեսել է, որ նշված եզրահանգումը հաստատող որևէ ապացույց գործում առկա չէ:

#### **14.12.2012թ.**

**40. «Միլլար» ՍՊԸ և Նապոլեոն Ազիզյան v. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, վարչական գործ թիվ ՎԳ/4841/05/12**

**Էջ  
183-191**

Սույն գործով վերլուծելով ներպետական, կոնվենցիոն մի շարք դրույթներ, վերահաստատելով հայցի ապահովման ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը, անդրադառնալով սեփականության իրավունքի միջամտության հարցի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ օրենսդիրը հստակ սահմանելով հայցի ապահովման 5 միջոցներ, ըստ էության միաժամանակ սահմանել է դրանց կիրառելիության ոլորտը: Այսինքն, հայցի ապահովման միջոցը կարող է կիրառվել միայն վեճի առարկայի նկատմամբ:

Անդրադառնալով վեճի առարկա եզրույթի բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը տվյալ դեպքում վեճի առարկա ասելով նկատի ունի վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտը, այսինքն՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Սույն գործով վեճի առարկան վարչական մարմնի կողմից սեփականության իրավունքի գրանցումն է և ոչ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունները:

Ուստի դատարանը, որպես հայցի ապահովման միջոց իրավունք չունեղ սնանկության գործով կառավարչին արգելել տվյալ շինությունների նկատմամբ որևէ գործողությունների կատարումը, այդ թվում՝ գույքագրումը և օտարումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ այն դեպքերում, երբ հայց է հարուցվում այլ դատարանում, ապա դատարանի հայցի ապահովման միջոցների կիրառումը պետք է համաչափ լինի և հնարավորինս չխոչընդոտի այլ անձանց օրենքով վերապահված իրավունքների և պարտականությունների կատարմանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական դատավա-

րության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը վերը նշված պատճառաբանությունների լույսի ներքո սույն գործով չի կարող կիրառվել սնանկության գործով կառավարչի գործողությունների նկատմամբ:

### Գործի վարույթը կասեցնելը և կարճելը

**18.12.2012թ.**

**41. Մանուկ Ղազանյան v. ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/0393/05/10**

**Էջ  
192-195**

Վերաքննիչ դատարանը սույն վարչական գործի վարույթը կասեցնելիս պատճառաբանել է, որ հարուցված քրեական գործով հնարավոր է պարզվեն այնպիսի հանգամանքներ, մասնավորապես՝ Մանուկ Ղազանյանի կողմից իր գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու, հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու հանգամանքներ, որոնք սույն գործի լուծման համար էական նշանակություն կունենան: Հետևաբար, սույն գործի քննությունն անհնար է մինչև Երևան քաղաքի Նոր Նորքի քննչական բաժնի կողմից Մանուկ Ղազանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածի և 345.1-ին հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 17107711 քրեական գործով որոշում կայացնելը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով գործի վարույթը կասեցնելու հիմքերի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը, գտել է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել տվյալ գործի քննության անհնարինությունը, քանի որ Մանուկ Ղազանյանի նկատմամբ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու և պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի ու քանակի մասին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու, հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու հատկանիշներով հարուցված քրեական գործով պարզման ենթակա հանգամանքները չեն կարող Մանուկ Ղազանյանի գույքի վրա արգելանք դնելու մասին Հարկադիր կատարողի 16.02.2009 թվականի որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ սույն գործի քննության անհնարինության հիմք լինել: Այսինքն՝ տվյալ դեպքում բացակայում էր սույն վարչական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

### ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

**27.04.2011թ.**

**42. Յուրիկ Ավինյան և այլոք v. ՀՀ կառավարություն, վարչական գործ թիվ ՎԳ/0437/05/10**

**Էջ  
196-199**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանի 11.11.2010 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 12.12.2010 թվականը, որպիսի ժամկետը համահայցվորների կողմից բաց է թողնվել և բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 13.12.2010 թվականին, այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի բացթողմամբ: Մինևսույն ժամանակ բացակայում

է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, ուստի բողոքը ենթակա է վերադարձման:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ սույն գործով վերաքննիչ բողոքը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում: Այսպես՝ Դատարանի 11.11.2010 թվականի վճիռը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի, պետք է օրինական ուժի մեջ մտնէր 12.12.2010 թվականին: Մինչդեռ, 12.12.2010 թվականը ոչ աշխատանքային օր է, ուստի վերաքննիչ բողոք ներկայացնելու վերջնաժամկետը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասի, համարվում է դրան հաջորդող աշխատանքային օրը, այն է՝ 13.12.2010 թվականը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստել է, որ սույն գործով վերաքննիչ բողոքը ներկայացվել է ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի պահպանմամբ:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձրել է՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքները, որ բողոք բերողի կողմից չի ներկայացվել ապացույց՝ «Լուկալ Դիվելոփերը» ՍՊԸ-ին բողոքի պատճենն ուղարկելու մասին, բացի այդ, բողոքին չի կցվել պետական տուրքի վճարումը հաստատող ապացույց:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձվել է նաև բողոքը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 4-րդ մասին չհամապատասխանելու հիմքով, ուստի Վերաքննիչ դատարանի մասնակիորեն սխալ պատճառաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ 27.12.2010 թվականի որոշումը վերացնելու համար :

## **27.06.2011թ.**

**43. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Արտաշատի տարածքային հարկային տեսչություն v. անհատ ձեռնարկատեր Մելսիդա Ասրյան, վարչական գործ թիվ ՎԳ-3/0339/05/10**

**Էջ  
200-204**

Տվյալ գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ բողոքաբերը, թեպետ նշելով Դատարանի կողմից խախտված իրավանորմերը, չի պահպանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Բողոքաբերը չի հիմնավորել տեղի ունեցած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, ինչպես նաև նման խախտման գործի ելքի վրա դրա ազդեցությունը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքում պահպանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջները: Մասնավորապես՝ բողոք բերող անձը, նշելով, որ Դատարանը ճիշտ չի կիրառել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերությունը, որպես դրա հիմնավորում նշել է, որ «Ես դիմում եմ ներկայացրել պետ. ռեզիստրին իմ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ 2008 թվականի հունիսին: Ինձ չեն բացատրել, որ ես պետք է հանձնեմ նաև պետ. գրանցման վկայականը: Եվ ես գտնում եմ, որ դա պետ. ռեզիստրի աշխատակիցների կողմից օրենքի պահանջը չկատարելն է, որ ինձնից չեն պահանջել պետ. գրանցման վկայականը»: Բողոք բերող անձը, որ-

պես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի խախտման հիմնավորում նշել է, որ «հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում և ծանուցագրեր չի հանձնվել», իսկ որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի խախտման հիմնավորում նշել, որ «Ես ներկայացել եմ դատարան 02.12.2010 թվականին: Դատարանն ինձ տվել է հարցեր, ես պատասխանել եմ, որ 2008 թվականից որպես ԱԶ չեմ աշխատել և դիմում եմ ներկայացրել պետ. ռեզիստրին իմ գործունեությունը դադարեցնելու մասին, սակայն դատարանը ոչ միայն ուշադրություն չի դարձրել իմ ապացույցներին, այլև վճռում նշել է, որ իբր ծանուցված լինելով դատական նիստի և վայրի ժամանակի մասին, ես իբր չեմ ներկայացել դատական նիստին»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական ակտը բողոքարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումները Վերաքննիչ դատարանը սույն գործով պետք է կիրառեր Մելսիդա Ասրյանի իրավունքների դատական պաշտպանության մատչելիության լույսի ներքո, իսկ վերաքննիչ բողոքում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ հիմնավորումների նշումը, անկախ դրանց հիմնավորվածությունից, բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.5-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու համար, հետևաբար տվյալ դեպքում առկա չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի խախտում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում Մելսիդա Ասրյանը գրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

**02.05.2012թ.**

**44. Հենրիկ Առուստամյան v. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ-3141/05/10**

**Էջ  
205-209**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը առանց որևէ պայման նախատեսելու, սահմանում է դատարանի պարտականությունն ապահովելու վճիռ օրինակն ստանալու գործին մասնակցած անձանց իրավունքը՝ անկախ նրանից՝ վերջիններս ներկա գտնվել են, թե պատշաճ ծանուցվել են և չեն ներկայացել դատական նիստին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարել Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ Հենրիկ Առուստամյանը պատշաճ ծանուցվել է դատական նիստի մասին, սակայն չի ներկայացել, ուստի և առձեռն չի ստացել վճիռ օրինակը: Նման դեպքում գործում է դատարանի պարտականությունը այդ կամ առավելագույնը հաջորդ օրն ուղարկել վճիռ օրինակը հասցեատիրոջը՝ անկախ վերջինիս՝ դատական նիստին ներկա չգտնվելու պատճառների: Մինչդեռ ծրարի վրա առկա փոստային ծառայության կնիքի համաձայն՝ Դատարանը վճիռը փոստային ծառայություն է հանձնել 19.12.2011 թվականին, ինչն էլ իր հերթին հանդիսացել է վճիռ բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողնման պատճառ: Հետևաբար վճիռ բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը պետք է համարվեր հարգելի, որի արդյունքում Վերաքննիչ դատարանը պետք է վերականգներ այն և բողոքն ընդուներ վարույթ:

Բացի այդ, Հենրիկ Առուստամյանը բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդության մեջ նշել էր, որ վճիռ բողոքարկման ժամկետը հաշվարկել է այն ստանալու պահից, և ի հավաստումն այդ հանգամանքի, ներկայացրել է այն ստանալու ամսաթիվով ծրարը, ինչը քննարկվող պարագայում բավարար է միջնորդությունը բավարարելու համար:

---

**30.11.2012թ.**

**45. Նաիրիի տարածքային հարկային տեսչություն v. անհատ ձեռնարկատեր  
Կարինե Գևորգյան, վարչական գործ թիվ ՎԳ/1747/05/11**

**Էջ  
210-215**

Սույն գործով Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատարանի մատչելիության խնդրին, վկայակոչելով ներպետական և միջազգային իրավական մի շարք դրույթներ, գտել է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի կողմից սույն գործով 13.06.2012 թվականին հրապարակված վճիռն ըստ գործում առկա հետադարձ ծանուցման անդորրագրի Ձեռնարկատիրոջն առաքվել է փոստային եղանակով միայն 19.07.2012 թվականին: Այսինքն՝ Ձեռնարկատիրոջ կողմից Դատարանի վճիռը ստանալու պահին արդեն իսկ սպառված է եղել այն բողոքարկելու օրենսդրությամբ նախատեսված մեկամսյա ժամկետը, և եղել է օրինական ուժի մեջ մտած: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Դատարանի վճիռը բողոքարկելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված մեկամսյա ժամկետը Ձեռնարկատիրոջ կողմից բաց է թողնվել նրա կամքից անկախ պայմաններում:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատական ակտը բողոքարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումները Վերաքննիչ դատարանը սույն գործով պետք է կիրառեր Ձեռնարկատիրոջ իրավունքների դատական պաշտպանության մատչելիության լույսի ներքո, հետևաբար բաց թողած ժամկետը վերականգնելու մասին Ձեռնարկատիրոջ միջնորդությունը ենթակա էր բավարարման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում Ձեռնարկատերը գրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:



# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0433/02/11  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/0433/02/11  
Նախագահող դատավոր՝ Ա. Խառատյան 2011

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 27-ին,  
քննարկելով Արևիկ Արույանի ներկայացուցիչ Կարեն Թունյանի վճռաբեկ բողո-  
քը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Արևիկ Արույանի ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Դանի-  
ել Գրիգորյանի՝ Արևիկ Արույանին 16.04.2007 թվականին Ընկերության տնօրենի պաշ-  
տոնից ազատված համարելու և ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի  
Արաբկիրի տարածքային բաժնի կողմից Արևիկ Արույանին Ընկերության տնօրեն  
գրանցելու վերաբերյալ 22.06.2006 թվականին կատարված գրառումն ուժը կորցրած  
համարելու պահանջների մասին,

### ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը  
Դիմելով դատարան՝ Արևիկ Արույանը պահանջել է իրեն 16.04.2007 թվականին  
Ընկերության տնօրենի պաշտոնից ազատված համարել, Արևիկ Արույանի հետ կնք-  
ված աշխատանքային պայմանագիրը համարել լուծված և 16.04.2007 թվականից ու-

---

ծը կորցրած համարել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնի կողմից իրեն Ընկերության տնօրեն գրանցելու վերաբերյալ 22.06.2006 թվականին կատարված գրառումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.03.2011 թվականի որոշմամբ Արևիկ Արույանի հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.05.2011 թվականի որոշմամբ Արևիկ Արույանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.03.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արևիկ Արույանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետը, 219-րդ հոդվածի 1-ին կետը, 220-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետը, 227-րդ հոդվածի 2-րդ կետը, սիսայ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը, չի կիրառել ՀՀ դատական օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասը, 35-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառվեր:*

Վերաքննիչ դատարանը մատնանշել է այն փաստը, որ օրենսդիրը ֆիզիկական անձանց կողմից որպես վարչական դատարան դիմելու պարտադիր նախապայման է համարում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ նրանց իրավունքների հնարավոր խախտման կամ հնարավոր խախտման վտանգի ընկալումը, որ ֆիզիկական անձին վարչական դատարան դիմելու իրավունք է վերապահվում միայն այն դեպքում, երբ իրավունքների և ազատությունների իրականացման համար անհրաժեշտ պայմանների ենթադրյալ չսպառնալովը պայմանավորված է բացառապես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ և որ մնացած այլ դեպքերում, գործերը ենթակա են քննության ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորի իրավունքները խախտվել և օրինական շահերը ոտնահարվել են ոչ թե վարչական մարմնի, այլ Ընկերության և Դանիել Գրիգորյանի կողմից: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցը ներկայացվել է ընդդատության կանոնների պահպանմամբ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որպես վարչական ակտ է որակել Արևիկ Արույանին Ընկերության տնօրեն գրանցելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիր տարածքային բաժնի կողմից 22.06.2006 թվականի գրառումը՝ չնշելով սակայն այն իրավանոր-

մը, որի հիման վրա եկել է այդպիսի եզրահանգման: Մինչդեռ վարչական ակտի բնորոշման, դրա տեսակների հետ կապված հարաբերությունները կարգավորող համապատասխան իրավանորմերի ընտրության և վերլուծության արդյունքում Դատարանը կհանգեր բոլորովին այլ եզրակացության:

Բողոք բերած անձը պահանջել է վերանայել Վերաքննիչ դատարանի 17.05.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է պատասխանել հետևյալ իրավական հարցերին.

*արդյո՞ք սույն գործով ներկայացված հիմնական պահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից և սույն գործով ներկայացված հայցը ո՞ր դատարանին է ենթակա:*

Վճռաբեկ դատարանը վերոնշյալ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ անձի՝ վարչական դատարան դիմելու իրավունքին և հանրային իրավահարաբերությունների հասկացությանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անձը ՀՀ վարչական դատարան դիմելու իրավունք է ձեռք բերում այն դեպքում, երբ համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել իր իրավունքները և ազատությունները, կամ երբ նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն, կամ երբ նա վարչական

---

կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը միայն դեռևս բավարար չէ ՀՀ վարչական դատարան դիմելու համար, քանի դեռ այդպիսի խախտման հետևանքով առաջացող դատական գործը չի ծագում հանրային իրավահարաբերությունից:

Հանրային իրավահարաբերություններն այն իրավահարաբերություններն են, որոնք ծագում են պետական մարմինների իրականացրած գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում: Այսինքն՝ այդպիսի իրավահարաբերությունները և դրանց արդյունքները պետք է ունենան հանրային՝ համընդհանուր բնույթ, ի տարբերություն մասնավոր՝ կոնկրետ անձին վերաբերող, իրավահարաբերության:

Վճարել դատարանը հարկ է համարում նշել, որ միմյանց հետ կապված մի քանի պահանջներով դատարան դիմելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը պետք է պարզի հիմնական պահանջի բնույթը:

Վճարել դատարանն արձանագրում է, որ հիմնական է համարվում այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է մյուս պահանջների լուծումը:

Վճարել դատարանը հարկ է համարում նշել նաև, որ հանրային և մասնավոր իրավահարաբերություններից բխող պահանջների ներկայացման դեպքում հիմնական պահանջը կարող է համարվել հանրային իրավահարաբերություններից բխող, եթե վեճի հիմքը պայմանավորված է պետական մարմինների կողմից իրենց գործադիր-կարգադրիչ գործառույթների իրականացմամբ: Այն դեպքում, երբ հանրային իրավահարաբերություններից բխող պահանջը պայմանավորված է մասնավոր տարրի առկայությամբ և դրա ելքը կախված է մասնավոր իրավահարաբերությունից բխող պահանջի ելքից, ապա հիմնական պահանջը հանրային իրավահարաբերություններից չի բխում:

Սույն գործով Արևիկ Արույանը պահանջել է 16.04.2007 թվականին Ընկերության տնօրենի պաշտոնից իրեն ազատված համարել և Արևիկ Արույանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը համարել լուծված և 16.04.2007 թվականից ուժը կորցրած համարել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնի կողմից իրեն Ընկերության տնօրեն գրանցելու վերաբերյալ 22.06.2006 թվականին կատարված գրառումը:

Դատարանն Արևիկ Արույանի հայցադիմումը վերադարձնելու, իսկ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի մերժման հիմքում դրել են այն հանգամանքը, որ բացակայում է աշխատանքային վեճ և ներկայացվել է վարչարարություն իրականացնող մարմնի գործողության հետևանքով իր խախտված իրավունքը վերականգնելու պահանջ:

Մինչդեռ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնական պահանջը Ընկերության տնօրենի պաշտոնից ազատված համարելը և Արևիկ Արույանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծված համարելն է, իսկ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելն առաջինի իրավական հետևանքն է: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնական պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից:

Վճարել դատարանը գտնում է նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ ներկայաց-

վում են երկու և ավելի հայցապահանջ, որոնք ունեն տարբեր առարկայական ընդդատություն, հայցը պետք է քննվի այն դատարանում, որի առարկայական ընդդատության է ենթակա ներկայացված հիմնական պահանջը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ անհիմն է Դատարանի և Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ սույն գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանում քննության:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.05.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 17.03.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3492/02/09

Քաղաքացիական գործ թիվ  
ԵԿԴ/3492/02/09

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*  
*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հունվարի 10-ին,

քննարկելով ըստ հայցի ««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 07.04.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայելու վերաբերյալ Ընկերության ներկայացուցիչ Արա Զոհրաբյանի վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել Նախարարության կողմից Ընկերության նկատմամբ իրականացված վարչարարությունը (գործողությունները), այն է՝

Նախարարության բնապահպանական պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ավագ պետական տեսուչ-հիդրոտերկրաբան Ա. Գոգինյանի կողմից 01.04.2005 թվականին Ընկերությանը պատկանող թիվ 1/67 և թիվ 8/69 հորատանցքներից դեպի գազալիցքավորման սարք գնացող ջրագծին թիվ WPD-65 N935814 ջրաչափը տեղադրելը, կապարակնքելը և 01.04.2005 թվականին Ընկերության հետ ջրաչափի տեղադրման երկկողմանի ներքին ակտը կնքելը,

Տեսչության ավագ պետական տեսուչ-հիդրոտերկրաբան Ա. Գոգինյանի կողմից գազանջատիչից հետո դեպի շշալցման գործարան գնացող ջրագծին թիվ 8800591 ջրաչա-

վիր տեղադրելը, կապարակնքելը և 07.04.2005 թվականին Ընկերության հետ ջրաչափի տեղադրման երկկողմանի ներքին ակտը կնքելը,

Տեսչության ավագ պետական տեսուչ-հիդրոտերկրաբան Ա. Գոգինյանի կողմից գազանջատիչից հետո դեպի շշայցման գործարան գնացող ջրագծին հերթական ստուգումից հետո թիվ VEM N8800591 ջրաչափը տեղադրելը, կապարակնքելը և 05.10.2007 թվականին Ընկերության հետ ջրաչափի տեղադրման երկկողմանի ներքին ակտը կնքելը,

Նախարարության աշխատակիցների կողմից 18.08.2005 թվականի թիվ 100303 հանձնարարագրի հիման վրա կատարված ստուգումների արդյունքում թիվ 100021 տեղեկանքը կազմելը,

Նախարարության աշխատակիցների կողմից 16.02.2006 թվականի թիվ 010011 հանձնարարագրի հիման վրա թիվ 010025 տեղեկանքը կազմելը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.01.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.02.2010 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացուցչի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 11.01.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Վձռաբեկ դատարանի 07.04.2010 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 08.02.2010 թվականի որոշման դեմ Ընկերության ներկայացուցչի վձռաբեկ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վձռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վձռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վձռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վձռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Սույն գործով առկա է նոր երևան եկած հանգամանք:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վձռաբեկ դատարանի 07.04.2010 թվականի «Վձռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշման վերանայման համար հիմք է հանդիսանում Վձռաբեկ դատարանի թիվ ՎԲ/4234/05/09 վարչական գործով 02.12.2009 թվականին կայացրած որոշումը, որով վերադարձվել է ՀՀ վարչական դատարանի 28.10.2009 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության ներկայացուցչի բերած վձռաբեկ բողոքը:

Այսպես, թիվ ՎԲ/4234/05/09 վարչական գործի նյութերից, մասնավորապես՝ հայցադիմումից, բողոքներից և դատական ակտերից հետևում է, որ Ընկերությունը ՀՀ վարչական դատարան է դիմել նախքան ընդհանուր իրավասության դատարան դիմելը, և ՀՀ վարչական դատարանի միջոցով արդար դատաքննության իրավունքն Ընկերությունն այլևս չի կարող իրականացնել:

Տվյալ դեպքում Ընկերությունը հայցադիմումը ներկայացրել է նույն այն բովանդակությամբ, ինչ որ ներկայացված է եղել ՀՀ վարչական դատարան:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը և Վձռաբեկ դատարանը գտել են, որ Նախարարության իրականացրած վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը բխում է կողմերի միջև առաջացած հանրային իրավական հարաբերությունից և ընդդատյալ չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

---

Նման պայմաններում ստացվել է մի իրավիճակ, երբ Ընկերությունը գրկվել է արդար դատաքննության իրավունքից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն ամրագրում է, որ ցանկացած նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ՝ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Վերաքննիչ կամ վճարեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն:

Նշված դիրքորոշման կարևոր նախադրյալներից են նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 12.05.2004 թվականի թիվ «R (2004) 6» հանձնարարականում ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ հանձնարարականի դրույթները:

Ելնելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կանոնակարգումներից՝ Վճարեկ դատարանի 07.04.2010 թվականի «Վճարեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը պետք է վերանայվի, և հնարավորություն տրվի Ընկերությանն օգտվելու դատական պաշտպանությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է նոր երևան եկած հանգամանքի հիմքով վերանայել Վճարեկ դատարանի 07.04.2010 թվականի «Վճարեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և վերացնել Վերաքննիչ դատարանի 08.02.2010 թվականի որոշումը:

### **3. Վճարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարզառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և **վճարեկ դատարանների դատական ակտերը՝ վճարեկ դատարանը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե բողոք ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց, **կամ այդ հանգամանքները հայտնի են եղել գործին մասնակցող անձանց, բայց նրանցից անկախ պատճառներով չեն ներկայացվել դատարան, և այդ հանգամանքները գործի լուծման համար ունեն էական նշանակություն:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ **վճարեկ բողոք բերելու հիմքերն են նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:**

Սույն գործով Վճարեկ դատարանը, վերադարձնելով Ընկերության ներկայացուցչի վճարեկ բողոքը, 07.04.2010 թվականի որոշմամբ հաստատել է Վերաքննիչ դատարանի 08.02.2010 թվականի որոշման պատճառաբանությունները:

Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության ներկայացուց-



չի վերաքննիչ բողոքը, 08.02.2010 թվականի որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունները, որ տվյալ դեպքում Նախարարությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով հանդիսանալով վարչական մարմին, իրականացրել է վարչարարություն, այն է՝ ստուգումների արդյունքում և հանձնարարագրի հիման վրա տեղեկանքների կազմում, ջրաչափերի տեղադրման երկկողմանի ներքին ակտերի կնքում: Հետևաբար, Նախարարության իրականացրած գործողությունների և ընդունած ակտերի ուժով Նախարարության և Ընկերության միջև ծագած հարաբերությունները կրում են հանրային բնույթ այնքանով, որքանով այդ հարաբերություններում բացակայում է մասնակիցների հավասարությունը և կամքի ինքնավարությունը: Այդ հարաբերությունները կողմերի միջև առաջացել են Նախարարության՝ որպես իշխանական լիազորություններով օժտված մարմնի իրականացրած գործողությունների և ընդունած ակտերի ուժով: Այսպիսով, Նախարարության իրականացրած վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջը բխում է կողմերի միջև առաջացած հանրային իրավական հարաբերությունից և ընդդատյա չէ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Սույն վճռաբեկ բողոքին կից Ընկերության ներկայացուցիչը ներկայացրել է Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/4234/05/09 վարչական գործով 02.12.2009 թվականին կայացրած «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, որով Վճռաբեկ դատարանը հաստատել է ՀՀ վարչական դատարանի 28.10.2009 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման պատճառաբանությունները:

Մասնավորապես՝ թիվ ՎԳ/4234/05/09 վարչական գործով Ընկերությունը ներկայացրել է նույն պահանջը:

ՀՀ վարչական դատարանի 13.10.2009 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է: Ընկերությունը նշված որոշման դեմ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը ՀՀ վարչական դատարանի 28.10.2009 թվականի որոշմամբ մերժվել է:

ՀՀ վարչական դատարանը, մերժելով ՀՀ վարչական դատարանի 13.10.2009 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության բերած բողոքը, 28.10.2009 թվականի որոշման հիմքում դրել է այն պատճառաբանությունները, որ Ընկերության և Նախարարության միջև 14.08.2003 թվականին կնքված թիվ 335, ինչպես նաև Ընկերության և Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Նախարարության միջև 19.04.2005 թվականին կնքված թիվ 2Պ-003 պայմանագրերի դրույթների մեկնաբանությունից հետևում է, որ դրանք քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրեր են, իսկ հայցադիմումի պահանջներում վկայակոչված ջրաչափերի տեղադրումը, կապարակնքումը և դրանց վերաբերյալ երկկողմանի ներքին ակտեր կնքելը բխել է նշված պայմանագրերից, քանի որ ջրաչափերի տեղադրումը պայմանավորված է եղել կողմերի պայմանագրային իրավունքների և պարտականությունների իրացումից: Այսինքն՝ ինչպես ջրաչափերի տեղադրումը, այնպես էլ վերոգրյալ պայմանագրերին համապատասխան իրականացված ուսումնասիրություններն ու վերահսկողությունը բխում են տվյալ պայմանագրերով ամրագրված կողմերի իրավունքներից: Վարչական իրավահարաբերություններում կողմերից մեկը, հանդես գալով որպես հանրային (գործադիր) իշխանության մարմին՝ վարչական մարմին, օժտված է այնպիսի լիազորություններով, որոնց կիրառումը բացառում է իրավահարաբերության սուբյեկտների իրավահավասարությունն ու ազատ կամարտահայտությունը: Մինչդեռ, տվյալ դեպքում վիճարկվող

---

գործողությունների քաղաքացիաիրավական պայմանագրերից բխելու հանգամանքն ինքնին բացառում է Նախարարության՝ որպես հանրային (գործադիր) իշխանության մարմին՝ վարչական մարմին հանդես գալու հանգամանքը, քանի որ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններում գործում է իրավահարաբերության սուբյեկտների բացարձակ իրավահավասարության ու ազատ կամարտահայտության սկզբունքը: Այստեղից հետևում է, որ Նախարարությունը, տվյալ դեպքում հանդես գալով որպես քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ, կատարել է վիճարկվող գործողությունները՝ դիտարկելով դրանք որպես պայմանագրերից բխող գործողություններ: Այսպիսով, Ընկերության կողմից վիճարկվող Նախարարության գործողությունները չեն հանդիսանում Նախարարության՝ որպես հանրային (գործադիր) իշխանության մարմնի՝ վարչական մարմնի լիազորություններից բխող գործողություններ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/4234/05/09 վարչական գործով 02.12.2009 թվականին կայացրած «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նոր երևան եկած հանգամանք է, քանի որ նշված որոշմամբ հաստատվում է այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող Նախարարության գործողությունները չեն բխում հանրային իրավահարաբերություններից և դրանց վերաբերյալ վեճն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Ընկերությունը զրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված քանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*դևե'ն Իսալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalifaoui v. France)*, թիվ 34791/97, *պարբ. 35, ECHR 1999-IX* և *Պասպունն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France)*, թիվ 54210/00,

պարբ. 90, ECHR 2002-VII):

Վճռաբեկ դատարանը նման եզրահանգման համար հիմք է ընդունում նաև այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է «հանրային իրավահարաբերություններ» եզրույթի մեկնաբանությանը և վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ արձանագրել է, որ վարչարարությունը բնորոշվում է հանրային իրավունքի բնագավառին առնչվելու հանգամանքով: Դա պետք է լինի վարչական մարմնի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություն, իսկ հանրային իրավունքի բնագավառը նշանակում է անձի հարաբերություններ պետության հետ, որը հանդես է գալիս որպես հանրային իշխանության կրող: Վճռաբեկ դատարանը գտել է, որ հանրային իրավահարաբերությունները դրանք այն հարաբերություններն են, որոնք ծագում են **պետական կառավարման մարմինների գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում**՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերություններում (լրե՛ս՝ ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հայկ Մարգարյանի՝ կենսաթոշակի վճարումը 2008 թվականի սեպտեմբերի 1-ից դադարեցնելու պահանջի մասին, Վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի թիվ ԵԱԶԴ/1369/05/09 որոշումը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի 07.04.2010 թվականի որոշումը կայացվել է մինչև վերոնշյալ որոշման կայացումը, որով Վճռաբեկ դատարանը հստակ սահմանել է օրենքի միատեսակ կիրառության սահմանները, հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի 07.04.2010 թվականի որոշումը ենթակա է վերանայման, իսկ սույն գործը ենթակա է քննության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին կետի և 226-րդ հոդվածի 2-րդ կետի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.30-րդ, 204.32-րդ, 204.38-րդ և 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 07.04.2010 թվականի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.02.2010 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.01.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

# ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2063/02/11  
դատարանի որոշում 2012թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2063/02/11  
Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան  
Դատավորներ՝ Ա. Պետրոսյան  
Տ. Նազարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 6-ին,

քննարկելով «Բրիթիշ Միդլենդ Էյրուեյզ լիմիթեդ» հայկական մասնաձյուղի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Ռուբեն Բալասանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ընդդեմ Ընկերության՝ 39.210.500 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 39.210.500 ՀՀ դրամ, ինչպես նաև վճարված պետական տուրքի գումարը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 02.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.06.2012 թվականի որոշմամբ Ըն-

կերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ տրամադրելով ժամկետ թերությունները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու նպատակով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.06.2012 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 51-րդ և 54-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձրել է զուտ ձևական նկատառումներով՝ ոչ թե պետական տուրքի վճարման անդորրագիրը ներկայացված չլինելու, այլ՝ անգլերեն լեզվով կազմված պետական տուրքի վճարման անդորրագիր ներկայացնելու կամ վճարման անդորրագիրն առանց հայերեն թարգմանության ներկայացնելու համար: Մինչդեռ այդ փաստաթղթի գնությունից անգամ ակնհայտ է դատնում այդ փաստաթղթի՝ պետական տուրքի վճարման անդորրագիր հանդիսանալու փաստը, քանի որ դրանում առկա են հետևյալ մի շարք ակնառու հանգամանքները՝

1. վճարման անդորրագիրը կազմված է «Էյջ-Էս-Բի-Սի» բանկի ձևաթղթի վրա,
2. վճարման անդորրագրի վրա առկա է «Էյջ-Էս-Բի-Սի» բանկի կնիքը,
3. վճարման անդորրագրում նշված է ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի ձեռքիտ հաշվի համարը՝ 900005016010,

4. վճարման անդորրագրում նշված է որպես պետական տուրք վճարման ենթակա ձեռքիտ գումարի չափը՝ «1.176.315 AMD», որը կազմում է վիճարկվող գումարի երեք տոկոսը:

Բացի վերոնշյալից, Ընկերության անունից 22.06.2012 թվականին ներկայացված գրության մեջ նշվել է, որ գրությանը կից ներկայացվում է պետական տուրքի վճարման անդորրագիրը: Նշված հանգամանքները համադրելով՝ Վերաքննիչ դատարանի համար պետք է որ ակնհայտ լինեն ներկայացված փաստաթղթի՝ պետական տուրքի վճարման անդորրագիր լինելու փաստը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 28.06.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձատարանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ու-

---

նի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 42.1 հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունը տարվում է հայերեն: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը:

Նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ «բողոք բերած անձը բողոքը կրկին ներկայացնելու մասին իր 22.06.2012 թվականի գրության մեջ (մուտքի համարը՝ 2044) նշել է, թե տվյալ «գրությամբ կից ներկայացնում է պետական տուրքի վճարման անդորրագիրը», ինչը չի համապատասխանում իրականությանը (նշված գրությանը որևէ անդորրագիր կցված չէ): Ինչ վերաբերում է բողոքին կցված միակ և օտարալեզու փաստաթղթին, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ, 51-րդ և 54-րդ հոդվածների ուժով այն թույլատրելի և վերաբերելի ապացույց համարվել չի կարող, քանի որ ներկայացվել է առանց պատշաճ թարգմանության ուղեկցության, որպիսի պայմաններում այդ փաստաթղթի բովանդակությունը կազմող տեղեկությունները չեն կարող ՀՀ դատարանի կողմից հետազոտման և գնահատման առարկա դառնալ»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանության հետևանքով Ընկերությունը գրկվել է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության սահմանադրական իրավունքից:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավուն-

քի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*Կելե'ս' Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalifaoui v. France)*, թիվ 34791/97, պարբ. 35, ECHR 1999-IX և *Պասպոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France)*, թիվ 54210/00, պարբ. 90, ECHR 2002-VII):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով առաջին հերթին պետք է առաջնորդվեր անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելնել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից: Վերաքննիչ դատարանը, տվյալ դեպքում չընդունելով Ընկերության կողմից ներկայացված օտարալեզու տարբեր պարունակող փաստաթուղթը և համարելով պետական տուրքի անդորրագիրը չներկայացված, վիճահարույց հարցի վերաբերյալ ցուցաբերել է ձևական մոտեցում, հակառակ դեպքում, եթե Վերաքննիչ դատարանի կողմից պատշաճ գնահատվեր այդ ապացույցը, ապա Վերաքննիչ դատարանի մոտ կառաջանար ներքին համոզմունք՝ բողոքաբերի կողմից պետական տուրքը վճարված լինելու մասին, քանի որ այդպիսի համոզմունքի ձևավորման համար փաստաթուղթը պարունակում է բավականաչափ և հավաստի տվյալներ՝ այն կազմված է «Էյջ-Էս-Բի-Մի» բանկի ձևաթղթի վրա և կնքված բանկի կնիքով, առկա են փոխանցողի, գումարը ստացողի և գումարի չափի մասին տեղեկություններ, որոնք հեշտությամբ կարող էին նույնականացվել, նույնիսկ առանց թարգմանության:

Հիմք ընդունելով վերոգրյալը և սույն գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից վճարեկ բողոքին կից ներկայացված վերը նշված փաստաթղթի նոտարական թարգմանությունը հավաստում է բողոքաբերի կողմից պետական տուրքի՝ վճարված լինելու փաստը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սահմանափակել է Ընկերության՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքը՝ վնաս հասցնելով դրա բուն էությանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241<sup>1</sup>-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.06.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

# ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0814/02/11  
2012

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0814/02/11

Նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան

Դատավորներ՝ Ա. Պետրոսյան

Տ. Նազարյան

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 24-ին,

քննարկելով ըստ հայցի Կարեն Ստեփանյանի ընդդեմ Անժելա Ստեփանյանի, պատասխանող կողմում ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք Լորուտ և Մարգահովիտ համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ երեխաների բնակության վայրն ըստ իր բնակության վայրի որոշելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Անժելա Ստեփանյանի վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կարեն Ստեփանյանը պահանջել է որպես իր երեխաների՝ Վիկտորիա և Էրիկ Ստեփանյանների բնակության վայր սահմանել իր բնակության վայրը՝ Լոռու մարզի Լորուտ գյուղը:



ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Վ. Հովսեփյան) (այսուհետ՝ Դատարան) 11.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.06.2012 թվականի որոշմամբ Անժելա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.07.2012 թվականի որոշմամբ Անժելա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անժելա Ստեփանյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է փոստային ծառայության կողմից իրեն տրամադրված թիվ «9-R046215039» համարի անդորրագիրը, որից պարզ է դառնում, որ վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 11.06.2012 թվականին՝ առանց ժամկետի խախտման, իսկ այն հանգամանքը, որ ծրարի վրա 13.06.2012 թվականով թվագրված կնիք է դրվել, կարող է լինել այն պատճառով, որ ծրարները հանձնման պահին չեն կնքվել, այլ կնքվել են Ալավերդու Հայփոստ ծառայության կենտրոնական մաս առաքելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 14.07.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հերքելյալ պարզապահանջությամբ.*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները

---

կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո**, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

Նշված նորմերից հետևում է, որ ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործողությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված փաստաթղթերը կապի կազմակերպությանը հանձնելու իրավական հետևանքները հավասարեցվում են դրանք համապատասխան հասցեատիրոջը տալուն (*տես՝ «ԱրևենՏել» ՓԲԸ-ն ընդդեմ Տիգրան Հարությունյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ 3-1614(Ա) գործով Վճռաբեկ դատարանի 09.11.2007 թվականի որոշումը*):

Բացի այդ, դատավարական ժամկետներից բխող դատավարական իրավահարաբերությունների կարգավորման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով արտահայտել է իր դիրքորոշումը և արձանագրել է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված, կիրառման ենթակա է նաև քաղաքացիական դատավարության իրավահարաբերությունների նկատմամբ: Նշվածից բխում է, որ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված վերաքննիչ բողոքը պետք է համարվի Վերաքննիչ դատարան հանձնված (տես՝ *աշխատանքի պետական տեսչության Վայոց Ձորի մարզի տարածքային կենտրոնն ընդդեմ անհար ձեռնարկարեր Արամ Սարգսյանի՝ վարչական տուգանքի գումարը բռ-*

նազանձելու պահանջի մասին, թիվ 3-1888 (ՏԴ) գործով Վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականի որոշումը):

Վերաքննիչ դատարանը 25.06.2012 թվականին Անժելա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքում դրել է հետևյալ հանգամանքները՝ «1. վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո, և չի պարունակում ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն. 2. վերաքննիչ բողոքին չի կցվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող որևէ ապացույց: Վերը նկարագրված խախտումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հիմքեր են վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար: Ինչ վերաբերում է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ բողոքում պարունակվող միջնորդությանը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրան անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերաքննիչ բողոքը վերադարձվում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքով»:

Վերաքննիչ դատարանը, 14.07.2012 թվականին կրկին անգամ վերադարձնելով Անժելա Ստեփանյանի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ «1. վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալուց հետո: Այն պարունակում է ժամկետի բացթողման պատճառը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, որը, սակայն ենթակա չէ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ: Բողոք բերած անձը պատճառաբանել է, որ բողոքը փոստին է հանձնել նախքան բողոքարկված վճիռն օրինական ուժի մեջ մտնելը՝ 11.06.2012 թվականին, ինչը հերքվում է գործում առկա՝ Դատարանին և Վերաքննիչ դատարանին հասցեագրված վերաքննիչ բողոքը պարունակող ծրարների վրա փոստային բաժանմունքի կողմից դրոշմված կնիքների ամսաթվերով (երկու դեպքում էլ բողոքը փոստին է հանձնվել 13.06.2012 թվականին, որպիսի պայմաններում բողոք բերած անձի՝ վերը նշված պատճառաբանությունը հարգելի համարվել չի կարող): 2. վերաքննիչ բողոքը չի պարունակում նշում այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ, որոնք ազդել են գործի ելքի վրա. 3. վերաքննիչ բողոքը չի պարունակում նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության հիմնավորումները. 4. բողոք բերած անձի պահանջը թերի է նշվել, և անհասկանալի է, թե վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց և «դատաբանության նշանակելուց» հետո նա ինչ է ակնկալում. 5. վերաքննիչ բողոքին չի կցվել դրա օրինակը հայցվորին ուղարկելու փաստը հավաստող որևէ ապացույց: Վերը նկարագրված խախտումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հիմքեր են վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման եզրակացության հանգելու համար Վերաքննիչ դատարանը չի ունեցել բավարար հիմքեր: Անժելա Ստեփանյանի կողմից ներկայացված 04.07.2012 թվականի «Դիմում-միջնորդությունը» պարունակում է հիմնավորումներ այն մասին, որ բողոքաբերն իրականում բաց չի թողել վերաքննիչ բողոքը բերելու համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, քանի որ սույն գործի փաս-

---

տերի համաձայն՝ փոստային ծառայության կողմից Անժելա Ստեփանյանին տրված անդորրագրի համաձայն՝ վերաքննիչ բողոքը նրա կողմից փոստային ծառայությանն է հանձնվել 11.06.2012 թվականին (**հատոր 2, գ.թ. 96**), **վերաքննիչ բողոքը** Կարեն Ստեփանյանին, Լորուտ և Մարգահովիտ համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմիններին ևս փոստային ծառայության միջոցով ուղարկվել է 11.06.2012 թվականին (**հատոր 2, գ.թ. 65-68**), այսինքն՝ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի **օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը**:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե Վերաքննիչ դատարանը կատարեր գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, ապա կհանգեր այն եզրակացության, որ Անժելա Ստեփանյանը չի խախտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի պահանջները:

Վերաքննիչ դատարանը տվյալ դեպքում սահմանափակել է Անժելա Ստեփանյանի՝ դատարանի մատչելիության «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը, որի մի մասն էլ կազմում է դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդուհանդերձ, կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վսաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*լռե'ս' Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի (Khalfaoui v. France)*, թիվ 34791/97, *պարբ. 35, ECHR 1999-IX* և *Պապոնն ընդդեմ Ֆրանսիայի (Papon v. France)*, թիվ 54210/00, *պարբ. 90, ECHR 2002-VII*):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Բաղաքացիական գործ թիվ ԵԾԴ/1465/02/10  
դատարանի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ ԵԾԴ/1465/02/10  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 27-ին  
քննարկելով Արկադի Անդրիասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքա-  
ցիական դատարանի 18.02.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Արկադի Անդրիասյանի  
հայցի ընդդեմ Ռոզա Մանասյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Արկադի Անդրիասյանը պահանջել է Ռոզա Մանասյանին  
վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Արշակունյաց փողո-  
ցի թիվ 44/3 շենքի 10-րդ բնակարանից:

Երևանի Ընդգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի  
(այսուհետ՝ Դատարան) 04.02.2011 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վա-  
րույթը կասեցվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
18.02.2011 թվականի որոշմամբ Արկադի Անդրիասյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 04.02.2011 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

---

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արկադի Անդրիասյանը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործը քննել է Արկադի Անդրիասյանի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին, որի արդյունքում գրկվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով սահմանված ողջամիտ ժամկետում գործի քննության և արդար դատաքննության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 18.02.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի կամ առանձին դատավարական գործողություններ կատարելու ժամանակի և վայրի մասին, իսկ նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով (այսուհետ՝ պատշաճ ձևով): Սա ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 218-րդ հոդվածի համաձայն՝ բողոք բերած անձն իրավունք ունի ներկա գտնվելու վերաքննիչ դատարանի նիստին: Բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև գործին մասնակցող անձինք, որոնք պատշաճ ձևով ծանուցվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել և գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը,

հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով, բեկանել է դատական ակտը (*յրեն՝ ըստ Հասմիկ Էլոյանի դիմումի՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու պարձառները հարգելի համարելու և ժառանգ ձանաչելու պահանջների մասին, թիվ 3-15/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թվականի որոշումը*):

Բացի այդ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս, պետք է առաջնորդվեր ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատական քննության իրավունքի ապահովման սկզբունքից: Իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն ղեկքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (*յրեն՝ Բրուայլա Գոմեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 26737195 վճիռը, կետ 33*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*յրեն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44*):

Սույն գործով Վերաքննիչ դատարանի 18.02.2011 թվականի նշանակված դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցագիրն Արկադի Անդրիասյանն ստացել է 19.02.2011 թվականին (գ.թ.51-53): Գործում առկա չէ 18.02.2011 թվականի դատական նիստի մասին Արկադի Անդրիասյանին պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույց:

Մնան պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, պատշաճ ձևով չի տեղեկացրել Արկադի Անդրիասյանին դատական նիստի ժամանակի և վայրի մասին, գործը քննել է նրա բացակայությամբ ու կայացրել որոշում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել

---

Վերաքննիչ դատարան՝ նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի դատական նիստին ներկա գտնվելու իրավունքի խախտման պայմաններում գործի նոր քննությունն անհրաժեշտ է անձի արդար դատաքննության իրավունքի ապահովման համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 18.02.2011 թվականի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.02.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԿԴ/0099/02/09**  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0099/02/09

Նախագահող դատավոր՝ Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նահագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հունիսի 29-ին,  
քննարկելով «Կեչառք» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչներ Մերի  
Գևորգյանի և Նարինե Ճաղարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի 09.03.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Հմա-  
յակ Զոհրաբյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Հմայակ Զոհրաբյանից բռնա-  
գանձել 15.000.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնաս (չստացված եկամուտ):

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի  
11.01.2010 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.05.2010 թվականի որոշմամբ  
Հմայակ Զոհրաբյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Կոտայքի մարզի ընդհա-  
նուր իրավասության առաջին ատյանի դատարանի 11.01.2010 թվականի վճիռը բեկան-  
վել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.07.2010  
թվականի որոշմամբ վերադարձվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի  
05.05.2010 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատա-

---

րան) 24.01.2011 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև ՀՀ վարչական դատարանի վարույթում գտնվող ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող որոշումները ոչ իրավաչափ ձևանաչելու պահանջների մասին թիվ ՎԴ/4821/05/10 վարչական գործով կայացվելիք դատական ակտի ուժի մեջ մտնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.03.2011 թվականի որոշմամբ Հմայակ Զոհրաբյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և Դատարանի 24.01.2011 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերության ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հմայակ Զոհրաբյանի ներկայացուցիչը:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

1) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածը:*

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդությամբ և Դատարանի 24.01.2011 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ հիմնավորվում է, որ սույն գործով Ընկերության ներկայացուցիչները բողոք բերած անձինք են, մինչդեռ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը և դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցագիրն ուղարկվել է Ընկերության նախկին ներկայացուցիչ Վոան Հարությունյանին, ով սույն գործի շրջանակներում Ընկերության ներկայացուցիչ չի հանդիսանում: Փաստորեն, Վերաքննիչ դատարանն Ընկերությանը պատշաճ ձևով չի տեղեկացրել դատական նիստի ժամանակի և վայրի մասին և գործը քննել է վերջինիս բացակայությամբ՝ զրկելով նրան դատարանում իր դատավարական իրավունքներից օգտվելու և դատական պաշտպանության հնարավորությունից:

2) *Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը, 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը:*

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Անհիմն է Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Դատարանը չի հիմնավորել, թե ինչի համար պետք է կասեցնել սույն գործի վարույթը, քանի որ Դատարանը պատճառաբանել է, որ սույն գործի ելքի համար նշանակություն ունի, թե վնասն ում գործողությունների հետևանքով է առաջացել՝ Հմայակ Զոհրաբյանի, թե ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի բաժնի հարկադիր կատարող Ս. Շահումվարյանի, հետևաբար անհնարին է սույն գործի քննություն-

նր՝ մինչև վարչական դատավարության կարգով քննվող գործի ավարտը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 09.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Գործում առկա չէ որևէ գրություն կամ փաստաթուղթ այն մասին, որ Ընկերությունը վերացրել է Վ.Ռամ Հարությունյանի լիազորագիրը, կամ վերջինս է հրաժարվել լիազորագրից: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը և դատական ծանուցագիրը Վ.Ռամ Հարությունյանին ուղարկելով, որևէ խախտում թույլ չի տվել և Ընկերությունը պատշաճ ծանուցել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Հիմնավոր է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Դատարանը չի հիմնավորել սույն գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) վճռաբեկ բողոքն ստաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պայրճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծանուցագիրն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի կիրառման հարցին: Մասնավորապես, նշել է, որ տվյալ իրավական նորմը ենթադրում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ դատարանի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն միայն վկայակոչված հոդվածով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գնահատման առարկա է դարձրել այն դեպքերը, երբ դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, արձանագրել է կողմերի իրավահավասարության և մրցակցության դատավարական սկզբունքների խախտում

---

*(տե՛ս Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի, Արամայիս Օհանջանյանի և Միշա Գրիգորյանի՝ ընդհանուր գույքում բաժինն առանձնացնելու և սեփականության իրավունքը ձանձաջելու պահանջների մասին ՀՀ վճարելի դատարանի 01.02.2008 թվականի թիվ 3-19 (ՎԴ) որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության տնօրենը Դատարան ներկայացրած 22.10.2010 թվականի միջնորդությամբ հայտնել է, որ դատական ծանուցագիրն ուղարկվել է Ընկերության նախկին ներկայացուցիչ Վոամ Հարությունյանին, ով քաղաքից բացակայելու պատճառով ուշ է տեղեկացրել Ընկերությանը: Հաշվի առնելով, որ Ընկերությունը ներկայացուցիչ չունի, խնդրել է տրամադրել երեք շաբաթ ժամկետ՝ նոր ներկայացուցիչ գտնելու և վերջինիս կողմից գործի նյութերին ծանոթանալու համար **(հատոր 4-րդ, գ.թ. 16)**: Դատարանը, հարգելով միջնորդությունը, 22.10.2010 թվականի դատական նիստը հետաձգել է և նշանակել 17.11.2010 թվականին, որին ներկայացել է Ընկերության ներկայացուցիչ Մերի Գևորգյանը՝ ներկայացնելով իրեն և Նարինե Ճաղարյանին տրված լիազորագրերը **(հատոր 4-րդ, գ.թ. 39, 43)**: Դրանից հետո Ընկերության ներկայացուցիչներ Մերի Գևորգյանը և Նարինե Ճաղարյանը 29.11.2010 թվականին և 14.12.2010 թվականին Դատարանին ներկայացրել են գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդություն և դիմում, իսկ Դատարանը դատական նիստերի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցագրերն ուղարկել է Ընկերության ներկայացուցիչ Մերի Գևորգյանի հասցեով **(հատոր 4-րդ, գ.թ. 29-36)**: Այնուհետև, Դատարանն Ընկերության ներկայացուցիչներ Մերի Գևորգյանի և Նարինե Ճաղարյանի միջնորդության հիման վրա 24.01.2011 թվականի որոշմամբ կասեցրել է սույն գործի վարույթը և որոշումն ուղարկել Մերի Գևորգյանի հասցեով **(հատոր 4-րդ, գ.թ. 47, 51-56, 59-61)**:

Սույն գործում առկա չէ որևէ ապացույց Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը և 02.03.2011 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցագիրն Ընկերությանն ուղարկելու վերաբերյալ, իսկ 09.03.2011 թվականի դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցագիրն ուղարկվել է Վոամ Հարությունյանին **(հատոր 4-րդ, գ.թ. 97-99)**:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է 22.10.2010 թվականի միջնորդությամբ արված Ընկերության տնօրենի այն հայտարարությունը, որ Վոամ Հարությունյանն այլևս սույն գործով Ընկերության ներկայացուցիչը չէ, և Ընկերությունն իր շահերը Դատարանում ներկայացնելու համար լիազորել է այլ անձանց, որոնք Ընկերության անունից հանդես են եկել Դատարանում, իսկ Դատարանն էլ բոլոր դատավարական փաստաթղթերն ուղարկել է Ընկերության նոր ներկայացուցիչներին: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը, 09.03.2011 թվականի դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցագիրն ուղարկելով Վոամ Հարությունյանին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի պահանջներին համապատասխան Ընկերությանը պատշաճ ձևով չի ծանուցել դատական նիստի ժամանակի և վայրի մասին և գործը քննել է նրա բացակայությամբ: Ավելին, Վերաքննիչ դատարանն Ընկերությանը պատշաճ կերպով չի տեղեկացրել նաև 02.03.2011 թվականի դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերոգրյալի հիման վրա Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, Ընկերությանը դատական նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ չճանուցելով, վերջինիս զրկել է գործի վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու հնարավորու-

թյունից, ինչի հետևանքով խախտվել է նրա՝ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքնության հիմնարար իրավունքը:

Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոնշյալ պատճառաբանություններով:

2) *Վերաքննիչ դատարանի կողմից բողոքի քննությունն Ընկերության դատավարական իրավունքի խախտմամբ իրականացնելու պայմաններում Վճռաբեկ դատարանը չի անդրադարձնում վճռաբեկ բողոքի երկրորդ հիմքին:*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է գործին մասնակցող անձանցից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ ձևով չի տեղեկացվել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Անձի՝ դատական նիստին ներկա գտնվելու իրավունքի խախտման պայմաններում Վճռաբեկ դատարանը քննարկման առարկա չի դարձնում գործով վճռաբեկ բողոքը մերժելու կամ նոր դատական ակտ կայացնելու համար անհրաժեշտ նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետն այն դիտում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմք:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի նոր քննությունն անհրաժեշտ է անձի արդար դատաքնության իրավունքի ապահովման համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.03.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

# ՎԱՐՈՒՅԹՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Հայցի հարուցումը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1373/02/10  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1373/02/10  
Նախագահող դատավոր՝ Գ. Մատինյան

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին,  
քննարկելով Լարիսա Բաբայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի 20.01.2011 թվականի որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Լարիսա Բաբայանը հայցադիմում է ներկայացրել Երևանի Էրեբունի և Նուբա-  
րաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան  
ընդդեմ Ալբերտ Հունանյանի՝ փոխառությամբ վերցված գումարի բանկային տոկոսնե-  
րը բռնագանձելու պահանջի մասին:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 13.12.2010 թվականի որոշ-  
մամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.01.2011 թվականի որոշմամբ Լարիսա Բաբայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.12.2010 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Լարիսա Բաբայանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործում եղած բոլոր ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա, սխալ է մեկնաբանել թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 08.10.2010 թվականին կայացված վճիռը, որի արդյունքում սխալ հետևության է եկել այն մասին, որ նշված վճռով արդեն իսկ 3.100.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ կիրառվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, որպիսի պայմաններում կրկին վճիռ կայացնելն անթույլատրելի է: Ման պայմաններում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նախկին քաղաքացիական գործով հայց է ներկայացվել 200.000 ՀՀ դրամ գումարը և այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարները բռնագանձելու պահանջի մասին:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով դատական նիստի ժամանակ, երբ ինքն առաջարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսագումարները հաշվարկել ամբողջ փոխառության գումարի՝ 3.100.000 ՀՀ դրամի նկատմամբ, Դատարանը հայտնել է, որ ինքը նման պահանջ չի ներկայացրել, որպիսի պայմաններում այդ պահանջը քննության չի կարող առնվել՝ առաջարկելով ներկայացնել առանձին հայց:

Ման պահանջ քննարկված չլինելու փաստը հաստատվում է նաև թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով կայացված վճիռի եզրափակիչ մասով, որում որևէ նշում չկա այդ պահանջը բավարարված կամ մերժված լինելու մասին:

Ման պայմաններում հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.01.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-րդ կետի 2-րդ

---

ենթակետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ նույն առարկայի մասին օրենսդրական եզրույթը վերաբերում է հայցի առարկային, իսկ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին: Սույն գործով Լարիսա Բաբայանը հայց է ներկայացրել ընդդեմ Ալբերտ Հունանյանի՝ խնդրելով բռնագանձել փոխառությամբ տրված 3.100.000 ՀՀ դրամ գումարից *չվերադարձրած 2.900.000 ՀՀ դրամ փոխառության գումարի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները*՝ հայցի հիմքում դնելով այն հանգամանքը, որ 25.07.2008 թվականին Ալբերտ Հունանյանի սեփականությանն է հանձնել 3.100.000 ՀՀ դրամ՝ 60 օրվա ընթացքում վերադարձնելու պայմանով, այդ պարտավորությունն Ալբերտ Հունանյանը կատարել է ոչ պատշաճ՝ պարտավորության կատարման ժամկետի խախտմամբ՝ փոխառության գումարից վերադարձնելով միայն 2.900.000 ՀՀ դրամ գումարը: Թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, քննելով Լարիսա Բաբայանի հայցն ընդդեմ Ալբերտ Հունանյանի՝ 200.000 ՀՀ դրամ *որպես փոխառության պայմանագրով չվճարված մայր գումարը, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն չվճարված մայր գումարի տոկոսները բռնագանձելու պահանջների մասին*, 08.10.2010 թվականի վճռով հայցը բավարարել է՝ վճռել է Ալբերտ Հունանյանից հօգուտ Լարիսա Բաբայանի բռնագանձել 200.000 ՀՀ դրամ պարտքի գումար և *այդ գումարի վրա հաշվարկել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքը կետանցի օրվանից՝ 25.09.2008 թվականից մինչև պարտավորության դադարման օրը*:

Դատարանը, մերժելով սույն գործով ներկայացված հայցադիմումի ընդունումը, 13.12.2010 թվականի որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «հայցադիմումին կից փաստաթղթերից փաստվում է, որ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.10.2007 թվականի թիվ ԵԷԴ/0643/02/10 օրինական ուժի մեջ մտած վճռով կիրառվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, ուստի նման պայմաններում կրկին վճիռ կայացնելը դատարանը համարում է անթույլատրելի»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Լարիսա Բաբայանի վերաքննիչ բողոքը, 20.01.2011 թվականի որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «3.100.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ տոկոսներ հաշվարկելու հայցվորի պահանջի մասով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԷԴ 0643/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում արդեն իսկ քննություն կատարվել է»:

Մինչդեռ, ինչպես պարզվեց թիվ ԵԷԴ/0643/02/10 քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 08.10.2010 թվականի վճռի հետազոտմամբ, վեճը եղել է նույն անձանց՝ Լարիսա Բաբայանի, որպես հայցվորի, և Ալբերտ Հունանյանի, որպես պատասխանողի, միջև, միևնույն հիմքերով, այն է՝ Ալբերտ Հունանյանը փոխառության գումարները վերադարձնելու պարտավորությունը կատարել է ժամկետի խախտմամբ,



սակայն ոչ նույն առարկայի մասին, քանի որ թիվ ԵԷԳ/0643/02/10 քաղաքացիական գործով հայցի առարկան 200.000 ՀՀ դրամ փոխառության գումարն է և **այդ գումարի նկատմամբ** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումարը, իսկ սույն գործով հայցի առարկան 2.900.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումարն է:

Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նաև վերոնշյալ վճռի եզրափակիչ մասի բովանդակությամբ, որում որևէ նշում չկա 2.900.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվարկված տոկոսագումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու մասին:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ վճռի հետագոտման արդյունքում պարզվել է, որ հայցվորն առաջին ատյանի դատարանում իր դիրքորոշումը հայտնելով խնդրել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները բռնագանձել 3.100.000 ՀՀ դրամի հաշվարկով, սպա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը թիվ ԵԷԳ/0643/02/10 գործով, ելնելով հայցի առարկայից, գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգով տոկոսներն ամբողջ 3.100.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկելու առումով հայցադիմումում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, եթե գործը քննող դատարանը դիրքորոշում է արտահայտել տվյալ պահանջը հայցի առարկայի մեջ ներառված չլինելու մասին, Դատարանը տվյալ առարկայի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի սակայության հիմքով չէր կարող մերժել հայցադիմումի ընդունումը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել թիվ ԵԷԳ/0643/02/10 քաղաքացիական գործով Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 08.10.2010 թվականի վճիռը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի սակայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.01.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 13.12.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵՄԴ/0903/02/10**  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՄԴ/0903/02/10  
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*  
*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մարտի 09-ին,  
քննարկելով Արշալույս Ռուշանյանի ներկայացուցիչ Արմեն Ումրշատյանի վճա-  
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2010 թվականի որոշման  
դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Արշալույս Ռուշանյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Սլավ Միթորս» ՓԲԸ-ի և «Աուդի» ԲԸ-ի՝ պայմանին չհամապատասխանող ապրանքը պայմա-  
նագրով նախատեսված տեսականուն համապատասխան ապրանքով փոխարինելուն  
պարտավորեցնելու պահանջի մասին:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության  
դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.10.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վե-  
րադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
17.11.2010 թվականի որոշմամբ Արշալույս Ռուշանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի՝ 04.10.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը  
թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արշալույս Ռուշանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 42-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 28-րդ հոդվածները, որի արդյունքում կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդվածի 3-րդ կետը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը, հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի պահանջների վրա, պարտավոր էր ուսումնասիրել թվով ութ վավերապայմանների առկայությունը: Մինչդեռ որոշման մեջ ուղղակի նշված չէ, թե հայցադիմումի ձևի և բովանդակության որ տարրն է խախտվել:

Դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ վիճելի ավտոմեքենան վաճառել է «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն, որն ըստ կողմերի միջև կնքված համաձայնագրի՝ համարվում է «Աուդի» ԲԸ-ի պաշտոնական ներկայացուցիչը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի համաձայն՝ նշված հարցը պետք է քննարկվի դատաքննության նախապատրաստական փուլում: Ավելին, հայցադիմումում «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն ներգրավված է ոչ թե որպես «Աուդի» ԲԸ-ի ներկայացուցչություն, այլ համապատասխանող, այսինքն՝ պարզ է տարածքային ընդդատության խնդիրը: Փաստորեն, հայցադիմումը վարույթ չընդունելով՝ հայցվորը գրկվել է իր իրավունքները դատական կարգով պաշտպանելու հնարավորությունից:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.11.2010 թվականի որոշումը և վերացնել Դատարանի՝ «Հայցադիմումը վերադարձնելու մասին» 04.10.2010 թվականի որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.**

*Քննելով վճռաբեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պարձատարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները, ինչպես նաև եթե գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին:

---

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերի համաձայն՝ հայցադիմումում պետք է նշվեն հայցապահանջները հաստատող ապացույցները, ինչպես նաև հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները:

Սույն գործով Դատարանը հայցադիմումը վերադարձնելիս արձանագրել է, որ հայցադիմումով որպես համապատասխանող ներգրավված «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն «Աուդի» ԲԸ-ի ներկայացուցչությունը կամ մասնաճյուղը չէ, որպիսի հանգամանքը հայցադիմումը վերադարձնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմք է: Բացի այդ, հայցադիմումում չեն նշվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված հայցապահանջները հաստատող ապացույցները, ինչպես նաև պատասխանողներից յուրաքանչյուրին ուղղված հայցվորի պահանջները, որպիսի հանգամանքը հայցադիմումը վերադարձնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմք է:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը, պատճառաբանել է, որ բողոքաբերը չի ներկայացրել որևէ հիմնավորում՝ Դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերի խախտման վերաբերյալ:

Մինչդեռ, սույն գործում առկա հայցադիմումի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում նշվել և դրան կից ներկայացվել են հայցապահանջը հիմնավորող ապացույցները, մասնավորապես՝ ավտոմեքենայի հանձնման-ընդունման ակտի, ավտոմեքենան արգելանքի տակ գտնվելու մասին տեղեկանքի, 23.03.2009 թվականի թիվ 00000184 և 27.03.2009 թվականի թիվ 00000198 դրամարկղային մուտքի օրդերների, հաշիվ ապրանքագրի, 16.04.2009 թվականի վճարման հանձնարարագրի, անհատական վարկավորման, շարժական գույքի գրավի պայմանագրերի, տեղատեսության սխեմատիկ պլանի, բացատրություն վերցնելու մասին արձանագրության, 05.05.2009 թվականի թիվ 000037 վճարման հանձնարարագրի և թերությունների ակտի պատճենները /գ.թ. 2-11, 15-32/: Ընդ որում, հայցադիմումում նշված պահանջը կայացել է հետևյալում. համապատասխանողներ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ին և «Աուդի» ԲԸ-ին պարտավորեցնել պայմանին չհամապատասխանող ապրանքը, այն է՝ «Աուդի Q5» ավտոմեքենան՝ թափքի համարը՝ WAUZZZ8R39A032661, շարժիչի համարը՝ CD N 028232, թողարկման տարեթիվը՝ 2009 թվական, փոխարինել պայմանագրով նախատեսված տեսականոն համապատասխան ապրանքով՝ նույն թվականի թողարկման «Աուդի Q5» ավտոմեքենայով: Այսինքն՝ սույն գործով երկու պատասխանողներին ներկայացվել է մինևսույն պահանջը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հայցադիմումը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջներին, հետևաբար, տվյալ դեպքում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի

1-ին ենթակետով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքը:

Ինչ վերաբերում է սույն գործը տվյալ դատարանին ընդդատյա չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու պատճառաբանությանը, ապա Վճռաբեկ դատարանն այն ևս անհիմն է համարում հետևյալ պատճառաբանությամբ.

Վերաքննիչ դատարանը բողոքը մերժելիս պատճառաբանել է, որ «Աուդի ապրանքանիշի արտադրատեսակների իրացման համաձայնության» մեջ կողմերը՝ «Աուդի» ԲԸ-ն, հանդես է գալիս որպես առաքիչ, իսկ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն՝ անմիջական վաճառող, ինչը չի ենթադրում, որ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն հանդիսանում է «Աուդի» ԲԸ-ի պաշտոնական ներկայացուցիչը, մասնավորապես՝ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն, լինելով ինքնուրույն կազմակերպարավական ձև ունեցող սուբյեկտ՝ փակ բաժնետիրական ընկերություն, «Աուդի» ԲԸ-ի հետ համապատասխան համաձայնության հիման վրա իրացնում է օրենքով և նշված համաձայնությամբ նախատեսված գործառնություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում մասնավորապես պարզում է գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը, քննարկում է գործի քննությանն այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու, մի քանի պահանջների միացման և առանձնացման, արտագնա դատաքննության անցկացման հնարավորության հարցերը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 02.04.2009 թվականի հանձնման-ընդունման ակտով վաճառող «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն գնորդ Արշալույս Ռուշայանին է հանձնել «Աուդի Q5» ավտոմեքենան: «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ի հասցեն է ք. Երևան, Իսակովի 22/2, որը գտնվում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում: Սույն գործում առկա հայցադիմումում որպես պատասխանողներ են նշվել «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն և «Աուդի» ԲԸ-ն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ն՝ որպես առուվաճառքի պայմանագրի կողմ, սույն գործին մասնակցում է առանձին պատասխանողի կարգավիճակով, այլ ոչ թե որպես «Աուդի» ԲԸ-ի ներկայացուցչություն: Հետևաբար, սույն գործով հայցը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ հարուցվել է «Սլավ Մոթորս» ՓԲԸ-ի գտնվելու վայրի դատարան, այսինքն՝ սույն գործն ընդդատյա է Դատարանին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված հայցադիմումը վերադարձնելու հիմքն առկա չէ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օտարերկրյա իրավաբանական անձ «Աուդի» ԲԸ-ի գործին մասնակից դարձնելու հանգամանքը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու համար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149<sup>8</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ և 8-րդ ենթակետերի ուժով դատարանը գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կազմը պարզում է և գործի քննությանն այլ անձանց ներգրավելու, ոչ պատշաճ կողմին փոխարինելու հարցերը քննարկում է նախնական դատական նիստում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրա-

---

վունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29.11.2007 թվականի թիվ 21638/03 վճիռը, կետ 44):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում խախտվել է Արշալույս Ռուշանյանի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության, արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 17.11.2010 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 04.10.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0466/02/11  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/0466/02/11  
Նախագահող դատավոր՝ Ա. Խատառյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի հոկտեմբերի 05-ին,  
քննարկելով Անիկ Մնացականյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքա-  
ցիական դատարանի 29.06.2011 թվականի որոշման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Անիկ Մնացականյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Ռուբիկ Ասատրյանի՝ առողջության քայքայմամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Վ. Ասլանյան) (այսուհետ՝ Դատարան) 10.05.2011 թվակա-  
նի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.06.2011 թվականի որոշմամբ Անիկ Մնացականյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 10.05.2011 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշու-  
մը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անիկ Մնացականյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, որը չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անուղի է հետևյալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ դատարանի՝ 14.04.2010 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով մերժվել է Անիկ Մնացականյանի հայցն ընդդեմ Ռուբիկ Ասատրյանի՝ առողջության քայքայմամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, մինչդեռ հաշվի չի առել, որ վերը նշված գործով հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ռուբիկ Ասատրյանի կողմից Անիկ Մնացականյանին հասցված վնասվածքի և նրա մոտ ի հայտ եկած առողջական խնդիրների միջև բացակայում է պատճառահետևանքային կապը, իսկ սույն գործով պարզման ենթակա է Ռուբիկ Ասատրյանի հարվածից առաջացած կոտրվածքի հետևանքով Անիկ Մնացականյանի աշխատունակության կորստի աստիճանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 29.06.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը:**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պարզապատասխանությամբ:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանի կարծիքով Դատարանն իրավացիորեն գտել է, որ նախկինում Անիկ Մնացականյանի կողմից նույն առարկայի շուրջ և միևնույն հիմքերով պահանջ է ներկայացված եղել Ռուբիկ Ասատրյանի դեմ, ինչի վերաբերյալ առկա են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.03.2005 թվականի վճիռը, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.04.2010 թվականի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի որոշումը:

*Սույն գործի առանձնահատկությունների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ պարզման ենթակա է այն իրավական հարցը, թե արդյո՞ք սույն գործով հայցի և Վերաքննիչ դատարանի վկայակոչած գործերով հայցերի առարկան ու հիմքը նույնն են:*

Նշված հարցադրմանը պատասխանելու համար Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում անդրադառնալ հայցի տարրերին՝ հայցի առարկային և հիմքին: Այսպես՝ հայցի տարրերը նրա բաղկացուցիչ մասերն են, որոնք որոշում են նրա բովանդակությունը, նրա իրավական բնույթը և հնարավորություն են տալիս անհատականացնել



հայցը, այն տարբերել նույնական հայցերից, հետևաբար և լուծել նույն կողմերի միջև, նույն տարբերով հարուցվող հայցերը կրկին անգամ վարույթ չընդունելու հարցը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է «հայցի առարկա» օրենսդրական եզրույթին և նշել, որ հայցի առարկան հայցվորի պահանջն է՝ ուղղված պատասխանողին կամ պատասխանողներին (*տե՛ս թիվ ԵԷՂ/1373/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 11.05.2011 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է նաև «հայցի հիմք» օրենսդրական եզրույթին:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն անմիջականորեն չի սահմանում **հայցի փաստական և իրավական** հիմքերի տարբերակիչ հատկանիշները, այնուամենայնիվ, այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ նորմերից:

Վճռաբեկ դատարանը փաստել է, որ հայցի փաստական հիմքն այն հանգամանքներն են, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Հայցի փաստական հիմքն ըստ էության իրավաբանական փաստերն են, հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել հայցվորի պահանջի համար: Միաժամանակ, հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմնվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վրա:

Վճռաբեկ դատարանը նշել է, որ հայցի փաստական հիմքից բացի հայցի տարբերի մեջ ներառվում է նաև հայցի իրավական հիմքը, որն այն իրավական նորմերի համակցությունն է, որ կարգավորում է վիճելի իրավահարաբերությունը: Չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հայցվորից չի պահանջում հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց վրա հիմնվում է հայցապահանջը, այնուամենայնիվ, հայցվորը բացի փաստական հանգամանքներից, կարող է հայցադիմումում նշել այն իրավական նորմերը, որոնց հիման վրա կողմերի միջև ծագել են համապատասխան իրավահարաբերություններ, և որը վերջինիս հիմք է տալիս առկա փաստական հանգամանքների հետ միասին ներկայացնել համապատասխան պահանջ (*տե՛ս ըստ հայցի Վիզեն Ուրուշանյանի ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, և Սուրիկ Սեդրակյանի հայցի ընդդեմ Վիզեն Ուրուշանյանի՝ անհիմն հարստացմամբ արացած գումարը վերադարձնելու պահանջի մասին թիվ ԵԵՂ/0473/02/10 գործով Վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Վերաքննիչ դատարանի կողմից նշված օրինական ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 24.03.2005 թվականի վճիռ և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.07.2010 թվականի որոշման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված գործերը վերաբերել են Ռուբիկ Ասատրյանի կողմից Անիկ Մնացականյանին վնաս պատճառելու հետևանքով վերջինիս առողջության վերականգնման համար կատարված բուժման ծախսերի հատուցմանը: Մինչդեռ, սույն գործով ներկայացված հայցադիմումից հետևում է, որ հայցի հիմքում դրվել են Ռուբիկ Ասատրյանի գործողությունների հետևանքով Անիկ Մնացականյանի աշխատունակությունը կորցնելու կապակցությամբ աշխատավարձ (եկամուտ) չստանալու, ինչպես նաև վերջին երեք տարիներին բուժման ծախսեր կատարելու հանգամանքները: Այսինքն՝ սույն գործով բացի իրական վնասի հատուցման պահանջից

---

ներկայացվել է նաև բաց թողնված օգուտի տեսքով վնասի հատուցման պահանջ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացրած հայցի և վերը նշված գործերով հայցերի առարկան ու հիմքը տարբեր են, այսինքն՝ տվյալ դեպքում բացակայում է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 10.05.2011 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԴԴ/0768/02/11**  
դատարանի որոշում 2012թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0768/02/11  
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2012 թվականի հունվարի 18-ին,  
քննարկելով ըստ հայցի Ռուզաննա Դարբինյանի ընդդեմ Արտակ Հերիքյանի՝  
բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,  
քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.08.2011 թվա-  
կանի որոշման դեմ Ռուզաննա Դարբինյանի բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ռուզաննա Դարբինյանը պահանջել է ճանաչել իր սեփակա-  
նության իրավունքը Երևանի Լենինգրադյան փողոցի 36-րդ շենքի թիվ 16 բնակարանի  
նկատմամբ՝ անվավեր ճանաչելով այդ բնակարանի նկատմամբ ՀՀ Կառավարությանն  
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշենի տարածքային  
ստորաբաժանումում թիվ 01-001-4-97 միասնական մատյանի 000042 համարի տակ կա-  
տարված Արտակ Հերիքյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (դատավոր՝ Մ. Հարթենյան) (այսուհետ՝ Դատարան) 23.06.2011 թվա-  
կանի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
24.08.2011 թվականի որոշմամբ Ռուզաննա Դարբինյանի վերաքննիչ բողոքը մերժվել է,

---

և Դատարանի 23.06.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուզաննա Դարբինյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ, 82-րդ հոդվածները, 85-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս պատճառաբանել է, որ Ռուզաննա Դարբինյանի հայցադիմումն ընդդատյալ չէ Դատարանին, քանի որ Երևանի Լենինգրադյան փողոցի 36-րդ շենքի թիվ 16 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայցը ենթակա էր հարուցման պատասխանողի բնակության վայրի դատարան, իսկ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու պահանջը չի կարող նույնացվել հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու պահանջի հետ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի և 85-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Ռուզաննա Դարբինյանի ներկայացրած պահանջն ընդդատյալ է հենց Դատարանին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 24.08.2011 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության կամ այն փոփոխել՝ վերացնել Դատարանի 23.06.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը»:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարզապես անհիմնությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը **հարուցվում են հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի դատարան:**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 222-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բնակարանը բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցման իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածքն (**շինությունն**) է:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ենթակա է հարուցման պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան, որպիսի կա-

նոնից բացառություն են կազմում հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու, հողամասերը, շենքերը, շինություններն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքների խախտումները վերացնելու վերաբերյալ հայցերը, որոնք ենթակա են **հարուցման հողամասի, շենքի, շինության գտնվելու վայրի դատարան (բացառիկ ընդդատություն)**, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բնակարանը բնորոշվում է որպես բնակության համար նախատեսված և իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված կամ համարակալված տարածք (**շինություն**): Այսինքն՝ բնակարանի (շինության) նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայցն ընդդատյա է այդ բնակարանի (շինության) գտնվելու վայրի, այլ ոչ թե պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարանին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ Ռուզաննա Դարբինյանը ներկայացրել է Երևանի Լենինգրադյան փողոցի 36-րդ շենքի թիվ 16 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայց, որը ենթակա է հարուցման պատասխանողի բնակության վայրի դատարան, քանի որ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի ձանաչման պահանջը չի կարող նույնացվել հողամասերի, շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու պահանջի հետ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով բնակարանը բնորոշվում է որպես բնակության համար նախատեսված տարածք (շինություն): Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված բացառիկ ընդդատության կանոնը կիրառելի է նաև բնակարանի՝ որպես շինության նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայցի նկատմամբ: Հետևաբար, Ռուզաննա Դարբինյանի ներկայացրած՝ Երևանի Լենինգրադյան փողոցի 36-րդ շենքի թիվ 16 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ հայցն ընդդատյա է Դատարանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.08.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել Երևանի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 23.06.2011 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

## Հայցի ապահովումը

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ1/0694/02/09  
դատարանի որոշում 2012թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ1/0694/02/09  
Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2012 թվականի մայիսի 02-ին,  
քննարկելով Գագիկ Մարտիրոսյանի ներկայացուցիչ Վահե Ամիրջանյանի վճռա-  
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2011 թվականի որոշման  
դեմ՝ ըստ հայցի Գագիկ Մարտիրոսյանի ընդդեմ Յուրիկ, Արմեն Հարությունյանների՝  
գումարի բռնագանձման պահանջի մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Գագիկ Մարտիրոսյանը պահանջել է Յուրիկ և Արմեն Հարու-  
թյունյաններից համապարտության կարգով բռնագանձել 11.600 ԱՄՆ դոլարին համար-  
ժեք ՀՀ դրամ, ինչպես նաև նշված գումարի նկատմամբ 30.05.2009 թվականից մինչև  
գումարի փաստացի վերադարձման օրը հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի  
411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները: Միաժամանակ, Գագիկ Մարտիրոսյանը  
միջնորդել է հայցագնի՝ 11.600 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք  
դնել Յուրիկ և Արմեն Հարությունյաններին սեփականության իրավունքով պատկանող  
շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև դրամական միջոցների վրա:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.09.2009 թվակա-

նի որոշումներով հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին միջնորդությունը բավարարվել է:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 05.11.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Գագիկ Մարտիրոսյանը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ պահանջելով վերացնել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 07.09.2009 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցը:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ն. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 24.10.2011 թվականի որոշմամբ հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.11.2011 թվականի որոշմամբ Գագիկ Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.10.2011 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գագիկ Մարտիրոսյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ, 92-րդ, 101-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածում որևէ սահմանափակում չկա, որ դատարանը կարող է հայցի ապահովումը վերացնել միայն դատաքննության ընթացքում: Նշված հոդվածից հետևում է միայն, որ հայցի ապահովման վերացման հարցը կարող է լուծել միայն այդ գործը քննող դատարանը: Այսինքն՝ ձեռնարկված հայցի ապահովումը պետք է վերացվի վկայակոչված հոդվածով սահմանված կարգով՝ գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա, այլ ոչ թե ընդհանուր հայցային վարույթի կարգով: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված չէ միջնորդության վերադարձման կարգ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանված են միայն հայցադիմումը կամ դիմումը վերադարձնելու հիմքերն ու կարգը, իսկ միջնորդությունը պետք է քննարկվի, որի արդյունքում պետք է կայացվի կամ այն բավարարելու, կամ մերժելու մասին որոշում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.11.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 24.10.2011 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը վերադարձնելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պարզապատասխանությամբ.*

---

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Հայցի ապահովումը» վերտառությամբ 14-րդ գլխի 97-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում: Միջնորդությունը քննարկվում է այն ստացվելու օրը, ե կայացվում է որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործը քննող դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կարող է վերացնել հայցի ապահովումը:

2. Հայցի ապահովման վերացման հարցը լուծվում է միջնորդությունն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատական նիստում: Գործին մասնակցող անձինք պատշաճ ձևով տեղեկացվում են նիստի ժամանակի և վայրի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ հայցի ապահովման վերացման հարցի քննարկման համար:

3. Հայցի ապահովման վերացման հարցի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

4. Հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճիռ օրինական ուժի մեջ մտնելը:

Հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճիռ կատարումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձանց դիմումով, վճիռ կայացումից հետո, նույն օրենսգրքի 14-րդ գլխով սահմանված կանոններով, միջոցներ է ձեռնարկում վճիռ կատարումն ապահովելու համար:

Դատարանը հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը վերադարձնելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ սույն գործով դատաքննությունն ավարտվել է, 05.11.2009 թվականին կայացվել է վճիռ, այն ստացել է օրինական ուժ, իսկ ներկայացված միջնորդությունը կարող էր քննարկվել դատաքննության ընթացքում: Հետևաբար այդ միջնորդությունը ենթակա չէ Դատարանում քննության, այլ այն պետք է ներկայացվի ընդհանուր հայցային վարույթի կարգով քննության առնելու համար:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը վերադարձնելու մասին» որոշումը, պատճառաբանել է, որ գործին մասնակցող անձանց իրավունքները, մասնավորապես՝ միջնորդություններ անելու իրավունքը, վերաբերում է միայն գործի քննության ընթացքում ծագած հարցերին, ուստի այդ իրավունքը գործին մասնակցող անձանց է վերապահված դատավարության՝ գործի քննության ընթացքում, ինչից էլ հետևում է, որ դատաքննության ավարտից հետո ներկայացված միջնորդությունները ենթակա չեն քննարկման:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կա-



րող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ էլ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (տե՛ս ՀՀ կառավարությանն ստորագրված պետական եկամուտների կումիլիտի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Այնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի 13.157.100 ՀՀ դրամ բնագանձելու պահանջի մասին թիվ ՎԳ/3511/05/10 գործով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.04.2011 թվականի որոշումը): Վճարելի դատարանը գտնում է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու համար անհրաժեշտ է ապացուցել հայցի ապահովում չկիրառելու դեպքում դատական ակտի կատարման դժվարացման կամ անհնարինության հանգամանքը (տե՛ս ըստ դիմումի «Բի լայն» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մերավոր սեփականության գործակալությանը պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին թիվ ՎԳ/0677/05/08 վարչական գործով 21.04.2008 թվականի ՀՀ վճարելի դատարանի որոշումը):

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճարելի դատարանը սույն գործով անհրաժեշտ է համարում անդրադառնալ հայցի ապահովման վերացման հետ կապված հետևյալ իրավական խնդիրներին.

*Արդյոք հայցը բավարարվելու դեպքում գործի քննության ավարտից հետո ներկայացված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը ենթակա է դատարանի քննությանը.*

*Արդյոք հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդության վերադարձի մեխանիզմն օրենքով նախատեսված չլինելու դեպքում դատարանն իրավունք ունի վերադարձնել այն:*

Առաջին հարցին պատասխանելու համար Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը պետք է դիտարկել հոդվածով կարգավորվող հարցերի տրամաբանական շարունակության մեջ: Մասնավորապես, նշված հոդվածի 1-3-րդ կետերը սահմանում են գործի քննության ժամանակ հայցի ապահովման վերացման կարգը, որն իրականացվում է միջնորդությամբ, դատական նիստով, ավարտվում է որոշմամբ, իսկ 4-րդ կետը կարգավորում է գործի քննության ավարտից հետո հայցի ապահովման միջոցի վերացման պահը և կարգը: Այդ կարգավորումը դրսևորվում է հետևյալ կերպ.

1. Հայցը մերժելու դեպքում հայցի ապահովման միջոցները մեխանիկորեն՝ օրենքի ուժով վերանում են վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից,

2. Հայցը բավարարելու դեպքում հայցի ապահովման միջոցները մեխանիկորեն՝ օրենքի ուժով վերանում են վճռի կատարման պահից:

Հետևաբար հայցը բավարարվելուց հետո միակ իրավաբանական փաստը, որն անհրաժեշտ է հայցի ապահովումը վերացնելու համար, վճռի կատարված լինելն է:

Բացի այդ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր կատարողը կատարողական վարույթը կարճում է, եթե՝

1) կատարողական թերթը փաստացի կատարվել է.

2) պահանջատերը հրաժարվել է կատարողական թերթի պահանջների կատարումից:

Նույն օրենքի 44-ին հոդվածի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր **կատարողի որոշմամբ** արգելանքից հանվում է, եթե **սուկա են սույն օրենքի 42-րդ հոդվածում նշված հիմքերը.**

---

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ հարկադիր կատարման վարույթում հայցի ապահովման միջոցի վերացումը կատարողական թերթի կատարված լինելու պարագայում պետք է իրականացվի, այսինքն՝ գույքն արգելանքից պետք է հանվի հարկադիր կատարողի որոշմամբ, քանի որ օրենքը հայցը բավարարվելու դեպքում հայցի ապահովման վերացման համար որպես հիմք պահանջում է դատարանի վճռի կատարված լինելու իրավաբանական փաստը, այսինքն՝ կատարողական թերթի փաստացի կատարված լինելու կամ պահանջատիրոջ կողմից դրա կատարումից հրաժարվելու փաստը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ինչպես հայցի ապահովման միջոցի կիրառումը, այնպես էլ դրա վերացումը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով այդ դատավարական ինստիտուտի նպատակը, և եթե վերացել է դրա սահմանման նպատակը, այն կարող է օրենքի ուժով վերացվել: Այս տրամաբանությունը գործում է նաև դատարանի վճռի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո հայցի ապահովման վերացման դեպքում, ինչն իր արտացոլումն է ստացել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 4-րդ կետում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հատուկ ընդգծել, որ վերոհիշյալ իրավակարգավորումը վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ հայցը բավարարվելու դեպքում վճռի հիման վրա տրվել է կատարողական թերթ, և հարուցվել է կատարողական վարույթ:

Մինչդեռ այն պարագայում, երբ հայցը բավարարելու մասին վճռի հիման վրա կատարողական վարույթ չի հարուցվել, որպիսի դեպքը սույն գործով առկա է, հայցի ապահովման միջոցը պետք է վերացվի գործը քննած դատարանի որոշմամբ:

Նման եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ և 141-րդ հոդվածների տրամաբանական վերլուծությունից: Վերջին հոդվածն իրավունք է վերապահում դատարանին գործին մասնակցող անձանց դիմումով վճռի կայացումից հետո հայցի ապահովման կամ դրա վերացման հարցը քննարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածն ընդգրկող 14-րդ գլխի կանոններով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման վերացման հարցը գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածով սահմանված կարգով գործը քննող դատարանի կողմից կարող է քննարկվել ոչ միայն գործի քննության ընթացքում, այլև **հայցը բավարարելու մասին վճռի հիման վրա կատարողական վարույթ հարուցված չլինելու դեպքում** գործի քննության ավարտից հետո: Հետևաբար հայցի ապահովման մասին հայցվորի միջնորդությունը տվյալ դեպքում ենթակա էր քննարկման:

Անդրադառնալով երկրորդ հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե՝

- 1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 87-րդ հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները.
- 2) հայցադիմումն ստորագրված չէ կամ ստորագրել է այն ստորագրելու լիազորություն չունեցող անձը կամ այնպիսի անձ, որի պաշտոնեական դրությունը նշված չէ.
- 3) գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին.
- 4) այլ դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում առկա է նույն

անձանց միջև, նույն առարկայի մասին և մինևնույն հիմքերով վեճի վերաբերյալ գործ.

5) չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը կամ նման միջնորդությունը մերժվել է.

6) մեկ հայցադիմումում միացված են մեկ կամ մի քանի պատասխանողներին ուղղված միմյանց հետ չկապված պահանջներ.

7) մինչև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը հայցվորը դիմել է այն վերադարձնելու մասին.

8) ամուսինը կնոջ հղիության ժամանակ կամ երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, առանց կնոջ համաձայնության ամուսնալուծության դիմում է տվել:

2. Դատարանը սույն օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով հայցադիմումը վերադարձնելու մասին կայացնում է որոշում՝ հայցադիմումն ստանալու օրվանից ետոյա ժամկետում որոշումը, հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը պատշաճ ձևով ուղարկելով հայցվորին:

3. Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և ետոյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը կարգավորում է միայն **հայցադիմումը վերադարձնելու** հիմքերն ու իրավական մեխանիզմները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածը վերաբերում է **հայցադիմումը** վերադարձնելուն, իսկ միջնորդությունը վերադարձնելու ինստիտուտ նշված օրենսգրքի չի նախատեսում, այսինքն՝ բացակայում է միջնորդությունը վերադարձնելու իրավական հիմքը: Հետևաբար Դատարանն իրավասու չէր վերադարձնելու միջնորդությունը նման լիազորության իրավական հիմքերի բացակայության պատճառով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.10.2011 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

## Գործի վարույթը կասեցնելը

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0452/02/09  
2010թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/0452/02/09  
Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Տ. Նազարյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը  
մասնակցությանը դատավորներ*

Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հունվարի 13-ին

քննարկելով ըստ հայցի Վերա Ազիզյանի ընդդեմ Նունե Սարգսյանի՝ գումարի  
բռնագանձման և վնասի հատուցման պահանջների մասին, քաղաքացիական գործով  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2009 թվականի 'Գործի վարույթը  
կասեցնելու մասին՝ որոշման դեմ Վերա Ազիզյանի ներկայացուցիչներ Նարինե  
Ճաղարյանի և Մերի Գևորգյանի բերած վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործով կայացված դատական ակտի էությունը

Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության  
դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.07.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 08.09.2009 թվականի որոշմամբ Դատարանի վճռի դեմ Նունե Սարգսյանի ներ-

կայացրած վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 13.11.2009 թվականի որոշմամբ Նունե Սարգսյանի ներկայացուցիչ Սարգիս Ասլանյանի միջնորդությունը բավարարվել է՝ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Վերա Ազիզյանի ներկայացուցիչները:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Նունե Սարգսյանի ներկայացուցիչը:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը չի հիմնավորել, թե ինչու է անհնարին սույն քաղաքացիական գործի քննությունը մինչև ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Երևանի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 02.11.2009 թվականի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված քրեական գործով որոշում կայացնելը: Նկատի ունենալով, որ նշված որոշմամբ հարուցված քրեական գործը որևէ փոխադարձ կապ չունի Վերաքննիչ դատարանում քննվող գործի հետ, ուստի առկա չէ սույն գործի քննության անհնարինության հիմքը մինչև քրեական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Նունե Սարգսյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի վճռի՝ որպես իրավաբանական ծախս 100.000 ՀՀ դրամ վնասի հատուցում բռնագաձեղու մասով: Հետևաբար, հարուցված քրեական գործը չի խոչընդոտում Վերաքննիչ դատարանին այդ մասով գործի քննությունն իրականացնելու գործընթացին:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձինք պահանջել են վերացնել Վերաքննիչ դատարանի 13.11.2009 թվականի որոշումը:

**2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Անհիմն է վճռաբեկ բողոքի այն փաստարկը, որ Վերա Ազիզյանի կողմից գումարի բռնագանձման և վնասի հատուցման պահանջով ներկայացված հայցի և հարուցված քրեական գործի միջև առկա չէ փոխադարձ կապ, քանի որ գումարի բռնագանձման և վնասի հատուցման պահանջների վերաբերյալ սույն գործի և հարուցված քրեական գործի միջև առկա է ուղղակի և անմիջական փոխադարձ կապ, այլապես քրեական գործ չէր հարուցվի:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դա-

---

տարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին ենթակետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վերը նշված օրինադրությունների իմաստով դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին ենթակետի հիման վրա, գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետից, որի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը, որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տրվի կիրառման ենթակա նորմը պարունակող նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Տվյալ դեպքում Նունե Սարգսյանի ներկայացուցիչը Վերաքննիչ դատարան ներկայացնելով ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Երևանի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 02.11.2009 թվականի որոշումը՝ Հովհաննես Մատնիշյանի և Նունե Սարգսյանի հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քրեական գործ հարուցելու մասին, միջնորդել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի հիմքով կասեցնել սույն գործի վարույթը՝ մինչև քրեական դատա-

վարության կարգով քննվող գործով որոշում կայացնելը: Վերաքննիչ դատարանը կասեցրել է քաղաքացիական գործի վարույթը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհնարին է գործի քննությունը մինչև ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Երևանի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 02.11.2009 թվականի որոշմամբ հարուցված քրեական գործով որոշում կայացնելը: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չի նշել այն շարժառիթները, որոնց հիման վրա հանգել է հետևության այն մասին, որ վերոնշյալ քրեական գործով որոշում կայացնելն անհնարին է դարձնում Վերա Ազիզյանի՝ պարտավորագրով նախատեսված գումարը Նունե Սարգսյանից բռնագանձելու և վնասը հատուցելու պահանջների մասին սույն քաղաքացիական գործի քննությունը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Ոստիկանության ՔԳՎ Երևանի քննչական վարչության Մաշտոցի քննչական բաժնի քննիչի 02.11.2009 թվականի որոշմամբ հարուցված քրեական գործի քննությունն անհնարին չի դարձնում սույն գործի քննությունը, հետևաբար բացակայում է սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.11.2009 թվականի 'Գործի վարույթը կասեցնելու մասին' որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0500/02/08  
2010թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0500/02/08  
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 20-ին  
քննարկելով Անահիտ Ղազարյանի, Գառնիկ և Արթուր Բաբայանների ներկայա-  
ցուցիչ Արայիկ Պապիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-  
րանի 28.04.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարատ Ափինյանի ընդդեմ Անա-  
հիտ Ղազարյանի, Գառնիկ, Արթուր, Գուրգեն և Գևորգ Բաբայանների՝ տան նկատ-  
մամբ փոխհատուցմամբ օգտագործման իրավունքները դադարեցնելու և վտարելու  
պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործով կայացված դատական ակտի էությունը**

Դիմելով դատարան՝ Մարատ Ափինյանը պահանջել է փոխհատուցմամբ դադա-  
րեցնել Անահիտ Ղազարյանի, Գառնիկ, Արթուր, Գուրգեն և Գևորգ Բաբայանների  
օգտագործման իրավունքները Վանաձորի Նարեկացու 3-րդ փողոցի թիվ 22 բնակելի  
տան նկատմամբ և վտարել:

Դատաքննության ընթացքում Անահիտ Ղազարյանի ներկայացուցիչը միջնորդել է  
կասեցնել սույն քաղաքացիական գործի վարույթը, պատճառաբանելով, որ նշված քա-  
ղաքացիական գործի քննությունն անհնարին է մինչև ՀՀ վարչական դատարանի վա-  
րույթում գտնվող ըստ հայցի Մանիկ և Մարույա Բաբայանների ընդդեմ Վանաձորի  
նտարի, Վանաձորի կադաստրի ստորաբաժանման և երրորդ անձ Մարատ Ափինյա-



նի՝ 05.01.2001 թվականին Հրաչիկ Բաբայանին տրված ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու և գույքի նկատմամբ Մանիկ և Մարուսյա Բաբայանների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով վճիռ կայացնելը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.03.2010 թվականի որոշմամբ Անահիտ Ղազարյանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, և քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.04.2010 թվականի որոշմամբ Մարատ Ափիսյանի ներկայացուցչի Կարեն Թումանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, և վերացվել է Դատարանի 17.03.2010 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Ղազարյանի, Գառնիկ և Արթուր Բաբայանների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Մարատ Ափիսյանի ներակայացուցչի Կարեն Թումանյանը:

## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտես է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բողոքը քննել և որոշում է ընդունել՝ առանց բողոքի վերաբերյալ ներկայացված պատասխանի հետազոտման և գնահատման: Վերաքննիչ դատարանը որոշման մեջ նշել է, որ վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել: Մինչդեռ վերաքննիչ բողոքի պատասխանն առաքվել է 29.03.2010 թվականին, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է 28.04.2010 թվականին: Արդյունքում Վերաքննիչ դատարանը բողոքը քննել և որոշում է կայացրել առանց բողոքի վերաբերյալ ներկայացված պատասխանի հետազոտման և գնահատման:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 28.04.2010 թվականի որոշումը:

## 2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները

Վերաքննիչ բողոքի պատասխանը սույն գործի լուծման համար որևէ նշանակություն ունենալ չէր կարող, դրանում նշված հերքումները Վերաքննիչ դատարանի կայացրած որոշման հիմքերին որևէ ձևով չեն առնչվել, ուստի Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքի պատասխանը քննության չառնելը կարող է դիտվել ձևական խախտում և գործի լուծման համար նշանակություն չի ունեցել: Հետևաբար վերաքննիչ բողոքի պատասխանի բովանդակությունը որոշմամբ չնշելը չի կարող որոշումը բեկանելու հիմք հանդիսանալ:

---

### **3. Վճարել նատարանի պատճառարանությունները և եզրահանգումը**

Քննարկելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել նատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառարանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները, վերաքննիչ բողոք ներկայացրած անձի պահանջը, **վերաքննիչ բողոքի պատասխանի առկայության դեպքում՝ պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը որոշման ներածական՝ «գործի դատավարական նախապատմություն» մասում, նշել է, որ վերաքննիչ բողոքի պատասխան չի ներկայացվել: Մինչդեռ Անահիտ Ղազարյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանում ստացվել է 31.03.2010 թվականին /հատոր 2-րդ, գ.թ. 165/, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է 28.04.2010 թվականին: Այսպիսով, Վերաքննիչ դատարանը որոշման մեջ չի նշել պատասխան ներկայացրած անձի դիրքորոշումը և հիմնավորումները՝ խախտելով կողմի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածով ամրագրված վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը Վերաքննիչ դատարանում քննարկվելու իրավունքը:

Վճարել նատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի պատասխանը քննարկելու դեպքում Վերաքննիչ դատարանը պետք է կայացներ հակառակ որոշում: Վերաքննիչ բողոքի պատասխանում, մասնավորապես, նշված է. «Բողոքաբերը բողոքի մեջ որպես էական նշանակություն ունեցող հանգամանք՝ նշել է՝ «...Վարչական դատարանը քննության է առնում քաղաքացիական գործն ըստ հայցի՝ ... «2001 թվականի հունիսի 5-ի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու, դրա հիման վրա տրված սեփականության իրավունքի վկայականն ու առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու, 2001 թվականի փետրվարի 5-ի սեփականության իրավունքի վկայականը մասնակի անվավեր ճանաչելու և որպես տիրապետող ժառանգներ՝ իրենց սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին»: Սակայն նման հայցապահանջ ներկայումս չկա, ներկայացված ձևակերպմամբ հայցը երեք անգամ փոփոխվել է: Հայցադիմումի քննությունը տարբեր ժամանակներում տարբեր դատարաններում քննության ենթակա լինելու պատճառով հայցվորները կատարել են հայցի հիմքի և առարկայի լրացում կամ փոփոխություն: Մասնավորապես՝ Վարչական դատարանում սեփականության իրավունքը ճանաչելու մասին պահանջը հանվել է, քանի որ այդ պահանջը Վարչական դատարանում քննության ենթակա չէ»:

Այսպիսով, Վճարել նատարանը գտնում է, որ հիմնավոր է Դատարանի 17.03.2010 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ տրված պատճառարանությունը հետևյալի մասին՝ «ՀՀ վարչական դատարանի վարույթում եղած հայցադիմումի լրացման այլ պահանջների հետ միասին, ներկայացված է նաև պահանջ՝

Մարատ Ափինյանի և հայցվորների եղբոր՝ Հրաչիկ Բաբայանի միջև 16.01.2001 թվականին կնքված վիճելի տան առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Ըստ էության չի բացատվում, ինչը պարզ կլինի գործի քննության արդյունքում Վարչական դատարանի կողմից վճիռ արձակելուց հետո, որ վիճելի տան առուվաճառքի պայմանագիրը ճանաչվի անվավեր, ինչն անշուշտ, գործով հայցվոր Ափինյանի համար կատաշտացնի իրավական հետևանքներ, այդ թվում՝ սույն գործով պատասխանողներին վտարման պահանջ ներկայացնելու իրավունքի բացակայություն»:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.04.2010 թվականի որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Բաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2790/02/09  
դատարանի որոշում 2010թ.  
Բաղաքացիական գործ թիվ ԵԱԲԴ/2790/02/09  
Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 11-ին,  
քննարկելով «Իրավագարանտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.07.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ Ընկերության հայցի ընդդեմ Ինգա Մանդելի և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի՝ իրավահարաբերությունը դադարեցնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործով կայացված դատական ակտի էությունը**

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 04.05.2010 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է՝ մինչև թիվ ԵԲԴ/0782/02/08 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.07.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.05.2010 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը և 144-րդ հոդվածի 2-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործով Ընկերությունը պահանջել է 25.02.2008 թվականի պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագրից ծագած իրավահարաբերությունը դադարեցնել և այն չկնքված համարել: Հետևաբար՝ թիվ ԵՔԳ/0782/02/08 քաղաքացիական գործով թիվ 17 փոխառության պայմանագրի անվավերության հարցի պարզումը հիմք չի կարող հանդիսանալ սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու համար, քանի որ մինևսույն անձանց մասնակցությունը և մինևսույն փաստաթղթերի առկայությունը դեռևս բավարար չէ գործի վարույթի կասեցման համար, այլ անհրաժեշտ է այլ գործի առկայությամբ գործի քննության անհնարինությունը, այսինքն՝ սույն քաղաքացիական գործի քննությունն անհնարին չէ մինչ վերը նշված քաղաքացիական գործով վերջնական որոշում կայացնելը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «վերացնել Վերաքննիչ դատարանի 07.07.2010 թվականի որոշումը և Դատարանի 04.05.2010 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը»:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վերը նշված օրինադրույթների իմաստով դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների:

---

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը, որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տրվի կիրառման ենթակա նորմը պարունակող նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, այլև պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է՝

1. նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն,

2. նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում գործի ողջամիտ ժամկետում քննությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ քաղաքացիական դատավարության ժամանակ, երբ ներպետական օրենսդրությունը և պրակտիկան կողմերից են պահանջում նախաձեռնություն ցուցաբերել դատավարական շարժի համար, պետությունը պարտավոր է երաշխավորել դատավարության ողջամտությունը (Տես Կոտտերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 01.02.2005 թվականի վճիռը, կետ 29, CROWTHER v. THE UNITED KINGDOM, 1 February 2005, par. 29): Եվրոպական դատարանը նշել է նաև, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է Բարձր Պայմանավորվող կողմերից իրենց *իրավական համակարգը կազմակերպել այնպես*, որը թույլ կտա դատարաններին գործել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մասնավորապես գործի քննության ողջամիտ ժամկետի հետ կապված (Տես Բաչոլդն ընդդեմ Գերմանիայի գործով Եվրոպական դատարանի 06.05.1981 թվականի վճիռը, կետ 51, BUCHHOLZ v. GERMANY, 6 May 1981, par. 51):

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն Ընկերության վերաքննիչ բողոքը մերժելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ «սույն գործի քննության անհնարինության փոխադարձ կապի մասին ուղղակիորեն նշված է Դատարանի որոշման մեջ (նշված գործերով վեճի առարկան թիվ 17 պայմանագիրն է՝ իր ածանցյալ հետևանքներով հանդերձ, հարաբերությունների մասնակիցները նույն անձինք են: Առկա է նաև Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշումը թիվ ԵԿԴ/2558/02/09 քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին, որը նույնպես առնչվում է վերը նշված հարցերին)»:

Փաստորեն սույն գործի քննության անհնարինությունը Վերաքննիչ դատարանը պայմանավորել է նրանով, որ վերը նշված գործերով վեճի առարկան թիվ 17 պայմանագիրն է իր ածանցյալ հետևանքներով հանդերձ և հարաբերությունների մասնակիցները

նույն անձինք են:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով Ընկերությունը պահանջել է 25.02.2008 թվականի Ինգա Մանդելի և «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի միջև «կնքված» պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագրից ծագած իրավահարաբերությունը դադարեցնել՝ համարելով այն չկնքված: Մինչդեռ թիվ ԵՔԳ/0782/02/08 քաղաքացիական գործով քննվում է «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Եվրո Ֆինանս» ՍՊԸ-ի, երրորդ անձինք Ինգա Մանդելի, Աշոտ Հակոբյանի և «Իրավագարանտ» ՍՊԸ-ի՝ 25.07.2007 թվականի փոխառության թիվ 17 պայմանագիրը, ժամկետի ավարտմամբ, դադարած համարելու, փոխառության գումարը և տոկոսագումարը բռնագանձելու պահանջների մասին և «Եվրո Ֆինանս» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չնայած թիվ ԵՔԳ/0782/02/08 քաղաքացիական գործով քննվում է 25.07.2007 թվականի թիվ 17 փոխառության պայմանագիրը, ժամկետի ավարտմամբ, դադարած համարելու, փոխառության գումարը և տոկոսագումարը բռնագանձելու պահանջները, այնուամենայնիվ, այդ հանգամանքը սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու հիմք չէ, քանի որ սույն գործով վեճի առարկան տարբերվում է նշված գործի վեճի առարկայից և Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ըստ «Շենգավիթ-Ա» ՍՊԸ-ի հայցի ընդդեմ «Եվրո Ֆինանս» ՍՊԸ-ի, երրորդ անձինք Ինգա Մանդելի, Աշոտ Հակոբյանի և «Իրավագարանտ» ՍՊԸ-ի՝ փոխառության թիվ 17 պայմանագիրը, ժամկետի ավարտմամբ, դադարած համարելու, փոխառության գումարը և տոկոսագումարը բռնագանձելու պահանջների մասին և «Եվրո Ֆինանս» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցն ընդդեմ «Շենգավիթ Ա» ՍՊԸ-ի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործի քննությունն անհնարին չի դարձնում սույն գործի քննությունը, ուստի և բացակայում է սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.07.2010 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 04.05.2010 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0169/02/09  
դատարանի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0169/02/09  
Նախագահող դատավոր՝ Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈՒՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի մայիսի 11-ին,  
քննարկելով Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանների և Մարիամ Ստեփանյանի ներկայացուցիչ Միքայել Ավագյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.11.2010 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գայանե Ասլանյանի ընդդեմ Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանների և Մարիամ Ստեփանյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գայանե Ասլանյանը պահանջել է Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյաններին և Մարիամ Ստեփանյանին վտարել Երևանի Հ. Հակոբյան փողոցի 1-ին շենքի թիվ 114 բնակարանից:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.10.2010 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.11.2010 թվականի որոշմամբ Գայանե Ասլանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է,



և վերացվել է Դատարանի 14.10.2010 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանների և Մարիամ Ստեփանյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին կետը և 144-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ Դատարանի որոշման պատճառաբանական մասից պարզ չէ, թե ինչով է պայմանավորված տվյալ գործի քննության անհնարինությունը, չի համապատասխանում գործի փաստերին, քանի որ Դատարանն իր որոշման մեջ ավելի քան հանգամանորեն նշել է այդ մասին:

Վերաքննիչ դատարանը չի գնահատել պատասխանող կողմի ներկայացրած ապացույցն այն մասին, որ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում քննվող մեկ այլ գործով վիճարկվում է Երևանի Հ. Հակոբյան փողոցի 1-ին շենքի թիվ 114 բնակարանը Գայանե Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանելու փաստը՝ անտեսելով, որ քաղաքացիական դատավարության կարգով քննվում է մի վեճ, որի քննության արդյունքում կպարզվի, թե սույն գործով Գայանե Ասլանյանը պատշաճ հայցվոր է, թե՛ ոչ:

Գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել գործի քննության շրջանակներում: Տվյալ դեպքում վտարման պահանջի մասին գործով ապացուցման ենթակա փաստը, այն է՝ վիճելի բնակարանը Գայանե Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանելը, չի կարող հաստատվել վտարման պահանջի մասին գործի քննության շրջանակներում, քանի որ բնակարանի նվիրատվության պայմանագիրը և Գայանե Ասլանյանի սեփականության իրավունքի գրանցումը վիճարկվում է այլ քաղաքացիական գործով: Այսինքն՝ բնակարանը Գայանե Ասլանյանին պատկանելու վերաբերյալ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը վտարման գործի քննության շրջանակներում հնարավոր չէ հաստատել, ինչը և անհնարին է դարձնում վտարման գործի հետագա քննությունը և գործի վարույթը կասեցնելու պարտավորություն է առաջացնում:

Վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված չէ՝ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել պատասխանող կողմի բերած փաստարկներին և չի հերքել այդ փաստերի առկայությունը կամ բացակայությունը, կամ դրանց պարագայում գործի քննությունն անհնարին չդարձնելու հանգամանքը, ինչը պարտավոր էր կատարել:

---

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ չի նշել պատասխանող կողմի բոլոր փաստարկները, մինչդեռ բառացիորեն նշել է Գայանե Ասլանյանի դիրքորոշումը, որով նաև խախտել է կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.11.2010 թվականի որոշումը՝ Դատարանի 14.10.2010 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի մեկնաբանությանը և նշել, որ վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, դրանք են՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարեբությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Սույն գործով Գայանե Ասլանյանը, խնդրելով Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյաններին և Մարիամ Ստեփանյանին վտարել Երևանի Հ. Հակոբյան փողոցի 1-ին շենքի թիվ 114 բնակարանից, իր հայցի հիմքում դրել է այն փաստերը, որ ինքը հանդիսանում է այդ բնակարանի սեփականատերը, իսկ Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանները և Մարիամ Ստեփանյանն այդ բնակարանը տիրապետում են ապօրինի:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում Ռաֆիկ Սահակյանի, Զարինե Ասլանյանի հայցն ընդդեմ Դերենիկ Ասլանյանի, Երևանի «Կենտրոն» նոտարական գրասենյակի նոտար Էմմա Շաբոյանի, երրորդ անձ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի ստորաբաժանման՝ Դերենիկ Ասլանյանին տրված ժառանգության իրավունքի թիվ 466 և 467 վկայազրերը, Դերենիկ Ասլանյանի կողմից Գայանե Ասլանյանին կատարված նվիրատվության թիվ 2180 պայմանագիրը և դրանց հիման վրա տրված անշարժ գույքի սեփականության

իրավունքի գրանցման վկայականներն անվավեր ճանաչելու ու ժառանգական գույքի նկատմամբ հայցվորների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

Տվյալ դեպքում, Դատարանը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ և 144-րդ հոդվածների պահանջներին համապատասխան լուծելով Սահակ, Կարեն, Տաթևիկ, Թամարա Ասլանյանների և Մարիամ Ստեփանյանի ներկայացուցչի միջնորդությունը, հիմնվելով Դատարան ներկայացված ապացույցների վրա, որոշում կայացնելիս պատճառաբանելով, որ «անհնար է սույն գործի քննությունը մինչև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԲԴ/0659/02/08 քաղաքացիական գործին վերջնական լուծում տալը, նկատի ունենալով, որ նշված քաղաքացիական գործով վիճարկվում է Դերենիկ Ասլանյանի և Գայանե Ասլանյանի միջև 17.03.2008 թվականին կնքված նվիրատվության պայմանագիրը և դրա հիման վրա Գայանե Ասլանյանի անվամբ՝ սույն գործով վեճի առարկա հանդիսացող Երևանի Հ. Հակոբյան փողոցի 1-ին շենքի թիվ 114 բնակարանի նկատմամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, այսինքն՝ հիշյալ քաղաքացիական հայցի բավարարման դեպքում սույն քաղաքացիական գործով (վտարման պահանջով) հայցվորը այլևս չի կարող հանդես գալ որպես պատշաճ հայցվոր, որպիսի փաստի առկայությունն անհնարին է դարձնում սույն քաղաքացիական գործի քննությունը», որոշում է կայացրել սույն քաղաքացիական գործի վարույթը մինչև Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ԵԲԴ/0659/02/08 քաղաքացիական գործին վերջնական լուծում տալը կասեցնելու մասին:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ «որոշման պատճառաբանական մասում չի պարզաբանել, թե ինչով է պայմանավորված սույն քաղաքացիական գործով քննության անհնարինությունը», անհիմն է և չի բխում Դատարանի որոշման բովանդակությունից:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի մյուս պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանը հաշվի չի առել, որ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին միջնորդություն ներկայացրած անձը որևէ կերպ չի հիմնավորել սույն քաղաքացիական գործի քննության անհնարինությունը, ինչը պարտավոր էր կատարել, հետևաբար չի ապացուցվել գործի հետագա քննությանը խոչընդոտող որևէ հիմքի առկայությունը, ևս անհիմն է, քանի որ միջնորդություն հարուցած անձն ինչպես ապացուցել է քաղաքացիական գործի վարույթը միջնորդության մեջ նշված հիմքով կասեցնելու համար բավարար հիմք հանդիսացող հանգամանքի առկայությունը, այնպես էլ ներկայացրել է դա հաստատող ապացույցները՝ Դատարան ներկայացնելով ԵԲԴ/0659/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 29.04.2010 թվականին կայացված որոշման ու նույն գործով «Նախնական դատական նիստ հրավիրելու մասին» Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 13.07.2010 թվականին կայացված որոշման օրինակները:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիական գործն ուղղակիորեն կապված է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության

---

դատարանի վարույթում գտնվող թիվ ԵՔԳ/0659/02/08 քաղաքացիական գործի հետև և վերջին գործը սույն գործի համար առաջացնում է գործի քննության անհնարինություն: Այսինքն, Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.11.2010 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի «Գործի վարույթը կասեցնելու մասին» 14.10.2010 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/1395/02/10  
դատարանի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ ԵՇԴ/1395/02/10  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 07-ին  
քննարկելով Ռուդոլֆ Բաբայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի 06.05.2011 թվականի որոշման դեմ՝ ըստ Ռուդոլֆ Բաբայանի հայցի  
ընդդեմ Լևոն Համբարձումյանի՝ բնակարանից վտարելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ռուդոլֆ Բաբայանը պահանջել է Լևոն Համբարձումյանին  
վտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Երևանի Մանանդյան փողոցի  
թիվ 26 շենքի 5-րդ բնակարանից:

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին  
ատյանի դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.04.2011 թվականի որոշմամբ Լևոն  
Համբարձումյանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարվել է, և քաղաքացիական  
գործի վարույթը՝ կասեցվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
06.05.2011 թվականի որոշմամբ Ռուդոլֆ Բաբայանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և  
Դատարանի 19.04.2011 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուդոլֆ Բաբայանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

---

---

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ, 274-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել գործում առկա ապացույցները, պատշաճ իրավական գնահատական չի տվել այն հանգամանքին, որ Երևանի Մանանդյան փողոցի թիվ 26 շենքի 5-րդ բնակարանի սեփականատերը Ռուդոլֆ Բաբայանն է, իսկ Լևոն Համբարձումյանը նշված բնակարանի նկատմամբ որևէ իրավունք չունի, հետևաբար, վերջինիս գործողությունները խոչընդոտում են սեփականատիրոջը լիարժեք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իր սեփական գույքը: Ավելին, սույն քաղաքացիական գործը որևէ կապ չունի առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող մեկ այլ քաղաքացիական գործով Երևանի քաղաքապետարանի կողմից նվիրատվության պայմանագիրը վիճարկելու մասին պահանջի հետ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «բեկանել ՀՀ Վերաքննիչ դատարանի 06.05.2011թ. գործ թիվ ԵՇԴ/1395/02/10 որոշումը և օրինական ուժ տալ ԵՇԴ/0566/02/08 օրինական ուժի մեջ մտած վճիռն»:

## **3. Վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պարզապես անհիմն պնդումներով.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե **անհնարին է տվյալ գործի քննությունը** մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ **գործով կամ հարցով որոշում կայացնելը:**

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է այն դեպքում, երբ տվյալ վեճի քննությունն անհնար է մինչ այլ գործի քննության ավարտը, որը վերապահված է սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր քննող դատարանին: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական, դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար (որոշ դեպքերում նաև նախադատելի) նշանակություն ունեն:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վերոնշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս պարտավոր է նշել՝

1. այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն,

2. ցույց տալ գործի քննության անհնարինությունը, այսինքն՝ ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վճռաբեկ դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումը բխում է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետից, որի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն **շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևություններին՝** օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ նոտարական կարգով վավերացված 18.02.2008 թվականի առուվաճառքի պայմանագրով Օֆելյա Մովսեսյանը Երևանի Մանանդյան փողոցի թիվ 26 շենքի 5-րդ բնակարանը վաճառել է Ռուդոլֆ Բաբայանին, որից ծագող իրավունքները ենթարկվել են պետական գրանցման և Ռուդոլֆ Բաբայանին 27.02.2008 թվականին տրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2287932 վկայականը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած 19.11.2010 թվականի որոշմամբ Ռուդոլֆ Բաբայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բեկանվել է Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2010 թվականի թիվ ԵԾԴ/0866/02/08 վճիռը և փոփոխվել, այն է՝ «Երևանի քաղաքապետարանի հայցն ընդդեմ Օֆելյա Մովսեսյանի, Ռուդոլֆ Բաբայանի, երրորդ անձ Լևոն Համբարձումյանի՝ բնակարանի առուվաճառքի պայմանագիրը, դրա հիման վրա կատարված իրավունքի պետական գրանցումն ու բնակարանի 1/2-րդ մասի նկատմամբ Օֆելյա Մովսեսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին մերժել»:

Տվյալ դեպքում Դատարանը կասեցրել է սույն քաղաքացիական գործի վարույթը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհնարին է սույն գործի քննությունը մինչև «թիվ ԵԾԴ/0372/02/11 քաղաքացիական գործով ըստ հայցի Երևանի քաղաքապետարանի ընդդեմ Օֆելյա Մովսեսյանի, Ռուդոլֆ Բաբայանի, երրորդ անձ Լևոն Համբարձումյանի՝ Երևան քաղաքի Մանանդյան փողոցի 26 շենքի թիվ 5 բնակարանի նվիրատվության պայմանագիրն ու դրանից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը 1/2-րդ մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, վերջնական որոշում կայացնելը»:

Վերաքննիչ դատարանը, Ռուդոլֆ Բաբայանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով Դատարանի՝ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը, պատճառաբանել է, որ Ռուդոլֆ Բաբայանի հայցի առարկան ներառում է Երևան քաղաքի Մանանդյան փողոցի թիվ 26 շենքի 5-րդ բնակարանից պատասխանատուի վտարելու պահանջը: Թիվ

---

ԵՇԴ/0372/02/11 քաղաքացիական գործով, որի կապակցությամբ կասեցվել է սույն գործի վարույթը, Երևանի քաղաքապետարանի հայցի առարկան վերաբերում է վեճի առարկա բնակարանի նվիրատվության պայմանագիրը և դրանից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը 1/2-րդ մասով անվավեր ճանաչելուն, հետևաբար, նույն անշարժ գույքի նկատմամբ առկա են քաղաքացիական վեճեր, իսկ թիվ ԵՇԴ/0372/02/11 քաղաքացիական գործի լուծման բովանդակային կազմը կարող է որոշիչ նշանակություն ունենալ սույն գործով վերջնական դատական ակտի կայացման համար:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ առաջին ատյանի դատարանի վարույթում գտնվող մեկ այլ քաղաքացիական գործը վերաբերում է Երևանի քաղաքապետարանի և ՕՖելյա Մովսեսյանի, Ռուդոլֆ Բաբայանի միջև ծագած իրավահարաբերություններին՝ Երևանի Մանանդյան փողոցի թիվ 26 շենքի 5-րդ բնակարանի նվիրատվության պայմանագիրն ու դրանից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը 1/2-րդ մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին, այսինքն՝ որևէ կապ չունի Ռուդոլֆ Բաբայանի և Լևոն Համբարձումյանի միջև սույն գործով նշված բնակարանից վտարելու իրավահարաբերությունների հետ, հետևաբար դրանք միմյանց համար գործի քննության անհնարինություն չեն կարող առաջացնել:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում գործի ողջամիտ ժամկետում քննությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ քաղաքացիական դատավարության ժամանակ, երբ ներպետական օրենսդրությունը և պրակտիկան կողմերից են պահանջում նախաձեռնություն ցուցաբերել դատավարական շարժի համար, պետությունը պարտավոր է երաշխավորել դատավարության ողջամտությունը (Տեն Կոտտերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 01.02.2005 թվականի վճիռը, կետ 29, CROWTHER v. THE UNITED KINGDOM, 1 February 2005, par. 29):

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 06.05.2011 թվականի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.05.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.04.2011 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԳ-1/0902/02/10  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԳ-1/0902/02/10  
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հունիսի 08-ին,  
քննարկելով Անահիտ Գալոյանի ներկայացուցիչ Վահե Հովհաննիսյանի վճա-  
բեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.03.2011 թվականի որոշ-  
ման դեմ՝ ըստ հայցի Անահիտ Գալոյանի ընդդեմ Գրիգոր Կարապետյանի, երրորդ անձ  
Անահիտ Բունիաթյանի՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով  
սեփականության իրավունքը ձանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Անահիտ Գալոյանը պահանջել է ձեռքբերման վաղեմու-  
թյան ուժով ձանաչել սեփականության իրավունքը ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր 1-ին  
գանգվածի 1-ին թաղամասի թիվ 9 հողատարածքի նկատմամբ:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատա-  
րան) 25.01.2011 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
03.03.2011 թվականի որոշմամբ Անահիտ Գալոյանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը  
մերժվել է, և Դատարանի 25.01.2011 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կա-  
սեցնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

---

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Գալոյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 105-րդ, 106-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանում է հետևյալ փաստարկներով.*

Օրենսդիրը սահմանել է գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ դատարանի պարտականություն այն դեպքում, երբ անհնարին է տվյալ գործի քննության հետագա շարունակումը՝ կապված մեկ այլ գործի քննության հիմքով վերջնական դատական ակտ կայացնելու հետ: Ընդ որում, գործի վարույթը կասեցնելիս դատարանը պարտավոր է լիարժեքորեն և օբյեկտիվորեն քննության առարկա դարձնել գործի հետագա քննության անհնարինության հանգամանքը: Սույն գործով բողոքարկվող որոշմամբ Վերաքննիչ դատարանն առանց հղում կատարելու իրավական նորմերին նշել է, որ երկու գործերով՝ սույն անշարժ գույքի նկատմամբ առկա են քաղաքացիական վեճեր: Մինչդեռ, այլ գործի առկայությունը չի առնչվում սույն գործի հետագա քննության անհնարինության փաստին: Ավելին, սույն անշարժ գույքի նկատմամբ դատարանում մեկ այլ քաղաքացիական վեճի առկայությունը չի կարող դիտվել որպես սույն գործի քննության անհնարինության փաստ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի համաձայն՝ անձը կարող է սեփականության իրավունք ձեռք բերել նաև այն գույքի նկատմամբ, որն ունի գրանցված սեփականատեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.03.2011 թվականի որոշումը և վերացնել Դատարանի 25.01.2011 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառարանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է գործի վարույթը կասեցնելու հարցին և արձանագրել, որ դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (*տես ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.01.2010 թվականի թիվ ԵԱԴԴ/0452/02/09 քաղաքացիական գործով որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցի առարկան ՀՀ Կոտայքի մարզի Ձորադբյուրի 1-ին գանգվածի 1-ին թաղամասի թիվ 9 հողատարածքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ձանաչելն է, իսկ թիվ ԿԴՆ/0611/02/10 քաղաքացիական գործով, որի կապակցությամբ կասեցվել է սույն գործի վարույթը, Անահիտ Բունիայանի հայցի առարկան սույն գործով վեճի առարկա հողամասի, ինչպես նաև դրա վրա գտնվող շինության 50 տոկոսի նկատմամբ սեփականության իրավունքը ձանաչելը և դրանից բաժինն առանձնացնելն է:

Վերաքննիչ դատարանը, օրինական ուժի մեջ թողնելով Դատարանի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը, պատճառաբանել է, որ սույն և թիվ ԿԴՆ/0611/02/10 գործերով՝ սույն անշարժ գույքի նկատմամբ առկա են քաղաքացիական վեճեր: Այսպես, նույն հասցեի հողամասի նկատմամբ մի դեպքում վիճարկվել է սույն գործով հայցվորի, մյուս դեպքում՝ սույն գործով երրորդ անձի, իսկ թիվ ԿԴՆ/0611/02/10 գործով արդեն հայցվորի կարգավիճակում հանդես եկող Անահիտ Բունիայանի սեփականության իրավունքը: Այսինքն՝ սույն գործի հետ ուղղակիորեն փոխկապակցված է նաև թիվ ԿԴՆ/0611/02/10 քաղաքացիական գործով դատական քննության ենթակա հայցի առարկան, որի լուծման բովանդակային կազմը կարող է վճռորոշ նշանակություն ունենալ սույն գործով վերջնական ակտի կայացման համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճելի հողամասի վերաբերյալ այլ վեճի առկայությունը չի կարող այդ հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ձանաչելու վերաբերյալ սույն գործի քննության անհնարինության հիմք հանդիսանալ, քանի որ ԿԴՆ/0611/02/10 քաղաքացիական գործով Անահիտ Բունիայանը վիճարկում է վերոհիշյալ հողամասի և դրա վրա գտնվող շինության կեսի նկատմամբ սեփականության իրավունքը՝ որպես ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք, իսկ սույն գործով Անահիտ Գալոյանը պահանջել է ամբողջ հողամասի նկատմամբ ձեռքբերման վաղեմության

---

ուժով ճանաչել սեփականության իրավունքը՝ գործին մասնակից դարձնելով թե՛ Գրի-գոր Կարապետյանին, թե՛ նշված գործով հայցվոր Անահիտ Բունիաթյանին: Այսինքն՝ ԿԴԻ/0611/02/10 քաղաքացիական գործով հայցի բավարարումն անգամ չի կարող ազդել սույն գործի քննության վրա, և նշված գործով վերջնական դատական ակտը չի կարող էական նշանակություն ունենալ սույն գործի լուծման համար:

Մեան պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Բունիաթյանի հայցի հիման վրա հարուցված քաղաքացիական գործի քննությունն անհնարին չի դարձնում սույն գործի քննությունը, հետևաբար բացակայում է սույն քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.03.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 25.01.2011 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գաղաքացիական գործ թիվ **ԵԿԴ/0393/02/12**  
 դատարանի որոշում 2012թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0393/02/12  
 Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան  
 Դատավորներ՝ Ա. Մկրտչյան  
 Ա. Պետրոսյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 18-ին  
քննարկելով ըստ հայցի Ալեն Զանազյանի ընդդեմ Երվանդ Թովմասովի, Հակոբ  
Մկրտչյանի՝ տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճա-  
նաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի 05.10.2012 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ  
Ալեն Զանազյանի բերած վճռաբեկ բողոքը

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ալեն Զանազյանը պահանջել է անվավեր ճանաչել պատաս-  
խանողներ Հակոբ Մկրտչյանի և Երվանդ Թովմասովի միջև 15.11.2011 թվականին կնք-  
ված «MITSUBISHI PAJERO» մակնիշի 99 ՍՍ 959 պետհամարանիշի ավտոմեքենայի  
առուվաճառքի պայմանագիրը, կիրառել անվավերության հետևանքներ, անվավեր ճա-  
նաչել ավտոմեքենայի պետական գրանցումը, պարտավորեցնել մեքենան վերադարձ-  
նել իրեն:

---

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2012 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

Սույն գործով վճռարեկ բողոք է ներկայացրել Ալեն Ջանազյանը:  
Վճռարեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռարեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը կասեցրել է սույն քաղաքացիական գործի վարույթը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհնարին է սույն քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 63200612 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը, մինչդեռ անտեսել է այն հանգամանքը, որ Հակոբ Մկրտչյանի կողմից Երվանդ Թովմատովից խարդախությամբ գումար հափշտակելու փաստը որևէ կապ չունի սույն քաղաքացիական գործի հետ և անհնարին չի դարձնում նշված գործի քննությունը, քանի որ վերջիններիս գործողություններն ուղղված են եղել Ալեն Ջանազյանի ավտոմեքենային տիրանալուն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ չի նշել շարժառիթները, որոնցով հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/0393/02/12 քաղաքացիական գործով կայացրած գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը և հանձնարարել վերսկսել քաղաքացիական գործի վարույթը»:

### **3. Վճռարեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռարեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռարեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե **անհնարին է տվյալ գործի քննությունը** մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ **գործով կամ հարցով որոշում կայացնելը**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն **շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների**՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է գործի վարույթը կասեցնելու հարցին և արձանագրել, որ դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն **շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների**: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կայքը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (*տե՛ս ըստ Անահիտ Գալոյանի հայցի ընդդեմ Գրիգոր Կարապետյանի, երրորդ անձ Անահիտ Բունիաթյանի՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ձանձախելու պահանջի մասին թիվ ԿԴՆ/0902/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 08.06.2011 թվականի որոշումը*):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 05.10.2012 թվականին պատասխանող Երվանդ Թովմասովի ներկայացուցիչ Արշակ Թովմասյանը միջնորդություն է ներկայացրել Վերաքննիչ դատարան՝ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ և պատճառաբանել, որ սույն վեճի առարկայի վերաբերյալ Երվանդ Թովմասովը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժին և Երևան քաղաքի դատախազի կողմից 20.09.2012 թվականին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին:

Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կասեցնելիս պատճառաբանել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական քննչական բաժնում քննվող թիվ 63200612 քրեական գործն անմիջականորեն կապված է սույն քաղաքացիական գործի հետ, և անհնարին է թիվ ԵԿԴ/0393/02/12 քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 63200612 քրեական գործով որոշման կայացումը:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել սույն գործի քննության անհնարինությունը, քանի որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել է քրեական գործ Հակոբ Մկրտչյանի կողմից խարդախությանը Երվանդ Թովմասովի

---

վից առանձնապես խոշոր չափի՝ 9.000 ԱՄՆ դոլար հափշտակելու փաստով, որը որևէ կապ չունի պատասխանողներ Հակոբ Մկրտչյանի և Երվանդ Թովմասովի միջև կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու իրավահարաբերության հետ, քանի որ սույն գործով դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հակոբ Մկրտչյանը, օգտագործելով Ալեն Ջանազյանի կողմից իրեն տրված լիազորագիրը, ոչ թե վաճառել է ավտոմեքենան, այլ, ըստ էության, չարամիտ համաձայնության մեջ մտնելով պատասխանող Երվանդ Թովմասովի հետ՝ փորձել է փակել իր կողմից վերջինիս վթարված ավտոմեքենայի պարտքը Ալեն Ջանազյանի «MITSUBISHI PAJERO» մակնիշի ավտոմեքենայով, ինչին պատասխանող Երվանդ Թովմասովը տեղյակ է եղել, քանի որ ամբողջությամբ չի վճարել 15.11.2011 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրում նշված ավտոմեքենայի գինը, բացի այդ, գործարքը կնքելու օրվանից ավտոմեքենան երբևէ Երվանդ Թովմասովի մոտ չի գտնվել, նա ավտոմեքենայի սեփականատիրոջը որևէ անգամ չի դիմել ավտոմեքենան իրեն հանձնելու հարցով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքնության իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում գործի ողջամիտ ժամկետում քննությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ քաղաքացիական դատավարության ժամանակ, երբ ներպետական օրենսդրությունը և պրակտիկան կողմերից են պահանջում նախաձեռնություն ցուցաբերել դատավարական շարժի համար, պետությունը պարտավոր է երաշխավորել դատավարության ողջամտությունը (Տեն Կոտերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 01.02.2005 թվականի վճիռը, կետ 29, CROWTHER v. THE UNITED KINGDOM, 1 February 2005, par. 29):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 05.10.2012 թվականի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2012 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



# ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ ՆՈՐ ԵՐԵՎԱՆ ԵԿԱԾ ԿԱՄ ՆՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0855/02/09  
2010թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0855/02/09

Նախագահող դատավոր՝ Ս. Սահակյան

Դատավորներ՝ Կ. Հակոբյան

Ն. Հովսեփյան

### ՈՐՈՇՈՒՄ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 20-ին,

քննարկելով «ԴՎԻՆ Կոնցեռն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.09.2010 թվականի «Նոր երևան եկած  
հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին»  
որոշման դեմ՝ ըստ հայցի Արմեն Եղյանի ընդդեմ Ընկերության՝ գույքային վնասը հա-  
մարժեք բնեղենով հատուցելու, իսկ դրա անհնարինության դեպքում գույքի իրական  
արժեքը փոխհատուցելու և անհիմն հարստացման արդյունքում ձեռք բերվածն օրեն-  
քով սահմանված տոկոսների հետ միասին վերադարձնելուն պարտավորեցնելու պա-  
հանջների մասին,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Երևանի Ենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի  
(այսուհետ՝ Դատարան) 04.12.2009 թվականի վճռով Արմեն Եղյանի հայցը բավարարվել

---

է և վճովել է Ընկերությունից հոգուտ Արմեն Եղյանի բռնագանձել 240.520 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ որպես վնասի հատուցում, ինչպես նաև 240.520 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի վրա ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով հաշվարկված տոկոսները՝ սկսած վճռի կայացման օրվանից մինչև լրիվ մարումը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.03.2010 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.12.2009 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի 14.09.2010 թվականի որոշմամբ Ընկերության նոր երևան եկած հանգամանքներով Դատարանի 04.12.2009 թվականի վճիռը վերանայելու բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Եղյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է գոյություն չունեցող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>9</sup>-րդ հոդվածի 1-ին կետը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>30</sup>-րդ հոդվածի 2-րդ կետը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել նոր երևան եկած հանգամանքով Դատարանի դատական ակտը վերանայելու կանոնները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

1. Վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձրել է՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>9</sup>-րդ հոդվածի 1-ին կետը, մինչդեռ որոշման կայացման պահին և ներկայումս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նման թվագրմամբ հոդված չի պարունակում: Մինչդեռ նոր երևան եկած հանգամանքով դատական ակտերը վերանայելու կանոնները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>30</sup>-րդ հոդվածի 2-րդ կետով:

2. Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Վերաքննիչ դատարանի 26.03.2010 թվականի որոշման առկայության պայմաններում նոր երևան եկած հանգամանքով քաղաքացիական գործը վերանայելու բողոքը քննության է ենթակա ՀՀ վճռաբեկ դատարանին: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վերաքննիչ դատարանի 26.03.2010 որոշմամբ Դատարանի 04.12.2009 թվականի վճիռը չի բեկանվել և չի փոփոխվել: Հետևաբար Դատարանի 04.12.2009 թվականի վճիռը նոր երևան եկած հանգամանքով կարող է վերանայվել ոչ թե Վճռաբեկ դատարանի, այլ Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 14.09.2010 թվականի «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

### **2.1. Վճարելի բողոքի պատասխանի հիմնավորումները**

Բողոք բերողի կողմից Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված դատավարական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ իրավական հիմքերը, փաստարկները և դատողությունները հիմնականում ունեն մեկ պատճառ. բողոք բերողը ճիշտ չի մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

#### 3. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

*Քննարկելով վճարելի բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճարելի դատարանը գտնում է, որ բողոքն առաջին փաստարկի մասով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքներով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ձանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 20.05.2010 թվականի թիվ ՀՕ-94-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3.1-ին և 3.2-րդ բաժինները ձանաչվել են ուժը կորցրած: Միաժամանակ նույն օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը լրացվել է 3.3-րդ բաժնով, որով կարգավորվում է դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու վարույթը:

Սույն գործով որոշում կայացնելիս Վերաքննիչ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>9</sup>-րդ հոդվածի 1-ին կետը, ըստ որի՝ նոր երևան եկած հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը՝ Վճարելի դատարանը՝ գործին մասնակցող անձանց բողոքների հիման վրա: Իսկ, որոշման կայացման պահին գործող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>30</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճարելի դատարանների դատական ակտերը՝ վճարելի դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծմանը: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Հետևաբար, Վճարելի դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>9</sup>-րդ հոդվածի 1-ին կետը պարունակել է ըստ էության նույն դրույթը, ինչ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>30</sup>-րդ հոդվածի 2-րդ կետը:

---

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Ինչ վերաբերում է բողոքի այն փաստարկին, որ Վերաքննիչ դատարանի 26.03.2010 թվականի որոշմամբ Դատարանի 04.12.2009 թվականի վճիռը չի բեկանվել և չի փոփոխվել, հետևաբար Դատարանի 04.12.2009 թվականի վճիռը նոր երևան եկած հանգամանքով կարող է վերանայվել ոչ թե Վճռաբեկ դատարանի, այլ Վերաքննիչ դատարանի կողմից, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>30</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն պատճառաբանել է, որ «տվյալ դեպքում ներկայացվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՇԴ\0855\02\09 քաղաքացիական գործով 04.12.2009թ. կայացրած վճիռը նոր երևան եկած հանգամանքով վերանայելու բողոք, սակայն նույն քաղ. գործով առկա է օրինական ուժի մեջ մտած ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.03.2010թ. որոշումը», ուստի «Նոր երևան եկած հանգամանքներով տվյալ քաղաքացիական գործը վերանայելու բողոքը քննության է ենթակա ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից, այսինքն՝ այն ներկայացվել է ընդդատության կանոնների խախտմամբ, որն էլ հիմք է այն վերադարձնելու համար»:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204<sup>30</sup>-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.09.2010 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

# ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ՇԳ1/0212/02/10  
 դատարանի որոշում 2010թ.  
 Քաղաքացիական գործ թիվ ՇԳ1/0212/02/10  
 Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան  
 Դատավորներ՝ Տ. Սահակյան  
 Գ. Մատինյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

<i>նախագահությամբ</i>	Ե.ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Գ. ՀԱԿՈՔՅԱՆԻ
	Վ. ԱՔԵԼՅԱՆԻ
	Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
	Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 13-ին քննարկելով ըստ հայցի Մելիքսեթ Գաբոյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության Ախուրյանի անձնագրային բաժնի պետ Մկրտիչ Գասպարյանի՝ վնասը փոխհատուցելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Մելիքսեթ Գաբոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.09.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 15.07.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.08.2010 թվականի որոշմամբ Մելիքսեթ Գաբոյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ արձանագրելով թույլ տրված թերությունները վերացնելուց հետո երկշաբաթյա ժամկետում բողոքը կրկին ներկայացնելու հնարավորության մասին:

---

Վերաքննիչ դատարանի 08.09.2010 թվականի որոշմամբ Մելիքսեթ Գաբոյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մելիքսեթ Գաբոյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքի մեջ պարզապես անվավեր ներկայացրել է այն հանգամանքները և փաստերը, որոնք պետք է հիմք ծառայեին իր կողմից վերաքննիչ բողոքի պետական փորձի գումարից ազատելու համար:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը 08.09.2010 թվականին որոշում կայացնելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ պետական տուրքի վճարումից ազատելու մասին Մելիքսեթ Գաբոյանի միջնորդությունը հիմնավորված չէ: Մինչդեռ, Մելիքսեթ Գաբոյանը դատարան է ներկայացրել պատճառաբանված փաստեր այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Գյումրու գրադվածության մարզային կենտրոնում որպես գործազուրկ գրանցվել չի կարողացել, քանի որ իրեն անձնագիր չի տրամադրվել: Անձնագիր չունենալու պատճառով հայտնվել է գործազուրկի կարգավիճակում, ինչպես նաև չի կարող ընդունվել զինծառայության: Ներկա դրությամբ Մելիքսեթ Գաբոյանը զրկված է աշխատանքից, ազատ տեղաշարժվելու իրավունքից և սահմանադրական բոլոր իրավունքներից, գտնվում է նյութական և ֆինանսական ծանր վիճակում:

Վերագրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 08.09.2010 թվականի որոշումը և «կայացնել համապատասխան որոշում»:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարզապատասխանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ պետական տուրքը վճարվում է դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար: Նույն հոդվածի 3-րդ կետի

համաձայն՝ պետական տուրքի չափը սահմանելու, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը լուծվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն **իրավունք ունեն** դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող է սահմանվել նաև պետական տուրքի վճարումից ազատման, իսկ նույն հոդվածի «դ» կետի համաձայն՝ պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման արտոնություններ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ **եղներով կողմերի գույքային դրությունից:**

Վերը նշված հոդվածներից հետևում է, որ դատարաններում պետական տուրքի գծով արտոնություն, **այդ թվում՝ պետական տուրքի վճարումից ազատման տեսքով**, կարող են սահմանել նաև դատարանները կամ դատավորները՝ **հաշվի առնելով կողմերի գույքային դրությունը**, որն ուղղված է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացմանը:

Վճարել դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*տես՝ ՀՀ վճարել դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը*, «Պայքար և Հաղթանակ ՄՊԸ-ն» ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նշել է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաբնիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (*տես Բրուսյալ Գունեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի, թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19, կետ 33, Թինելի էնդ Սանզ ՄՊԸ-ն ու այլոք և Մաքէլդաֆն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 20390/92, 21322/92, 1998թ. հուլիսի 10, կետ 72 և Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 34791/97, 37):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Մելիքսեթ Գաբոյանը հայցադիմումը Դատարան ներկայացնելիս հայցադիմումին կցել է 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: Դատարանը, մերժելով Մելիքսեթ Գաբոյանի հայցն ընդդեմ ՀՀ ոստիկանության Ախուրյանի անձնագրային բաժնի պետ Մկրտիչ Գասպարյանի՝ 14.160.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը փոխհատուցելու պա-

---

հանջի մասին, պետական տուրքի չվճարած մասը վճիռ կայացնելիս գանձելու հարցը, հիմք ընդունելով արդեն իսկ 4.000 ՀՀ դրամ վճարելու հանգամանքը, համարել է լուծված՝ պատճառաբանելով, որ, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «բ» կետի և նույն օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի, պետական տուրքը պետք է նվազեցնել, բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Մելիքսեթ Գաբոյանի գույքային դրույթունը, այն է՝ ֆինանսապես ծանր վիճակում գտնվելը, 2004 թվականից աշխատանք և այլ եկամտի աղբյուր չունենալը, որի պայմաններում պետական տուրքի մնացած մասի վճարումը կարող է հանգեցնել նրա կենսամակարդակի զգալի նվազեցմանը:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել Մելիքսեթ Գաբոյանը և միջնորդել է ազատել պետական տուրքի վճարումից, քանի որ միջնորդության մեջ նշված պատճառներով 2004 թվականից գրկված է աշխատանքից, ազատ տեղաշարժվելու իրավունքից և սահմանադրական բոլոր իրավունքներից, գտնվում է նյութական և ֆինանսական ծանր վիճակում, որպիսի հանգամանքներն արդեն իսկ հաշվի է առել Դատարանը: Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ բողոքաբերը չի ներկայացրել որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց՝ ի հիմնավորումն միջնորդության մեջ ներառված փաստարկների, գտել է, որ միջնորդությունն անհիմն է և ենթակա մերժման ու վերադարձրել է վերաքննիչ բողոքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, անտեսելով Մելիքսեթ Գաբոյանի վերաբերյալ պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու համար բավարար հիմք հանդիսացող Դատարանի վերը նշված հետևությունները, Մելիքսեթ Գաբոյանի համար չի ապահովել նույն՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հնարավորությունը Վերաքննիչ դատարանում:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետով սահմանված հայեցողական լիազորությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մելիքսեթ Գաբոյանը պետք է ազատվեր պետական տուրք վճարելու պարտավորությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով չի առաջնորդվել անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և չի ապահովել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակի իրագործումը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>1</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.09.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքաբարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ ԳԳ1/0163/02/11  
Նախագահող դատավոր՝ Ա. Խատառյան

Քաղաքացիական գործ թիվ ԳԳ1/0163/02/11  
2011թ.

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 21-ին,  
քննարկելով Նելլի Միքայելյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2011 թվականի որոշման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Նելլի Միքայելյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղի միջնակարգ դպրոցի տնօրինության՝ «վստահությունը կորցնելու և անհարգելի պատճառներով աշխատանքի պարբերաբար չներկայանալու» հիմքով իրեն աշխատանքից ազատելու վերաբերյալ փաստաթղթերն իրեն տրամադրելու պահանջի մասին:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Վ. Վարդանյան) (այսուհետ՝ Դատարան) 02.08.2011 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.09.2011 թվականի որոշմամբ Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.08.2011 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նելլի Միքայելյանը:

---

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 51-րդ, 53-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է նրանով, որ դատարանը հայցադիմումի ընդունումը մերժել է՝ նշելով, որ հայցվորի խնդրանքը կարող է բավարարվել արտադատական կարգով, անտեսելով այն հանգամանքը, որ դպրոցի տնօրինությունը խուսափում է տեղեկատվություն տրամադրելուց, հետևաբար առկա է քաղաքացիական վեճ, որը ենթակա է դատարանի քննության:

Նման պայմաններում հայցադիմումի ընդունումը չէր կարող մերժվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.09.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության:

Դատարանը, մերժելով սույն գործով ներկայացված հայցադիմումի ընդունումը, 02.08.2011 թվականի որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Հայցվորը որպես իր պահանջների հիմնավորում, դատարանին է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Հ.Մադաթյանի 20.04.2011թ. համար ՓՊ-3-50 և 23.05.2011թ. ՓՊ 3-65 գրությունները՝ ուղղված «Ծափաթաղ գյուղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին և խնդրել հայտնել, թե դպրոցի պատմության և աշխարհագրության ուսուցչուհի Նելլի Միքայելյանին աշխատանքից ազատելու համար հիմք հանդիսացած, իր կատարած աշխատանքին չհամապատասխանելու, պարտականությունները չկատարելու, իր նկատմամբ վստահությունը կորցնելու և հարգելի պատճառով աշխատանքի չներկայանալու վերաբերյալ որևէ փաստաթուղթ կազմվել է, թե ոչ և կազմված լինելու դեպքում խնդրել է տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները: Իսկ Ծափաթաղի միջնակարգ դպրոցի լիազորված անձ, փաստաբան Գ.Մաթևոսյանը իր 06.05.2011թ. թիվ Ն/Մ-10/05 գրությամբ պատասխանել է, որ նշված հարցերի վերաբերյալ կազմված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարին և այլ պետական մարմիններ ուղղված ծառայողի դիմումների պատճենները ներկայացվել են դատարանին, իսկ հանգամանքն էլ ապացուցված է համարվել քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի 04 օգոստոսի 2006 թվականի օրինական ուժի մեջ մտած վճռով, Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը կարող եք ստանալ քաղաքացիական գործի նյութերից:

Նշվածից երևում է, որ Ծափաթաղի միջնակարգ դպրոցի տնօրինությունը չի հրաժարվել կատարել դիմումատուի պահանջը և չի խուսափել տեղեկատվություն տրամադրել հայցվորին՝ նշելով, որ այդ փաստաթղթերը ներկայացվել են դատարանին և գտնվում են քաղաքացիական գործի կյոթերում: Հետևաբար փաստաթղթերի տրամադրման հարցում կողմերի միջև բացակայում է քաղաքացիաիրավական վեճը, և գործը ենթակա չէ դատարանում քննության»:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Նելլի Միքայելյանի վերաքննիչ բողոքը, 20.09.2011 թվականի որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Տվյալ դեպքում Դատարանը եզրահանգել է, որ հայցվորի խնդրանքը կարող է բավարարվել արտադատական կարգով, ինչն էլ հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91 հոդվածի 1-ին կետի հիմքով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում կայացնելու համար: Հետևաբար, դատավարական սույն նորմի սխալ կիրառման մասին բողոքի փաստարկներն անհիմն են և մերժման ենթակա»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*Stau' ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը*, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գոր-

---

ծով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Տես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի, թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, 2-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 29392/95, 91-93-րդ կետեր*):

Մանս պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցադիմումի ընդունելիության հարցը լուծելիս Դատարանը պետք է առաջնորդվեր անձի իրավունքների խախտման վերաբերյալ դատարան դիմելու անձի սահմանադրական իրավունքի ապահովման գերակայությամբ: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին, սպա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք չեն, քանի որ տվյալ վեճը ենթակա է դատարանում քննության, այսինքն՝ բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքը, իսկ Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված հարցադրումները պետք է քննության առարկա դառնան հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.09.2011 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ստյանի դատարանի 02.08.2011 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գաղափարախոսական գործ թիվ ԱՎԴՆ/0049/02/09  
դատարանի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԱՎԴՆ/0049/02/09  
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան  
Դատավորներ՝ Տ. Նազարյան  
Կ. Զիլինգարյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի հուլիսի 27-ին,  
քննարկելով գործին մասնակից չդարձված անձանց Նունիկ Միրզոյանի և Արաք-  
այա Սերոբյանի ներկայացուցիչ Սամվել Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքն-  
նիչ քաղաքացիական դատարանի 18.04.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերա-  
դարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Մանիկ Հովանեսյանի, Թինա Օգանեզով-  
վայի ընդդեմ Արաքսի Սերոբյանի՝ ընդհանուր համատեղ սեփականություն հանդիսա-  
ցող անշարժ գույքից բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Մանիկ Հովանեսյանը և Թինա Օգանեզովան պահանջել են  
Արարատի մարզի Արարատ գյուղի բնակելի տան և տնամերձ հողամասից առանձնաց-  
նել իրենց բաժինը:

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասու-  
թյան դատարանի (այսուհետ՝ Դատարան) 01.04.2009 թվականի վճռով հաստատվել է  
կողմերի հաշտության համաձայնությունը, և գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
18.04.2011 թվականի որոշմամբ վերադարձվել է գործին մասնակից չդարձված անձինք

---

Նունիկ Միրզոյանի և Արաքսյա Սերոբյանի վերաքննիչ բողոքը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նունիկ Միրզոյանի և Արաքսյա Սերոբյանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ բողոքը ներկայացվել է սահմանված ժամկետից հետո և չի պարունակում միջնորդություն բաց թողած ժամկետը վերականգնելու մասին: Մինչդեռ վերաքննիչ բողոքի «Խնդրում ենք» հատվածում պարունակվում է վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է, որ Նունիկ Միրզոյանը և Արաքսյա Սերոբյանը չեն ներկայացրել բավարար ապացույցներ վճռի մասին ոչ ուշ, քան երեք ամիս առաջ իմանալու վերաբերյալ, մինչդեռ վերջիններս միայն ՀՀ Արաքսյա և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 25.01.2011 թվականի դատավճռի կայացումից հետո են տեղեկացել Դատարանի 01.04.2009 թվականի վճռի մասին:

Վերաքննիչ դատարանն առանց ապացույցների նշել է, որ առանց պատշաճ լիազորագրի Նունիկ Միրզոյանի և Արաքսյա Սերոբյանի անունից հաշտության համաձայնություն կնքած ներկայացուցիչը պարտավոր էր իրագեկել վերջիններին:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը համարել հարգելի, բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.04.2011թ. որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության»:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր

որ, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տես Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Ashingdane v. the United Kingdom, judgment of 28 May 1985, Series A no. 93, p. 24, para. 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*տես Սյուսթրինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55, Stubbings and Others v. the United Kingdom, Judgment, 22.10.1996, par. 51,55*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ սկզբունքների լուրջ ներքո պետք է մեկնաբանվեն նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ և 213-րդ հոդվածները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ըն-

---

թացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի: Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 5-րդ կետի առաջին պարբերությամբ նախատեսված ժամկետներից հետո բերված վերաքննիչ բողոքը դատարանը կարող է ընդունել վարույթ, եթե ներկայացված է համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն, և այն բավարարվել է դատարանի կողմից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակից չդարձված անձանց համար օրենսդիրը սահմանել է դատական ակտի բողոքարկման եռամսյա ժամկետ: Միաժամանակ օրենսգիրքը սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը՝ այն օրվանից սկսած, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին: Վճռաբալ դատարանն արձանագրում է, որ ժամկետների հաշվարկման նմանատիպ կարգը, որն ընդունված է Եվրոպայի Խորհրդի այլ անդամ պետությունների կողմից, ներառվում է պետության հայեցողական լիազորության մեջ, ինչը բխում է նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից (*տես Սյրաբբինգը և մյուններն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 54*):

Միաժամանակ, բացի դատական ակտը նշված կարգով բողոքարկելու իրավական հնարավորությունից, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է դատական ակտի բողոքարկման հնարավորություն նաև օրենքով սահմանված ժամկետն անցնելուց հետո: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկնել իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի արգելում անձին վերաքննիչ բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո ներկայացնել բողոք և միաժամանակ միջնորդություն՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, իսկ դատավարական ժամկետի խախտումն ինքնին բավարար չէ վերաքննիչ բողոքը վերադարձնելու համար, քանի որ պարտավոր է անդրադառնալ այդ միջնորդությանը, որի քննարկման արդյունքում որոշում կայացնելուց հետո միայն որոշել վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վարույթ ընդունելու հարցը (տես Ալբերտ Սուքիասյանն ընդդեմ «Ձեներալ Տրանսուրդ ՄԲ» ՓԲԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0438/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.03.2010 թվականի որոշումը):

Հինք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն վերաքննիչ բողոքը վերադարձնել, եթե գործին մասնակից չդարձված անձինք վերաքննիչ բողոք են բերել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահից եռամսյա ժամկետը լրանալուց հետո, և բողոքը միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը դատարանը չի բավարարել:

Վերաքննիչ դատարանը Նունիկ Միրզոյանի և Արաքսյա Մերոբյանի վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ վերջիններս բաց են թողել օրենքով նախատեսված ժամկետը, բավարար ապացույցներ չեն ներկայացրել, որ Դատարանի 01.04.2009 թվականի վճիռի մասին իմացել են ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 25.01.2011 թվակա-



նի դատավճի կայացումից հետո և չեն միջնորդել հարգելի համարել ու վերականգնել օրենքով նախատեսված ժամկետը:

Մինչդեռ Նունիկ Միրզոյանի և Արաքսյա Մերոբյանի վերաքննիչ բողոքի «Խնդրում ենք» հատվածում պարունակվում է վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդություն: Մասնավորապես, վերաքննիչ բողոքում բողոք բերող անձինք, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ, 207-րդ, 214-րդ, 221-րդ հոդվածներով, խնդրել են Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 01.04.2009 թվականի թիվ ԱՎԳՆ/0049/02/08 գործով վճի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար նախատեսված ժամկետի բացթողումը համարել հարգելի և վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Հետևաբար Վճարել դատարանը եզրակացնում է, որ Վերաքննիչ դատարանը միջնորդության առկայության պայմաններում չի անդրադարձել դրան, որի արդյունքում բողոք բերած անձինք զրկվել են օրենքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո դատական ակտը բողոքարկելու իրավունքից, քանի որ օրենքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո դատական ակտը բողոքարկելու իրավունքը հնարավոր է իրականացնել միայն համապատասխան միջնորդություն ներկայացվելու դեպքում, իսկ ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից չքննվելու դեպքում խախտվում է այդ իրավունքի բուն էությունը:

Վճարել դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 18.04.2011 թվականի որոշմամբ Նունիկ Միրզոյանը և Արաքսյա Մերոբյանը զրկվել են իրենց իրավունքների պաշտպանության նպատակով դատարան դիմելու և դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունքներից:

Հետևաբար Նունիկ Միրզոյանի և Արաքսյա Մերոբյանի իրավունքների ապահովման նպատակով Վերաքննիչ դատարանի կողմից միջնորդությունը քննելու համար սույն գործը ենթակա է նոր քննության, որից հետո միայն Վերաքննիչ դատարանը կարող է որոշել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը:

Այսպիսով, Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-ին հոդվածներով՝ Վճարել դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճարել բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.04.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ3/0387/02/09  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԼԳ3/0387/02/09

Նախագահող դատավոր՝ Ն. Տավարացյան

Դատավորներ՝ Ս. Միքայելյան

Դ. Խաչատրյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 09-ին,

քննարկելով ըստ հայցի Օֆելյա Դուլինյանի ընդդեմ «Լոռու մարզի Սարչապետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Համլետ Դավթյանի (այսուհետ՝ Տնօրեն)՝ աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի պատճառով աշխատավարձ բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.10.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Օֆելյա Դուլինյանի բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Օֆելյա Դուլինյանը պահանջել է վերականգնել նախկին աշխատանքում և բռնագանձել Տնօրենից հարկադիր պարապուրդի պատճառով չստացած աշխատավարձը:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.09.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

28.10.2010 թվականի որոշմամբ Դատարանի 08.09.2010 թվականի վճռի դեմ Օֆելյա Ղուլինյանի բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Օֆելյա Ղուլինյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բողոքարկման ժամկետը հաշվարկել է՝ հիմք ընդունելով Դատարանի վճռի ձախ անկյունի վերևի մասում տպագրված «2010 թվականի օգոստոսի 26-ին» նշումը:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի վճռի ձախ անկյունում փակագծերի մեջ նշված է նաև՝ (վճիռը հրատարակվել է սեպտեմբերի 8-ին), որն Օֆելյա Ղուլինյանն ընդունել է որպես նշված վճռի հրատարակման օր:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկեր 08.09.2010 թվականից, իսկ Դատարանի վճիռն օրինական ուժի մեջ պետք է մտներ դրա հրատարակման օրվանից մեկ ամիս հետո: Տվյալ դեպքում Օֆելյա Ղուլինյանը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 06.10.2010 թվականին: Այսինքն՝ վերջինս վերաքննիչ բողոքը ներկայացրել է սահմանված ժամկետում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանի 26.08.2010 թվականի նիստի արձանագրության բովանդակությունից երևում է, որ 26.08.2010 թվականին ժամը 12:00-ին տեղի է ունեցել դատական նիստ, որի արդյունքում Դատարանը որոշում է կայացրել 08.09.2010 թվականին վճռի հրատարակման օր նշանակելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է Վերաքննիչ դատարանի 28.10.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը «բեկանել և գործն ուղարկել նոր քննության»:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրկում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրատարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մա-

---

սին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո**, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի «26.08.2010» թվականին կայացրած վճիռն օրինական ուժի մեջ է մտել 27.09.2010 թվականին, և նշված վճիռ դեմ վերաքննիչ բողոքը պետք է բերվեր մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը: Տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը բերվել է օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը լրանալուց հետո՝ 06.10.2010 թվականին, և այն չի պարունակում միջնորդություն բաց թողած ժամկետը վերականգնելու մասին:

Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 08.09.2010 թվականին, ինչը հաստատվում է նշված վճիռում դրա վերաբերյալ կատարված գրառմամբ (**հատոր 2, գ.թ. 84**) և 26.08.2010 թվականի դատական նիստի արձանագրությամբ (**հատոր 2, գ.թ. 81**), որի համաձայն՝ վճիռը հրապարակվելու է 08.09.2010 թվականին ժամը 12:00-ին, իսկ Օֆելյա Ղուլիյանը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 06.10.2010 թվականին (**հատոր 2, գ.թ. 121**): Այսինքն՝ Օֆելյա Ղուլիյանը Դատարանի 08.09.2010 թվականի վճիռ դեմ վերաքննիչ բողոքը ներկայացրել է դրա հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի 08.09.2010 թվականի վճիռում նշված «2010 թվականի օգոստոսի 26-ին» նշումը վերաբերում է դատական նիստի կայացման օրվան, որի արդյունքում էլ վճիռը հրապարակման օր է նշանակվել 08.09.2010 թվականը (**հատոր 2, գ.թ. 80-81**):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում Օֆե-

յա Ղուլիսյանը գրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241<sup>2</sup>-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.10.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0433/02/11  
2011թ.

Քաղաքացիական գործ թիվ ԿԴ/0433/02/11  
Նախագահող դատավոր՝ Կ. Հակոբյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*  
*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 21-ին,  
քննարկելով Հոփսիկ Բաղայանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի 05.10.2011 թվականի «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին» որոշ-  
ման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Հոփսիկ Բաղայանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Սարիբեկ Բաղայանի, վերջինիս կնոջ (անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալ-  
ները բացակայում են), Հրանտ Բաղայանի, վերջինիս կնոջ՝ Իսկուհու (ազգանունը,  
հայրանունը, անձնագրային տվյալները բացակայում են)՝ ըստ օրենքի ժառանգության  
իրավունքի վկայագիրը մասնակի անվավեր ճանաչելու, ժառանգության ընդունման  
ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունած  
ժառանգ ճանաչելու, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչե-  
լու և բաժինն առանձնացնելու պահանջների մասին:

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի  
(այսուհետ՝ Դատարան) 17.08.2011 թվականի որոշմամբ Հոփսիկ Բաղայանի հայցադի-  
մումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2011 թվականի որոշմամբ վերաքննիչ վարույթը կարճվել է:  
Մույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հռիփսիկ Բաղայանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածը, 94-րդ, 98-րդ և 118-րդ հոդվածների 1-ին կետերը, 120-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 121-րդ և 123-րդ հոդվածները, 208-րդ հոդվածի 3-րդ կետը, 215-րդ հոդվածը և 217-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը:*

*Բողոքը բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը պատասխանողներին չի ուղարկել վերաքննիչ բողոքը և դրան կից փաստաթղթերը, ինչպես նաև նրանց չի կանչել դատական նիստին:

Վերաքննիչ դատարանը պատասխանողների վերջին հայտնի բնակության վայրի համայնքի ղեկավարին չի ծանուցել դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Վերաքննիչ դատարանը չի պարզաբանել իր իրավունքները և պարտականությունները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մինչև գործի քննությունն սկսելն ինքը չի պահանջել հետ վերադարձնել վերաքննիչ բողոքը, այլ դա արվել է դատական նիստի վերջում:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.10.2011 թվականի «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին» որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերած անձն իրավունք ունի հետ վերցնելու բողոքը, մինչև վերաքննիչ դատարանը սկսի գործի քննությունը: Մույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե վերաքննիչ բողոքն ընդունված է վարույթ, ապա բողոքը հետ վերցնելու դեպքում դատարանը կայացնում է որոշում վերաքննիչ վարույթը կարճելու մասին, եթե վճիռը չեն բողոքարկել այլ անձինք:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ վերաքննիչ բողոք բերած անձը վերաքննիչ բողոքը հետ վերցնելու իր դատավարական իրավունքից կարող է օգտվել միայն մինչև Վերաքննիչ դատարանի կողմից գործի քննությունն սկսելը:

Վերաքննիչ դատարանը, 05.10.2011 թվականին կայացնելով «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին» որոշումը, դրա հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Վերաքննիչ դատարանում 05.10.2011 թվականին նշանակված դատական նիստի ժամանակ Հռիփ-

---

սիկ Բաղայանը ներկայացրել է միջնորդություն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին»:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունել 28.09.2011 թվականին, գործի քննությունը նշանակել է 05.10.2011 թվականին, Հոփսիկ Բաղայանը վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին հայտարարությունն արել է 05.10.2011 թվականին նշանակված դատական նիստում, Վերաքննիչ դատարանը 05.10.2011 թվականին որոշում է կայացրել «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին»:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետը՝ անտեսելով, որ Հոփսիկ Բաղայանը վերաքննիչ բողոքը հետ վերցնելու մասին հայտարարությունն արել է գործի քննությունն սկսելուց հետո:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործը պետք է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն Վերաքննիչ դատարանի «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին» 05.10.2011 թվականի որոշումը վերացնելու համար:

Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին կետը խախտված լինելու պայմաններում Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս հիմքերին և հիմնավորումներին չի անդրադառնում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2011 թվականի «Վերաքննիչ վարույթը կարճելու մասին» որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ2/0084/02/11  
դատարանի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ2/0084/02/11  
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան  
Դատավորներ՝ Գ. Մատինյան  
Ա. Թումանյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 21-ին,  
քննարկելով ըստ դիմումի Էմին Երիցյանի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության Թալինի տարածքային բաժնի (այսուհետ՝ Գործակալություն) բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Էմին Երիցյանը պահանջել է հաստատել իր՝ 26.12.1976 թվականին ծնված լինելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 11.04.2011 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.08.2011 թվականի որոշմամբ Դատարանի 11.04.2011 թվականի վճռի դեմ գործին մաս-

---

նակից չդարձված անձ Գործակալության բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:  
Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գործակալությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 14-23-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, 207-րդ հոդվածի 5-րդ կետը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում Էմին Երիցյանը Գործակալություն է դիմել 16.05.2011 թվականին, և այդ պահից սկսած էլ հաշվվում է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը, քանի որ Գործակալությունը դատական քննությանը մասնակից չի դարձվել, սակայն դատական ակտն ուղղակիորեն առնչվում է վերջինիս իրավունքներին և պարտականություններին:

Մասնավորապես՝ Դատարանի կողմից որպես ապացույց հաշվի առնված բոլոր փաստաթղթերը՝ անձնագիր, զինվորական գրքույկ, տրվում են ծննդյան վկայականի հիման վրա, իր հերթին ծննդյան վկայականն էլ տրվում է ծննդյան ակտում գրառված տվյալների հիման վրա, իսկ տվյալ դեպքում Էմին Երիցյանի ծննդյան գրանցումը կատարվել է ծննդյան ակտային գրանցումների 1975 թվականի գրքում, ինչը նշանակում է, որ 1976 թվականին ծնված երեխայի գրանցումը 1975 թվականի գրքում կատարվել չէր կարող:

Ինչ վերաբերում է Դատարանի կողմից հաշվի առնված այնպիսի ապացույցներին, ինչպիսիք են վկաների ցուցմունքները կամ համայնքի ղեկավարի տեղեկանքը, ապա դրանք երեխայի ծննդյան ամսաթիվը որոշելու համար պատշաճ ապացույցներ համարվել չեն կարող և սույն գործի համար որևէ նշանակություն չունեն:

Նշվածից հետևում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավորեցնում է Գործակալությանը ոչ իրավաչափ վճիռի հիման վրա կատարել օրենքի խախտում և ոչ իրավաչափ գործողություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.08.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հերկյալ պարզապես փաստերով.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում,

արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի սոսնջությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի դեմ, բացառությամբ այն ակտերի, որոնց համար վերաքննություն օրենքով նախատեսված չէ, վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոքը ներկայացրել է այն անձը, ով ստորադաս դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքով կարգավորվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրառումներն ուղղելու, լրացնելու, փոփոխելու, վերականգնելու և չեղյալ հայտարարելու, քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կազմելու և պահպանելու կարգի ու ժամկետների և դրանց հետ կապված այլ հարաբերություններ, ինչպես նաև սահմանվում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինների իրավասությունները:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները, ինչպես նաև դրանցում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելը, այդ գրանցումները չեղյալ հայտարարելը, կորած գրանցումները վերականգնելը, քաղաքացիական կացության ակտերի մատյանները վարելը կամ պահպանելը և վկայականների կրկնօրինակներ ու քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթեր տալը նույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով իրականացնում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինները (այսուհետ՝ ՔԿԱԳ մարմին):

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու են ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և գրանցում կատարող աշխատողը:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ՔԿԱԳ մարմինը ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ

---

կատարում է նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության և շահագրգիռ անձանց միջև վեճի բացակայության դեպքում:

Նույն օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու համար ՔԿԱԳ մարմինը պետք է ստանա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թույլտվությունը: ՔԿԱԳ մարմինը, ստանալով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ եզրակացություն է կազմում ոչ ուշ, քան դիմումն ստանալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, և գործի մյուս փաստաթղթերի հետ ներկայացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ թույլտվություն ստանալու համար:

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարում է ուղղման, լրացման կամ փոփոխման ենթակա գրառման պահպանման վայրի ՔԿԱԳ մարմինը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտի ուղղված, լրացված կամ փոփոխված գրառման հիման վրա տալիս է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման նոր վկայական:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման, գրառումներն ուղղելու, լրացնելու, փոփոխելու, վերականգնելու և չեղյալ հայտարարելու, պետական գրանցման մատյանները (ակտային գրքերը) կազմելու և պահպանելու կարգի ու ժամկետների և դրանց հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինների իրավունքները և պարտականությունները սահմանվում են «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես՝ նույն օրենքով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և գրառումները կազմելու որակի համար պատասխանատվություն է կրում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմնի ղեկավարը և գրանցում կատարող աշխատողը: Հետևաբար, քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու վերաբերյալ կամ ուղղակիորեն դրան հանգեցնող գործն ըստ էության լուծող դատական ակտն առնչվում է նաև քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմնի իրավունքներին և պարտականություններին:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի վճիռը բողոք բերած անձի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացված լինելու փաստը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացվել:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի ուժով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և գրառումները կազմելու որակի համար անմիջական պատասխանատվու-

թյուն է կրում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնող մարմինը, իսկ տվյալ դեպքում այդպիսի գրանցումն ուղղակիորեն հանգեցնող Դատարանի վճիռն առնչվում է նաև Գործակալության պարտականություններին:

*Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից Գործակալության՝ գործի քննությանը մասնակից չդարձվելու պայմաններում դրանք սույն որոշման շրջանակներում չունեն որևէ իրավական նշանակություն:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.08.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0716/02/10  
դատարանի որոշում 2011թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/0716/02/10  
Նախագահող դատավոր՝ Ս. Նազարյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Ս. Սահակյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>Նախագահությամբ</i>	Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
<i>մասնակցությամբ դատավորներ</i>	Ե. ՍՈՂՈՍՄՈՆՅԱՆԻ
	Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
	Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
	Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
	Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի դեկտեմբերի 21-ին,  
քննարկելով ըստ հայցի «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Դանիել Բարսեղյանի, ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքի (այսուհետ՝ Համայնք), «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն), Ռոստոմ, Ասատուր և Ստելլա Բարսեղյանների, Ալվարդ Քիթոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ըստ հակընդդեմ հայցի Համայնքի ընդդեմ Ընկերության՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի Կազմակերպության ընդդեմ Ընկերության՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.09.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Դանիել Բարսեղյանից, երաշխավորներ Համայնքից և Կազմակերպությունից համապարտության կարգով հոգուտ

իրեն բռնագանձել 1.441.230,3 ՀՀ դրամ, որից 1.387.970,3 ՀՀ դրամը՝ որպես վարկի ընդհանուր պարտքի գումար, 25.000 ՀՀ դրամը՝ որպես վնասի հատուցում, և 28.260 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումարը, ժամկետանց վարկի մնացորդի՝ 980.000 ՀՀ դրամի նկատմամբ տոկոսների հաշվարկը՝ 24.08.2010 թվականից մինչև դրա փաստացի մարումը, շարունակել 26 տոկոսով՝ հիմք ընդունելով 20.09.2007 թվականին կնքված վարկային թիվ 306 պայմանագրի 4.3-րդ կետով նախատեսված տոկոսադրույքը, միաժամանակ ժամկետանց տոկոսի նկատմամբ տույժերի հաշվարկը 24.08.2010 թվականից մինչև դրա փաստացի մարումը շարունակել 0,2 տոկոսով (յուրաքանչյուր ուշացած օրվա համար)՝ հիմք ընդունելով նշված վարկային պայմանագրի 4.4-րդ կետը՝ բռնագանձումը տարածելով գրավի առարկա հանդիսացող Դանիել, Ռոստոմ, Ասատուր և Ստեփա Բարսեղյաններին, Ալվարդ Քիթոյանին սեփականության իրավունքով պատկանող «ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Ծիլքար» հասցեում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի վրա:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Համայնքը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության և իր միջև 20.09.2007 թվականին կնքված երաշխավորության թիվ 306-Ա պայմանագիրը, ինչպես նաև երաշխավորության թիվ 276-Ա պայմանագիրը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության և իր միջև 20.09.2007 թվականին կնքված երաշխավորության թիվ 306-Բ պայմանագիրը:

ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Խաչատրյան) (այսուհետ՝ Դատարան) 27.07.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է վարկառու Դանիել Բարսեղյանից հօգուտ Ընկերության բռնագանձել 1.441.230,3 ՀՀ դրամ, որից 1.387.970,3 ՀՀ դրամ՝ որպես վարկի ընդհանուր պարտքի գումար (այդ թվում՝ 980.000 ՀՀ դրամ ժամկետանց գումար, հաշվարկված տոկոս՝ 344.916,1 ՀՀ դրամ, ժամկետանց տոկոսի դիմաց հաշվարկված տույժ՝ 63.054 ՀՀ դրամ), 25.000 ՀՀ դրամ՝ որպես վնասի հատուցում, և 28.260 ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար: Ժամկետանց վարկի մնացորդի՝ 980.000 ՀՀ դրամի նկատմամբ տոկոսների հաշվարկը՝ 24.08.2010 թվականից մինչև դրա փաստացի մարումը, շարունակել 26 տոկոսով՝ 20.09.2007 թվականին կնքված վարկային թիվ 306 պայմանագրի 4.3-րդ կետով նախատեսված տոկոսադրույքով, ժամկետանց տոկոսի նկատմամբ տույժերի հաշվարկը 24.08.2010 թվականից մինչև դրա փաստացի մարումը շարունակել 0,2 տոկոսով (յուրաքանչյուր ուշացած օրվա համար)՝ վարկային պայմանագրի 4.4-րդ կետի համաձայն: Վարկային պարտքի գումարի բռնագանձումը կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և այլ օրենքների պահանջներով՝ տարածելով նաև գրավի առարկա հանդիսացող Ռոստոմ, Ասատուր և Ստեփա Բարսեղյանների, Ալվարդ Քիթոյանի սեփականությունը հանդիսացող «ՀՀ Արագածոտնի մարզ, գյուղ Ծիլքար» հասցեում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահողերի վրա: Մնացած մասով հայցը մերժվել է: Համայնքի հակընդդեմ հայցը՝ 20.09.2007 թվականի երաշխավորության թիվ 306-Ա պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ինչպես նաև Կազմակերպության հակընդդեմ հայցը բավարարվել են: Գործի վարույթը՝ երաշխավորության թիվ 276-Ա պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասով, կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

---

14.09.2011 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողնման պատճառները հարգելի համարելու մասին, մերժվել է, իսկ Դատարանի 27.07.2011 թվականի վճիռն ընդ բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանի վճիռը հրապարակվել է 27.07.2011 թվականին, սակայն այն Ընկերության ուղարկվել է 05.08.2011 թվականին, ինչի արդյունքում Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի պահանջները:

Վերաքննիչ դատարանն Ընկերության միջնորդության մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ կողմերը զրկված չէին Դատարանի վճիռը դռնբաց նիստում ստանալու իրավունքից, մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վճռի հրապարակմանը պարտադիր ներկայանալու որևէ նորմ օրենքով սահմանված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.09.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գործում է, որ այն հիմնավոր է հերքելյալ պարզապես չի հերքել.*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում **հրապարակման պահից մեկ ամիս հետո**, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու



դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնվելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին (տե՛ս՝ ՀՀ Կատավարությանն առընթեր պերական գույքի կատավարման վարչությունն ընդդեմ «Երևան-5» ԼՏԸ-ի, երրորդ անձինք Արմեն Համբարձումյանի, Գրիգոր Հովակիմյանի, Ռաֆիկ Վիրաբյանի՝ գումարի բնագանձման պահանջի մասին, թիվ ԵՇԳ/0507/02/08 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.11.2009 թվականի որոշումը): Այնուամենայնիվ, հաշվի առնելով բողոքում բարձրացված հարցը և սույն գործի փաստերի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ վերոնշյալ իրավական խնդրին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին, և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի վճիռը հրապարակվել է 27.07.2011 թվականին, որի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 29.08.2011 թվականը, սակայն վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 06.09.2011 թվականին: Միաժամանակ, վերաքննիչ բողոքին կից ներկայացված բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի համարելու մասին միջնորդությամբ բողոք բերած անձը հայտնել է, որ Դատարանի վճիռը ստացել է 05.08.2011 թվականին և վերաքննիչ բողոք բերելու մեկամսյա ժամկետ չի ունեցել: Մինչդեռ, բողոք բերած անձի նշված փաստարկը և հիմնավորումը չի կարող վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ համարվել, քանի որ Դատարանը վճիռն Ընկերությանն է ուղարկել այն հրապարակելու հաջորդ իսկ օրը, որն Ընկերությունը ստացել է 05.08.2011 թվականին, և վերջինս վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ունեցել է 24 օր ժամանակ:

---

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 27.07.2011 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 210**), այն Ընկերությունը ստացել է 05.08.2011 թվականին (**հատոր 3-րդ, գ.թ. 11**), վերաքննիչ բողոքը բերել է 06.09.2011 թվականին, իսկ Դատարանի կողմից վճիռն Ընկերությանը հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց սույն գործում առկա չէ:

Ինչ վերաբերում է Ընկերությանը հասցեագրված Դատարանի վճիռն ուղարկելու վերաբերյալ 28.07.2011 թվականով թվագրված գրությանը (**հատոր 2-րդ, գ.թ. 227**), ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված գրությունը չի կարող դիտվել որպես Դատարանի վճիռը դրա հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով Ընկերությանն ուղարկելու վերաբերյալ ապացույց:

Շեռնաբար, Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանը վճիռն Ընկերությանն է ուղարկել այն հրապարակելու հաջորդ իսկ օրը, անհիմն է և չի բխում սույն գործի փաստական տվյալներից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ սահմանված վճիռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով Ընկերությանն ուղարկելու իմպերատիվ պահանջը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքից:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում նաև Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանի վճիռի հրապարակմանը բողոք բերած անձը ներկա գտնվելու և դրա հրապարակումից անմիջապես հետո այն ստանալու հնարավորություն է ունեցել, սակայն ներկա չի գտնվել, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որևէ նորմով սահմանված չէ վճիռի հրապարակմանը պարտադիր ներկա գտնվելու պահանջ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.09.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1182/02/11  
դատարանի որոշում 2012թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/1182/02/11  
Նախագահող դատավոր՝ Տ. Նազարյան  
Դատավորներ՝ Կ. Հակոբյան  
Տ. Սահակյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մարտի 28-ին,  
քննարկելով ըստ հայցի «Յունիքանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ  
Գուրգեն Խաչատրյանի, Հովհաննես Գրիգորյանի՝ պայմանագրով սահմանված վար-  
կային պարտավորությունների կատարման 317.567,20 ՀՀ դրամ գումարի, պայմանագ-  
րի 2.6 և 3.1.4 կետերով սահմանված կարգով օգտագործված՝ 156.000 ՀՀ դրամ գումարի  
նկատմամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան  
22 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսների գումարի, պայմանագրի 2.12 կետով  
սահմանված՝ ավել օգտագործված օվերդրաֆտի՝ 154.598 ՀՀ դրամ գումարի նկատ-  
մամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան 36  
տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսների գումարի և նախապես վճարված պե-  
տական տուրքի՝ 6.355 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասին, քաղա-  
քացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.11.2011 թվականի  
«Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Ընկերության բերած վճա-  
րենկ բողոքը,

---

---

## ՊԱՐԶԵՑ

### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Գուրգեն Խաչատրյանից, Հովհաննես Գրիգորյանից բռնագանձել պայմանագրով սահմանված վարկային պարտավորությունների կատարման 317.567,20 ՀՀ դրամ գումարը, պայմանագրի 2.6 և 3.1.4 կետերով սահմանված կարգով օգտագործված 156.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան 22 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսները, պայմանագրի 2.12 կետով սահմանված՝ ավել օգտագործված օվերդրաֆտի՝ 154.598 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան 36 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսները և նախապես վճարված պետական տուրքի՝ 6.355 ՀՀ դրամ գումարը:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 30.09.2011 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Գուրգեն Խաչատրյանից բռնագանձվել է 317.568,20 ՀՀ դրամ գումար, որից 156.000 ՀՀ դրամը՝ որպես ժամկետային վարկային գծի՝ օվերդրաֆտի գումար, 6.969,20 ՀՀ դրամը՝ որպես ժամկետային վարկի տոկոսագումար, իսկ 154.598 ՀՀ դրամը՝ որպես կուտակված օվերլիմիտի գումար: Օվերդրաֆտի սահմաններում օգտագործված 156.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ տարեկան 22 տոկոս դրույքաչափով հաշվեգրվել և Գուրգեն Խաչատրյանից բռնագանձվել է տոկոսագումար՝ սկսած 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը: Գուրգեն Խաչատրյանից բռնագանձվել է 6.351,34 ՀՀ դրամ գումար՝ որպես Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար: Ընկերության հայցն ընդդեմ Հովհաննես Կարապետի Գրիգորյանի՝ պայմանագրով սահմանված վարկային պարտավորությունների կատարման 317.567,20 ՀՀ դրամ գումարի, պայմանագրի 2.6 և 3.1.4 կետերով սահմանված կարգով օգտագործված՝ 156.000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան 22 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսների գումարի, պայմանագրի 2.12 կետով սահմանված՝ ավել օգտագործված օվերդրաֆտի՝ 154.598 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան 36 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսների գումարի և նախապես վճարված պետական տուրքի՝ 6.355 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների, ինչպես նաև Գուրգեն Խաչատրյանի դեմ ներկայացված՝ պայմանագրի 2.12 կետով սահմանված՝ ավել օգտագործված օվերդրաֆտի՝ 154.598 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 24.05.2011 թվականից մինչև պարտավորության դադարման օրը տարեկան 36 տոկոս դրույքաչափով հաշվարկվող տոկոսների գումարի և նախապես վճարված պետական տուրքի՝ 3,66 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջների մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.11.2011 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողման պատճառները հարգելի համարելու մասին, մերժվել է, իսկ Դատարանի 30.09.2011 թվականի վճռի դեմ բերած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռարեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը Դատարանի 30.09.2011 թվականի վճիռը ստացել է 13.10.2011 թվականին, հետևաբար բողոքարկման մեկամսյա ժամկետը պետք է հաշվարկվեր վճիռը ստանալու, այլ ոչ թե հրապարակման պահից: Հետևաբար Վերաքննիչ դատարանը պետք է Ընկերության՝ վերաքննիչ բողոք բերելու ժամկետի բացթողումը հարգելի համարեր և բավարարեր վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողման միջնորդությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 29.11.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնտում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել **մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում **հրապարակման պահից մեկ ամիս հետո**, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգր-

---

քով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

Վճարել դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքների: Վճարել դատարանը գտել է, որ ընդհանուր իրավասության դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճիռն հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները (լրե և «ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Դանիել Բարսեղյանի, ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքի, «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, Թուարում, Ասարուր և Սրելյա Բարսեղյանների, Ալվարդ Քիթոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ըստ հակընդդեմ հայցի ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և ըստ հակընդդեմ հայցի «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԱՐԱԿ/0716/02/10 գործով ՀՀ վճարել դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

Սույն գործով վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին, և վերադարձնելով վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է, որ Դատարանի վճիռը հրապարակվել է 30.09.2011 թվականին, որի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 31.10.2011 թվականը, սակայն վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 10.11.2011 թվականին: Միաժամանակ, վերաքննիչ բողոքին կից ներկայացված բաց թողնված ժամկետի պատճառները հարգելի համարելու մասին միջնորդությամբ բողոք բերած անձը հայտնել է, որ Դատարանի վճիռը ստացել է 13.10.2011 թվականին և վերաքննիչ բողոք բերելու մեկամսյա ժամկետ չի ունեցել: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ բողոք բերած անձի նշված փաստարկը և հիմնավորումը չի կարող վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ համարվել, քանի որ Ընկերությունը Դատարանի 30.09.2011 թվականի վճիռը ստացել է 13.10.2011 թվականին, և վերջինս վերաքննիչ բողոք ներկայացնելու համար ունեցել է 18 օր ժամանակ:

Մինչդեռ, Վճարել դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանությունն անհիմն է, քանի որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի վճիռը հրապարակվել է 30.09.2011 թվականին (**գ.թ. 71**), այն Ընկերությունը ստա-

ցել է 13.10.2011 թվականին (**գ.թ. 79-80**), վերաքննիչ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 10.11.2011 թվականին (**գ.թ. 90**), իսկ Դատարանի կողմից վճիռն Ընկերությանը հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկելու վերաբերյալ որևէ ապացույց սույն գործում առկա չէ: Ավելին, համաձայն Դատարանի 03.10.2011 թվականի (11.10.2011 թվականի) Ընկերությանը հասցեագրված թիվ Ե-27643 գրության (**գ.թ. 78**) և «Հայփոստ» ՓԲԸ-ի 12.10.2011 թվականի թիվ PR054653306AM փոստային անդորրագրի (**գ.թ. 79**)՝ Դատարանի կողմից վճիռը փոստային ծառայությանն է հանձնվել 12.10.2011 թվականին:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ օրենսդիրը բողոքարկման համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի սկիզբ է համարել ոչ թե վճիռը բողոքաբերի կողմից ստանալու պահը, այլ դրա հրապարակման պահը, ուստի բողոքաբերի կողմից վճիռը ստանալուց հետո մեկամսյա ժամկետն ավարտված չլինելու պայմաններում դատական ակտի բողոքարկման ժամկետի բացթողման պատճառն այն հիմնավորմամբ, որ վճիռը 12 օր ուշ է ստացվել, չի կարող համարվել հարգելի, ապա Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդրության նման տրամաբանությունը պետք է դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի այլ հոդվածների հետ համադրությամբ՝ մասնավորապես հաշվի առնելով, որ բողոքարկման մեկամսյա ժամկետի վերաբերյալ նման դիրքորոշումն ընդունելի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջների պահպանված լինելու դեպքում:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերությանը սահմանված վճիռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով Ընկերությանն ուղարկելու իմպերատիվ պահանջը, ինչի արդյունքում վերջինս գրկվել է օրենքով սահմանված մեկամսյա ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.11.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ 2-1369  
2012թ.

Քաղաքացիական գործ թիվ 2-1369/2007

Նախագահող դատավոր՝ Ա. Մկրտչյան  
Դատավորներ՝ Ն. Հովսեփյան  
Ն. Բարսեղյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ*  
*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի ապրիլի 14-ին,  
քննարկելով Ապետ Ասյանի ներկայացուցիչ Անահիտ Սաֆարյանի վճռաբեկ բողո-  
քը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.11.2011 թվականի «Վերաքննիչ բողո-  
քը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Իզաբելլա Ասյանի ընդդեմ Ապետ  
Ասյանի՝ նվիրատվության պայմանագիրը և սեփականության իրավունքի գրանցման  
վկայականն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Իզաբելլա Ասյանը պահանջել է անվավեր ճանաչել կողմերի  
միջև 29.06.2005 թվականին կնքված Երևանի Փափագյան փողոցի 16ա շենքի թիվ 29  
բնակարանի նվիրատվության պայմանագիրը, սեփականության իրավունքի գրանցման  
վկայականը և կատարված գրանցումը:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին առյանի դատա-  
րանի (այսուհետ՝ Դատարան) 13.06.2007 թվականի վճռով Իզաբելլա Ասյանի հայցը բա-  
վարարվել է մասնակի և վճռվել է անվավեր ճանաչել Իզաբելլա Ասյանի և Ապետ Ասյա-  
նի միջև 29.06.2005 թվականին կնքված բնակարանի նվիրատվության պայմանագիրը



և դրա հիման վրա Երևանի Վ. Փափազյան փողոցի 16ա շենքի թիվ 29 բնակարանի նկատմամբ 01-003-112-001-012-029 կադաստրային համարի տակ գրանցամատյանում 01.07.2005 թվականին կատարված իրավունքի պետական գրանցումը, իսկ պատասխանողի անվամբ 01.07.2005 թվականին տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականն անվավեր ճանաչելու մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.11.2011 թվականի որոշմամբ Ապետ Ասյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է: Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ապետ Ասյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը, 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետը, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ, 8-րդ և 31-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին, 2-րդ, 10-րդ, 11-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 78-րդ, 79-րդ, 93-րդ, 94-րդ, 95-րդ, 117-րդ, 242-րդ, 247-րդ, 247-րդ հոդվածների դրույթները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993 թվականի Մինսկի կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 11-րդ, 13-րդ և 17-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև «Քաղաքացիական դատավարության մասին» Հաագայի կոնվենցիայի դրույթները:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Պատասխանողի ներկայացուցիչը 03.11.2011 թվականին Վերաքննիչ դատարան միջնորդություն է ներկայացրել՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու համար: Միջնորդության մեջ հստակ նշված են բոլոր այն փաստարկները և հոդվածները, որի հիման վրա բաց թողնված դատավարական ժամկետը կարելի է հարգելի համարել: Մակայն Վերաքննիչ դատարանը պատշաճ չի ուսումնասիրել միջնորդությունը և անհասկանալի պատճառաբանությամբ միջնորդությունը մերժել է:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ դատարան մուտքաված քաղաքացիական գործի փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին դիմումը ներկայացվել է 16.09.2011 թվականին, իսկ վերաքննիչ բողոքը՝ 03.11.2011 թվականին: Այսինքն՝ Ապետ Ասյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամանակ ուներ: Հետևաբար, եթե Վերաքննիչ դատարանը պատշաճ ուսումնասիրեր միջնորդությունը, ապա կնկատեր, որ բացի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներից, բողոք բերողը մատնանշել է նաև նույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը, որի հիման վրա Վերաքննիչ դա-

---

տարանն արդար դատաքննություն անցկացնելու և գործին վերջնական լուծում տալու համար պարտավոր էր վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի, դատավարական այլ գործողությունների իրականացման մասին պատշաճ ծանուցումը կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքի ապահովման կարևոր պայման է:

Դատարանն անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել, ակտիվ գործողություններ չի իրականացրել պատասխանողին ըստ էության գործին մասնակից դարձնելու համար, և որպես հետևանք հնարավորություն չի ընձեռել վերջինիս օրենքով սահմանված իր իրավունքներից օգտվելու համար:

Վերոգրյալի հիման վրա վճարել բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 14.11.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

### **3. Վճարել դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը**

*Քննարկելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել դատարանը գրնում է, որ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հերկյալ պարճառարանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Վճռի կայացման պահին գործող խմբագրությամբ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ է մտնում այն հրապարակելուց տասնհինգ օր հետո:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատ-

ձառները հարգելի համարելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողած ժամկետը վերականգնելու մասին, կամ նման միջնորդությունը չի բավարարել դատարանը:

Վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնվելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին (յրե՛ւ՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն ընդդեմ «Երևան-5» ԼՏԸ-ի, երրորդ անձինք Արմեն Համբարձումյանի, Գրիգոր Հովակիմյանի, Ռաֆիկ Վիրաբյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԵՇԴ/0507/02/08 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.11.2009 թվականի որոշումը): Այնուամենայնիվ, հաշվի առնելով բողոքում բարձրացված հարցը և սույն գործի փաստերի առանձնահատկությունները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում կրկին անդրադառնալ վերոնշյալ իրավական խնդրին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճիռը հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ **հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները** (յրես «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի, ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքի, «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, Ռուստոմ, Ասպրուր և Սրելլա Բարսեղյանների, Ալվարդ Քիթոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԱՐԱԴ/0716/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատարանի կողմից չեն կարող ստեղծվել այնպիսի ձևական խոչընդոտներ, որոնց արդյունքում կխախտվի անձանց՝ դատական ակտն օրենքով նախատեսված կարգով վերանայելու իրավունքը հետևյալ պատճառաբանությամբ.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի

---

բաղկացուցիչ մասն է:

Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրես Աշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարանի) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարանի) որոշման վերանայման հնարավորություն:

Վերը նշվածից հետևում է, որ առաջին ատյանի դատարանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի այդ ակտերի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարանի) կողմից:

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրես Սրաբրինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 51,55*):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Եվրոպական դատարանի խնդիրը ներպետական օրենսդրությունը մեկնաբանելը չէ (*յրես՝ Բրուսյալ Գոմեզ դե լա Տորենս ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 19.12.1997 թվականի վճիռը, կետ 31*): Վերջինիս դերը հիմնականում դրսևորվում է դատարանների կողմից ներպետական օրենսդրության մեկնաբանությունը Կոնվենցիայի հետ համատեղելիության տեսանկյունից գնահատելով: Այդ կանոնը կիրառելի է նաև դատարանների կողմից փաստաթղթեր լրացնելու կամ զանգատներ ներկայացնելու հետ կապված ժամկետային սահմանափակումներ նախատեսող դատավարական նորմերի մեկնաբանության նկատմամբ (*յրես՝ Տեռ-*

դոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 16.12.1997 թվականի վճիռը, կետ 3): Եվրոպական դատարանը նշել է նաև, որ գանգատների համար ժամկետային սահմանափակումներ նախատեսող դատավարական նորմերն անկասկած համապատասխան են իրավական հստակության սկզբունքի հետ: Այնուամենայնիվ, **դատավարական նման նորմերը կամ դրանց կիրառումը չպետք է լինեն այնպես**, որ կանխարգելեն դատավարության մասնակիցներին օգտագործել իրենց ընձեռված այդ հնարավորությունները (տես՝ Պերեզ դե Ռադա Կավանիլլեան ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, կետ 44-45):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ապետ Ասյանի ներկայացուցիչը Դատարանի 13.06.2007 թվականի վճիռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել 03.11.2011 թվականին (փոստին հանձնվել է 03.11.2011 թվականին, իսկ Վերաքննիչ դատարանը ստացել է 04.11.2011 թվականին) և պատճառաբանելով, որ նշված վճիռի կայացման և ընդհանրապես իր վերաբերյալ քաղաքացիական գործի առկայության մասին որևէ կերպ չի տեղեկացվել, այն պատշաճ ձևով չի հանձնվել իրեն, վճիռի մասին տեղեկացել է միայն 16.09.2011 թվականից հետո, որի պատճառով բաց է թողել վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը, միջնորդել է վերաքննիչ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառը ճանաչել հարգելի և այն վերականգնել: Վերաքննիչ դատարանը պատասխանողի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ բողոքաբերի կողմից չեն ներկայացվել բողոքարկվող վճիռի մասին տեղեկանալու ժամկետի վերաբերյալ հիմնավորումներ և համապատասխան ապացույցներ: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ բողոքաբերը, որպես գործին մասնակցող անձ, 16.09.2011 թվականին արդեն իսկ տեղեկացված էր վճիռի մասին, մինչդեռ վերաքննիչ բողոք է ներկայացվել միայն 03.11.2011 թվականին, այսինքն՝ վճիռը ստանալուց հետո նույնիսկ չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված մեկամսյա ժամկետը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պատասխանողի ներկայացուցիչը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները Ապետ Ասյանի վերաբերյալ քննված քաղաքացիական գործի նյութերին ծանոթանալու, դրանց վերաբերյալ իր առարկությունները ներկայացնելու և կայացված դատական ակտը բողոքարկելու համար, որպիսի փաստն ապացուցվում է պատասխանողի ներկայացուցչի կողմից 16.09.2011 թվականին փաստաթղթեր ստանալու մասին Դատարանին ներկայացված դիմումով: Իսկ քաղաքացիական գործի փաստաթղթերը՝ այդ թվում Դատարանի 13.06.2007 թվականի վճիռը պատասխանողի ներկայացուցչի կողմից ստանալու կոնկրետ ամսաթիվը պարզ չլինելու պայմաններում Վերաքննիչ դատարանը չէր կարող գալ հիմնավոր եզրահանգման այն մասին, թե պատասխանողի ներկայացուցիչը երբ է ստացել Դատարանի 13.06.2007 թվականի վճիռը, որի պայմաններում միայն վերջինս հնարավորություն կունենար այն բողոքարկելու օրենքով սահմանված ժամկետներում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սույն գործով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս պետք է քննարկեր այն հիմքերը, որոնք բերվել են բողոք բերողի կողմից:

Սույն գործում վերաքննիչ բողոք բերող անձը նշել է, որ Դատարանի 13.06.2007 թվականի վճիռի կայացման և ընդհանրապես իր վերաբերյալ քաղաքացիական գործի

---

անկայության մասին որևէ կերպ չի տեղեկացվել, գործի քննության մասին պատշաճ չի ծանուցվել: Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ նաև նյութական և դատավարական իրավունքի այն խախտումները, որոնք բարձրացվել են բողոք բերող անձի կողմից և միջնորդության բավարարման հարցը քննարկեր նաև այդ հանգամանքները հաշվի առնելով:

Ինչ վերաբերում է բողոք բերող անձի այն փաստարկին, որ Ապետ Ասյանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամանակ ուներ և Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ բողոք բերողը մատնանշել է նաև նույն օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքն այս մասով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գործին մասնակից չդարձված այն անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ կարող էին իմանալ նման դատական ակտի կայացման մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է քսան տարի:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ գործին մասնակից չդարձված անձանց համար օրենսդիրը սահմանել է դատական ակտի բողոքարկման եռամսյա ժամկետ: Միաժամանակ օրենսգիրքը սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը՝ այն օրվանից սկսած, երբ անձն իմացել է կամ կարող էր իմանալ նման դատական ակտի կայացման մասին (*տես Մանիկ Հովանեսյանը, Թինա Օգանեզովան ընդդեմ Արաքսի Սերոբյանի՝ ընդհանուր համարել սեփականություն հանդիսացող անշարժ գույքից բաժնետնան առանձնացնելու պահանջի մասին թիվ ԱՎԴ1/0049/02/09 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2011 թվականի որոշումը*): Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ժամկետների հաշվարկման նմանատիպ կարգը, որն ընդունված է Եվրոպայի Խորհրդի այլ անդամ պետությունների կողմից, ներառվում է պետության հայեցողական լիազորության մեջ, ինչը բխում է նաև Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից (*տես Սյրաբբինզար և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետ 54*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավական կարգավորումը վերաբերում է գործին մասնակից չդարձված անձանց կողմից դատական ակտի բողոքարկմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք են՝ 1) կողմերը. 2) երրորդ անձինք. 3) դիմողները՝ սույն օրենսգրքի երրորդ բաժնով նախատեսված գործերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը:

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը հստակ տարբերակում է գործին մասնակցող անձանց և գործին մասնակից չդարձված այն անձանց, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբե-

րյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ տարբերակելով նաև վերջիններիս կողմից դատական ակտը բողոքարկելու ժամկետները: Միաժամանակ որպես գործին մասնակցող անձ օրենսդիրը համարում է նաև պատասխանողին, իսկ պատասխանողներ են այն քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել:

Հետևաբար այն դեպքում, երբ անձի դեմ ներկայացված հայցադիմումն ընդունվում է վարույթ, վերջինս տվյալ գործով ձեռք է բերում գործին մասնակցող անձի՝ պատասխանողի դատավարական կարգավիճակ և չի կարող համարվել գործին մասնակից չդարձված անձ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի է այն անձանց կողմից բողոք բերելու իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք չունեն նույն օրենսգրքի 27-րդ հոդվածով նշված դատավարական կարգավիճակներից որևէ մեկը (կողմ, երրորդ անձ, դիմող): Հետևաբար այն դեպքերում, երբ բողոք բերող անձը տվյալ գործով ունի դատավարական կարգավիճակ, վերջինիս կողմից բողոքարկման ժամկետների նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 207-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառելի չէ:

Սույն գործով հայցը հարուցվել է Իգարելլա Ասյանի կողմից ընդդեմ Ապետ Ասյանի, ուստի Ապետ Ասյանը գործով չէր կարող լինել գործին մասնակից չդարձված անձ, ում իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ և 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.11.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական գաղափարային գործ թիվ ԵՇԴ/0420/02/10  
դատարանի որոշում 2012թ.  
Քաղաքացիական գործ թիվ ԵՇԴ/0420/02/10  
Նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյանի  
Դատավորներ Ա. Սաթևոսյանի  
Կ. Զիլինգարյանի

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի փետրվարի 01-ին  
քննարկելով Արսեն Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.08.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի «Աղավնի Մանուկյանի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ երեխայի ապրելու իրավունքը ձանաչելու, ալիմենտ բռնագանձելու, համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը բաժանելու» (թիվ ԵՇԴ/0460/02/11 քաղաքացիական գործով ըստ Աղավնի Մանուկյանի հայցի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ ալիմենտի չափը փոփոխելու) պահանջների մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Թիվ ԵՇԴ/0460/02/11 քաղաքացիական գործով դիմելով դատարան՝ Աղավնի Մանուկյանը պահանջել է «Արսեն Հովհաննիսյանից բռնագանձման ենթակա ալիմենտի գումարը սահմանել կայուն դրամական գումարով, ամենամսյա վճարման տեսքով՝ ամսական 30.000 ՀՀ դրամի չափով»:



Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի թիվ ԵՇԳ/0460/02/11 վճռով հայրը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Փոփոխել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010թ. հա. ԵՇԳ/0420/02/10 վճռով Արսեն Հովհաննիսյանից հոգուտ Աղավնի Մանուկյանի՝ որպես իրենց անչափահաս դստեր՝ Էլեն Արսենի Հովհաննիսյանի /ծնված 23.12.2008թ./ ապրուստի միջոց, մինչև վերջինիս չափահաս դառնալը, նրա ամսական վաստակի և այլ եկամտի մեկ քառորդի չափով՝ բայց ոչ պակաս 10.000 ՀՀ դրամը, ամսական բոնագանձվող ալիմենտի չափը, և Արսեն Հովհաննիսյանից հոգուտ Աղավնի Մանուկյանի որպես իրենց անչափահաս երեխայի՝ Էլեն Արսենի Հովհաննիսյանի /ծնված 23.12.2008թ./, ապրուստի միջոց մինչև վերջինիս չափահաս դառնալը բոնագանձել ամսական 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ ալիմենտ»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.08.2011 թվականի որոշմամբ Արսեն Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արսեն Հովհաննիսյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ, 207-րդ հոդվածների 1-ին կետերը, 210-րդ հոդվածը, 213-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ չնայած վերաքննիչ բողոքի բովանդակությունից հստակ երևում է, որ ներկայացվել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի թիվ ԵՇԳ/0460/02/11 վճռի դեմ, այնուամենայնիվ «թյուրիմացաբար եզրահանգել է, որ պատասխանողը բողոք է ներկայացրել «09.07.2010 թվականին կայացրած և 05.11.2010 թվականին բեկանված վճռի դեմ»», ինչի արդյունքում հանգել է սխալ եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է «բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵՇԳ/0420/02/10 քաղաքացիական գործով կայացրած 03.08.2011 թվականի որոշումը և այն վերացնել՝ Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի վճռի դեմ Արսեն Հովհաննիսյանի կողմից 27.07.2011 թվականին բերված վերաքննիչ բողոքը՝ վերաքննիչ դատարանում ընդունված համարելով սկզբնական ներկայացնելու օրը»:

## **3. Վճռաբեկ բողոքի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *բողոքը հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

---

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 04.06.2010 թվականի թիվ ԵԾԳ/0420/02/10 որոշմամբ ըստ Աղավնի Մանուկյանի հայցի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ երեխայի ապրելու իրավունքը ձանաչելու պահանջի մասին թիվ ԵԾԳ/0420/02/10 քաղաքացիական գործը, ըստ Աղավնի Մանուկյանի հայցի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ ալիմենտի բռնագանձման պահանջի մասին թիվ ԵԾԳ/0418/02/10 քաղաքացիական գործը և ըստ Աղավնի Մանուկյանի հայցի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը բաժանելու պահանջի մասին ԵԾԳ/0422/02/10 քաղաքացիական գործը միացվել են մեկ վարույթում **թիվ ԵԾԳ/0420/02/10** համարով:

Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010 թվականի թիվ ԵԾԳ/0420/02/10 վճռով վճռվել է. «Աղավնի Մանուկյանի հայցն ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ ալիմենտի բռնագանձման պահանջի մասին, բավարարել: Արսեն Հովհաննիսյանից հոգուտ Աղավնի Մանուկյանի, որպես իրենց անչափահաս դստեր՝ Էլեն Արսենի Հովհաննիսյանի /ծնված՝ 23.12.2008թ./ ապրուստի միջոց, մինչև վերջինիս չափահաս դառնալը, բռնագանձել ալիմենտ նրա ամսական վատակի և այլ եկամուտի մեկ քառորդի չափով՝ բայց ոչ պակաս ամսական 10.000 ՀՀ դրամից: Ալիմենտի բռնագանձումը կատարել 2010թ. ապրիլի 20-ից: ԵԾԳ/0420/02/10 քաղաքացիական գործի վարույթն ըստ հայցի Աղավնի Մանուկյանի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ երեխայի ապրելու իրավունքը ձանաչելու, համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը բաժանելու պահանջների մասին, կարճել»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.11.2010 թվականի **թիվ ԵԾԳ/0420/02/10** որոշմամբ Աղավնի Մանուկյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010 թվականի **թիվ ԵԾԳ/0420/02/10** վճռի՝ երեխայի ապրելու իրավունքը ձանաչելու, համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը բաժանելու պահանջների մասով քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասը և այդ մասով գործն ուղարկվել է նույն դատարան ամբողջ ծավալով նոր քննության: Վճռի մնացած մասը թողնվել է օրինական ուժի մեջ:

Ըստ Աղավնի Մանուկյանի հայցի ընդդեմ Արսեն Հովհաննիսյանի՝ ալիմենտի չափը փոփոխելու պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործով կայացված՝ Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի թիվ ԵԾԳ/0460/02/11 վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է. «Փոփոխել Երևանի Ծենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 09.07.2010թ. հա. ԵԾԳ/0420/02/10 վճռով Արսեն Հովհաննիսյանից հոգուտ Աղավնի Մանուկյանի որպես իրենց անչափահաս դստեր՝ Էլեն Արսենի Հովհաննիսյանի /ծնված 23.12.2008թ./ ապրուստի միջոց, մինչև վերջինիս չափահաս դառնալը, նրա ամսական վատակի և այլ եկամուտի մեկ քառորդի չափով՝ բայց ոչ պակաս 10.000 ՀՀ դրամը, ամսական բռնագանձվող ալիմենտի չափը, և Արսեն Հովհաննիսյանից հոգուտ Աղավնի Մանուկյանի՝ որպես իրենց անչափահաս երեխայի՝ Էլեն Արսենի Հովհաննիսյանի /ծնված 23.12.2008թ./, ապրուստի միջոց մինչև վերջինիս չափահաս դառնալը բռնագանձել ամսական 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ ալիմենտ»:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կե-

տի 5-րդ ենթակետը, պատճառաբանել է, որ տվյալ դեպքում բողոք է ներկայացվել այն դատական ակտի դեմ, որն այլևս գոյություն չունի, և Վերաքննիչ դատարանի 05.11.2010 թվականի որոշմամբ բեկանվել է, հետևաբար չի կարող բողոքարկվել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում պետք է նշվեն՝ դատարանի անվանումը, որի կայացրած վճռի դեմ բերվում է բողոքը, գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին, 5-րդ ենթակետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 210-րդ հոդվածի պահանջները, բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման, իսկ 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ դատարանը, նույն օրենսգրքի 144 հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով, գործը ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է որոշում վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր ստերևայթ խախտումները: Նման որոշման դեպքում բողոք բերող անձին պատշաճ ձևով ուղարկվում է միայն վերաքննիչ դատարանի որոշումը: Նույն հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արսեն Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի բովանդակությունից պարզ է, որ վերջինս վերաքննիչ բողոք ներկայացրել է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի թիվ ԵՇԳ/0460/02/11 վճռի դեմ, սակայն վերաքննիչ բողոքում վիճարկվող դատական ակտի համարը նշվել է թիվ ԵՇԳ/0420/02/10, իսկ վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը 04.07.2011 թվական, ինչի արդյունքում սույն վերաքննիչ բողոքը քննարկվել է թիվ ԵՇԳ/0420/02/10 քաղաքացիական գործի շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի սխալ կիրառմամբ: Բացի այդ, թիվ ԵՇԳ/0420/02/10 քաղաքացիական գործով կայացված դատական ակտի տարին, ամիսը, ամսաթիվը 09.07.2010 թվականն է:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքում կայացրած վճռի գործի համարը և վճռի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը սխալ նշելն արդեն իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջների խախտում է, որպիսի խախտումների առկայությունը վերաքննիչ բողոքը վերադարձնելու և թույլ տրված խախտումները վերացնելու համար երկշաբաթյա ժամկետ տրամադրելու հիմք է, մինչդեռ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի սխալ կիրառման արդյունքում բողոք բերող անձը զրկվել է վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու իրավունքների իրականացման հնարավորությունից:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն դիր-

---

քորոշումը, որ պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը:

Ավելին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ աստիճանի դատարանի) կողմից ստորադաս դատարանի (առաջին աստիճանի դատարանի) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վերը նշվածից հետևում է, որ առաջին աստիճանի դատարանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի ցանկացած որոշման վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ աստիճանի դատարան):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը վերադարձնելով, չի ապահովվել առաջին աստիճանի դատարանի դատական ակտի վերաքննության կարգով վերանայման հնարավորությունը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը ենթակա էր վերադարձման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի հիմքով, որպիսի պարագայում բողոք բերած անձը հնարավորություն կունենար օգտվելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու դատավարական իրավունքից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 03.08.2011 թվականի որոշումը վերացնելու:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.08.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.07.2011 թվականի թիվ ԵՇԴ/0460/02/11 վճռի դեմ Արսեն Հովհաննիսյանի 27.07.2011 թվականի վերաքննիչ բողոքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և 3-րդ կետի հիմքով վերադարձնել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

# ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Գործերի ընդդատությունը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/2743/05/10  
Նախագահող դատավոր՝ Լ. Սոսյան  
Դատավորներ՝ Գ. Ղարիբյան Ա. Սարգսյան

Վարչական գործ թիվ ՎԳ/2743/05/10  
2010թ.

### ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 23-ին,

քննարկելով ըստ հայցի «Կարախանյան և ընկերներ իրավաբանական գրասե-  
նյակ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), Արամ Կարախանյանի, Թաթուլ Խոնդատյանի,  
Մարիամ Ղուլյանի, Արմինե Մկրտչյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պե-  
տական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձ ՀՀ դատական դե-  
պարտամենտի (այսուհետ՝ Դեպարտամենտ) Կոմիտեի նախագահի տեղակալին Ընկե-  
րության և նրա աշխատակիցների մասնագիտական գործունեության վերաբերյալ Դե-  
պարտամենտից տեղեկություններ ստանալուն ուղղված գործողություններ, այդ թվում՝  
հարցումներ կատարելուց, 30.06.2010 թվականին Դեպարտամենտ ներկայացված թիվ  
19921/12 հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը ստանալուց ձեռնպահ մնալուն  
պարտավորեցնելու, և որպես հետևանքների վերացում Կոմիտեի նախագահին նշված  
հարցումը գրությամբ հետ պահանջելուն պարտավորեցնելու, ինչպես նաև Դեպարտա-  
մենտին այդ հարցմանը չպատասխանելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

---

վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 07.09.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության, Արամ Կարախանյանի, Թաթուլ Խուդատյանի, Մարիամ Ղուլյանի, Արմինե Մկրտչյանի բերած վճռաբեկ բողոքը,

## **ՊԱՐԶԵՑ**

### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը, Արամ Կարախանյանը, Թաթուլ Խուդատյանը, Մարիամ Ղուլյանը, Արմինե Մկրտչյանը պահանջել են պարտավորեցնել Կոմիտեի նախագահի տեղակալին ձեռնպահ մնալ Ընկերության և նրա աշխատակիցների մասնագիտական գործունեության վերաբերյալ Դեպարտամենտից տեղեկություններ ստանալուն ուղղված գործողություններ, այդ թվում՝ հարցումներ կատարելուց, 30.06.2010 թվականին Դեպարտամենտ ներկայացված թիվ 19921/12 հարցմամբ պահանջվող տեղեկատվությունը ստանալուց, և որպես հետևանքների վերացում՝ պարտավորեցնել Կոմիտեի նախագահին գրությամբ հետ պահանջել նշված հարցումը, ինչպես նաև պարտավորեցնել Դեպարտամենտին չպատասխանել այդ հարցմանը:

ՀՀ վարչական դատարանի 13.08.2010 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 07.09.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 13.08.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության, Արամ Կարախանյանի, Թաթուլ Խուդատյանի, Մարիամ Ղուլյանի, Արմինե Մկրտչյանի բերած բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերությունը, Արամ Կարախանյանը, Թաթուլ Խուդատյանը, Մարիամ Ղուլյանը, Արմինե Մկրտչյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, 13-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարության օրենսգրքի 8-րդ, 79-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարձառստանել են հետևյալ փաստաթղթերով.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը պարտավորեցնում է ՀՀ վարչական դատարանին քննել հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Տվյալ դեպքում Դատարանը, քննարկելով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը և դիտարկելով գործի ընդդատության հարցը, պետք է ընդամենը պարզեր, թե արդյոք վեճը բխում է հանրային իրավահարաբերություններից, թե՛ ոչ: Մնացած հարցերը, որոնց Դատարանն անդրադարձել է, ենթակա էին պարզման դատաքննության փուլում, և Դատարանը դրանց պետք է անդրադառնար վճռով:

Դատարանն անտեսել է, որ Կոմիտեի նախագահի տեղակալը պետական և վարչական մարմին է, իսկ տվյալ դեպքում վերջինս տեղեկատվություն է պահանջել բողոք բերած անձանց վերաբերյալ:

Դատարանը հաշվի չի առել, որ հանրային իրավական վեճի առանձնահատկությունը պայմանավորված է նաև դրա հիմքով՝ այն առաջանում է, երբ պետական մարմնի ակտերով, գործողություններով կամ անգործությամբ խախտվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց իրավունքները և օրինական շահերը:

Դատարանն անտեսել է նաև, որ տեղեկատվություն պահանջելը վարչարարություն է, քանի որ վարչարարությունը բնորոշվում է որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործունեություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Նշվածից հետևում է, որ տվյալ դեպքում առկա է հանրային իրավահարաբերություններից բխող վեճ, և Դատարանը պետք է բավարարեր բողոքը:

Այսպիսով, Դատարանը, մերժելով բողոքը, խախտել է բողոք բերած անձանց դատական պաշտպանության իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են վերացնել Դատարանի 07.09.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և ՀՀ վարչական դատարանի 13.08.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հեղկյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են **հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը ...:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, **քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը**, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

Նշված դրույթի մեկնաբանությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարանին ենթակա չեն նաև այն գործերը, որոնք բխում են հենց քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից (*տե՛ս՝ Վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0494/05/08 գործով 30.06.2009 թվականի որոշումը*): Ընդ որում, այդ իրավահարաբերությունները ծագում են քրեական վարույթի շրջանակներում և քրեական վարույթի իրականացնող մարմինների կողմից քրեական դատավարության ժամանակ համապատասխան լիազորություններն իրականացնելիս:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 25-րդ կետով սահմանված է, որ քննիչը հատուկ քննչական ծառայության, ոստիկանության, պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի, ազգային անվտանգության, **հարկային կամ մաքսային մարմինների պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում քրեական գործով կատարում է նախաքննություն:**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը պետական պաշտոնատար անձ է, որն իր իրավասության սահմաններում **քրեա-**

---

---

**կան գործով իրականացնում է նախաքննություն:**

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **հարկային մարմինը** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների բնագավառում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի համաձայն իրականացնում է **հետաքննություն և նախաքննություն:**

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11.2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ **սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած վերադաս հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով վարչական մարմինները բնորոշվում են որպես Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար. քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հարկային մարմինն իր կողմից վերահսկվող եկամուտների բնագավառում **նախաքննությունն իրականացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների (քննիչների) միջոցով:** Այսինքն՝ հարկային ոլորտում նախաքննության իրականացման ընթացքում միայն հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանումների (քննիչների) գործողությունները կարող են դիտվել որպես քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործողություններ:

Սույն գործով Դատարանը բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ ներկայացված հայցադիմումի բովանդակությունից հետևում է, որ Կոմիտեի նախագահի տեղակալի 30.06.2010 թվականի թիվ 19921/12 գրությամբ Դեպարտամենտի ղեկավարից տեղեկություններ են պահանջվել Կոմիտեի քննչական վարչությունում քննվող թիվ 83101410 քրեական գործի վարույթի հետ կապված՝ նախաքննության անհրաժեշտությունից ելնելով: Այսինքն՝ սույն գործը քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործ է: Հետևաբար, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հարկային մարմինն իր կողմից վերահսկվող եկամուտների բնագավառում նախաքննությունն իրականացնում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների (քննիչների) միջոցով, քանի որ այդպիսի լիազորություններով օժտված են բացառապես հարկային մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների քննիչները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի նախագահի տեղակալը 30.06.2010 թվականի թիվ 19921/12 գրությամբ դիմել է Դեպարտամենտի ղեկավարին և նշելով, որ Կոմիտեի քննչական վարչությունում քննվում է թիվ 83101410 քրեական գործը՝ Ընկերու-



թյան տնօրեն Արամ Կարախանյանի կողմից հարկային մարմիններին ներկայացված օրենքով սահմանված հաշվարկներում և հաշվետվություններում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խոշոր չափի՝ 3.935.000 ՀՀ դրամի հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու փաստի առթիվ, նախաքննության անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրել է հայտնել, թե քանի դատաքննական գործընթացի են մասնակցել Ընկերության աշխատակիցները, ինչպես նաև տրամադրել նրանց մասնակցությունը և մատուցված ծառայությունների համար կատարված վճարումները հիմնավորող փաստաթղթերի պատճենները (պայմանագրեր, լիազորագրեր և այլն) (գ.թ. 14):

Այսինքն՝ սույն գործի փաստերով հաստատվում է այն հանգամանքը, որ Կոմիտեի քննչական վարչությունում քննվող թիվ 83101410 քրեական գործի շրջանակներում տեղեկություններ և փաստաթղթեր ձեռքբերելու նպատակով Դեպարտամենտի ղեկավարին է դիմել ոչ թե Կոմիտեի քննչական վարչության՝ նշված քրեական գործը քննող քննիչը, այլ Կոմիտեի նախագահի տեղակալը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի նախագահի տեղակալի կողմից Կոմիտեի քննչական վարչությունում քննվող թիվ 83101410 քրեական գործի շրջանակներում Դեպարտամենտի ղեկավարից տեղեկություններ և փաստաթղթեր ձեռքբերելուն ուղղված գործողությունները չեն կարող դիտվել որպես քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործողություններ, այլ նշված գործողությունները պետք է դիտվեն որպես վարչական մարմնի իրականացրած վարչարարություն, որի հետ կապված վեճերը բխում են հանրային իրավահարաբերություններից:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 28.10.2010 թվականի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 07.09.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 13.08.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

# Դատավարական ժամկետները

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/2603/05/10

Վարչական գործ թիվ ՎԳ/2603/05/10  
2011թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Միրզոյան  
Դատավորներ՝ Ռ. Սարգսյան  
Լ. Սոսյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 25-ին  
քննարկելով Գրիգոր Խաչերյանի ներկայացուցիչ Մկրտիչ Դավթյանի վճռաբեկ  
բողոքը ՀՀ վարչական դատարանի 24.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին»  
որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Գրիգոր Խաչերյանի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմում  
ընդդեմ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) Երևանի քա-  
ղաքապետի 27.03.2008 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերա-  
դարձվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին  
կետի հիմքով՝ հայց ներկայացնելու համար դատավարական ժամկետը բաց թողնելու և  
այն վերականգնելու միջնորդություն չներկայացնելու պատճառով:

ՀՀ վարչական դատարանի 10.08.2010 թվականի որոշմամբ բաց թողնված դատա-  
վարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը և հայցադիմումի ընդունումը  
մերժվել են:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.08.2010 թվականի որոշմամբ Գրիգոր Խաչերյանի ներկայացուցչի բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գրիգոր Խաչերյանի ներկայացուցիչը: Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը բողոքի մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ 09.12.2009 թվականին հայտնի է դարձել, որ Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5/2 հասցեի գույքի նկատմամբ առկա է վեճ, որի պատճառով հայցադիմում է ներկայացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Դատարանը նշել է նաև, որ 30.03.2010 թվականին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան Գրիգոր Խաչերյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ և որ 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշման մասին հայտնի է դարձել քաղաքացիական գործով հրավիրված դատական նիստի ժամանակ: Մինչդեռ Դատարանն անտեսել է, որ վիճարկվող որոշման մասին Գրիգոր Խաչերյանը տեղեկացել է միայն 28.04.2010 թվականին, երբ քաղաքացիական գործով պատասխանող Ամասիկ Մանասերյանի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմումի պատասխան, որում նշվել է այդ որոշման մասին: Եվ դա այն դեպքում, երբ Գրիգոր Խաչերյանն իր ձեռքի տակ ունեցել է Երևանի քաղաքապետի խորհրդականի 27.07.2008 թվականի թիվ 04/Խ-862 գրությունը, ըստ որի՝ Երևանի Այգեստան 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 5/2 հասցեի գույքի վերաբերյալ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման շրջանակներում Ամասիկ Մանասերյանի և Հովհաննես Խաչերյանի անվամբ օրինականացման հարց չի քննարկվել: Քանի որ վիճարկվող որոշման գոյության մասին Գրիգոր Խաչերյանն իմացել է միայն 28.04.2010 թվականին, միջնորդել է հարգելի ճանաչել դատարան դիմելու բաց թողնված դատավարական ժամկետը:

Դատարանը, մերժելով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը, բողոք բերած անձին զրկել է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Դատարանի 24.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

---

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (տես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland), թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, Ջ-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Z. and Others v. The United Kingdom), թիվ 29392/95, 2009 թվականի մայիսի 10, 91-93-րդ կետեր):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Եվրոպական դատարանի խնդիրը ներպետական օրենսդրությունը մեկնաբանելը չէ (տես՝ Բրուալլա Գոմեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 19.12.1997 թվականի վճիռը, կետ 31), (Brualla G mez de la Torre v. Spain): Վերջինիս դերը հիմնականում դրսևորվում է դատարանների կողմից ներպետական օրենսդրության մեկնաբանությունը Կոնվենցիայի հետ համատեղելիության տեսանկյունից գնահատելով: Այդ կանոնը կիրառելի է նաև դատարան-

---

ների կողմից փաստաթղթեր լրացնելու կամ գանգատներ ներկայացնելու հետ կապված ժամկետային սահմանափակումներ նախատեսող դատավարական նորմերի մեկնաբանության նկատմամբ (տես՝ Տեղոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 16.12.1997 թվականի վճիռը, կետ 31), (Tejedor Garc a v. Spain): Եվրոպական դատարանը նշել է նաև, որ գանգատների համար ժամկետային սահմանափակումներ նախատեսող դատավարական նորմերն անկասկած համապատասխան են իրավական հստակության սկզբունքի հետ: Այնուամենայնիվ, **դատավարական նման նորմերը կամ դրանց կիրառումը չպետք է լինեն այնպես**, որ կանխարգելեն դատավարության մասնակիցներին օգտագործել իրենց ընձեռված այդ հնարավորությունները (տես՝ Պերեզ դե Ռադա Կավանիլլեսն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, կետ 44-45), (Perez De Rada Cavanilles v. Spain):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Մասն միջնորդությունը կարող է բավարարվել, եթե դատարանը գտնի, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայցադիմումը ներկայացվել է դատավարական ժամկետների լրանալուց հետո, ապա կարող է ներկայացվել հայցվորի միջնորդությունն այն վերականգնելու մասին՝ դրանում նշելով բացթողման պատճառները:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ անձի՝ դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի և 72-րդ հոդվա-

---

ծի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ դատավարական ժամկետների լրանալուց հետո ներկայացված հայցադիմումները դատարանը վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը: Բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու մասին միջնորդությունում պետք է նշվեն բացթողնման պատճառները:

Սույն գործով Գրիգոր Խաչերյանը հայցադիմում է ներկայացրել՝ պահանջելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշումը: Միաժամանակ միջնորդություն է ներկայացրել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ վիճարկվող որոշման գոյության մասին տեղեկացել է միայն 28.04.2010 թվականին:

Դատարանը բողոքը մերժելով նշել է, որ «հայցվորի ներկայացուցիչը դեռևս 09.12.2009 թվականին Երևանի քաղաքապետարանից տեղեկացել է, որ Երևանի Այգեստան II փողոցի 1-ին սրբանցքի 5/2 հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ առկա է վեճ, այդ կապակցությամբ հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 30.03.2010 թվականին ընդունվել է վարույթ և ըստ հայցվորի ներկայացուցչի՝ Երևանի քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշման մասին նրան հայտնի է դարձել քաղաքացիական գործով հրավիրված դատական նիստի ժամանակ, սակայն հայցվորի ներկայացուցիչը միջնորդության և հայցադիմումում բերված վերը նշված պատճառաբանությունները հիմնավորելու և դատավարական ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելու վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հարցը քննարկելիս Դատարանը պետք է առաջնորդվեր անձի՝ իր իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու և դրա մատչելիության սկզբունքներով:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարան դիմելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ժամկետային սահմանափակումները Դատարանը սույն գործով պետք է կիրառեր Գրիգոր Խաչերյանի իրավունքների դատական պաշտպանության մատչելիության լույսի ներքո: Ման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին Գրիգոր Խաչերյանի միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ Գրիգոր Խաչերյանի ներկայացուցիչը 09.12.2009 թվականին տեղեկացել է, որ Երևանի Այգեստան II-րդ փողոցի 1-ին սրբանցքի թիվ 5/2 հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ առկա է վեճ, որի կապակցությամբ հայցադիմում է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 30.01.2010 թվականին ընդունվել է վարույթ և միայն այդ քաղաքացիական գործի քննության ժամանակ է տեղեկացել Երևանի քաղաքապետի 27.03.2008 թվականի թիվ 1399-Ա որոշման առկայության մասին: Այսինքն՝ Գրիգոր Խաչերյանը Երևանի քաղաքապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում չէր կարող դիմել դատարան նշված որոշումը վիճարկելու պահանջով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի

---

Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածների ուժով Դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 24.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 10.08.2010 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու և հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

# Դատական ծախսերը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/2383/05/10

Վարչական գործ թիվ ՎԳ/2383/05/10  
2010թ.

Նախագահող դատավոր՝ Կ. Բաղդասարյան  
Դատավոր՝ Ա. Աբովյան  
Կ. Մաթևոսյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի հոկտեմբերի 20-ին,  
քննարկելով Սիրանուշ Մաքունցի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի  
09.08.2010 թվականի 'Բողոքը մերժելու մասին' որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործով կայացված դատական ակտի էությունը**

Սիրանուշ Մաքունցը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան  
ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր  
կատարումն ապահովող ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի  
ավագ հարկադիր կատարող Հայկ Դուկայանի՝ վերջինիս 02.06.2010 թվականի  
կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և նրան  
ՀՀ վարչական դատարանի կողմից 23.03.2010 թվականին տրված կատարողական  
թերթերի պահանջները կատարել պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի 19.07.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերա-  
դարձվել է:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.08.2010 թվականի որոշ-  
մամբ ՀՀ վարչական դատարանի 19.07.2010 թվականի որոշման դեմ Սիրանուշ Մա-



քունցի բողոքը մերժվել է, և ՀՀ վարչական դատարանի 19.07.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Չհամաձայնելով Դատարանի 09.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման հետ՝ դատավոր Ա. Արովյանը 09.08.2010 թվականին գրել է «Հատուկ կարծիք», որով գտել է, որ Սիրանուշ Սաքունցի բողոքը ենթակա է բավարարման, իսկ ՀՀ վարչական դատարանի 19.07.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը՝ վերացման:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սիրանուշ Սաքունցը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածները, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հերկյալ փաստարկներով.*

Դատարանը որոշմամբ պատճառաբանել է, որ ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով, այլ ոչ թե հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) վիճարկելու հայցերով, որոնց տարբերությունները կայանում է նրանում, որ առաջին դեպքում դիմումը ներկայացվում է վերադաս մարմնին, իսկ մյուս դեպքում հայցադիմում է ներկայացվում դատարան: Դատարանը նշել է նաև, որ Սիրանուշ Սաքունցը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որպիսի պարագայում վերջինս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով ազատված չէ պետական տուրքի վճարումից: Մինչդեռ Դատարանի նման եզրահանգումը չի բխում որևէ իրավական նորմից, քանի որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը հարկադիր կատարողի գործողությունները վերադասության կարգով բողոքարկելու հետ որևէ առնչություն չունի, այլ վերաբերում է դատարաններում պետական տուրքի գծով արտոնություններին, հետևաբար նշված հոդվածում «գանգատարկել» հասկացությունն ըստ էության նույնական է «վիճարկել» հասկացությանը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Դատարանի 09.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 19.07.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է հերկյալ պարզապես անհիմն.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

---

մասին եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ **դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են** ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բաց թողնված ժամկետները վերականգնելու, **ինչպես նաև հարկադիր կատարողների գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով:**

Սույն գործով ՀՀ վարչական դատարանը 19.07.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է այն պատճառաբանությամբ, որ ներկայացված հայցադիմումին կցված չեն սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթերը և բացակայում է օրենքով նախատեսված պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանը 09.08.2010 թվականի որոշմամբ Սիրանուշ Սաքունցի բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով, այլ ոչ թե հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) վիճարկելու հայցերով, որոնց տարբերությունը կայանում է նրանում, որ առաջին դեպքում դիմումը ներկայացվում է վերադաս մարմնին, իսկ մյուս դեպքում հայցադիմումում է ներկայացվում դատարան: Այնուհետև Դատարանը նշել է նաև, որ Սիրանուշ Սաքունցը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որպիսի պարագայում վերջինս «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի հիմքով ազատված չէ պետական տուրքի վճարումից:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը սխալ է մեկնաբանել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետը, որը մասնավորապես հարկադիր կատարողների գործողությունները դատարաններում գանգատարկելու վերաբերյալ դիմումներով ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար նախատեսում է արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու տեսքով: Նշված հոդվածը թվարկում է այն դեպքերը, երբ գործում է դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնությունը: Մասնավորապես, այդ հոդվածից բխում է, որ հարկադիր կատարողի գործողությունները, որոնք կարող են դրսևորվել և ակտիվ, այդ թվում նաև ուղղված վարչական ակտի ընդունմանը, և պասիվ եղանակով, ինչպես օրինակ անգործության դեպքում, կարող են գանգատարկվել, որը հենց նույն է, թե վիճարկվել դատական կարգով՝ առանց պետական տուրք վճարելու պարտավորության:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի վերոնշյալ մեկնաբանությունը բխում է նաև նույն օրենքի այլ հոդվածների համալիր վերլուծությունից: Մասնավորապես, նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն **վերադատության, ինչպես նաև դատական կարգով գանգատարկել** պետական տուրք գանձող մարմնի կամ պաշտոնատար

անձանց գործողությունները, 41-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը գանձելիս համապատասխան ծառայություններ կամ գործողություններ իրականացնող պաշտոնատար անձանց **գործողությունները կարող են գանգատարկվել այն մարմին, որին անմիջականորեն ենթարկվում են այդ անձինք, կամ դատարան:**

Վերոնշյալից հետևում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իմաստով գանգատարկումը վերաբերում է ինչպես վերադատությանը, այնպես էլ դատական կարգին, իսկ 22-րդ հոդվածի «թ» կետը կարգավորում է դատական կարգով հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու դեպքում պետական տուրքի արտոնության հետ կապված հարաբերությունները:

Հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհին է Դատարանի այն պատճառաբանությունը, որ ֆիզիկական անձինք ազատված են պետական տուրքի վճարումից հարկադիր կատարողի գործողությունները գանգատարկելու վերաբերյալ դիմումներով, այլ ոչ թե հարկադիր կատարողի գործողությունները (որոշումները) վիճարկելու հայցերով, որոնց տարբերությունը կայանում է նրանում, որ առաջին դեպքում դիմումը ներկայացվում է վերադաս մարմնին, իսկ մյուս դեպքում հայցադիմում է ներկայացվում դատարան:

Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ ՀՀ վարչական դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը պետք է լուծեր Կոնվենցիայով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի լույսի ներքո:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքնության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը, իսկ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել Դատարանի 09.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 19.07.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԳ/2648/05/10

Վարչական գործ թիվ ՎԳ/2648/05/10  
2010թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Միրզոյան  
Դատավորներ՝ Լ. Սոսյան  
Ա. Աբովյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի նոյեմբերի 30-ին,  
քննարկելով Գոհար Կարապետյանի, Ռուբեն և Արփի Կարապետյանների ներկայացուցիչ Ռուդոլֆ Հունանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի 18.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Գոհար Կարապետյանը, Ռուբեն և Արփի Կարապետյանները հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Կենտրոն» տարածքային ստորաբաժանման (այսուհետ՝ Կադաստր) բնակարանի հատակագծում թույլ տրված սխալների մասով Կադաստրի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք 16.06.1998 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման Կ4-2 մատյանի թիվ 000086 գրանցման թերթիկում և թիվ 009425 սեփականության իրավունքի գրանցման վկայականում համապատասխան ուղղումներ կատարելուն, դրանք փաստացի իրավիճակի և հատակագծային մակերեսների հետ համապատասխանեցնելուն պարտավորեցնելու պահանջների մասին՝ միաժամանակ միջնորդելով պետական տուրքի վճարումը տարածամկետել և լուծել վճռով:

ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը տարածամկետելու մասին միջնորդությունը մերժվել է, և հայցադիմումը՝ վերադարձվել:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 18.08.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի որոշման դեմ Գոհար Կարազյոզյանի, Ռուբեն և Արփի Կարապետյանների ներկայացուցչի բողոքը մերժվել է:

Սույն գործով վճարել բողոք է ներկայացրել Գոհար Կարազյոզյանի, Ռուբեն և Արփի Կարապետյանների ներկայացուցիչը:

Վճարել բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, 21-րդ հոդվածի «դ» կետը, որոնք պետք է կիրառել:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը հաշվի չի առել, որ հայցվորները միջնորդել են հետաձգել պետական տուրքի վճարումը և այդ հարցին անդրադառնալ վճռով, քանի որ չաշխատելու պատճառով գտնվում են նյութական ծանր պայմաններում: Հետևաբար, Դատարանը պարտավոր էր սույն գործով առաջնորդվել անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և պահպանել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում իրականացնել այն: Այդ հանգամանքը պետք է պարտավորեցնել Դատարանին իր հայեցողական լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից, ինչը տվյալ դեպքում չի արվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Դատարանի 18.08.2010 թվականի որոշումը:

## **3. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննարկելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարել դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ պետա-

---

կան տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն **իրավունք ունեն** դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող է սահմանվել **պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու արտոնություն:**

Վճարել դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է պետական տուրքի վճարումը հետաձգելու հարցերին՝ արձանագրելով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության տեսանկյունից երբեք չի բացատել, որ կարող են լինել դեպքեր, երբ արդարադատության շահերից ելնելով անհրաժեշտ լինի ֆինանսական սահմանափակումներ կիրառել դատարան դիմելու՝ անհատների իրավունքների նկատմամբ (տե՛ս Տոլստոյ-Միլոսավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, կետ 61): Միաժամանակ Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան դիմելու արդյունավետ իրավունքի երաշխավորումը չի նշանակում ընդամենը միջամտության բացակայություն, այլ կարող է պահանջել, որ պետությունը ձեռնարկի որոշակի դրական քայլեր այդ ուղղությամբ... (տե՛ս Էյրին ընդդեմ Իռլանդիայի Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը, կետ 25): Եվրոպական Դատարանը նշել է նաև, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին: Այնուամենայնիվ, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ՝ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար՝ անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե՛ ոչ (տե՛ս Պողբիելսկին և ՊՊՈ Պոլպուրն ընդդեմ Լեհաստանի Եվրոպական դատարանի 26.07.2005 թվականի վճիռը, պարբ. 65, «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, կետեր 45, 48):

Վերոնշյալի հիման վրա Վճարել դատարանը գտել է, որ պետական տուրքի գծով արտոնությունները, այդ թվում՝ դրա տարաժամկետումը կամ վճարման հետաձգումը նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորում են անձի մտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու, վերադաս ատյան բողոք ներկայացնելու անհնարիւթությունը:

Այդ նպատակից ելնելով՝ օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար առավել լայն հայեցողական լիազորություն է սահմանել պետական տուրքի վճարումը տարաժամկետելու կամ հետաձգելու հարցում: Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որ-

պես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը (լրեն ըստ հայցի Դավիթ Սասկյանի ընդդեմ Լյուսա Սահակյանի, Սեդա Սահակյանի, Երևանի կենտրոնական նուրարական գրասենյակի նուրար Էմմա Շարոյանի, երրորդ անձանց՝ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն ստորևթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի փարածքային արորարածանման՝ ժառանգության վկայագիրն անվավեր ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.05.2009 թվականի թիվ ԵԲԳ/0820/02/08 որոշումը):

ՀՀ վարչական դատարանը որոշման կայացման հիմքում դրել է այն հանգամանքը, որ հայցվորները չեն ներկայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու համար հիմք հանդիսացող իրենց գույքային դրության վերաբերյալ որևէ ապացույց, իսկ Դատարանը բողոքը մերժելիս գտել է, որ ՀՀ վարչական դատարանի որոշումն իրավաչափ է և կայացվել է օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցադիմումին կից միջնորդությամբ Գոհար Կարապետյանը, Ռուբեն և Արվի Կարապետյանները խնդրել են տարածամկետել պետական տուրքի վճարումը և այն լուծել վճռով՝ հաշվի առնելով, որ ներկայումս չեն աշխատում և գտնվում են նյութական ծանր պայմաններում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճարելի դատարանը գտնում է, որ Դատարանը ՀՀ վարչական դատարանի որոշման իրավաչափությունը ստուգելիս պարտավոր էր պարզել, թե սույն գործով ՀՀ վարչական դատարանն առաջնորդվել է արդյոք անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելել է այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից: Այդ հանգամանքը պարտավորեցնում է վերջինիս իր հայեցողական լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից:

ՀՀ վարչական դատարանի կողմից հայեցողական լիազորությունների վերոնշյալ ձևով իրականացումը սույն գործով պետք է դրսևորվեր՝ հայց ներկայացնելու պահին պետական տուրք վճարելու հնարավորության բացակայությունը պարզելու ուղղությամբ որոշակի գործողություններ իրականացնելով՝ տվյալ դեպքում հայցվորներին հնարավորություն ընձեռելով ներկայացնելու միջնորդությունը հիմնավորող ապացույցներ: Մինչդեռ, ՀՀ վարչական դատարանը հայցվորներին նման հնարավորություն չի տվել, իսկ Դատարանն էլ իր հերթին, հաշվի չառնելով վերոհիշյալ հանգամանքը, մերժել է բողոքը:

Ինչ վերաբերում է Դատարանի այն պատճառաբանությանը, որ Դատարանը չի քննարկում բողոքը՝ «Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու» մասով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթից ակնհայտ է, որ որոշումն այդ մասով բողոքարկման ենթակա չէ, վարչական դատարանը՝ 3 դատավորի կազմով, «Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու» մասով բողոքը քննարկելու իրավասություն չունի, քանի որ սույն հոդվածի 1-ին մասով՝ դատարանի համար նման իրավունք սահմանված չէ, ապա Վճարելի դատարանը գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ .

---

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն ներկայացվել սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթեր, իսկ այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն՝ բացակայում է դրա վերաբերյալ միջնորդությունը, կամ նման միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը՝ 3 դատավորի կազմով, քննում է վարչական դատարանի կայացրած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքները:

Վերոնշյալ նորմերից հետևում է, որ այն դեպքերում, երբ հայցադիմումի վերադարձման հիմք է միայն պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդության մերժումը, և այդ որոշման դեմ ներկայացվել է բողոք, ապա վարչական դատարանի կողմից 3 դատավորի կազմով բողոքի քննության առարկան պետք է լինի նման միջնորդության մերժման հետևանքով հայցադիմումի վերադարձը: Հետևաբար, Դատարանը 3 դատավորի կազմով բողոքի քննության ժամանակ պետք է քննարկման առարկա դարձնեք ներկայացված միջնորդության հիմնավորվածությունը, քանի որ տվյալ դեպքում չի կարող հայցադիմումի վերադարձի օրինակնությունը գնահատվել առանց դրա հիմքը կազմող միջնորդությունը քննարկելու: Այդ դիրքորոշումը բխում է նաև անձի՝ դատարանի մատչելիության սահմանադրական սկզբունքից, քանի որ բողոքի՝ միջնորդության հիմնավորվածության մասը քննարկման առարկա չդարձվելու դեպքում ֆինանսական սահմանափակումների պատճառով անձի՝ դատարան դիմելու իրավունքի ապահովման մեխանիզմներն արդյունավետ չեն կարող համարվել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 18.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/2654/05/10

Վարչական գործ թիվ ՎԴ/2654/05/10  
2010թ.

Նախագահող դատավոր՝ Լ. Սոսյան  
Դատավորներ՝ Ա. Սարգսյան  
Ա. Միրզոյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 22-ին,  
քննարկելով ըստ հայցի Գայանե Մելիկյանի ընդդեմ ՀՀ կառավարության՝ Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 23.03.1950 թվականի թիվ 5 արձանագրության տեսքով վարչական ակտը՝ 284-Ա հողամասի մասով, մասնակի առ ոչինչ ձանաչելու և որպես հետևանք՝ այն 284-Դ հողամասով փոխարինելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 31.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Գայանե Մելիկյանի ներկայացուցիչ Ռուդոլֆ Հունանյանի բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Գայանե Մելիկյանը պահանջել է Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 23.03.1950 թվականի թիվ 5 արձանագրության տեսքով վարչական ակտը՝ 284-Ա հողամասի մասով, մասնակի ձանաչել առ ոչինչ և որպես հետևանք՝ այն փոխարինել 284-Դ հողամասով: Միաժամանակ, Գայանե Մելիկյանը միջնորդել է հետաձգել պետական տուրքի վճարման ժամկետը:

ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի որոշմամբ Գայանե Մելիկյան-

---

նի միջնորդությունը մերժվել է, իսկ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը վերադարձվել են:

ՀՀ վարչական դատարանի 18.08.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Գայանե Մելկույանի բերած բողոքը վերադարձվել է: Միաժամանակ, բողոքը ներկայացնելու ընթացակարգի հետ կապված թերությունը վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար սահմանվել է ժամկետ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 31.08.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Գայանե Մելկույանի բերած բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Գայանե Մելկույանի ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «դ» ենթակետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանն անտեսել է, որ Գայանե Մելկույանը միջնորդել է հետաձգել պետական տուրքի վճարումը և այդ հարցին անդրադառնալ վճռով: Նման պայմաններում Դատարանը պարտավոր էր առաջնորդվել անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և այդ իրավունքը պահպանել ոչ միայն տեսականորեն, այլ նաև իրականացնել գործնականում: Նշված հանգամանքը պարտավորեցնում է դատարանին իր հայեցողական լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից, ինչը տվյալ դեպքում չի արվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել» և «վերանայել» Դատարանի 31.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության

պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են **«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն ... դիմել համապատասխան պետական մարմիններ՝ **պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար ...:**

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «դ» ենթակետի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ **պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում:**

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներով արդեն իսկ անդրադարձել է պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման հարցին: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության տեսանկյունից Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) երբեք չի բացառել, որ կարող են լինել դեպքեր, երբ արդարադատության շահերից ելնելով՝ անհրաժեշտ լինի ֆինանսական սահմանափակումներ կիրառել դատարան դիմելու՝ անհատների իրավունքների նկատմամբ (տե՛ս՝ Տոլստոյ-Միլոսավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության, Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը): Միաժամանակ, Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան դիմելու արդյունավետ իրավունքի երաշխավորումը չի նշանակում ընդամենը միջամտության բացակայություն, այլ կարող է պահանջել, որ պետությունը ձեռնարկի որոշակի դրական քայլեր այդ ուղղությամբ (տե՛ս՝ Էյրին ընդդեմ Իռլանդիայի, Եվրոպական դատարանի 09.10.1979 թվականի վճիռը): Բացի այդ, Եվրոպական դատարանը հաշվի է առնում այն դեպքերը, երբ ներպետական օրենսդրությամբ դատական տուրքերից ազատելու որոշումը ցանկացած ժամանակ կարող է չեղյալ հայտարարվել դատարանների կողմից, եթե ազատելու համար հիմք հանդիսացած հանգամանքները դադարում են գոյություն ունենալուց, կամ երբ դիմողին դատավարության սկզբնական փուլում հայց ներկայացնելու հնարավորությունը դատարաններին չի զրկում հետագա ցանկացած փուլում դիմողի ֆինանսական դրությունը բարելավվելու դեպքում վերջինից դատական տուրք զանձելու հնարավորությունից (տե՛ս՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 16.06.2001 թվականի վճիռը): Եվրոպական դատարանը նշում է նաև, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկ-

---

վել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին: Այնուամենայնիվ, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար՝ անձն օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե՛ ոչ (տե՛ս՝ *Պոդբիելսկին և ՊՊՈ Պոլպուրն ընդդեմ Լեհաստանի*, թիվ 39199/98, 26.07.2005 թվական, «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, 20.12.2007 թվական, գանգատ թիվ 21638/2003): Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական տուրքի գծով արտոնությունները, այդ թվում՝ դրա տարածամկետումը կամ վճարման հետաձգումը, նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորում են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարան դիմելու, վերադաս ատյան բողոք ներկայացնելու անհնարինությունը: Այդ նպատակից ելնելով՝ օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար առավել լայն հայեցողական լիազորություն է սահմանել պետական տուրքի վճարումը տարածամկետելու կամ հետաձգելու հարցում: Վերջինս պայմանավորված է դատարանի դերով՝ որպես արդարադատություն իրականացնող մարմնի, որը միաժամանակ պետք է ապահովի անձի արդարադատության մատչելիության իրավունքը (*յրե՛ս՝ Դավիթ Սասկյանն ընդդեմ Լյուսա Սահակյանի, Սեդա Սահակյանի, Երևանի կենտրոնական նուրարական գրասենյակի նուրար Էմմա Շաբոյանի, երրորդ անձանց՝ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիրի տարածքային սրարարածամանն՝ ժառանգության վկայագիրն անվավեր ճանաչելու, ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին Վճռաբեկ դարարանի 05.05.2009 թվականի որոշումը, քաղաքացիական գործ թիվ ԵԲԳ/0820/02/08*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Գայանե Մելկունյանը հայցադիմումին կից ներկայացրել է միջնորդություն, որով խնդրել է հետաձգել պետական տուրքի վճարման ժամկետը՝ պատճառաբանելով, որ ներկայումս չի աշխատում: ՀՀ վարչական դատարանը 02.08.2010 թվականի որոշմամբ Գայանե Մելկունյանի նշված միջնորդությունը մերժել է, իսկ հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը վերադարձրել է վերջինիս այն պատճառաբանությամբ, որ նա միջնորդությամբ չի ներկայացրել պետական տուրքի վճարումը հետաձգելու համար հիմք հանդիսացող որևէ հիմնավորում, այն է՝ գույքային դրության վերաբերյալ ապացույց:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատարանը սույն գործով առաջին հերթին պետք է առաջնորդվեր անձի արդարադատության մատչելիության ապահովման սկզբունքով և ելնել այդ իրավունքը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում ապահովելու նպատակից: Նշված հանգամանքը պարտավորեցնում է դատարանին իր հայեցողական լիազորություններն իրականացնել՝ ելնելով անձի հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման գերակայությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ

և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 28.10.2010 թվականի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վճարել բողոքը բավարարելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճարել բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 31.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 02.08.2010 թվականի «Պետական տուրքի վճարման ժամկետը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/1040/05/12  
2012թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/1040/05/12

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Գ. Ղարիբյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴԻՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի օգոստոսի 22-ին,

քննարկելով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.05.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Ծառայության ընդդեմ Ռուբեն Մայիլյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, և հակընդդեմ հայցի՝ 15.01.2010 թվականի ԱԲ թիվ 397234 վարչական ակտը վերացնելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ծառայությունը պահանջել է Ռուբեն Մայիլյանից 10.000 ՀՀ դրամ բռնագանձելու վերաբերյալ արձակել վճարման կարգադրություն:

ՀՀ վարչական դատարանը 24.05.2010 թվականին արձակել է վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ռուբեն Մայիլյանը պահանջել է վերացնել Ծառայության 15.01.2010 թվականի ԱԲ թիվ 397234 վարչական ակտը:

ՀՀ վարչական դատարանի 27.02.2012 թվականի որոշմամբ վճարման կարգադրության վարույթից անցում է կատարվել հայցային վարույթի:

Գործի քննության ընթացքում Ծառայությունը հայցից հրաժարվել է՝ սկստի ունենալով, որ Ռուբեն Մայիլյանը սահմանված ժամկետում վճարել է վարչական տուգանքի գումարը:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ռ. Մարգարյան, այսուհետ՝ Դատարան) 27.03.2012 թվականի վճռով վարչական գործի վարույթը կարճվել է: Միաժամանակ որոշվել է Ծառայությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 1.500 ՀՀ դրամ որպես հայց ներկայացնելու համար չվճարված պետական տուրքի գումար:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2012 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը վերադարձվել է՝ հակընդդեմ հայցի մասով վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրք վճարված և պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու միջնորդություն ներկայացված չլինելու հիմքով: Միաժամանակ արձանագրվել է բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու պարագայում որոշումն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում վերաքննիչ բողոք կրկին ներկայացնելու հնարավորություն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետը, 2-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ անկախ հակընդդեմ հայցի բնույթից և բովանդակությունից անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթից, որով, հետևաբար նաև դրա դեմ վերաքննիչ բողոքով բողոք բերած անձն ազատված է պետական տուրքի վճարումից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 10.05.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարզապարզություններով.*

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «իբ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են դիմողները՝ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է վճարման կարգադրության վարույթից հայցային վարույթի անցնելու պարագայում հայցվորի կողմից պետական տուրքի վճարման հարցին և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վճարման կարգադրություններ արձակելու մասին դիմումներով դիմող-

---

ներն ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից, իսկ անցումը հայցային վարույթի կատարվում է վճարման կարգադրության վարույթում հակընդդեմ հայց ներկայացնելու հիմքով, արձանագրել է, որ տվյալ դեպքում հայցային վարույթը վճարման կարգադրության վարույթի շարունակությունն է, հետևաբար, այդ դեպքում նույնպես արդեն իսկ հայցվորի կարգավիճակ ստացած անձը չի կարող կրել պետական տուրքի վճարման պարտականություն (*տե՛ս ըստ Ծառայության հայցի ընդդեմ Գաբելահին Գալոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.07.2011 թվականի թիվ ՎԴ6/0035/05/10 որոշումը*):

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելը պատճառաբանել է նրանով, որ Ծառայության կողմից բողոքարկվել է Դատարանի 27.03.2012 թվականի վճիռն ամբողջությամբ, որով լուծում է տրվել նաև հակընդդեմ հայցին, իսկ նշված պահանջի մասով Ծառայությունը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով ազատված չէ բողոք բերելու համար պետական տուրքի վճարումից:

Մինչդեռ վերաքննիչ բողոքով Ծառայությունը պահանջել է բեկանել Դատարանի 27.03.2012 թվականի վճիռ՝ Ծառայությունից պետական բյուջե 1.500 ՀՀ դրամ բռնագանձելու մասը և այն փոփոխել՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձն ազատված է տույն գործով հայցի համար սահմանված պետական տուրքի վճարումից: Հետևաբար, նկատի ունենալով, որ բողոք բերած անձը Դատարանի վճիռը բողոքարկել է ոչ թե ամբողջությամբ, այլ հայց ներկայացնելու համար իր նկատմամբ պետական տուրքի վճարման պարտականություն դնելու մասով, ապա վերջինս օրենքի ուժով ազատված է նաև Դատարանի վճիռի նշված մասի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի վճարման պարտականությունից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.15-րդ, 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 10.05.2012 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*



# ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՈՒԾՈՒՄԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

## Գործ հարուցելու հիմքը և հայցի տեսակները ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՈՒԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/2298/05/10

Վարչական գործ թիվ ՎԳ/2298/05/10  
2010թ.

Նախագահող դատավոր՝ Ա. Աբովյան  
Դատավորներ՝ Լ. Սոսյան  
Ռ. Սարգսյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2010 թվականի դեկտեմբերի 06-ին  
քննարկելով Երևանի «Գլաձոր» համալսարան ուսումնաարտադրական կոո-  
պերատիվի (այսուհետ՝ Համալսարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական դատարանի  
03.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ,

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Համալսարանը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ կրթության և  
գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Նախարարության՝ պե-  
տական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապված հարաբերու-  
թյուններում հավատարմագրման պահանջի շրջանցման գործողությունները (անգոր-  
ծությունը), Համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ»  
մասնագիտությունների գծով հավատարմագրում չիրականացնելու հետ կապված գոր-

---

ծողությունները (անգործությունը) ոչ իրավաչափ ճանաչելու և «Հայոց լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ» մասնագիտությունների գծով հավատարմագրում կազմակերպելուն Նախարարությանը պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի 09.07.2010 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.08.2010 թվականի որոշմամբ Համալսարանի բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համալսարանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, 13-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 8-րդ, 68-րդ, 79-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը, արձանագրելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի սահմանափակումը չի տարածվում նույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան ներկայացված հայցատեսակի վրա, չի փաստել, որ ՀՀ վարչական դատարանը չէր կարող հայցադիմումի ընդունումը մերժել: Մասն ապայմաններում Դատարանն անտեսել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասն 1-ին մասի հետ որևէ կապ չունի, և այդ մասով որևէ սահմանափակում առկա չէ:

Դատարանը, մերժելով հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքը, բողոք բերած անձին գրկել է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Դատարանի 03.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված

ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (Տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու՝ այն է քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (Տես՝ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland), թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, Զ-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (Z. and Others v. The United Kingdom), թիվ 29392/95, 91-93-րդ կետեր):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով,

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն,

---

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝

1. ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:

2. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու վարչական ակտն առ ոչինչ լինելը:

3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ, 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ 3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ անձի դատարան դիմելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով: Ընդ որում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ճանաչման հայցով դատարան դիմելու իրավունքը կարող է սահմանափակվել, եթե անձն ունի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-67-րդ հոդվածներով նախատեսված վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց ներկայացնելու հնարավորություն: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված ճանաչման հայց ներկայացնելու համար որևէ սահմանափակում նախատեսված չէ:

Սույն գործով Համալսարանը հայցադիմում է ներկայացրել պահանջելով՝

1. Նախարարության՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապված հարաբերություններում հավատարմագրման պահանջի շրջանցման գործողությունները (անգործությունը) ճանաչել ոչ իրավաչափ,

2. Նախարարության՝ Համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ» մասնագիտությունների գծով հավատարմագրում չիրականացնելու հետ կապված գործողությունները (անգործությունը) ճանաչել ոչ իրավաչափ,

3. վերացնել Նախարարության անգործության հետևանքները՝ պարտավորեցնելով վերջինիս անհապաղ կազմակերպել Համալսարանի «Հայոց լեզու և գրականություն» և «Թարգմանչական գործ» մասնագիտությունների գծով հավատարմագրումը:

Դատարանը բողոքը մերժելով՝ նշել է, որ այն իր ձևակերպմամբ չի համապատասխանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորմանը: Միաժամանակ Դատարանը գտել է, որ եթե հայցվորն ունի տվյալ իրավահարաբերության կապակցությամբ իր շահերն ու իրավունքները պաշտպանելու համար վիճարկման, պարտավորեցման կամ գործողության կատարման հայց ներկայացնելու հնարավորություն, սպա նա պետք է ներկայացնի տվյալ հայցը և ոչ թե ճանաչման իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու մասին հայցը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված ձանաչման հայցը վերաբերում է վարչական մարմնի գործությունը ոչ իրավաչափ ձանաչելուն, որի ներկայացման իրավական հնարավորությունը նախատեսված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ նշված մասով հայց ներկայացնելու դեպքում նույն հոդվածի 1-ին մասի սահմանափակումը չի տարածվում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի համաձայն, Դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 03.08.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 09.07.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

# Հայցադիմում ընդունելը, հայցադիմում վերադարձնելը, հայցադիմումի ընդունումը մերժելը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/4556/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ ՎԳ/4556/05/10  
2011թ.

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությանը  
մասնակցությանը դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հունիսի 27-ին,

քննարկելով Ֆահրադ, Հակոբ Ափուջանյանների, Գյուլվարդ Համբարյանի, Թեհմինե Դունամալյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.03.2011 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ, ըստ հայցի Ֆահրադ, Հակոբ Ափուջանյանների, Գյուլվարդ Համբարյանի, Թեհմինե Դունամալյանի, Արամազդ և Արամ Ափուջանյանների օրինական ներկայացուցիչներ Հակոբ Ափուջանյանի, Թեհմինե Դունամալյանի ընդդեմ Ադետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ 05.10.2010 թվականի որոշումը Ֆահրադ Ափուջանյանին, նրա ընտանիքի անդամներ Գյուլվարդ Համբարյանին, Հակոբ Ափուջանյանին, Թեհմինե Դունամալյանին, Արամազդ և Արամ Ափուջանյաններին Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքի «Վարպետաց» թաղամասում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում չընդգրկելու մասով անվավեր ճանաչելու և բնակարան հատկացնելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ ընդունելուն Հանձնաժողովին պարտավորեցնելու պահանջների մասին,

## **ՊԱՐԶԵՑ**

### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ֆահրադ, Հակոբ Ափուջանյանները, Գյուլվարդ Համբարյանը, Թեհմինե Դունամալյանը, Արամագոյն և Արամ Ափուջանյանների օրինական ներկայացուցիչներ Հակոբ Ափուջանյանը, Թեհմինե Դունամալյանը պահանջել են Սպիտակ քաղաքի «Վարպետաց» թաղամասում կառուցված բնակելի տներից տուն ստացողների ցուցակում իրենց չընդգրկելու մասով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 05.10.2010 թվականի որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 15.12.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

30.12.2010 թվականին դիմելով դատարան՝ Ֆահրադ, Հակոբ Ափուջանյանները, Գյուլվարդ Համբարյանը, Թեհմինե Դունամալյանը, Արամագոյն և Արամ Ափուջանյանների օրինական ներկայացուցիչներ Հակոբ Ափուջանյանը, Թեհմինե Դունամալյանը պահանջել են նաև պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունելու բնակարան հատկացնելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.01.2011 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.03.2011 թվականի որոշմամբ հայցվորների ներկայացուցիչ Ռոբերտ Պողոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.01.2011 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվորների ներկայացուցիչ Ռոբերտ Պողոսյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 77-րդ հոդվածը, չի կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, սխալ է մեկնաբանել ՀՀ Կառավարության 26.11.2009 թվականի թիվ 1402-Ն որոշման 6-րդ կետը, ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գտել է, որ Հանձնաժողովի 05.10.2010 թվականի թիվ 20 արձանագրությամբ կայացված որոշումը եզրափակիչ ակտ չէ և այն նպատակամղված է վարչական ակտի ընդունմանը: Վերաքննիչ դատարանը նման եզրահանգման է եկել ՀՀ Կառավարության 26.11.2009 թվականի թիվ 1402-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի մեկնաբանման արդյունքում: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ այն ընտանիքների համար, որոնց վերաբերյալ Հանձնաժողովը կայացրել է որոշում՝ ցուցակում չընդգրկելու մասին, հարուցված վարչական վարույթն ավարտվում, եզրափակվում է Հանձնաժողովի որոշմամբ, քանի որ Հանձնաժողովի ընդունված որոշումը ՀՀ քա-

---

դաքաշինության նախարարի կողմից որևէ գնահատականի չի արժանացել, այսինքն՝ Հանձնաժողովի որոշմամբ եզրափակվել է հարուցված վարչական վարույթը: Հետևաբար, նշված անձանց համար Հանձնաժողովի որոշումն այն վերջնական վարչական ակտն է, որի արդյունքում նրանք ընկնում են ոչ բարենպաստ դրության մեջ:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ կրկին անգամ ներկայացված հայցադիմումը չի կարող պարունակել այլ պահանջ, որը ներկայացված չի եղել նախապես նարկայացված հայցադիմումում: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ նման սահմանափակում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.03.2011 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով վարչական մարմինները բնորոշվում են որպես Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ, իսկ վարչարարությունը՝ որպես վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործունեություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Նույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Նույն մասի «բ» կետի համաձայն՝ միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

ՀՀ Կառավարության 26.11.2009 թվականի «Ադետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների)



հատկացման հարցերով հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1402-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի» կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) **համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաստատված՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող՝ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած քաղաքացիների ցուցակում (այսուհետ՝ հերթացուցակ) ընդգրկված անձանց հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին համապատասխանության մասին որոշումը** և հերթացուցակում ընդգրկված անձանց հետ հանդիպումները.

2) բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց մշտական բնակության և նրանց սեփականության իրավունքով պատկանող բնակարանի (բնակելի տան) առկայության մասին Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ տեղեկատվությունը ձշտելու նպատակով հարցումների իրականացումը.

3) հատկացվող բնակարանի (բնակելի տան) չափի (սենյակների թվով) որոշումը.

4) **բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալու հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի հրամանի նախագծի նախապատրաստումը.**

5) Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին համապատասխան մարզպետներին և քաղաքացիներին իրազեկելը.

6) վիճակահանությամբ բնակարանների բաշխման գործընթացի կազմակերպումը.

7) այլ անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հանձնաժողովի կողմից անձի նկատմամբ հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանելու մասին որոշում կայացվելու դեպքում անձը համարվում է բնակարան (բնակելի տուն) ստանալուն չհավակնող, ինչից հետևում է, որ նման որոշումն իրենից ներկայացնում է միջամտող վարչական ակտ, որով ավարտվում է անձի նկատմամբ հարուցված վարչական վարույթը, քանի որ դրա միջոցով Հանձնաժողովը մերժում է անձի՝ բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնելու իրավունքի իրականացումը: Դրան հակառակ բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնող անձի դեպքում նրա նկատմամբ հարուցված վարչական վարույթն ավարտվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից բնակարանների (բնակելի տների) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին հրամանի կայացմամբ:

Այսինքն՝ Կանոնակարգը նախատեսում է վարչական վարույթի ավարտման երկու հնարավորություն, որոնցից մեկի արդյունքում ընդունվում է միջամտող վարչական ակտ՝ **հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանելու մասին որոշում**, իսկ մյուսի արդյունքում **բարենպաստ վարչական ակտ՝ բնակարանների (բնակելի տների) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին հրաման:**

---

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումները, որ Հանձնաժողովի 05.10.2010 թվականի թիվ 20 արձանագրությամբ կայացրած որոշմամբ պայմանավորված հանրային սուբյեկտիվ իրավունքի խախտման պնդումը հիմնավոր չէ, քանի որ նշված որոշման կայացմամբ հարուցված վարչական վարույթը չի եզրափակվել: Նշված արձանագրությամբ կայացված որոշումն ընդամենը վարչական վարույթի ընթացիկ փուլում իրականացված գործողություն է և նպատակամղված է վարչական ակտի ընդունմանը: Աղետի գոտում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տները հատկացնում է ՀՀ քաղաքաշինության նախարարը, իսկ Հանձնաժողովը նախապատրաստում է բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանի նախագիծ, ինչից հետևում է, որ վարչական վարույթը եզրափակվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ բնակարանների (բնակելի տների) ստանալուն հավակնող անձանց ցուցակի հաստատման մասին ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը, հետևաբար նաև այդ հրամանի կայացմամբ վարչական վարույթի ավարտը, վերաբերում է բացառապես բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնող անձանց, իսկ բնակարան (բնակելի տուն) ստանալուն չհավակնող անձանց մատվ վարչական վարույթն ավարտվում է հերթացուցակում ընդգրկվելու չափանիշներին չհամապատասխանելու մասին Հանձնաժողովի որոշման կայացմամբ, քանի որ այդ որոշման միջոցով Հանձնաժողովը մերժում է անձանց՝ բնակարան (բնակելի տուն) ստանալուն հավակնելու իրավունքի իրականացումը, հետևաբար նաև նրանց նկատմամբ ՀՀ քաղաքաշինության նախարարի նշված որոշման կայացման հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հանձնաժողովի 05.10.2010 թվականի թիվ 20 արձանագրությամբ կայացրած որոշումը պարունակում է վարչական ակտի բոլոր վավերապայմանները:

Մասնավորապես՝ այն՝

1) ունի արտաքին ներգործություն, այն է՝ կարգավորում է վարչական մարմնի՝ Հանձնաժողովի և ֆիզիկական անձանց՝ Ֆահրադ Ափուջանյանի և նրա ընտանիքի անդամների միջև ծագած իրավահարաբերությունները,

2) անհատական իրավական ակտ է՝ դրա 1-ին հավելվածի 42-րդ կետն ուղղված է Ֆահրադ Ափուջանյանին և նրա ընտանիքի անդամներին,

3) ընդունվել է վարչական մարմնի՝ Հանձնաժողովի կողմից,

4) ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, այն է՝ կարգավորում է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման ոլորտում առաջացած իրավահարաբերությունները,

5) հետապնդում է կոնկրետ գործի կարգավորման նպատակ, այն է՝ կարգավորում է հայցվորների հերթացուցակում ընդգրկելու չափանիշներին համապատասխանության հարցը,

6) ուղղված է Ֆահրադ Ափուջանյանի և նրա ընտանիքի անդամների իրավունքների վերացմանը՝ բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանները (բնակելի տները) ստանալուն հավակնող անձանց ցուցակում չընդգրկելուն:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հանձնաժողովի 05.10.2010 թվականի թիվ 20 արձանագրությամբ կայացրած որոշումը որպես վարչական ակտ չորակելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն անհիմն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի խախտված լինելու հիմքով վճռաբեկ բողոք բերած անձի փաստարկը, հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքում բարձրացված իրավական հարցին պատասխանելու համար վճռաբեկ բողոքի շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձվեն հետևյալ հարցադրումները.

*Արդյո՞ք հայցադիմումը վերադարձնելուց հետո անձն իրավունք ունի թերությունները վերացնելու հետ միաժամանակ ավելացնել հայցապահանջը, և արդյո՞ք նշվածը հիմք է հայցադիմումի ընդունումը մերժելու համար:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մեծում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք չէ գործի քննության համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում, դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացվելու օրը:

Նշված հոդվածներից հետևում է, որ հայցադիմումը վերադարձնելու դեպքում դատարանը նշում է այն խախտումները, որոնք հիմք են հանդիսացել հայցադիմումը վերադարձնելու համար, որից հետո անձը նույն հայցադիմումի մեջ՝ դատարանի կողմից նշված խախտումները վերացնելու դեպքում իրավունք ունի այն կրկին ներկայացնել դատարան:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարական վերոնշյալ նորմը չի արգելում անձին հայցադիմումը վերադարձվելու դեպքում ներկայացնել նոր պահանջներով հայցադիմում:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումը վերադարձնելուց հետո անձն իրավունք ունի թերությունները վերացնելու հետ միաժամանակ ավելացնել հայցապահանջը և ներկայացնել հայցադիմում:

Անդրադառնալով երկրորդ իրավական հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ նշված իրավական հարցադրմանը պատասխանելու համար պետք է հիմք ընդունել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավական կարգավորումը: Նշված նորմով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք է այն դեպքը, երբ անձը ներկայացրել է նույն հայցադիմումը, սակայն չի վերացրել դատարանի կողմից մատնանշված և գործի քննության համար արգելք հանդիսացող թերությունները:

Հետևաբար, այն դեպքում, երբ անձը ներկայացնում է ավելացված պահանջով հայցադիմում, դատարանն իրավունք չունի հայցադիմումի ընդունումը մերժել ՀՀ վար-

---

չական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, քանի որ այդ կետը նշված իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չէ:

Սույն գործով Դատարանը, հայցադիմումի ընդունումը մերժելիս պատճառաբանել է, որ հայցվորները թույլ տված խախտումները վերացնելու փոխարեն հայցադիմումով ներկայացրել են նաև այլ պահանջ: Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ թերությունները վերացնելուց հետո դատարան պետք է ներկայացվի սկզբնապես ներկայացված հայցադիմումը, այլ ոչ թե սկզբնականից էականորեն տարբերվող նոր հայցադիմում ավելացնելով պահանջը: Կիրառելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Դատարանը մերժել է հայցադիմումի ընդունումը:

Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի վերոնշյալ պատճառաբանությունը՝ նշելով, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի կարգով ներկայացված հայցադիմումը կարող է պարունակել միայն այն պահանջը, որը ներկայացված է եղել նախապես:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով 30.12.2010 թվականին ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքը բացակայում է, քանի որ անձը խախտումները վերացնելու հետ միաժամանակ ավելացրել է պահանջը և ներկայացրել հայցադիմում, որի ընդունումը մերժելու հիմք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածը չի պարունակում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցվորի կողմից 09.12.2010 թվականին հայց ներկայացնելիս ձևական առումով չեն խախտվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ և 73-րդ հոդվածների՝ ՀՀ վարչական դատարանի կողմից մատնանշված պահանջները:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ, 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ, 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 03.03.2011 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 14.01.2011 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/1585/05/10

Վարչական գործ թիվ ՎԴ/1585/05/10  
2011թ.

Նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան  
Դատավորներ՝ Լ. Սոսյան  
Ա. Սարգսյան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի փետրվարի 02-ին,  
քննարկելով ՀՀ վարչական դատարանի 25.06.2010 թվականի «Բողոքը մերժելու  
մասին» որոշման դեմ Աշոտ Սաֆարյանի բերած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Աշոտ Սաֆարյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդ-  
դեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Քանաքեռ-  
Զեյթուն հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն), երրորդ անձ ՀՀ ֆինանսների  
նախարարության՝ ստուգման հանձնարարականի, ստուգման արդյունքում վարչական  
տուգանքի ենթարկելու մասին վարչական ակտի և նույն ակտի բողոքարկման արդյուն-  
քում ընդունված որոշման նկատմամբ ամբողջությամբ անվավերության հետևանք կի-  
րառելու և անհիմն վարչական տուգանքը վերացնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանի 18.05.2010 թվականի որոշմամբ հայցադիմումը վերա-  
դարձվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին  
և 3-րդ կետերի հիմքերով:

---

ՀՀ վարչական դատարանի 10.06.2010 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի հիմքերով:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.06.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 10.06.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Աշոտ Սաֆարյանի բերած բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Աշոտ Սաֆարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 5-րդ, 14.1-րդ, 18-րդ, 19-րդ, 27-րդ հոդվածները, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ, 8-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածը, «Պետական փորձի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կերը, ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ, 8-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ, 6-րդ հոդվածները, 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կերը, 65-րդ, 66-րդ, 72-րդ, 78-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանն Աշոտ Սաֆարյանի հայցադիմումի վարույթ ընդունելը մերժել է այն պատճառաբանությամբ, որ իբրև պարզ չէ, թե դրանով վերջինս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ գլխով նախատեսված որ հայցատեսակներն է ի նկատի ունեցել: Մինչդեռ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ և 78-րդ հոդվածներով հայցատեսակի անհասկանալի լինելը նախատեսված չէ որպես հայցադիմումը վերադարձնելու նախապայման: Բացի այդ, Դատարանը չի մատնանշել, թե Աշոտ Սաֆարյանը նշված հոդվածների կոնկրետ որ պահանջն է խախտել: Միաժամանակ, եթե որևէ հայցապահանջի բնույթը հստակ չէ, սակայն այդ գործն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին, ապա վերջինս իրավասու է հայցապահանջի կոնկրետ տեսակը հստակեցնել գործով նախնական լուսմների ժամանակ: Մասնավորապես՝ այդ նպատակով կողմին տրված է բացատրություններ տալու իրավունք, իսկ տվյալ դեպքում Դատարանն Աշոտ Սաֆարյանին դիրքորոշում հայտնելու համար չի տրամադրել լիարժեք հնարավորություն:

Նշվածի հետևանքով Դատարանը խախտել է Աշոտ Սաֆարյանի՝ խախտված իրավունքները վերականգնելու համար անկախ և անաչառ դատարանի կողմից արդարացի և հրապարակային քննության հիմնարար իրավունքը:

Դատարանն անտեսել է, որ անվավերության հետևանքի կիրառմամբ վարչական ակտի վիճարկումն ուղղակիորեն հանդիսանում է վիճարկման հայցատեսակ: Այսինքն՝ անվավերության հետևանքի կիրառման մասին պահանջը կիրառվում է վիճահարույց դեպքում և իրենից ներկայացնում է վիճարկում: Նմանապես վարչական ակտը վերաց-

նող նոր վարչական ակտի ընդունում պահանջելը հանդիսանում է պարտավորեցման հայցատեսակ:

Դատարանը հաշվի չի առել, որ դեռևս 18.05.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանն արդեն մեկ անգամ վերադարձրել էր Աշոտ Սաֆարյանի հայցադիմումը՝ պատճառաբանելով նաև, որ չի ներկայացվել պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական տուրքի վճարումը հետաձգելու, տարածամկետելու կամ նվազեցնելու մասին միջնորդություն: Մինչդեռ, Աշոտ Սաֆարյանի ներկայացրած հայցադիմումին կցված էր պետական տուրքի վճարումը հետաձգելու և գործի քննության արդյունքում հայցապահանջները բավարարելու դեպքում պետական տուրքի գումարը Տեսչությունից բռնագանձելու մասին միջնորդությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Դատարանի 25.06.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճարելի դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննարկելով վճարելի բողոքը նշված հիմքի սահմաններում Վճարելի դատարանը գրնում է, որ այն հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք ...:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ձանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության.

նույն օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի թերությունները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար:

---

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ վարչական դատարան դիմելու, հետևաբար նաև վարչական-դատավարական կարգով խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանություն իրականացնելու անձի իրավունքը բացարձակ բնույթ չունի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով այն կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որոնցով խաթարվի այդ իրավունքի, հետևաբար նաև արդարադատության բուն էությունը, քանի որ որևէ սահմանափակում անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե այդ նպատակի և գործադրվող միջոցների միջև առկա չէ ողջամիտ հավասարակշռված կապ:

Սույն գործով Դատարանը բողոքը մերժելու հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Աշոտ Սաֆարյանը չի պահանջում ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, այլ պահանջում է որոշման նկատմամբ ամբողջությամբ կիրառել անվավերության հետևանք, որպիսի պահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում վիճարկման հայց, իսկ ներկայացված մյուս պահանջով ոչ թե պահանջում է ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից կամ որը նա չի ընդունել, այլ՝ վերացնել անհիմն վարչական տուգանքը, որպիսի պահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում պարտավորեցման հայց: Այսպիսով, Աշոտ Սաֆարյանը չի վերացրել ՀՀ վարչական դատարանի 18.05.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ նշված՝ պահանջին վերաբերող հայցադիմումի թերությունները, իսկ նշված թերությունները չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի նշված պատճառաբանության հետևանքով Աշոտ Սաֆարյանը զրկվել է արդարության բոլոր պահանջների պահպանմամբ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության սահմանադրական իրավունքից:

Այսպես, Աշոտ Սաֆարյանը, դիմելով դատարան, պահանջել է ստուգման հանձնարարականի, ստուգման արդյունքում վարչական տուգանքի ենթարկելու մասին վարչական ակտի և նույն ակտի բողոքարկման արդյունքում ընդունված որոշման նկատմամբ ամբողջությամբ կիրառել անվավերության հետևանք և վերացնել անհիմն վարչական տուգանքը:

Այսինքն՝ Աշոտ Սաֆարյանն ըստ էության վիճարկել է վարչական մարմնի կողմից վարչական ակտով առաջադրված պարտավորության իրավաչափությունը, որպիսի պահանջը համապատասխանում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի հատկանիշներին, ինչպես նաև ներկայացրել է հետևանքների վերացման ածանցյալ պահանջ, որպիսի իրավունքից վերջինս օգտվում է նույն օրենսգրքի 70-րդ հոդվածով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհիմն է Դատարանի այն հետևությունը, որ Աշոտ Սաֆարյանի հայցադիմումի թերությունները չվերացնելն արգելք է գործի քննության համար:



Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, որ դեռևս 18.05.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանն արդեն մեկ անգամ վերադարձրել էր Աշոտ Սաֆարյանի հայցադիմումը՝ պատճառաբանելով նաև, որ չի ներկայացվել պետական տուրքի վճարման անդորրագիրը կամ պետական տուրքի վճարումը հետաձգելու, տարածամեկտելու կամ նվազեցնելու մասին միջնորդություն, մինչդեռ, Աշոտ Սաֆարյանի ներկայացրած հայցադիմումին կցված էր պետական տուրքի վճարումը հետաձգելու և գործի քննության արդյունքում հայցապահանջները բավարարելու դեպքում պետական տուրքի գումարը Տեսչությունից բռնագանձելու մասին միջնորդությունը, սպա Վճռաբեկ դատարանը նշված փաստարկը չի քննարկում, քանի որ սույն գործով վճռաբեկության կարգով բողոքարկվել է Դատարանի 25.06.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը, որով ՀՀ վարչական դատարանի 10.06.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Աշոտ Սաֆարյանի բերած բողոքը մերժվել է, իսկ ՀՀ վարչական դատարանի 10.06.2010 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի հիմքերով: Բացի այդ, Աշոտ Սաֆարյանը, ՀՀ վարչական դատարանի 18.05.2010 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը ստանալուց հետո կրկին ներկայացնելով հայցադիմում, դրա համար արդեն իսկ վճարել էր 4.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-135-Ն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով Դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ և 118.3-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական դատարանի 25.06.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր պետական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 10.06.2010 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

---

# Հայցի ապահովումը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/3511/05/10

Նախագահող դատավոր՝ Հ. Բեդկյան

Վարչական գործ թիվ ՎԳ/3511/05/10

2011թ.

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 27-ին,

քննարկելով ըստ հայցի ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամտունե-  
րի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Սպանդարյանի հարկային տեսչության (այսուհետ՝  
Տեսչություն) ընդդեմ «Ալնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ 13.157.100  
ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վարչական վերաքն-  
նիչ դատարանի 02.02.2011 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Կոմիտեի  
Կենտրոնի հարկային տեսչության բերած վճռաբեկ բողոքը,

### ՊԱՐԶԵՑ

#### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել  
13.157.100 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի 01.10.2010 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդուն-  
վել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանի 01.10.2010 թվականի որոշմամբ Տեսչության՝ հայցի  
ապահովման միջոց ձեռնարկելու մասին միջնորդությունը բավարարվել է և 13.157.100  
ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Ընկերությանը պատկանող գույքի կամ դրամա-  
կան միջոցների վրա:

ՀՀ վարչական դատարանի 26.11.2010 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը բավարարվել է և Ընկերությանը պատկանող դրամական միջոցների վրա հայցագնի չափով դրված արգելանքը փոխարինվել է մեկ այլ միջոցով, այն է՝ հայցագնի չափով արգելանք է դրվել Ընկերությանը պատկանող գույքի վրա՝ վերացնելով դրամական միջոցների վրա դրված արգելանքը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.11.2010 թվականի որոշմամբ ՀՀ վարչական դատարանի 26.11.2010 թվականի «Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու մասին» որոշման դեմ Տեսչության բերած բողոքը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.02.2011 թվականի որոշմամբ Տեսչության բողոքը մերժվել է և Դատարանի 30.11.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեի Կենտրոնի հարկային տեսչությունը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարանության օրենսգրքի 22-րդ, 88-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 97-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Հայցի ապահովման միջոցը կիրառվում է այն ժամանակ, երբ ենթադրվում է, որ հայցապահանջի բավարարման դեպքում դատական ակտը դժվար կամ անհնարին կլինի կատարել: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը որպես վիճարկվող որոշման հիմք չի նշել որևէ հիմնավոր պատճառ, որի առկայությամբ պայմանավորված հիմնավոր կլիներ հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դատարանը հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելիս պետք է Ընկերությունից պահանջեր որոշակի հիմնավոր երաշխիքներ, թե որքան ժամանակից հետո Ընկերությունն ի վիճակի կլինի կատարել բյուջեի հանդեպ ունեցած իր պարտավորությունները, պետք է պարզեր, թե արդյոք Ընկերությունն ունի հայցագնի չափով գույքային միջոցներ, որի վրա հնարավոր կլիներ կիրառել հայցի ապահովման միջոց, ինչպես նաև պետք է Ընկերությունից պահանջեր գույքի համապատասխան անվանական ցուցակ՝ Ընկերության գույքի առկայության վերաբերյալ հավաստում, որում պետք է արտացոլված լինեին Ընկերության առկա գույքի և դրանց գնի վերաբերյալ տեղեկություններ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել» Վերաքննիչ դատարանի 02.02.2011 թվականի «Բողոքը մերժելու մասին» և Դատարանի 30.11.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումները:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը

---

նը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաքանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործերի քննության ընթացքում հայցի ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ էլ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը: Հայցի ապահովում կիրառելու համար անհրաժեշտ է ապացուցել հայցի ապահովում չկիրառելու դեպքում դատական ակտի կատարման դժվարացման կամ անհնարինության հանգամանքը (*յրե՛ւ՝ ըսր դիմումի «Բի լայն» ՄՊԸ-ի ընդդեմ ՀՀ սոնլորի և Կոնսուլատական գարգացման նախարարության մերավոր սեփականության գործակալության՝ Կոնսուլատական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին թիվ ՎԳ/0677/05/08 վարչական գործով 21.04.2008 թվականի ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխելու:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դատավարական նորմը կոչված է ապահովելու հայցվորի և պատասխանողի շահերի համադրված պաշտպանությունը: Մասնավորապես՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով կարող է փոխարինվել, եթե այն անհամաչափ սահմանափակում է պատասխանողի իրավունքները՝ կապված արգելանքի տակ դրված գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման հետ, կամ վերջինիս կարող է պատճառվել վնաս, որից կարելի է խուսափել հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դեպքում: Միաժամանակ, Վճռա-

բեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցի ապահովման միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու դեպքում դատարանը պետք է հաշվի առնի հայցվորի շահերը և այն նպատակները, որը հետապնդում է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտը:

Հետևաբար, դատարանն արդեն կիրառված հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու անհրաժեշտության փաստը հաստատված համարելու համար պարտավոր է հիմնվել միայն այդպիսի փաստը հաստատող ապացույցների վրա, առանց որոնց հնարավոր չէ եզրահանգման գալ այն մասին, որ արդեն կիրառված հայցի ապահովման միջոցի փոխարինումը նույնպես կարող է բացառել դատական ակտի կատարումն անհնարին դարձնող կամ դժվարացնող հանգամանքները, ինչպես նաև վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացումը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է այն հիմնավորումը, որ տվյալ դեպքում հայցի ապահովումը փոխարինվել է մեկ այլ միջոցով, այն է՝ հայցագւհի չափով արգելանք է դրվել Ընկերության գույքի վրա՝ վերացնելով դրամական միջոցների վրա դրված արգելանքը, և փոխարինված հայցի ապահովումը ևս բավարար երաշխիքներ է ապահովում հարուցված հայցով ապագա վճռի կատարման համար:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, հաստատված համարելով, որ տվյալ դեպքում փոխարինված հայցի ապահովումը ևս բավարար երաշխիքներ է ապահովում հարուցված հայցով ապագա վճռի կատարման համար, անտեսել է, որ նշված եզրահանգումը հաստատող որևէ ապացույց գործում առկա չէ:

Այսպես, տվյալ դեպքում Ընկերությունը, ներկայացնելով հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու վերաբերյալ միջնորդություն, հայցագւհի չափին՝ 13.157.100 ՀՀ դրամին առնվազն համարժեք իր գույքի կազմի և արժեքի վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից որպես նշված միջնորդությունը հիմնավորող ապացույցներ ներկայացված փաստաթղթերին (29.05.2010 թվականի թիվ 11 և 11.09.2010 թվականի թիվ 15 հաշիվ-ապրանքագրեր, 15.07.2008 թվականի «Շինարարական կապալի մասին» թիվ 04 պայմանագիր, 09.08.2010 թվականի «Շինարարական աշխատանքների կատարման մասին» եռակողմ պայմանագիր, 15.11.2010 թվականի կատարողական ակտ, ամփոփ նախահաշիվ, թիվ 1-1, թիվ 1-2, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 6 և թիվ 7 հաշվարկներ (գ.թ. 52-69, 71)), ապա նշված փաստաթղթերը հաստատում են միայն Ընկերության կատարած շինարարական աշխատանքների և ակնկալվող դրամական միջոցների առկայության փաստը և չեն կարող դիտվել որպես սույն գործով հայցի ապահովման միջոցի փոխարինման համար անհրաժեշտ՝ Ընկերության գույքի կազմի և արժեքի վերաբերյալ ապացույցներ: Բացի այդ, վերոգրյալ փաստաթղթերից ամփոփ նախահաշիվը և հաշվարկները պատշաճ վավերացված փաստաթղթեր չեն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

---

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 02.02.2011 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 30.11.2010 թվականի «Բողոքը մերժելու մասին» և 26.11.2010 թվականի «Հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու մասին» որոշումները և հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու մասին «Այնես Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի միջնորդությունը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ ՎԴ/4841/05/12  
Նախագահող դատավոր՝ Հ. Բեդկյան

Վարչական գործ թիվ ՎԴ/4841/05/12  
2012թ.

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՍՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 14-ին,  
քննարկելով ըստ հայցի «Միլլար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Նապոլեոն  
Ազիզյանի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետա-  
կան կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձ «Լան» ՍՊԸ-ի՝ 2012 թվականի հուլի-  
սի 2-ին և 3-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական  
մատյանում Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79  
և թիվ 80 շինությունների նկատմամբ կատարված սեփականության իրավունքների պե-  
տական գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով  
ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.09.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին»  
որոշման դեմ «Լան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի բե-  
րած վճռաբեկ բողոքը,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը և Նապոլեոն Ազիզյանը պահանջել են ան-  
վավեր ճանաչել 2012 թվականի հուլիսի 2-ին և 3-ին գույքի նկատմամբ իրավունքների  
պետական գրանցման միասնական մատյանում Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի  
խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և թիվ 80 շինությունների նկատմամբ կատարված  
սեփականության իրավունքների պետական գրանցումները, միաժամանակ միջնորդել  
են ձեռնարկել հայցի ապահովման միջոց, այն է՝ արգելել Երևանի Ծիծեռնակաբերդի

---

խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարումը, այդ թվում՝ գնահատումը և օտարումը:

ՀՀ վարչական դատարանի 01.08.2012 թվականի որոշմամբ՝ որպես հայցի ապահովման միջոց արգելվել է պատասխանող Կոմիտեին և այլ անձանց՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարումը, այդ թվում՝ գնահատումը և օտարումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 18.08.2012 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին» որոշմամբ՝ «Լան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի միջնորդությունը՝ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.09.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշմամբ «Լան» ՍՊԸ-ի բողոքը մերժվել է, և Դատարանի 18.08.2012 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել «Լան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.12-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը խախտել է վերաքննության սահմանները: Այսպես՝ Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել սույն գործով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի կիրառելիության հետ կապված, որը որևէ առնչություն չունի միջանկյալ դատական ակտի դեմ բերված բողոքի և այդ բողոքով ներկայացված պահանջի հետ: Ընդ որում՝ վերաքննիչ բողոքում ընդհանրապես հիշատակված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը և վերը նշված հոդվածը: Փաստորեն Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոքում չբարձրացված հարցի քննարկմանը, դուրս է եկել վերաքննիչ բողոքի սահմաններից՝ չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն վարչական գործով հայցվորները դատարանին են ներկայացրել վիճարկման հայց, ինչի ուժով վիճարկում են 2012 թվականի հուլիսի 2-ին և 3-ին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման միասնական մատյանում Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և թիվ 80 շինությունների նկատմամբ կատարված սեփականության իրավունքների պետական գրանցումները: Այսինքն՝ սույն վարչական գործով վեճի առարկա է հանդիսանում Կոմիտեի կողմից 02.07.2012 թվականին և



03.07.2012 թվականին ընդունած վարչական ակտերը: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցի ապահովում չկիրառելու դեպքում արդարադատությունը կլրի ձևական բնույթ: Դատարանը ցուցաբերելով կամայական մոտեցում Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և թիվ 80 շինությունները ներկայացրել է որպես վեճի առարկա, որպեսզի կարողանա դրանց նկատմամբ իրականացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված սահմանափակումները, իսկ Վերաքննիչ դատարանը դրան ուշադրություն չի դարձրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «վճարել բողոքը ընդունել վարույթ և կայացնել նոր դատական ակտ»:

### **3. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճարել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճարել դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարձառաբանությամբ.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործերի քննության ընթացքում հայցի ապահովման միջոցների կիրառումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը: Հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության ցանկացած փուլում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

Հայցի ապահովման միջոցներն են՝

1) պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագրի չափով արգելանք դնելը.

2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը.

3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը.

4) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց հարուցելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը:

5) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը՝ անհապաղ կամ 5 օրը չգերազանցող ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ գործը քննող դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կարող է վերացնել հայցի ապահովումը: Հայցի ապահովման վերացման հարցը լուծվում է միջնորդություն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում, դատական նիստում: Հայցի ապահովման վերացման հարցի քննարկման արդյունքներով կայացվում է որոշում:

Վճարել դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է հայցի ապա-

---

հովման դատավարական ինստիտուտի սահմանման օրենսդրական նպատակին: Մասնավորապես Վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկվելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ կարող է վատթարացնել վեճի առարկա գույքի վիճակը (*տե՛ս* ՀՀ Կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի հարկային տեսչությունն ընդդեմ «Ախես Բոնաթրաքշն» ՍՊԸ-ի՝ 13.157.100 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին թիվ ՎԳ/3511/05/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2011 թվականի որոշումը): Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը (*տե՛ս* «Բիլայն» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ առևտրի և տրանսպորտի գաղափարային միջոցառման նախարարության մրավոր սեփականության գործակալության պետական մարմնի անգործությունը վիճարկելու պահանջի մասին թիվ ՎԳ/0677/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.04.2008 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով: Այլ օրենքներում **(քացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների)** պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն նույն օրենսգրքին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ՀՀ դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, **ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:**

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանում է, որ սնանկության վարույթի դատավարական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, սակայն հատուկ շեշտադրվում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված լինելու դեպքում կիրառվում են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դատավարական նորմերը: **Օրենքի նման կարգավորումից ակնհայտ է դառնում, որ այն դատավարական հարաբերությունները, որոնք կարգավորված չեն «Սնանկության մասին» ՀՀ օրենքում, ներառվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորման ոլորտի շրջանակներում:**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 01.08.2012 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշմամբ կիրառվել է հայցի ապահովում, և որոշվել է «արգելել պատասխանող Կոմիտեին և այլ անձանց՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարումը, այդ թվում՝ **գնահատումը և օտարումը:**»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության

---

օրենսգրքի 98-րդ հոդվածի մեկնաբանությունը պետք է տրվի ՀՀ Սահմանադրության, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների լույսի ներքո:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ձևանշվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է սեփականության սուբյեկտիվ իրավունքի բովանդակությանը, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Այս նորմն ամրագրում է սեփականությունից անարգել օգտվելու հնարավորությունը՝ սեփականատիրոջ հայեցողությամբ:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությունը գալիս է հաստատելու, որ սեփականության իրավունքն «անսահմանափակ» իրավունք չէ, որ սեփականատերը չի կարող սեփականության իրավունքն իրականացնել կամայականորեն: Այդ իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Սեփականության անարգել օգտագործմանն անդրադառնում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ որի չի կարելի գրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը, երկրորդը վերաբերում է գույքի առգրավման հարցերին և այդ առնչությամբ հստակ պայմաններ է սահմանում, իսկ երրորդ կանոնն ընդունում է, որ պետությունները, ի թիվս այլ իրավասությունների, իրավունք ունեն ընդհանուր շահից ելնելով՝ վերահսկել գույքի օգտագործումը՝ այդ օրենքների կիրառման անհրաժեշտության պարագայում (*Տես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական դատարանի 22.09.1982 թվականի վճիռը, կետ 61*):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում քննարկման առարկա դարձնել

---

Եվրոպական դատարանի վճռով սահմանված երրորդ կանոնը, որի պայմաններում պետության գլխավոր նպատակը գույքի օգտագործումը վերահսկելն է՝ լինի դա հանրային շահից ելնելով, թե հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար, կամ սնանկության դաշտում պարտատերերի պահանջների բավարարման համար:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով՝ սեփականության իրավունքը բացարձակ չէ, ուստի ՀՀ Սահմանադրությամբ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքով և արձանագրությամբ նախատեսվում է այն սահմանափակելու իրավական հնարավորություն: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նախատեսում է մի շարք չափանիշներ, որոնց պետք է բավարարի այդ սահմանափակումը, և որոնց առկայության դեպքում այն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում:

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով
2. բխում է հանրային շահից
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*Steu Zeynepur u այլոր ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռը, կետ 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*Steu Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջումների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Մյուս կողմից, հետապնդվող նպատակի և միջամտության համարժեքության հարցը լուծելիս Եվրոպական դատարանն անպայմանորեն պետք է հաշվի առնի այլընտրանքային լուծումների առկայությունը: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյուն-

քում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*Stu Former king of Greece and others v Greece գործով Եվրոպական դատարանի 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, կետ 89, Սկոլլուն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1985 թվականի վճիռը, կետ 32*):

Ելնելով ՀՀ Սահմանադրության և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի վերոնշյալ իրավական կարգավորումներից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը թույլ է տալիս այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վերոնշյալ նորմի կիրառման և մեկնաբանության հարցը պետք է պարզել՝ հաշվի առնելով կատավարչի, պարտատիրոջ և պարտապանի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը, իսկ պարտապանի կամ պարտատիրոջ սեփականության իրավունքի միջամտության հարցը պետք է գնահատել համաչափության սկզբունքի լույսի ներքո:

#### ***Նախապեսված է օրենքով.***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը:

Վերոնշյալը ցույց է տալիս, որ օրենքով նախատեսված է, որ կարող է կիրառվել հայցի ապահովման միջոցներ, այսինքն՝ արգելվել այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումը: Հետևաբար պարտապանի սեփականության իրավունքի սահմանափակման իրավական հնարավորությունը նախատեսված է օրենքով:

#### ***Քիչում է հանրային շահից.***

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ հայցի ապահովման նման ձևը բխում է հանրային շահերից և կոչված է ապահովելու այլ անձանց՝ այդ թվում պարտատերերի իրավունքների պաշտպանությունը:

#### ***Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում.***

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համաչափության մեջ անհրաժեշտության հանգամանքը քննարկելիս պետք է հաշվի առնել, որ դրա նպատակն է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել պարտապանի և պարտատիրոջ իրավունքների միջև և պետք է հաշվի առնել, որ նշված նորմի մեկնաբանության հետևանքով գույքի սեփականատերը չպետք է ստիպված լինի կրել «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ»:

Նշված նորմի և սեփականության իրավունքի համաչափ միջամտության հարցը քննարկելիս Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը պետք է դիտարկել հայցի ապահովման կատարման իմաստի և սնանկության գործով քննության ընթացքում սնանկության գործով կատավարչի գործունեությունը սահմանափակելու ողջ իրավակարգավորման համատեքստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝ պատասխանողին որոշակի

---

գործողություններ կատարելն արգելելը, իսկ 3-րդ ենթակետի համաձայն՝ այլ անձանց կողմից վեճի առարկայի վերաբերյալ որոշակի գործողությունների կատարումն արգելելը:

Նախ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցին.

Եթե վեճի առարկան սեփականության իրավունքի պետական գրանցումն է, արդյոք նման պայմաններում կիրառելի է նշված հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը՝ արգելել այլ անձանց «ք. Երևան Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարումը, այդ թվում՝ գնահատումը և օտարումը»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրենսդիրը հստակ սահմանելով հայցի ապահովման 5 միջոցներ, ըստ էության միաժամանակ սահմանել է դրանց կիրառելիության ոլորտը: Այսինքն, նշված կետի ապահովման միջոցը կարող է կիրառվել միայն վեճի առարկայի նկատմամբ:

Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

Որն է տվյալ դեպքում վեճի առարկան՝ վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտը (սեփականության իրավունքի պետական գրանցումը), թե Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ բողոքում նշվում են՝ դատական ակտ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, **վեճի առարկան:**

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը տվյալ դեպքում վեճի առարկա ասելով նկատի ունի վարչական մարմնի կողմից կայացված վարչական ակտը, այսինքն՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Սույն գործով վեճի առարկան վարչական մարմնի կողմից սեփականության իրավունքի գրանցումն է և ոչ Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունները:

Ուստի դատարանը, որպես հայցի ապահովման միջոց իրավունք չունեք սնանկության գործով կառավարչին արգելել տվյալ **շինությունների** նկատմամբ որևէ գործողությունների կատարումը, այդ թվում՝ **գույքագրումը և օտարումը:**

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ հայց է հարուցվում այլ դատարանում, ապա դատարանի հայցի ապահովման միջոցների կիրառումը պետք է համաչափ լինի և հնարավորինս չխոչընդոտի այլ անձանց օրենքով վերապահված իրավունքների և պարտականությունների կատարմանը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը վերը նշված պատճառաբանությունների լույսի ներքո սույն գործով չի

կարող կիրառվել սնանկության գործով կառավարչի գործողությունների նկատմամբ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ և 228-րդ հոդվածների ուժով վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և դեկլարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 20.09.2012 թվականի «Բողոքը մերժելու մասին» որոշման՝ **այլ անձանց** ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարումը, այդ թվում՝ գնահատումը և օտարումը արգելելու մասով օրինական ուժի մեջ թողնելու մասը, և այդ մասով կայացնել նոր դատական ակտ:

«Լան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարչի Խաչիկ Նազարյանի միջնորդությունը այդ մասով բավարարել, վերացնել ՀՀ վարչական դատարանի 01.08.2012 թվականի «Հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին» որոշմամբ կիրառված՝ **այլ անձանց կողմից** ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարման, այդ թվում՝ գնահատման և օտարման արգելանքը:

Որոշումը մնացած՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող թիվ 79 և 80 շինությունների նկատմամբ բոլոր տեսակի գործողությունների կատարումը արգելելու, մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

---

# Գործի վարույթը կասեցնելը և կարձելը

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0393/02/12  
2012թ.

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0393/02/12

Նախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան

Դատավորներ՝

Ա. Մկրտչյան

Ա. Պետրոսյան

### ՈՐՈՇՈՒՄ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահողությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի դեկտեմբերի 18-ին

քննարկելով ըստ հայցի Ալեն Ջանազյանի ընդդեմ Երվանդ Թովմասովի, Հակոբ Մկրտչյանի՝ տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2012 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման դեմ Ալեն Ջանազյանի բերած վճռաբեկ բողոքը

### ՊԱՐԶԵՑ

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ալեն Ջանազյանը պահանջել է անվավեր ճանաչել պատասխանողներ Հակոբ Մկրտչյանի և Երվանդ Թովմասովի միջև 15.11.2011 թվականին կնքված «MITSUBISHI PAJERO» մակնիշի 99 ՍՍ 959 պետհամարանիշի ավտոմեքենայի առուվաճառքի պայմանագիրը, կիրառել անվավերության հետևանքներ, անվավեր ճա-



նաչել ավտոմեքենայի պետական գրանցումը, պարտավորեցնել մեքենան վերադարձնել իրեն:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (դատավոր՝ Էդ. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 22.05.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.10.2012 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ալեն Ջանազյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը կասեցրել է սույն քաղաքացիական գործի վարույթը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ անհնարին է սույն քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 63200612 քրեական գործով վերջնական որոշում կայացնելը, մինչդեռ անտեսել է այն հանգամանքը, որ Հակոբ Մկրտչյանի կողմից Երվանդ Թովմասովից խարդախությամբ գումար հափշտակելու փաստը որևէ կապ չունի սույն քաղաքացիական գործի հետ և անհնարին չի դարձնում նշված գործի քննությունը, քանի որ վերջիններիս գործողություններն ուղղված են եղել Ալեն Ջանազյանի ավտոմեքենային տիրանալուն:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների պահպանմամբ չի նշել շարժառիթները, որոնցով հանգել է հետևությունների՝ օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/0393/02/12 քաղաքացիական գործով կայացրած գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը և հանձնարարել վերսկսել քաղաքացիական գործի վարույթը»:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

*Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գրկում է, որ այն հիմնավոր է հետևյալ պարզաբանությամբ.*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե **անհնարին է տվյալ**

---

**գործի քննությունը** մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ **գործով կամ հարցով որոշում կայացնելը**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ առանձին ակտի ձևով կայացված որոշման մեջ պետք է նշվեն **շարժառիթները, որոնցով դատարանը հանգել է հետևությունների՝** օրենքների և այլ իրավական ակտերի վկայակոչմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է գործի վարույթը կասեցնելու հարցին և արձանագրել, որ դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն **շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների:** Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը (*տե՛ս ըստ Անահիտ Գալոյանի հայցի ընդդեմ Գրիգոր Կարապետյանի, երրորդ անձ Անահիտ Բունիսթյանի՝ անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ձանձախելու պահանջի մասին թիվ ԿԳ1/0902/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 08.06.2011 թվականի որոշումը*):

Միաժամանակ վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի վարույթի կասեցման դատարանի պարտականությունը չի ծագում, եթե տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ 05.10.2012 թվականին պատասխանող Երվանդ Թովմասովի ներկայացուցիչ Արշակ Թովմասյանը միջնորդություն է ներկայացրել վերաքննիչ դատարան՝ քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ և պատճառաբանել, որ նույն վեճի առարկայի վերաբերյալ Երվանդ Թովմասովը հաղորդում է ներկայացրել ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժին և Երևան քաղաքի դատախազի կողմից 20.09.2012 թվականին որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու վերաբերյալ որոշումը վերացնելու և քրեական գործ հարուցելու մասին:

Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կասեցնելիս պատճառաբանել է, որ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական քննչական բաժնում քննվող թիվ 63200612 քրեական գործն անմիջականորեն կապված է սույն քաղաքացիական գործի հետ, և անհնարին է թիվ ԵԿԳ/0393/02/12 քաղաքացիական գործի քննությունը մինչև թիվ 63200612 քրեական գործով որոշման կայացումը:

Մինչդեռ, վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել սույն գործի քննության անհնարինությունը, քանի որ ՀՀ

ուստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում հարուցվել է քրեական գործ Հակոբ Մկրտչյանի կողմից խարդախությամբ Երվանդ Թովմաստվից առանձնապես խոշոր չափի՝ 9.000 ԱՄՆ դոլար հափշտակելու փաստով, որը որևէ կապ չունի պատասխանողներ Հակոբ Մկրտչյանի և Երվանդ Թովմաստվի միջև կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու իրավահարաբերության հետ, քանի որ սույն գործով դատարանը հայցը բավարարելու հիմքում դրել է այն հանգամանքը, որ Հակոբ Մկրտչյանը, օգտագործելով Ալեն Ջանազյանի կողմից իրեն տրված լիազորագիրը, ոչ թե վաճառել է ավտոմեքենան, այլ, ըստ էության, չարամիտ համաձայնության մեջ մտնելով պատասխանող Երվանդ Թովմաստվի հետ՝ փորձել է փակել իր կողմից վերջինիս վթարված ավտոմեքենայի պարտքը Ալեն Ջանազյանի «MITSUBISHI PAJERO» մակնիշի ավտոմեքենայով, ինչին պատասխանող Երվանդ Թովմաստվը տեղյակ է եղել, քանի որ ամբողջությամբ չի վճարել 15.11.2011 թվականին կնքված տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրում նշված ավտոմեքենայի գինը, բացի այդ, գործարքը կնքելու օրվանից ավտոմեքենան երբևէ Երվանդ Թովմաստվի մոտ չի գտնվել, նա ավտոմեքենայի սեփականատիրոջը որևէ անգամ չի դիմել ավտոմեքենան իրեն հանձնելու հարցով:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքնության իրավունքի բաղկացուցիչ մասն է կազմում գործի ողջամիտ ժամկետում քննությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ նույնիսկ քաղաքացիական դատավարության ժամանակ, երբ ներպետական օրենսդրությունը և պրակտիկան կողմերից են պահանջում նախաձեռնություն ցուցաբերել դատավարական շարժի համար, պետությունը պարտավոր է երաշխավորել դատավարության ողջամտությունը (Տեն Կոտերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 01.02.2005 թվականի վճիռը, կետ 29, CROWTHER v. THE UNITED KINGDOM, 1 February 2005, par. 29):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշումն անհիմն է:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի 05.10.2012 թվականի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 222-րդ, 240-րդ, 241-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.10.2012 թվականի «Գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

# ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշում Վարչական գործ թիվ ՎԳ/0437/05/10  
Վարչական գործ թիվ ՎԳ/0437/05/10 2011թ.  
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Գ. Ղարիբյան  
Ա. Աբովյան

### ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

*նախագահությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի ապրիլի 27-ին,

քննարկելով Յուրիկ Ավինյանի, Կարինե Արզումանյանի, Ռաֆիկ Բաբայանի, Ռուբեն Աթոյանի, Սուսաննա Կիրակոսյանի, Ամալյա Օհանյանի, Սուրեն Հովհաննիսյանի, Նորա Կիրակոսյանի, Սուսաննա Եղիազարյանի, Սուսաննա Ղոնախյանի, Անահիտ Համբարձումյանի, Ալբերտ Մովսիսյանի, Ռազմիկ Հարությունյանի, Արմեն Հակոբյանի, Գագիկ Հակոբյանի, Ելենա Պետրոսյանի, Մարգարիտա Աստվածատրյանի, Մարիամ Մինասյանցի, Աշոտ Քոչարյանի, Ծովինար Մինասյանի, Ալբերտ Սաֆարյանի, Սամվել Չախոյանի, Կարինե Չախոյանի, Նադեժդա Ծառուկյանի, Արա Կիլիկյանի, Լևիկ Գրիգորյանի, Արինա Ամիրջանյանի, Գրիշա Ղազարյանի, Անժելիկա Գրիգորյանի, Սամվել Ադամյանի և Լենա Միրզոյանի (այսուհետ՝ համահայցվորներ) ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ վարչական գործով ըստ համահայցվորների հայցի ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձ «Լուկա Դիվելոփըրգ» ՍՊԸ-ի՝ ՀՀ կառավարության 20.11.2008 թվականի թիվ 1405-Ն որոշումն անվավեր ճանաչելու և ՀՀ կառավարության 24.12.2009 թվականի թիվ 1516-Ն որոշման՝ որպես առոչինչ վարչական ակտի իրավական հետևանքները կիրառելու կամ այն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

## ՊԱՐԶԵՑ

### **1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ համահայցվորները պահանջել են անվավեր ճանաչել ՀՀ կառավարության 20.11.2008 թվականի թիվ 1405-Ն որոշումը և կիրառել ՀՀ կառավարության 24.12.2009 թվականի թիվ 1516-Ն որոշման՝ որպես առոչինչ վարչական ակտի իրավական հետևանքները կամ այն ճանաչել անվավեր:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 11.11.2010 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 27.12.2010 թվականի որոշմամբ Դատարանի 11.11.2010 թվականի վճռի դեմ համահայցվորների վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել համահայցվորների ներկայացուցիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է ժամկետանց: Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վերաքննիչ բողոք բերելու վերջին օրը համընկել է ոչ աշխատանքային օրվան, որին հաջորդող աշխատանքային օրը 13.12.2010 թվականն էր: Այդ օրն էլ վերաքննիչ բողոքը հանձնվել է փոստային ծառայությանը:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 27.12.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ ժամկետանց համարելու մասով:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Քննարկելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *վճռաբեկ բողոքը հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

---

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ նույն օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի **հաջորդ օրվանից**, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ամիսներով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան օրը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը գտել է, որ Գատարանի 11.11.2010 թվականի վճիռն դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 12.12.2010 թվականը, որպիսի ժամկետը համահայցվորների կողմից բաց է թողնվել և բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 13.12.2010 թվականին, այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետի բացթողնմամբ: Մինչև նույն ժամանակ բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, ուստի բողոքը ենթակա է վերադարձման:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով վերաքննիչ բողոքը ներկայացվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում: Այսպես՝ Գատարանի 11.11.2010 թվականի վճիռը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի, պետք է օրինական ուժի մեջ մտներ 12.12.2010 թվականին: Մինչդեռ, 12.12.2010 թվականը ոչ աշխատանքային օր է, ուստի վերաքննիչ բողոք ներկայացնելու վերջնաժամկետը, համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասի, համարվում է դրան հաջորդող աշխատանքային օրը, այն է՝ 13.12.2010 թվականը:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով վերաքննիչ բողոքը ներկայացվել է ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածով սահմանված մեկամսյա ժամկետի պահպանմամբ:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել օրինական ուժի մեջ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու, բողոքի պատճենները՝ դա-

տական ակտ կայացրած դատարանին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելու մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջները:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձրել է՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքները, որ բողոք բերողի կողմից չի ներկայացվել ապացույց՝ «Լուկա Դիվելոփերզ» ՍՊԸ-ին բողոքի պատճենն ուղարկելու մասին, բացի այդ, բողոքին չի կցվել պետական տուրքի վճարումը հաստատող ապացույց:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձվել է նաև բողոքը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 4-րդ մասին չհամապատասխանելու հիմքով, ուստի Վերաքննիչ դատարանի մասնակիորեն սխալ պատճառաբանությունները չեն կարող հիմք հանդիսանալ 27.12.2010 թվականի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 27.12.2010 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳՅ/0339/05/10  
2011թ.

Վարչական գործ թիվ ՎԳՅ/0339/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան

Դատավորներ՝ Լ. Սոսյան

Հ. Բեդեկյան

ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈՐՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2011 թվականի հունիսի 27-ին,

քննարկելով Մելսիդա Ասրյանի բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 01.03.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման  
դեմ, ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Ար-  
տաշատի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ անհատ  
ձեռնարկատեր Մելսիդա Ասրյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Մելսիդա Ասրյանից բռնագանձել  
272.356 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 08.12.2010 թվականի վճռով  
հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 26.01.2011 թվականի որոշմամբ Դատարա-  
նի 08.12.2010 թվականի վճռի դեմ Մելսիդա Ասրյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել  
է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)  
01.03.2011 թվականի որոշմամբ Դատարանի 08.12.2010 թվականի վճռի դեմ Մելսիդա



Ասրյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մելսիդա Ասրյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ, 117.6-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատձատարանել է, որ վերաքննիչ բողոքում չեն նշվել, թե նյութական և դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ որպես դատավարական իրավունքի նորմի խախտում վերաքննիչ բողոքում նշվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, իսկ նյութական իրավունքի խախտում նշվել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերաքննիչ բողոքում Մելսիդա Ասրյանը նշել է, որ 2008 թվականից չի աշխատել և պետական ռեզիստրին ներկայացրել է դիմում գործունեությունը դադարեցնելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 01.03.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատձատարանությունները և եզրահանգումները**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է հետևյալ պատձատարանությամբ.

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրա-

---

վունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործարկվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*Steu' ՀՀ վճարելի դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը*, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Steu' Կրեուզն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland)*, թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, 2-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (*Z. and Others v. The United Kingdom*), թիվ 29392/95, 91-93-րդ կետեր): Բացի այդ, Եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաքննիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (*Steu' Բրուսյալ Գոմեզ դե լա Տորենն ընդդեմ Իսպանիայի*, թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19, կետ 33, *Թեյլինի Էնդ Սանզ ՄՊԸ-ն ու այլոք և Մաք Էդուաֆն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 20390/92, 1998 թվականի հուլիսի 10, կետ 72 և *Խալֆաուն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 34791/97, 37):

Վճարելի դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայն այդ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության՝ վերաքննիչ բողոքի թերությունները չեն կարող խոչընդոտել դրանց քննության ընդունման հարցի դրական լուծմանը և կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Նշված տրամաբանությունն էլ իր հերթին բխում է դատարանի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունից (Մանատիպ դիրքորոշումը տևե նաև ՀՀ սահմանադրական դատարանի 27.05.2008 թվականի թիվ ՍԴՌ-754 գործով որոշմամբ, կետ 6):

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ թիվ 20 հանձնարարականի «B սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նվազագույնը ֆիզիկական և իրավաբանական անձանց պետք է հասանելի լինի այն վարչական ակտե-

րի դատական վերանայումը, որոնք շոշափում են վերջիններիս իրավունքները և շահերը: Նույն բաժնի 4-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է գտնե կարևոր գործերով ենթակա լինի բողոքարկման վերադաս առյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը ներպետական օրենսդրության համապատասխան, ուղղակի տրվում է վերադաս առյանին: Հանձնարարականի 4 (i) սկզբունքի 83-րդ ենթակետի համաձայն՝ դիմողի՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված ողջամիտ ժամկետում դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ձանաչվի բոլոր պետություններում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ կողմերը նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե չեն պահպանվել նույն օրենսգրքի 117.4-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքը կազմվում է գրավոր, որում նշվում են նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, վերաքննիչ բողոքում նշված նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները կամ նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ բողոքաբերը, թեպետ նշելով Դատարանի կողմից խախտված իրավանորմերը, չի պահպանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությամբ ներկայացվող պահանջները: Բողոքաբերը չի հիմնավորել տեղի ունեցած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, ինչպես նաև նման խախտման գործի ելքի վրա դրա ազդեցությունը:

Մինչդեռ, Վձոաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքում պահպանված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջները: Մասնավորապես՝ բողոք բերող անձը, նշելով, որ Դատարանը ձիշտ չի կիրառել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ պարբերությունը, որպես դրա հիմնավորում նշել է, որ «Ես դիմում եմ ներկայացրել պետ. ռեզիստրին իմ գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ 2008 թվականի հունիսին: Ինձ չեն բացատրել, որ ես պետք է հանձնեմ նաև պետ. գրանցման վկայականը: Եվ ես գտնում եմ, որ դա պետ. ռեզիստրի աշխատակիցների կողմից օրենքի պահանջը չկատարելն է, որ ինձնից չեն պահանջել պետ. գրանցման վկայականը»: Բողոք բերող անձը, որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի խախտման հիմնավորում նշել է, որ «հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում և ծանուցագրեր չի հանձնվել», իսկ որպես

---

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի խախտման հիմնավորում նշել, որ «Ես ներկայացել եմ դատարան 02.12.2010 թվականին: Դատարանն ինձ տվել է հարցեր, ես պատասխանել եմ, որ 2008 թվականից որպես ԱԶ չեմ աշխատել և դիմում եմ ներկայացրել պետ. ռեզիստրին իմ գործունեությունը դադարեցնելու մասին, սակայն դատարանը ոչ միայն ուշադրություն չի դարձրել իմ ապացույցներին, այլև վճռում նշել է, որ իբր ծանուցված լինելով դատական նիստի և վայրի ժամանակի մասին, ես իբր չեմ ներկայացել դատական նիստին»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտը բողոքարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումները Վերաքննիչ դատարանը սույն գործով պետք է կիրառեր Մելսիդա Ասրյանի իրավունքների դատական պաշտպանության մատչելիության լույսի ներքո, իսկ վերաքննիչ բողոքում նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման վերաբերյալ հիմնավորումների նշումը, անկախ դրանց հիմնավորվածությունից, բավարար է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.5-րդ հոդվածի հիման վրա վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու համար, հետևաբար տվյալ դեպքում առկա չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի խախտում:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Մելսիդա Ասրյանը զրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ, 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ, 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.03.2011 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3141/05/10  
2012թ.

Վարչական գործ թիվ ՎԴ/3141/05/10

Նախագահող դատավոր՝ Ա. Առաքելյան

Դատավորներ՝ Ա. Աբովյան

Ա. Բարսայան

**ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ*

*մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ

Վ. ԱԲԵԼՅԱՆԻ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

Մ. ԴՐՄԵՅԱՆԻ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի մայիսի 02-ին

քննարկելով Հենրիկ Առուստամյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի 28.02.2012 թվականի «Բողոք բերելու համար սահմանված ժամկետի բաց-  
թողումը հարգելի համարելու մասին միջնորդությունը մերժելու, բողոքը վերադարձնե-  
լու մասին» որոշման դեմ վարչական գործով ըստ ՀՀ ոստիկանության «Ճանապար-  
հային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ոստիկանություն) հայցի ընդդեմ  
Հենրիկ Առուստամյանի՝ 50.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին և ըստ Հեն-  
րիկ Առուստամյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Ոստիկանության՝ 15.11.2009 թվականի  
թիվ ԱԲ 270727 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Ոստիկանությունը պահանջել է Հենրիկ Առուստամյանի կող-  
մից Ոստիկանության համապատասխան հաշվին 50.000 ՀՀ դրամ վճարելու վերաբե-  
րյալ վճարման կարգադրություն արձակել:

ՀՀ վարչական դատարանի 26.03.2010 թվականի որոշմամբ արձակվել է Հենրիկ

---

Առուստամյանի կողմից Ոստիկանության համապատասխան հաշվին 50.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ վճարման կարգադրություն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Հենրիկ Առուստամյանը պահանջել է անվավեր ճանաչել Ոստիկանության 15.11.2009 թվականի թիվ ԱԲ 270727 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի 08.09.2010 թվականի որոշմամբ վերացվել է 26.03.2010 թվականի վճարման կարգադրությունը և անցում է կատարվել հայցային վարույթի:

ՀՀ վարչական դատարանի 30.11.2010 թվականի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.04.2011 թվականի որոշմամբ Ոստիկանության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վարչական դատարանի 30.11.2010 թվականի վճիռը բեկանվել է և փոփոխվել՝ հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 29.07.2011 թվականի որոշմամբ Հենրիկ Առուստամյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 01.04.2011 թվականի որոշումը և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 23.11.2011 թվականի վճռով Ոստիկանության հայցը բավարարվել է, իսկ Հենրիկ Առուստամյանի հակընդդեմ հայցը՝ մերժվել:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 17.02.2012 թվականի որոշմամբ Հենրիկ Առուստամյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու և այն վերականգնելու մասին միջնորդության բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ վերաքննիչ դատարան) 28.02.2012 թվականի որոշմամբ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին Հենրիկ Առուստամյանի միջնորդությունը մերժվել է, և բողոքը՝ վերադարձվել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հենրիկ Առուստամյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարսպում է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Հենրիկ Առուստամյանը 23.11.2011 թվականի վճռի հրապարակմանը ներկա չի գտնվել և վճռի օրինակն ստացել է փոստով միայն 20.12.2011 թվականին: 17.01.2012 թվականին՝ վճիռն ստանալուց 26 օր հետո, Հենրիկ Առուստամյանը փոստային առաքումով ուղարկել է վերաքննիչ բողոք, ինչը վերաքննիչ դատարանի 17.02.2012 թվականի որոշումով վերադարձվել է՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառով:

24.02.2012 թվականին կրկին ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությամբ, սակայն բողոքը կրկին վերադարձվել է:

Դատարանը, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի խախտում, խախտել է բողոքարկման համար օրենքով հատկացված մեկամսյա ժամկետը լրիվ տնօրինելու Հենրիկ Առուստամյանի իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 28.02.2012 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

### **3. Վճուրբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

*Քննելով վճուրբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճուրբեկ դատարանը գրնում է, որ վճուրբեկ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով կամ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսված չէ նույն օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության, գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, **այն մասնակիցներին ուղարկելու**, առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման վերաբերյալ լրացուցիչ դատական ակտի նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցած անձանց: **Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:**

Վճուրբեկ դատարանն իր նախկին որոշումներում անդրադարձել է դատարանի վճիռն անձին չհանձնվելու և բողոքարկման ժամկետները բաց թողնելու իրավական հետևանքներին (*յրե՛ս՝ ՀՀ Կատավարությանն աղբյուրներ պետական գույքի կատավարման վարչությունն ընդդեմ «Երևան-5» ԼՏԸ-ի, երրորդ անձինք Արմեն Համբարձումյանի, Գրիգոր Հովակիմյանի, Ռաֆիկ Վիրաբյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, թիվ ԵԾՆ/0507/02/08 գործով ՀՀ Վճուրբեկ դատարանի 04.11.2009 թվականի որոշումը*):

---

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված է մեկամսյա ժամկետ: Այդ ժամկետում վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման համար օրենքն ընդհանուր իրավասության դատարանին պարտավորեցնում է վճռի հրապարակվելուց անմիջապես հետո դրա օրինակը հանձնել գործին մասնակցած անձանց, իսկ նրանցից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում հրապարակման կամ առնվազն հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկել նրան: Միաժամանակ, այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը բաց է թողնում վերոգրյալ ժամկետը, վերջինս իրավունք ունի ներկայացնել դրա բաց թողնելու պատճառները հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, որի քննարկումը վերաքննիչ դատարանը պարտավոր է իրականացնել՝ **հաշվի առնելով նաև անձի՝ սահմանադրական նորմով երաշխավորված դատական պաշտպանության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները** (տես «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Դանիել Բարսեղյանի, ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքի, «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, Ռոսպրոմ, Ասպրուր և Սյրելլա Բարսեղյանների, Ալվարդ Քիթոյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքար համայնքն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջների մասին, և «ՀՀ Արագածոտնի մարզի Ծիլքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ն ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԱՐԱԿ/0716/02/10 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2011 թվականի որոշումը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հենրիկ Առուստամյանը Դատարանի 23.11.2011 թվականի վճիռն ստացել է 20.12.2011 թվականին: Ծրարի վրա առկա փոստային ծառայության կնիքի համաձայն՝ վճիռը փոստային ծառայություն է հանձնվել 19.12.2011 թվականին:

17.02.2012 թվականին Վերաքննիչ դատարանը վերադարձրել է Հենրիկ Առուստամյանի վերաքննիչ բողոքը՝ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու և բաց թողած ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդության բացակայության պատճառաբանությամբ:

Այնուհետև Վերաքննիչ դատարանը 28.02.2012 թվականի որոշմամբ մերժել է բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին միջնորդությունը և բողոքը վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ 23.11.2011 թվականին՝ Դատարանի վճռի հրապարակման օրը, Հենրիկ Առուստամյանը, լինելով պատշաճ ծանուցված դատական նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել և այն առձեռն չի ստացել, ինչից հետո էլ վճռի օրինակը նրան ուղարկվել է փոստով: Վերաքննիչ դատարանը պատճառաբանել է նաև, որ միջնորդության մեջ նշված միտքը, ըստ որի Հենրիկ Առուստամյանը չունի բավարար իրավաբանական գիտելիքներ, ինչի հետևանքով էլ բաց է թողել վճռի բողոքարկման ժամկետը, չի կարող հիմք հանդիսանալ դատավարական ժամկետով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու համար, քանի որ բողոք բերելու համար ժամկետի սահմանումը կդառնար անիմաստ:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:



Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածից բխում է, որ գործի մասնակիցների ներկայանալու դեպքում հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է նրանց առձեռն, իսկ չներկայանալու դեպքում՝ հրապարակման կամ առավելագույնը՝ հաջորդ օրը, ուղարկվում է գործին մասնակցած անձանց: Այսինքն՝ նշված դրույթը, առանց որևէ պայման նախատեսելու, սահմանում է դատարանի պարտականությունն ապահովելու վճռի օրինակն ստանալու գործին մասնակցած անձանց իրավունքը՝ անկախ նրանից՝ վերջիններս ներկա գտնվել են, թե պատշաճ ծանուցվել են և չեն ներկայացել դատական նիստին:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ Հենրիկ Առուստամյանը պատշաճ ծանուցվել է դատական նիստի մասին, սակայն չի ներկայացել, ուստի և առձեռն չի ստացել վճռի օրինակը: Նման դեպքում գործում է դատարանի պարտականությունը այդ կամ առավելագույնը հաջորդ օրն ուղարկել վճռի օրինակը հասցեատիրոջը՝ անկախ վերջինիս՝ դատական նիստին ներկա չգտնվելու պատճառների: Մինչդեռ ծրարի վրա առկա փոստային ծառայության կնիքի համաձայն՝ Դատարանը վճիռը փոստային ծառայություն է հանձնել 19.12.2011 թվականին, ինչն էլ իր հերթին հանդիսացել է վճռի բողոքարկման համար սահմանված ժամկետի բացթողնման պատճառ: Հետևաբար վճռի բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը պետք է համարվեր հարգելի, որի արդյունքում Վերաքննիչ դատարանը պետք է վերականգներ այն և բողոքն ընդուներ վարույթ:

Բացի այդ, Հենրիկ Առուստամյանը բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդության մեջ նշել էր, որ վճռի բողոքարկման ժամկետը հաշվարկել է այն ստանալու պահից, և ի հավաստումն այդ հանգամանքի, ներկայացրել է այն ստանալու ամսաթվով ծրարը, ինչը քննարկվող պարագայում բավարար է միջնորդությունը բավարարելու համար:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ և 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 28.02.2012 թվականի «Բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին միջնորդությունը մերժելու, բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/1747/05/11  
2012թ.

Վարչական գործ թիվ ՎԳ/1747/05/11

Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան  
Դատավորներ՝ Ա. Բարսյան  
Հ. Բեդկյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահողությամբ  
մասնակցությամբ դատավորներ*

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ  
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ  
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ  
Է. ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

2012 թվականի նոյեմբերի 30-ին,

քննարկելով անհատ ձեռնարկատեր Կարինե Գևորգյանի (այսուհետ՝ Ձեռնարկատեր) վճռաբեկ բողոքը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.08.2012 թվականի «Բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ, վարչական գործով ըստ հայցի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Նախրիի տարածքային հարկային տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) ընդդեմ Ձեռնարկատիրոջ՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**ՊԱՐԶԵՑ**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Տեսչությունը պահանջել է Ձեռնարկատիրոջից բռնագանձել 1.406.732 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 13.06.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.08.2012 թվականի որոշմամբ Դատարանի 13.06.2012 թվականի վճռի դեմ Ձեռնարկատիրոջ՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ձեռնարկատերը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը գործում առկա գրավոր ապացույցներն անմիջականորեն հետազոտելու և գնահատելու պայմաններում կպարզեր, որ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունում «պատասխանող»-ի փոխարեն «հայցվոր» նշումը, վճռի հրապարակման և պատասխանողի կողմից այն փաստացի ստանալու ժամկետները սխալ նշելն ուղղակի վրիպակ է եղել, հետևաբար այդ վրիպակները չէին կարող միջնորդությունը մերժելու հիմք հանդիսանալ: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ իրականում Ձեռնարկատերը դատական ակտը ստացել է այն օրենքով սահմանված բողոքարկման ժամկետի ավարտվելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 21.08.2012 թվականի որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ *այն հիմնավոր է հետևյալ պարձառարանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչտ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

---

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը յուրաքանչյուր անձի համար սահմանում է արդար դատաքննության իրավունք, որի բաղկացուցիչ մասն է հանդիսանում անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ դատական պաշտպանության իրավունքը կարող է սահմանափակվել, սակայն կիրառվող սահմանափակումները չպետք է լինեն այն աստիճան, որ խաթարեն այդ իրավունքի բուն էությունը: Սահմանափակումն անհամատեղելի կլինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հավասարակշռված կապ գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև (*Կրեսու' ՀՀ վճռարեկ դատարանի 14.04.2008 թվականի թիվ 3-365(ՎԴ) քաղաքացիական գործով որոշումը*, «Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի թիվ 21638/03 որոշումը, կետ 44):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունք: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեսու' Կրեսուգն ընդդեմ Լեհաստանի (Kreuz v. Poland)*, թիվ 28249/95, 2001 թվականի հունիսի 19, կետ 52, Զ-ն և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (*Z. and Others v. The United Kingdom*), թիվ 29392/95, 91-93-րդ կետեր): Բացի այդ, Եվրոպական դատարանը նշել է, որ այն դեպքերում, երբ բողոքարկման ընթացակարգեր են նախատեսված, Բարձր պայմանավորվող կողմերը պարտավոր են ապահովել իրենց իրավասության տակ գտնվող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված այն նույն երաշխիքներից օգտվելը վերաբնիչ դատարաններում, ինչպիսիք նրանք ունեն առաջին ատյանի դատարանում (*Տես' Բրուալլա Գոմեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի*, թիվ 26737/95, 1997 թվականի դեկտեմբերի 19, կետ 33, *Թելլինի Էնդ Մանզ ՄՊԸ-ն ու այլոք և Մար Էլդաֆն ու այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 20390/92, 1998 թվականի հուլիսի 10, կետ 72 և *Խալֆաուն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 34791/97, 37):

Վճռարեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Եվրոպական դատարանի խնդիրը ներպետական օրենսդրությունը մեկնաբանելը չէ (տես՝ Բրուալլա Գոմեզ դե լա Տորրեն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 19.12.1997 թվականի վճիռը, կետ 31), (*Brualla G mez de la Torre v. Spain*): Վերջինիս դերը հիմնականում դրսևորվում է դատարանների կողմից ներպետական օրենսդրության մեկնաբանությունը Կոնվենցիայի հետ համատեղելիության տեսանկյունից գնահատելով: Այդ կանոնը կիրառելի է նաև դատարանների կողմից փաստաթղթեր լրացնելու կամ գանգատներ ներկայացնելու հետ կապված ժամկետային սահմանափակումներ նախատեսող դատավարական նորմերի մեկնա-

բանության նկատմամբ (տես՝ Տեղոյր Գարսիան ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 16.12.1997 թվականի վճիռը, կետ 31), (Tejedor García v. Spain): Եվրոպական դատարանը նշել է նաև, որ գանգատների համար ժամկետային սահմանափակումներ նախատեսող դատավարական նորմերն անկասկած համապատասխան են իրավական հստակության սկզբունքի հետ: Այնուամենայնիվ, **դատավարական նման նորմերը կամ դրանց կիրառումը չպետք է լինեն այնպես**, որ կանխարգելեն դատավարության մասնակիցներին օգտագործել իրենց ընձեռված այդ հնարավորությունները (տես՝ Պերեզ դե Ռադա Կավանիլլեսն ընդդեմ Իսպանիայի գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, կետ 44-45), (Perez De Rada Cavanilles v. Spain):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ կապված հարաբերությունների իրավակարգավորման ուսումնասիրությունը վկայում է, որ համաձայն այդ իրավակարգավորման հիմքում ընկած տրամաբանության՝ վերաքննիչ բողոքի թերությունները չեն կարող խոչընդոտել դրանց քննության ընդունման հարցի դրական լուծմանը և կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը: Նշված տրամաբանությունն էլ իր հերթին բխում է դատարանի մատչելիությունն ապահովելու անհրաժեշտությունից (Մանաստիպ դիրքորոշումը տես նաև ՀՀ սահմանադրական դատարանի 27.05.2008 թվականի թիվ ՍԴՌ-754 գործով որոշմամբ, կետ 6):

Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ թիվ 20 հանձնարարականի «B սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նվազագույնը ֆիզիկական և իրավաբանական անձանց պետք է հասանելի լինի այն վարչական ակտերի դատական վերանայումը, որոնք շոշափում են վերջիններիս իրավունքները և շահերը: Նույն բաժնի 4-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է գոնե կարևոր գործերով ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը ներպետական օրենսդրության համապատասխան, ուղղակի տրվում է վերադաս ատյանին: Հանձնարարականի 4 (i) սկզբունքի 83-րդ ենթակետի համաձայն՝ դիմողի՝ ներպետական օրենսդրությամբ սահմանված ողջամիտ ժամկետում դատական ակտը բողոքարկելու իրավունքը պետք է ճանաչվի բոլոր պետություններում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ կողմերը նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ անձի՝ դատական ակտը բողոքարկելու իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի և բովանդակության, գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, այն մասնակիցներին ուղարկելու, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատա-

---

վարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի վերջին պարբերության համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո վճռի օրինակը հանձնվում է գործին մասնակցող անձանց: Գործի մասնակիցներից որևէ մեկի ներկայացած չլինելու դեպքում վճռի օրինակը հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով ուղարկվում է նրան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելիս և վերաքննիչ բողոքը վերադարձնելիս պատճառաբանել է, որ «... գործով վճիռը հրապարակվել է 2012 թվականի հունիսի 13-ին, օրինական ուժի մեջ է մտել 2012 թվականի հուլիսի 14-ին, և հետևապես սույն գործով կայացված վճռի դեմ վերաքննիչ բողոք կարող էր բերվել մինչև 2012 թվականի հուլիսի 13-ը ներառյալ, որպիսի ժամկետը բողոքաբերի կողմից բաց է թողնվել՝ բողոքը փոստային ծառայությանն է հանձնվել 2012 թվականի օգոստոսի 09-ին: Ինչ վերաբերում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին բողոքաբերի միջնորդությանը, ապա այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ. Անհատ ձեռնարկատեր Կարինե Գևորգյանը որպես միջնորդության հիմնավորում նշել է. «...բողոքարկվող վճիռը հրապարակվել է 05.04.2012 թվականին, հայցվորն այն ստացել է 03.05.2012 թվականին և իր կամքից անկախ պատճառով բաց է թողել բողոքարկման մեկամսյա ժամկետը...»: Նախ, գործով բողոքաբերը հանդիսանում է պատասխանող, այլ ոչ թե հայցվոր և բացի այդ, ինչպես վերը նշվել է, վճիռը հրապարակվել է 2012 թվականի հունիսի 13-ին, այլ ոչ թե 2012 թվականի ապրիլի 05-ին և հետևապես նշված գործով վճիռը բողոք բերող անձը չէր կարող ստանալ 2012 թվականի մայիսի 03-ին: Ուստի, բաց թողնված դատավարական ժամկետը չի կարող համարվել հարգելի և միջնորդությունը ենթակա է մերժման»:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանի կողմից սույն գործով 13.06.2012 թվականին հրապարակված վճիռն ըստ գործում առկա հետադարձ ծանուցման անդորրագրի Ձեռնարկատիրոջն առաքվել է փոստային եղանակով միայն 19.07.2012 թվականին: Այսինքն՝ Ձեռնարկատիրոջ կողմից Դատարանի վճիռը ստանալու պահին արդեն իսկ սպառված է եղել այն բողոքարկելու օրենսդրությամբ նախատեսված մեկամսյա ժամկետը, և եղել է օրինական ուժի մեջ մտած: Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի վճիռը բողոքարկելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված մեկամսյա ժամկետը Ձեռնարկատիրոջ կողմից բաց է թողնվել նրա կամքից անկախ պայմաններում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ակտը բողոքարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված սահմանափակումները Վերաքննիչ դատարանը սույն գործով պետք է կիրառեր Ձեռնարկատիրոջ իրավունքների դատական պաշտպանության մատչելիության լույսի ներքո, հետևաբար բաց թողած ժամկետը վերականգնելու մասին Ձեռնարկատիրոջ միջնորդությունը ենթակա էր բավարարման:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում Ձեռնարկատերը զրկվել է ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.9-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 227-րդ, 228-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, 118.9-րդ, 118.15-րդ, 118.17-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 21.08.2012 թվականի «Բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ*

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 16.5 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 700 օրինակ:

ԷԶԱԴՐՈՒՄԸ և ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ **Printinfo**  
www.printinfo.am

ՀՀ, Երևան, Ծառուրի 37/1  
հեռ.՝ (374 10) 465 382, 465 385  
Էլ. փոստ՝ info@printinfo.am